15888



321.9
Ю-16

15 JAN 2010
26 SEP 2006

Կր

ՄԱՏԵՆԱՇԱՐ Հ. Յ. ԴԱՇ. Կ.ՊՈԼՍՈՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԹԻՒ 1

321.9
Խ-16

Գ. ԽԱԺԱԿ

(9)

Ի՞ՆՉ Է ԴԱՍԱԿԱՐԳԸ

12042

1912

Կ. ՊՈԼԻՍ.— Տպագր. «ԱԶԱՏԱՄԱՐՏ»ի

6 MAY 2013
15888
265

ՀԵՂԻՆԱԿԻ ԳՈՐԾԵՐԸ

	ԳԻՆ.
1) ՀԱՅԵՐԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ (սպառուած)	40 կոպէկ:
2) «ԴԷՊԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ»	80 »
3) ԻՆՉ Է ԱԶԳՈՒԹԻՒՆ	6 դահ.
4) ԻՆՉ Է ԴԱՍԱԿԱՐԳԸ	
5) ՏԱՌԱՊԱՆՔԻ ԳԻՇԵՐԸ (բանտի յուշերից)	60 փարա

Դիմել— «Ազատամարտ»ի խմբագրութիւն
—Համալ-պաշի, 76

Ջ380-57
Гос. Библ.
947-901

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մարդկային հասարակութիւնները շարժող լծակը մարդն է իր բովանդակ կարիքներով եւ իր ստեղծագործական ուժով:

Պատմութեան ընթացքում երբէք մարդ էակն անհատաբար չէ գործել: Նա միշտ ասպարէզի վրայ երեւացել է խմբական ձեւերով: Նախապատմական շրջանում մարդկութեան արտայայտութեան ձեւերը եղել են «անիշխանական խմբակները», տոհմերը, ցեղերը եւ ցեղերի դաշնակցութիւնները:

Գրաւոր պատմութիւնը բացւում է սկզբնական քաղաքակրթութիւնների հետ միասին: Եւ երեւան են գալիս *ազգերն* ու *դասակարգերը*: Այդ երկու ձեւերն էլ անծանօթ էին վայրենի ու բարբարոս հասարակութիւնների համար:

Մեր նախընթաց աշխատութեան մէջ մենք պարզեցինք ազգութիւնների ծագումը, նրանց էութիւնը եւ նրանց կռիւը: Սակայն պատմութեան ընթացքում մենք հանդիպում ենք ոչ միայն ազգերի ընդհարումների, այլ շատ յաճախ, նոյն իսկ աւելի յաճախ քան ազգերի բախումները, մենք տեսնում ենք *դասակարգերի* ընդհարումները, նրանց կռիւները:

Այս վերջին կռիւներն այնքան յաճախ են, որ տաղանդաւոր ընկերաբաններից ոմանք մարդկային պատմութեան միակ լծակը համարեցին այդ կռիւը:

Այսօր հայկական յետամնաց միջավայրում էլ դասակարգային կռիւը մարդկանց սկսում է բաժանել նոր խմբակցութիւնների: Հայերս ոչ դժբաղդ, ոչ էլ երջանիկ բացառութիւն ենք կազմում մարդկային պատմութեան մէջ: Մեր հասարակական կեանքն էլ պիտի ընթանայ, չնչին տարբերութիւններով, միւս ազգերի կեանքերի ընդհանուր ուղիով:

Դասակարգային կռիւը, որ դեռ եւս նոր է ձեւաւորւում մեզանում, առաջ է բերել զանազան հոսանքներ եւ կրքեր: Ոմանք պնդում են, որ ընկերվարականները, լինելով դասակարգային կազմակերպութեան կողմնակիցներ, պառակտում են մտցնում հայութեան մէջ, հայ ազգի ամբողջութիւնը, նրա միաձոյլ զանգուածը դատապարտում են բաժանման, ուրեմն եւ թուլացման:

Այս փոքրիկ աշխատութիւնով մենք ուզում ենք պարզել գիտութեան տեսակէտը դասակարգերի ծագման, նրանց էութեան եւ նրանց կռուի մասին եւ ապա քննութեան առնել *ազգի* եւ *դասակարգերի* փոխադարձ յարաբերութիւնները:

Մենք կարծում ենք, որ դրանով վերացրած կամ գէթ պարզած կը լինենք մի քանի վնասաբեր թիւրիմացութիւններ:

Գ. Խ.

Կ. Պոլիս, 1912 Փետրւար 1

ԳԼՈՒԽ I

Մարդկային պատմութեան բաժանումն ըստ դասակարգերի.— Առաջին շերտաւորումները.— Կին եւ այր.— Մարդակերութիւն.— Մարդը մարդու համար գայլ.— Սկզբնական համայնքի քայքայումը.— Ստրկութիւն.— Դասեր Հռոմում եւ Աթէնքում.— Դաս, կաստա եւ դասակարգ.— Ճորտատիրութիւն.— Հին եւ միջնադարեան աշխարհի բաղխումը.— Քաղաքներ եւ համքարութիւններ կամ էսնաֆութիւններ.— Նրանց քայքայումը.— Մանուֆակտուրա կամ ձեռագործ արտադրութիւն.— Մեքենան եւ կապիտալիզմը.— Վարձու բանւորութիւն.

Մարդկային հասարակութիւնների կեանքն ընդունուած է բաժանել երեք խոշոր շրջանների. վայրենական վիճակ, բարբարոսութեան շրջան եւ քաղաքակրթական աստիճան: Եթէ հասարակութիւնների զարգացման այդ ամբողջ ընթացքի վերայ մենք նայելու լինենք սեփականութեան *տեսակէտից, եթէ նրանում մենք որոնելու լինենք* դասակարգերի *գոյութիւնը, այն ժամանակ վերեւում յիշուած երեք շրջանը կը քչանայ, կը դառնայ միայն* երկու շրջան:

Եւ յիրաւի, ամբողջ մարդկութեան գոյութիւնը կարելի է վերածել երկու շրջանի, իրարից բաւական գունաւոր կերպով բաժանուող. մարդկային պատմութեան անդասակարգ, *«անշերտաւոր» շրջան եւ նոյն պատմութեան դասակարգաւոր կամ շերտաւորուած շրջան:*

Ինչ ասել կուզէ, որ չկայ, գոյութիւն չունի ոչ մի շեշտուած բաժանարար գիծ այդ երկու շրջանների մէջ: Մարդկային պատմութեան անդասակարգ շրջանն սկսւում է այն ժամանակներից, երբ չորեքթաթների տեսակից առաջին անգամ գոյացաւ, դանդաղ բարեշրջման շնորհիւ սերուեց մարդ-

բանական (homo sapiens) եւ կազմեց մի առանձին, աւելի բարձր տեսակ իր նման կենդանիների աշխարհում: Տասնեակ ու թերեւս հարիւր-հազարաւոր տարիներ առաջ, խաւար ու անյայտ անցեալի գրկում ծնունդ առած մարդ-արարածը, նման լինելով բարձրագոյն կաթնասունների բիման կամ չորեքթաթ տեսակներին, չէր կարող ունենալ իր մէջ ոչ մի ստորաբաժանում, բացի էգն ու արուն, մանուկը, հասակաւորն ու ծերը, ուժեղն ու թոյլը: Մանրիկ հասարակութիւններով, կամ աւելի ստոյգ է ասել, «անխտրական հօրդաներով» ապրող մարդկային այդ հասարակութիւնների ներսում, բացի անհատական տարբերութիւնները, չէին կարող լինել ուրիշ տեսակի շերտաւորումներ, կամ, ինչպէս ընդունուած է ասել, դիֆֆէրէնցիացիա:

Մարդկային արենակից այդ խմբակների ներսում, թէ վայրենութեան եւ թէ բարբարոսութեան շրջաններում, անտեսական տեսակէտից բոլոր անհատները եղել են հաւասարազօր: Նրանց ամբողջ խմբակը կազմել է եղել մի օրգանական ամբողջութիւն, բաղկացած շատ կամ քիչ թուով իրար միանգամայն իրաւահաւասար անհատներից: Հողը, որ այդ շրջանում ծառայել է իսկ իբր որսատեղ, իբր մի վայր, ուր ապրուստ են ճարել,— պատկանել է եղել բոլորին: Ինչ կասկած, որ հողերըն այնքան առատ պիտի լինէին, որ մարդիկ նրանում նեղութիւն չը քաշէին: Սակայն, ինչպէս բարձրագոյն կենդանիների կեանքը մեզ ցոյց է տալիս, այդ աստիճանի վրայ անգամ՝ սկզբնական մարդը պիտի պաշտպանէր իր «երկիրը», իր որսատեղը, իր հայրենիքը օտարներից, այսինքն այն անձերից, որոնք յանդգնում էին մտնել նրա որսատեղի սահմանը կերակուր ճարելու կամ մի այլ նպատակով:— Արենակից տոհմի բոլոր անդամները միասին էին որս անում, միասին ձուկ որսում, միասին պտուղներ ու արմատներ հաւաքում,—կարճ՝ միասին էին աշխատում, միասին ապրում, թշնամու դէմ միասին կռուի դուրս գալիս եւայլն: Դա է որ ընկերաբանութեան մէջ կոչւում է սկզբնական կօմմունիզմ:

Այդ սկզբնական կօմմունիզմը,— որքան որ բերանացի աւանդութիւնները, գրաւոր յիշատակարանները եւ հնութեան

այլ մնացորդները թոյլ են տալիս պատմական գիտութիւններին եզրակացնելու, տեւել է զանազան երկրներում ոչ միաչափ շրջաններով: Արեւելքի խոշոր քաղաքակրթութիւնների պատմութեան սկիզբը թաղուած է հնութեան մէջ: Չինաստանի, Փէնիքիայի, Արեւմտեան Պարսկաստանի, Քաղդէայի, Ասսիրո-Բաբելոնի եւ Եգիպտոսի պատմութիւնների ոչ միայն նախօրեակներն են մեզ անյայտ, այլ եւ դեռ պարզ ու անվիճելիօրէն չեն ստուգուած նրանց սկզբնական քայլերը քաղաքակրթութեան մէջ, պետական կառուցուածքում եւայլն: Սակայն Յունաստանն ու Հռոմը մեզ տալիս են ոչ միայն իրենց քաղաքակրթութեան առաջին քայլերի պարզ ու մեկին պատկերները, այլ եւ իրենց նախապատմութեան վերջին շրջանները: Այդտեղ մենք վկայ ենք լինում արենակից եւ հաւասարազօր տոհմի քայքայմանը եւ դասակարգերի ծննդեան պրօցեսին (գործողութեան): Մենք տեսնում ենք, թէ ինչպէս աստիճանաբար քայքայւում է սկզբնական կօմմունիզմը եւ նրա տեղը բռնում է մասնաւոր սեփականութիւնը, թէ ինչպէս միապաղաղ հասարակութիւնը, բաղկացած իրար միանգամայն հաւասար իրաւատէր անհատներից, սկսում է շերտաւորուել, ծնեցնել իր գըրկում դասեր, կաստաներ ու դասակարգեր:

Ինչպէս տեսանք, սկզբնական կօմմունիզմը բոլոր երկիրներում հաւասարաչափ ժամանակ չը տեւեց: Մի քանիսում նա չափազանց շուտ քայքայուեց, տեղի տալով մասնաւոր սեփականութեան, աշխատանքի բաժանման եւ դասակարգերին. մի այլ տեղ նա մի քիչ աւելի ուշ վերջացաւ, իսկ մի քանի վայրերում նա, այս կամ այն ձեւով ու չափով, դեռ մինչեւ օրս էլ շարունակւում է՝ իբր կենդանի նախապատմութիւն (préhistoire vivante): Այդպէս է, օրինակ, Աֆրիկայի մի քանի վայրենի ցեղերի վիճակը, այդպէս են Դակօտաները, Բոտոկուդները, Պատագօնացիները եւ մի քանի Էսկիմական ցեղեր Ամերիկայում. այդ վիճակին են աւստրալական Կրօկիներն ու Կամիլները, մի քանի Պապուներ եւայլն:

Ամէնաառաջին ու սկզբնական շերտաւորումը մարդկային հասարակութեան մէջ մարդ ու կնոջ տարբերումն է, մի տարբերութիւն, որ որոշ ձևով գոյութիւն ունի նաև բարձրագոյն կենդանիների մէջ: Էգի և որձի տարբերութիւնը, — ի հարկէ ոչ իբր սեռերի տարբերութիւն — այլ իբր ուժեղութեան ու թուլութեան զանազանութիւն, արդէն նկատւում է մի քանի կենդանական տեսակների մէջ: Այսպէս՝ թռչունների մէջ առհասարակ էգն աւելի թոյլ է լինում, մարմնով յաճախ փոքր, դուրկ գունաւոր փետուրներից և այլ զարդերից: Նոյն արտաքին տարբերութիւնները մենք նկատում ենք նաև առիւծների, վագրերի, փղերի ու կապիկների մէջ. սակայն ներքին՝ այսինքն ուժերի տարբերութիւնն այդտեղ ոչ միայն աչքի չէ ընկնում, այլ յաճախ էգը շատ աւելի կատաղի ու անխնայ է լինում, քան որձը:

Մարդկային հասարակութեան ծագման շրջաններում, հաւանօրէն, նոյնատեսակ վիճակի էին երկու սեռերն, ինչպէս այժմ կապիկների մէջ են նրանք: Այր և կնոջ տարբերութիւնը, —երբեմն մասամբ ծառերի վրայ մագլցող, մասամբ արդէն երկրի վրայ ապրող— կայացել է լոկ սեռական օրգաններում, իսկ ուժն ու աշխատանքի ունակութիւնը կնոջ մօտ եղել է համարեա՛ նոյնը, ինչ որ տղամարդունը:

Մարդկային հասարակութիւնը որքան աւելի ջոկւել է անասնութիւնից ու զարգացել, այնքան աւելի չեշտւել է էգի և որձի տարբերութիւնը: Վայրենութեան առաջնի վերջերում՝ բարբարոսութեան շրջանի սկզբներում, հաւանօրէն այդ տարբերութիւնն արդէն այնքան է աճել որ կամաց կամաց սկսել են երկու սեռերի զբաղմունքները տարբերւել իրարից: Կենդանիների ընտանեցումը, լինելով մի հսկայական առաջդիմական քայլ և բարօրութեան աղբիւր մարդկութեան համար, դարձել է կնոջ ստրկացման առաջին դրդապատճառներից մէկը: Բազմացող ու աճող հօտերին ձմեռը տաք-բարեխառն գօտու երկիրներում կերակրելու համար՝ անհրաժեշտօրէն մարդ-էակը մտածել է ցանել ամէնից առաջ աճող և բեղմնաւոր բոյսերը, հացհատիկները, հնձել, կուտակել նրանց: Ձմրան համար իբր կերակուր իր հօտերին երկար ժամանակ ծառայեցնելուց յետոյ է, որ մարդը, կարիքից նեղուած, փորձել է իբր իր սեփական

կերակուր ծառայեցնել իր կենդանիների հօտերը: Սկսւել է երկրագործութիւնը: Կինը, իբր մայր նորածինների, որ չէ կարող իր քաղցր բեռով շատ հեռու գնալ, և իբր արդէն աւելի թոյլ կամ գոնէ աւելի նուազ ճարպիկ էակ քան տղամարդն, ստիպուած է եղել մնալ բնակավայրի մօտերը, կատարել երկրագործական ու տնական աշխատանքները, միաժամանակ և հսկելով մանուկների ու դեռահասների վրայ, ի հարկէ՝ ձեռն եկած ժամանակը փառաւորապէս և կռուել իր սեփական օջախի պաշտպանութեան համար: Իսկ տղամարդն իր վրայ է վերցրել ինքնապաշտպանութեան խիստ ծանր գործը և որսորդութիւնը: Որովհետև ինքնապաշտպանութիւնը պիտի կատարւէր շրջապատ բազմաթիւ ու անընդհատօրէն յարձակւող ցեղերի և ոչ նուազ վտանգաւոր ու բազմաթիւ գազանների դէմ, այդ պատճառով հասարակութեան ամէնաէական պաշտօնների մէջ հաւանօրէն առաջին տեղը բռնելու էր այդ իսկ գործը:

Ինչ կապւած որ սեռերի այդ բնական բաժանումից բղխած հասարակական չերտաւորումը չէ ներկայացնում ոչ դասակարգ, ոչ դաս, ոչ էլ կաստա: Որդեծնութեան գործողութիւնից, նրան նախորդող ու յաջորդող պարտականութիւններից և այդ ամէնից բղխած բնական թուլութիւնից առաջ են եկել սեռերի ֆիզիքական տարբերութիւնները, որոնք իրենց կարգին, պիտի բղխեցնէին որոշ աշխատանքի բաժանում երկու սեռերի միջև: Բայց երբ մի անգամ բղխել է այդ զբաղմունքների տարբերութիւնը, նա ազդել է այդ երկու սեռերի մտաւոր ու բարոյական աշխարհների վրայ: Աւելի ուժեղն ու ճարպիկը, որ սկզբներում համարեա՛ աննշմարելի տարբերութիւններ ունէր էգից, աստիճանաբար աւելի ևս ուժեղանում է թէ ֆիզիքական վարժութիւններով, թէ ուղեղի փորձառութիւնով և դառնում է տէր հասարակութեան ներսում, աստիճանաբար հնազանդեցնելով հրամայող խեղճացող, յետ մնացող սեռին: Վերջ ի վերջոյ առաջանում է կնոջ ենթակայութիւնը և այր մարդու բռնապետութիւնն իբր կնոջ մասնաւոր սեփականատիրոջ:

Կրկնում ենք՝ այդ բաժանումը դասակարգային չերտաւորում չէ հասարակական օրգանական ամբողջութեան ներսում, այդ պատճառով էլ մենք, ստորագծելով, կամ աւելի շուտ, մատնացոյց լինելով այդ երեւոյթի վրայ, չենք զբաղւում նրա ոչ մանրամասն քննութիւնով, ոչ պատճառների և հետեւանքների պարզաբանութիւնով, ոչ էլ նրա զարգացման պատմութիւնով:

Մարդկային արենակից խմբակների համար, ընդհանրապէս, ամենից աւելի հոգ պատճառող խնդիրը լինելու էր գոյութեան կռիւը, այսինքն՝ թէ անձնապաշտպանութիւնը նմանների ու գազանների դէմ և թէ ապրուստի միջոց հայթայթելը: Այդ երկու կարեւոր պաշտօնները (ֆօնկցիօն) էլ նրանք կատարում էին համայնօրէն, խմբով, որովհետեւ թէ անձնապաշտպանութեան և թէ արտադրութեան գործիքները հնարաւորութիւն չէին ներկայացնում ոչ անհատօրէն պաշտպանուելու մարդկանցից ու գազաններից, ոչ էլ անհատօրէն արտադրելու, կերակուր ճարելու:

Գոյութեան կռուի այդ կրկնակի յատկութիւնը մարդկային այդ մանրիկ խմբակներին դնում էր իրար հետ անվերջ ընդհարումների մէջ: Ամէն մի խմբակ, զարգացման սկզբնական շըրջանում, հաւանօրէն թափառելիս է եղել որոշ, բաւական սահմանափակ վայրում, որովհետեւ սխալ է կարծել, թէ սկզբնական մարդը թափառում էր անտառների ու դաշտերի հսկայական տարածութիւններում. ոչ, հաւանօրէն նա փախչում էր այսինչ բլրից, այնինչ ձորից կամ անտառից այն կողմն անցնել, որովհետեւ անյայտութիւնը նրան սարսափեցնում էր: Թէ խմբերի մանրութիւնը և թէ նրանց ընդհանուր թւի քչութիւնը պէտք է որ սկզբնական շրջաններում նրանց աւելի քիչ առիթներ տային իրար հանդիպելու, իրար զարնելու, քան յետոյ, երբ թէ արենակից խմբերն էին մեծանում և թէ խմբերի թիւն էր բազմանում, կամ, ինչպէս ընդունուած է ասել, երկրի ազգաբնակութեան ընդհանուր խտութիւնն էր մեծանում:

Իրար հանդիպում էին խմբերը որսատեղի սահմաններում իրար ձեռքից որսը խլելիս, գիտակցաբար, կանխամտածուած յարձակում գործելիս իրար վրայ՝ թալանի, մարդ, կին, անասուններ փախցնելու որոշ նպատակներով: «Վա՛յ յաղթուողին»: Սկզբնական շրջաններում ամէնեւին միտք չունէր բռնել յաղթուածներին, տանել իրենց տոհմի բնակատեղը, պահել իբր գերի, իբր ստրուկ աշխատեցնել նրան. միտք չունէր, որովհետեւ ստրկացուածը եթէ ամբողջ օրը ժիր աշխատէր, հազիւ հազ իր «փոր հացը», իր ուտելիքը պիտի հանէր: Բացի այդ՝ միշտ ու անընդհատ պիտի աչքերը «չորս աչքով» նայէին նրա վրայ, հսկէին, որ չը լինի թէ բռնէր սրա կամ նրա կոկորդից, սպանէր իր թշնամու և փախչէր, ազատուէր: Արտադրութեան գործիքների ծայրայեղ խակութիւնը թոյլ չէր տալիս այդ անվերջ ընդհարումների մէջ բռնուածներին պահել, ստրկացնել, որպէսզի նրա «յաւելեալ արժէքը» մշտապէս իւրացնեն. յաւելեալ արժէք չկար, չէր կարող լինել, որովհետեւ աշխատանքն արդիւնաւէտ չէր:

Բռնուած գերիներին ուտում էին և ոչ ստրկացնում: Դա մարդակերութեան շրջանն էր:

Այո, մարդկային այն արենակից խմբակները, որոնց ներսում բացարձակ կոմմունիզմ և լիակատար իրաւահաւասարութիւն էր թագաւորում, որի ամէն մի անդամը պատրաստ էր զոհւել միւս անդամի, արենակից խմբերի համար, որի ներսում ալտրուիզմը կամ այլասիրութիւնը լիապէս տէր էր և էգոիզմի (եսասիրութեան) «իմ և քո»-ի հասկացողութեան հետքն անգամ դեռ չէր կարող լինել. այդ խմբակներն իրար մէջ, մէկը միւսի համար կատաղի գազան էին, հակառակորդ, մահացու թշնամի կամ, մի քիչ աւելի զարգացած՝ բարբարոսական շըրջանում՝ մի քանի խմբակներ, որոնց մէջ դեռ թարմ էր նախկին արենակցական կապի յիշատակը, կազմելով տոհմերի մի կապակցութիւն կամ մի ցեղ (tribu), վարում էր նոյն եսական թշնամական յարաբերութիւնը միւս տոհմերի (gens) կամ տոհմերի խմբերի (fratrie) և կամ ցեղերի հետ: Այդ շրջանում «մարդը մարդու համար գայլ» էր:

Մարդկային ցեղի դանդաղ զարգացումը կամ բարեշրջումն առաջ էր գնում: Թւի աճեցողութիւնը և երկար կենակցութիւնը կամ կուտակուած փորձառութիւնը, որ կազմում է մարդկային նախ բանաւոր և ապա գրաւոր գիտութիւնն, ստեղծում են աւելի և աւելի կատարելագործուած միջոցներ մարդ-արաբածի պահանջներին բաւարարութիւն տալու համար: Բարբարոսութեան շրջանում կենդանիների ընտանեցումը դառնում է այն ուժեղ հարւածներից մէկը, որ պիտի քանդէր նախնական համայնականութիւնը և սկիզբ դնէր մասնաւոր սեփականատիրութեան: Մարդ անհատը կարող էր «իր ընտանեցրած» կենդանու տէրը լինել, մասնաւոր սեփականատէրը, ինչպէս և իր փախցրած կնոջ մասնաւոր ամուսինը: Ինչ կասկած, որ սկզբներում կենդանիներ բռնելն ու ընտանեցնելն էլ լինում է համայնօրէն, իսկ յետոյ, աստիճանաբար փորձառութիւնն աճելով, մարդը սովորում է կենդանիներին բռնելու նոր ու նոր միջոցներ, և վերջապէս, հասնում է այնպիսի վիճակի, որ կարելի է անհատաբար տիրել կենդանուն, նրան ընտանեցնել, մեծացնել, աճեցնել:

Կենդանիների ընտանեցումը, նրանից առաջ դեռ որսորդութիւնը և նրանից էլ յետոյ մանաւանդ երկրագործութեան սկզբնաւորումը սաստիկ զօրացրին մարդկային աշխատանքի սաստկութիւնը կամ էնտենսիւէն, նրա արդիւնաւորութիւնը: Մարդ-անհատի օրական աշխատանքն այնուհետև սկսեց ոչ միայն բաւականութիւն տալ աշխատաւոր անհատի կարիքներին, այլ և նա կարող էր տալ որոշ յաւելեալ արժէք, ի հարկէ որոշ պայմաններում: Եթէ աշխատաւոր անհատն ապրէր իր ժամանակի զարգացման բարձրութեան վրայ, լիապէս բաւարարելով իր բոլոր պահանջներին, ինչ ասել կուզէ, որ նրա աշխատանքի արդիւնքը հազիւ «ծայրը ծայրին հասցնէր», իսկ եթէ որևէ ուժեղ անհատ բռնէր նրան և ստիպէր աշխատել ու ստանալ միայն այնքան, որ սովից չմեռնի, այսինքն ամենաանհրաժեշտ նուազագոյն չափը, — ինչ ասել կուզէ, որ նրա աշխատանքի արդիւնքից կարող էր մնալ մի բան: Եւ այդ երևոյթը չուշացաւ:

Մարդակերութեան շրջանից կամաց-կամաց մարդկային բարբարոս հասարակութիւնները սկսեցին անցնել ստրկատիրական շրջանին: Այդ երևոյթը, հաւանօրէն, պիտի տեղի ունենար բարբարոսութեան վերջին շրջանում, երբ արենակցական խմբակցութիւնները կամաց-կամաց մօտենում էին լուծւելու, երբ

մի կողմից մարդիկ արդէն սկսում էին հնարել իրենց մտքերն արտայայտելու լաւագոյն ձևը— այբուբէնը, միւս կողմից ծանօթանում էին երկաթի հանքի, նրանից երկաթ ստանալու և գործիքներ շինելու արհեստի հետ, երբ, վերջապէս մասնաւոր սեփականութիւնը մուտք էր գործում ու տարրալուծում, քայքայում էր նախնական անգիտակից կոմմունիստական կարգերը և մայրական իրաւունքի վերջին մնացորդները տեղի էին տալիս հայրական իրաւունքին:

Զարմանալի յաճախ տեղի ունեցող պատերազմներում և արձակումներում բռնւած գերիներին այլևս չեն ուտում, որովհետև ուտելով միայն մի անգամ օգուտ են ստանում, մի անգամ մի քանի հոգով լաւ կշտանում, իսկ պահելով գերուն, ստրկացնելով նրան և դատապարտելով բռնի աշխատանքի, ամէն օր կամ մշտական կանոնաւորապէս ստանում են նրա արտադրած արդիւնքների մի մասը, նրա յաւելեալ աշխատանքը: Եւ դա մի հսկայական յառաջդիմական քայլ էր մարդկային հասարակութեան համար:

Կարելի է մի ամբողջ հատոր գրել ստրկութեան ծագման, զարգացման ու անկման մասին, ինչպէս արել է ֆրանսիացի հանգուցեալ գիտնական Շարլ Լէտուրնօն, բայց դա մեր նպատակից դուրս է, մեր նպատակն է այս մի քանի երեսներում պարզել հասարակական շերտաւորումների ծնունդը, նրանց գենեզիսը (genèse):

Ինչ ասել կուզէ, որ ստրկատիրութիւնն էլ ծնունդ է առել սկզբնական կոմմունիզմի վերջին փուլերում և իր կողմից աւելի եւս արագացրել է նախնական կամ արենակցական հասարակական կազմի լուծումը: Նախ բռնւած գերիները դառնում էին սեփականութիւն ամբողջ տոհմի, արածեցնում էին տոհմի հօտերը, մշակում տոհմի դաշտերը: Բայց այդ շրջանում ստրկատիրութիւնը չէր կարող աճել, փարթամանալ, որովհետև ամբողջ տոհմը, նրա բոլոր անդամները դեռ ես աշխատաւորներ էին, բոլորն էլ իրար հաւասար:

Մնում էր մի արենակից տոհմ ուզէր դրացի, աւելի թոյլ տոհմի արտերը, կռւի բռնւում նրա հետ, կամ յաղթւածը բնաջինջ էր լինում, կամ մի քանի մնացորդները ուղեգրւօւմ էին յաղթող տոհմի կողմից, թևերը ծակելով ու արիւնները իրար խառնելով, իրանց մօր ստինքը ծծեցնելով կամ իրենց օջախի առջև երկրպագութեան բերելով նրան,— և կամ, վերջապէս, տիրւած համայնքը զինազուրկ էր լինում, դառնում հպատակ, ստրուկ, հօտ կամ ռայեա, իսկ տիրողները պահում էին իրենց ձեռքին զէնքը— հպատակեցնելու այդ գերագոյն միջոցը, հանդիսանում տէրեր, ստիպում յաղթւածներին աշխատելու և նրանց աշխատանքով ապրում։

Այդ ստրկացման երևոյթն էլ, ինչպէս բոլոր հասարակական երևոյթները, սկսաւ առաջ գալ աստիճանաբար։ Սկզբներում անպայման չնչին կը լինէր ստրուկների թիւը։ Նրանց կենդանի պահելու գործում դեր խաղացած կը լինէր և վերևում յիշւած «յաւելեալ արժէքի» հնարաւորութիւնը, և անկասկած, խղճահարութիւնն ու բարոյական կարգի այլ դրդումները։ Տիրողներն էլ սկզբում անպայման դեռ լիովին աշխատաւորներ էին։ Որքան աւելի քայքայւում էր նախնական կոմմունիստական արենակից համայնքը, որքան աւելի մասնաւոր սեփականութիւնը բոյն էր դնում, այնքան աւելի զարգանում էր ստրկատիրութիւնը. աճում էր ստրուկների թիւը, սաստկանում և սրւում նրանց շահագործման եղանակը։ Տիրողներն էլ, նախ լիովին աշխատաւոր,— աստիճանաբա՛ր սկսում են վարժւել ուրիշների՝ իրենց ստրուկների յաւելեալ արժէքով ապրելու արհեստին, այսինքն աստիճանաբար դառնում են պարազիտ, մակաբոյծ, ծուլական։

Այսպիսով հասարակութիւնը, որ արդէն քաղաքակրթութեան աստիճանի շէմքումն է, բաժանւում է երկու որոշ շերտերի.— մի կողմից ստրուկների, որոնց բաժինն է ֆիզիքական սև աշխատանքը, ամէնից անտանելին ու ծանրը մարդկային աշխատանքներից— պահել անասուններ, մշակել հողը, տնկել այգիներ ու պարտէզներ, տքնօրէն խնամել նրանց, մի խօսքով՝ տքնել բաւարարութիւն տալ իրենց տէրերի բոլոր պահանջներին.— միւս կողմից՝ ստրկատէրերի, որոնց բաժինն է ընկնում կամ որոնք իրենց են վերապահում զէնքի արհեստը, կառավարական, հասարակական բոլոր գործերը, համեմատաբար աւելի դիւրին և «ազատ մարդուն վայել» համարւող զբաղմունքները։ Նրանք են մշակում կռւելու և կառավարելու արհեստը, փիլիսոփայութիւնը, գեղարւեստը, գիտութեան բոլոր ճիւղերը, որովհետև ստրուկներն աշխատում, սնունդ են մատակարարում, իսկ իրենք ունենում են բաւական ազատ ժամանակ այդ բոլորի մասին մտածելու, մշակելու, գրելու և համակարգելու։

Ստրուկ ծնւածը պարտաւոր էր մնալ ստրուկ, ոչ մի դէպքում նա իրաւունք և հնար չունէր դառնալու ազատ. նրա միակ փրկութեան ուղին փախուստն էր և գուցէ մէկ էլ գնման համարեա՛ անհնարին միջոցը։ Անհնարին ենք ասում, որովհետև ստրուկը ոչ մի ճար չունէր դրամ կամ այլ արժէքներ հաւաքելու և իր ազատութիւնը յետ գնելու։ Սկզբնական բռնութեան և տնտեսական հրամայող կարիքի ծնունդ այդ դասակարգային ամենասկզբնական ու գռեհիկ բաժանումը երկար դարերի գոյութեան ընթացքում դառնում է սովորոյթ, ադաթ, սրբագործւում է երկար անցեալով և մտնում իրաւունքի սահմանը։ Կրօնն էլ շուտով վրայ է հասնում և «աստուածային գիրք» յայտարարում այդ բաժան կարգը։

Ինչպէս վերևում ակնարկեցինք, սկզբներում ստրուկների, բանի հպատակեցւածների թիւը դեռ չափազանց քիչ է լինում, տէրերն էլ, դրա համեմատ, և՛ օգտւում են ստրուկների նոր սկսող յաւելեալ արժէքով, և՛ իրենք բոլորն էլ աշխատում։ Քանի գնում, ստրուկների թիւն աճում է, սակայն նրա հետ զուգահեռաբար աճում է և տիրողների թիւն ու մեծանում նրանց պարազիտական ունակութիւնը. նրանք խիստ արագօրէն վարժւում են ստրուկների յաւելեալ արժէքով լիապէս ապրելու արհեստին։ Շուտով նրանցում, տիրողների մէջ ծնւում և ամրանում է այն համոզումը, որ ֆիզիքական բոլոր արտադրական աշխատանքները անմաքուր են, անվայել արիւնով ազնիւ մարդկանց՝ Արիստոկրատներին Աթէնքում, Եւպատրիդներին Սպարտայում, Պատրիկներին Հռոմում, Աւագանիին կամ Ազատաւորներին Հայաստանում և այլն։

Բացի թւական յարաբերութիւնը երկու դասակարգերի միջև, կայ և մի այլ ուշագրաւ երևոյթ։ Տիրող, հրամայող դասակարգն, ունենալով խորհելու և ստեղծագործելու շատ ազատ ժամանակ, բաւական արագ քաղաքակրթւում է և դրա համեմատ էլ խիստ արագ աճեցնում իր պահանջների թէ քանակը և թէ որակը, նրանց էնտանսիտէն (սաստկութիւնը)։

Այսպիսով՝ տիրողների թիւն աճելով, մի կողմից էլ խիստ արագ զարգանալով նրանց անհատական ու հասարակական պահանջները, իսկ արտադրական միջոցները և տեխնիկան աշխատանքի արդիւնաւորութիւն, մնալով նոյնը, յաճախ նոյնիսկ աւելի ստորանալով, ճակատագրօրէն ստիպում են երևան գալու որոշ շերտաւորման տիրողների ամբողջութեան մէջ։ Այլևս անհնար է լինում տրւած թիւ ստրուկներով կերակրել եղած «ազատներին»։ Դեռ այդ քիչ է. ազատների մէջ էլ, մասնաւոր սեփականութեան շնորհիւ, առաջ է գալիս հարստութեան — հողերի, հօտերի ու ստրուկների կուտակումը զանազան անհատների, զանազան հզօր տոհմերի ու ընտանիքների ձեռքում։ Դրանից հետևում է այն, որ տիրողների հասարակութիւնը, որ առաջ կազմւած էր հօմօժէն, միապաղաղ տարրերից — զէնք կրող ու կառավարող, ուրիշի աշխատանքով ապրող անհատներից, — այժմ ծագում է շերտաւորում կամ դիֆֆէրանսիացիօն. առաջանում են հարուստներ և աղքատներ, խոշոր արիստոկրատիա (ազնուականութիւն) և դէմոս կամ չունեւորների մի հոծ բազմութիւն։

Այդ չունեւոր բազմութիւնն սկզբներում դեռ **ազնուական** է, **արիւնով** ազնիւ, դեռ նա արհամարհում է ամէն տեսակ ֆիզիքական և առևտրական աշխատանք։ Տեղ-տեղ նա գերադասում է ապրել հարուստների սեղանի փշրանքներով, ծախելով իր ձայնը քաղաքական ու հասարակական ընտրութիւններում։ Այդպէս էր դէմոսն Աթէնքի ծաղկած շրջանում, երբ բոլոր ազատ քաղաքացիների թիւը՝ — կին ու երեխայ հետը հաշւած՝ — մօտ 90,000 հոգի էր, իսկ ստրուկների թիւը 365000 հոգի էր երկու սեռից, 45,000 հոգի էլ **մետէկներ** կային՝ — օտարականներ և ազատւած ստրուկներ, որոնք զրկւած

էին գլխաւորապէս արհեստներով և առևտրով։ Այսպիսով ամէն մի հասակաւոր քաղաքացու վրայ ընկնում էր, միջին թւով, 18 ստրուկ։ Բայց այդ ստրուկներն ու մնացած հարստութիւնները հաւասարապէս չէին բաժնւած հասարակութեան բոլոր անդամների միջև։

Նրանք շուտով կենտրոնացան փոքրաթիւ հարուստների ձեռքերում, իսկ մեծամասնութիւնն, ինչպէս ասացինք, աղքատացաւ։ Շերտաւորումն սկսեց։ Քրիստոսից 594 տարի առաջ, Աթէնքի հռչակաւոր օրէնսդիրը — Սօլօնը, նկատելով ազատանիների մէջ բնականօրէն առաջ եկած այդ շերտաւորումը, բաժանեց հասարակութիւնը չորս դասակարգի, համաձայն ունեցած հողային հարստութեան և նրանից ստացւող եկամուտի. I դասակարգը պէտք ունենար գոնէ 500 մէդիմն հացհատիկ եկամուտ (1 մէդիմնը մօտ 41 ֆրանսիական լիտր էր) II-ը գոնէ 300, III-ը 150, իսկ ով դրանից պակաս ունէր կամ բոլորովին չունէր, ընկնում էր չորրորդ դասակարգի մէջ։ Եւ առաջին երեք դասակարգերից էին դուրս գալու կամ նրանց անդամներից էին լինելու բոլոր պաշտօնեաները, իսկ չորրորդ դասակարգը լոկ մի իրաւունք ունէր՝ — խօսք խնդրելու և խօսելու հասարակական գլխաւոր ժողովում, որը բաղկացած էր 400 անդամից. այդ ժողովն էր, որ նշանակում էր պաշտօնեաներ — միայն առաջին երեք դասակարգերից։ Կը նշանակէ՝ Սօլօնի օրէնսդրութիւնն արդէն մեզանից մօտ 2500 տարի առաջ ազատների, տիրողների մի խոշոր, շա՛տ խոշոր մասին զրկում էր պաշտօնեայ լինելու իրաւունքից, որովհետև այդ մասն արդէն աղքատացել, մի նոր խաւ էր կազմել հասարակութեան ներսում։ Այդ աղքատացած հասարակութեանը մնում էր կամ դիմել ֆիզիքական աշխատանքի, մրցել ստրկական արտադրութեան հետ և իր ճակատի քրտինքով հայթայթել իր համար մի ամենաողորմելի ապրուստ, կամ ինչպէս ասացինք, արհամարհել այդ «անազնիւ» աշխատանքը, դառնալ հարուստների և պետութեան պարազիտ, անբարոյականանալ, մեղկանալ և անկման անդունդը գլորել յունական

Гос. Библиотека
Ф 380·57

մանրին պետութիւնները, որ եւ տեղի ունեցաւ. Հռոմը գրաւեց նրանց երկիրը, նուաճեց նրան «Պրովինց Աքէա» անունով և վերջ դրեց Յունաստանի բոլոր մանր ու խոշոր պետութիւնների ինքնուրոյնութեանը, թողնելով սակայն որոշ աւտօնոմ կամ ինքնավարական իրաւունքներ յուն ժողովրդին ու երկրին:

Նոյն շերտաւորումը տիրող պատրիկների կամ «Գէնտի» (տոհմական) ազնուականութեան մէջ մենք նկատում ենք Հըռոմում, Սէրվիոս Տուլլոս թագաւորին (rex) վերագրուող օրէնքների մէջ: Նա էլ, ինչպէս երեւում է, Սոլոնից օրինակ առնելով, հասարակութիւնը բաժանել էր 5 դասակարգերի եւ երկու — վերին ու ներքին — շերտերի: I կարգը պիտի ունենար գոնէ 100,000 աս (մօտ 18,000 ֆրանկ) կարողութիւն, II-ը 75,000 աս (մօտ 13,125 ֆր.), III-ը 50,000 աս (10,000 ֆր.) IV-ը 25,000 աս (4500 ֆր.) և V-ը 11,000 աս (1962 ֆր.): Այս վերջին թւից պակաս եւ ամենեւին չունեցողները համարւում էին պրօլէտարներ, որոնք ազատ էին ե զինուորական ծառայութիւնից, եւ հարկերից: Իսկ I դասակարգից էլ բարձր կար մի այլ, խիստ հարուստներից բաղկացած խաւ, որ կոչւում էր ասպետների դասակարգ: Սրանք 18 հարիւրեակ էին, և հարիւրեակների ժողովում (comitia centuriata), երկրի գերագոյն օրէնսդիր մարմնում՝ ունէին 18 ձայն. I դասակարգը ունէր 80 ձայն, IIը-22, IIIը-20, IVը 22, V-ը 30 ձայն, որովհետեւ ամէն մէկն էլ բաղկացած էր այդչափ հարիւրեակներից. Իսկ VI դասակարգը, ձեւի համար, կազմում էր մի հարիւրեակ եւ ունէր լոկ մի ձայն, թէեւ թւով ամէնից աւելի շատ էր, — նա շատ էր քան նախընթաց բոլոր դասակարգերը միասին վերցրած: Այսպիսով բոլոր ցէնտուրիաների կամ հարիւրեակների ձայների թիւը հասնում էր 193-ի, իսկ կէսից աւելին անում էր 97 ձայն: Ձայները հաշւում էին վերեւից՝ — սկսելով ասպետներից. սրանց եւ առաջին դասակարգի ձայների թիւը հասնում էր 98-ի: Երբ այդ երկու դասերը մի որ եւ է հարցում միանում էին, այլեւս միւսների ձայները հաշւելն անգամ աւելորդ էին համարում:

Հռոմում էլ մենք նկատում ենք VI դասակարգի կամ պը-

րոլէտարիատի անբաւականութիւնը: «Հաց և կրկէս» էր պահանջում նա աշխարհի հզօրներից, եւ երբ այդ ստանում էր, նրան էր տալիս իր վարձու ձայնը, յաճախ նրա մօտ վետերան էր գըրւում, վարձկան զինուոր լինում, դառնում սքանչելի գործիք Մարիոսների, Սիլլաների և ուրիշ բռնապետների ձեռքին:

Ինչ էլ որ լինի այդ «դասակարգ» կոչւածների բաղդը թէ Հռոմում և թէ Յունաստանում, թէ Սոլոնի և թէ Սէրվիոս Տուլլոսի րէֆօրմների մէջ, այնուամենայնիւ սխալ է նրանց անուանել «դասակարգ.» նրանք դասեր են, որովհետեւ իրաւաբանօրէն որոշւած բաժանումներ են, որոնք չունեն տնտեսական շահերի որակական տարբերութիւնը. միակ զանազանութիւնը նրանցում ստացւածքի ու եկամուտի քանակն է, շատ ու քիչ: Էական տարբերութիւն ներկայացնելու ճամբու վրայ են կանգնած վերջին դասակարգերը, որոնք եթէ դիմէին արհեստների, առեւտրի եւ այլ աշխատանքների, թերեւս կազմէին իսկական դասակարգեր, բառի ներկայ տնտեսական մտքով:

Հին արեւելքի մի քանի պետութիւններում, ինչպէս օրինակ՝ Հնդկաստանում եւ Եգիպտոսում, յունական ու հռոմէական դասային բաժանումները նոյնպէս տեղի ունեցան, բայց ոչ այն ձեւի ու զարգացման մէջ մնացին, ինչ նրանք ունեցան վերեւում յիշւած երկիրներում: Յունաստանում եւ Հռոմում, թէ Սոլոնի ու Ս. Տուլլոսի օրինադրած դասերը և թէ յետագայում առաջացածները ամենեւին չը փակւած, հաստատուն օրինական տեւողութիւն և կենսական անշարժութիւն չստացան. միշտ հնարաւոր էր, օրինակ, եկամուտը 11000 ասից հասցնել մի կերպ 25000-ի կամ 50000-ի եւ մի դասից անցնել միւսին կամ պակաս եկամուտ ունենալ եւ ընկնել ներքին դասի մէջ: Ամբողջ արեւմուտքում երկու խոշոր բաժանումներ կային, որոնք էապէս որոշւած ու ամրացած բնոյթ ունէին—ստրուկներ և ազատներ՝ այդ երկուսի մէջ տեղը կար պլէբսը և դէմոսը, որոնք վերջ ի վերջոյ ազնուականութեան հետ հաւասար իրաւունքներ ձեռք բերին և որոնք չէին կազմում դասակարգ՝ ներկայ տնտեսական մտքով:

Տարբեր էր երեւոյթը Հնդկաստանում և Եգիպտոսում:

Այդտեղ տիրողները և տիրուածները բաժանւում էին ոչ թէ երկու, այլ 5-7 պարզ ու որոշ դասերի, որոնք օրէնքի ույժ էին ստացել, քարացել ու դառել էին անփոփոխելի քանակութիւններ: Դասը դառել էր կաստա,— միանգամ ընդմիշտ քարացած դաս, անշարժ, յարակայուն: Մէկից միւս կաստան անցնել ոչ ոք չէր կարող,— ծնունդն էր մարդու վիճակը որոշողը և ոչ վիճակը, ջանքը, շահերն ու գոյքը՝— մարդու այս կամ այն կաստային պատկանելը: Հասարակութեան բարձունքում կանգնած էին ազնուականները և քուրմերը կամ հոգևորականները. երկուսն էլ սերուած էին միևնոյն տիրող ցեղից: Այնուհետև գալիս էին զինուորականները (քշատրիաներ). յետոյ վաճառականների կաստան, յետոյ արհեստաւորների, վերջապէս երկրագործների կամ գիւղացիների կաստան: Թէ Եգիպտոսում և թէ Հնդկաստանում այդ բոլորը կազմում էին երկրի հասարակութիւնը. դրանք էին, որ մարդ, հպատակ, քաղաքացի կոչուելու արժանի էին համարւում այս կամ այն չափով: Խստիւ արգելուած էր այդ կաստաների մէջ ամուսնութիւնը, մանրմասն յարաբերութիւնը: Այնուհետև Հնդկաստանում գալիս էին երկու դասեր — պարիաներ և սուդրաներ, որոնք չէին համարւում երկրի ազգաբնակութեան բաղադրիչ մասը: Պարիային սպանելը չէր առաջացնում ոչ մի պատասխանատուութիւն երկրի օրէնքի առջև: Դրանք ստրուկներ չէին, ստրուկից էլ աւելի վատ,— հալածուածներ, արհամարհուածներ, որսի կենդանիներ էին: Նրանց յաճախ բռնեցնում էին իբր ստրուկներ... Եգիպտոսում այդ բոլոր կաստաներից դուրս՝ կար և ստրկութիւն, մի հսկայական դասակարգ, որ ստրուկ էր բառի իսկական մտքով,— մարակի տակ աշխատող և տիրոջից ստացող լոկ այնքան, որքան հարկաւոր է չը մեռնելու համար:

Այսպիսով հին աշխարհը ճանաչում էր իսկապէս միայն երկու խոշոր բաժանումներ,— ստրուկներ և ազատներ: Դրանք էին միայն, որ կարող էին կոչուել դասակարգեր, իսկ միւսները— պլէբէյ և դէմոս, կամ դրամի ու ստացուածքի քանակի վրայ եղած օրինական բաժանումները դասակարգեր չէին, այլ դասեր, նոյն ազատ, ոչ ստրուկ հասարակութեան ստորաբաժանումները: Տիրուածներն ստրուկ էին դառել, իսկ տիրողները ազատներ, որոնց մէջ առաջ էին եկել շերտաւորումներ հասարակական կեանքի դանդաղ զարգացման շնորհով: Այսպէս՝ Հռոմի տիրող ցեղերի զարգացումն ընթանալով տարբեր ուղիներով, նրանցից մի քանիսը, դեռ նախապատմական շրջանում, դրաւոր պատմութեան նախօրեակին, աւելի շուտով էին անցել հայրական իրաւունքին, այդ պատճառով էլ կոչուեցին պատրիկներ (pater - հայր՝ բառից), իսկ նոյն ցեղերի մի մասը դեռ աւելի երկար մնաց մայրական իրաւունքի բարբարոսական ու յետամնաց սովորութեան մէջ, այդ պատճառով կոչուեց պլէբէյ կամ պլէբս: Ուրեմն՝ վերջիններս աւելի դանդաղօրէն զարգացող տոհմեր ու ցեղեր էին, քան առաջինները, որոնք աւելի շուտ անցան՝ հայրական իրաւունքին, հօր բռնապետութեանը (patria potestas) և մասնաւոր սեփականատիրութեան գաղափարին ու դրանով աւելի կենսունակ, աւելի ուժեղ ու իրաւատէր դարձան. քան պլէբէյները: Սակայն այդ տարբերութիւնը չառաջացրեց շահերի ու զբաղմունքների հիմնական տարբերութիւններ այն չափով, որ դրանք դառնային հակադիր դասակարգեր, ինչպէս ստրուկներն ու ազատները: Նրանք բոլորն էլ սկզբներում երկրագործներ ու անասնապահներ էին, միայն շուտով պատրիկների ձեռքն սկսեցին անցնել պետական կամ հասարակական հողերը (ager publicus). Նրանք արագ հարստացան և, շնորհիւ իրենց աւելի կենսական կազմութեան, առաջուց արդէն խլել էին բոլոր հասարակական գործերի ղեկը, բոլոր պաշտօնները, որ նախ կատարում էին ձրիաբար, յետոյ արդէն վարձատրութիւնով: Պլէբէյները զրկուել էին նախ հասարակական և պետական բոլոր գործերի վարչութիւնից, իսկ յետոյ արդէն նաև պետական և հասարակական հողերից: Եթէ դուրս հանենք իրաւական տարբերութիւնը, անդում կը մնայ լոկ քանակի տարբերութիւնը. երկու դասերն էլ երկրագործներ և կռուողներ էին, միայն մէկը շատ հող ունէր, միւսը քիչ: Պլէբսը դարեր կռուի մտաւ պատրիկների հետ և վերջ ի վերջոյ ձեռք բերեց նրանց հետ լիակատար քաղաքական և քաղաքացիական իրաւունքներ: Դասերի իրաւական յարաբերութիւնները յղկեցին, հարթեցին, բայց այն ժամանակ սկսեց խստօրէն երևան գալ տնտեսական հիմնական տարբերութիւնը— դասակարգային տարբերութիւնը: Յառաջացան խոշոր հողատէրեր, որոնց կալուածները կոչւում էին լատիֆունդիաներ, որ մշակւում էին հսկայական ստրկական բանակներով, բայց որոնց մի մասն արդէն սկսեցին տալ կապալով կիսահողատար, բայց սոված քաղաքացիներին: Կը նշանակէ՝ ազատների մի չքաւորացածները՝ ստիպուած եղան դիմել նորից երկրագործութեան, տալով իրենց եկամուտի մի մասը (յաւելեալ արժէքը) հողատէրերին: Սա արդէն խոշոր դասակարգային բաժանման սկիզբն էր: Առաջ եկան բազմաթիւ «ազատուած» ստրուկներ և ազատականներ, որ կարիքից ստիպուած, գնացին դէպի արհեստներ: Այդ նոյն «ազատուածների» մի խոշոր մասը հարստացաւ, դարձաւ խոշոր առևտրական: Շատ հարուստ պատրիկներ, տեսնելով առևտրի հսկայական չափերը, մտան զիջումների ազատուած ստրուկների հետ, կազմեցին խոշոր առևտրական ընկերութիւններ այդ ազատուածների ձեռքով, որովհետև հին օրէնքըն ազնուական պատրիկին արգելում էր զբաղուել առևտրով: Վերջապէս ազնուականների, պլեբէների և ազատուած ստրուկների մի խոշոր մասը հաւաքուեց քաղաքներում, կազմեց քաղաքային ամբոխը, պրոլետարիատը, որը ծառայում էր նաև իբր վարձու բանակ, բայց որի գլխաւոր եկամտի աղբիւրը պարազիտութիւնն էր, պորտաբուծութիւնը, հարուստների բաշխած կաշառքը՝ նրանց ձայնն ու օժանդակութիւնն ստանալու համար ընտրութիւններում:

Այսպիսով՝ հին, ստրկատիրական աշխարհում արդէն սկսւում էին խոշոր դասակարգային շերտաւորումներ, երևան էին գալիս ռանտիէներ կամ հողի եկամուտով ապրողներ, հողը վարձու վերցնող մշակողներ, վարձու բանուորներ և այլն: Հասարակութիւնը գնում էր դէպի դասակարգային խոշոր զարգացում, բայց նրա այդ բնական ընթացքի թելը կտրուեց Ազգերի մեծ տեղափոխութեան, գերման բարբարոսների արշաւանքի, Հռոմի հսկայական կայսրութեան անկման և հին աշխարհի դասական քաղաքակրթութեան քայքայման պատճա-

ռով: Բարբարոս հոներն ու հիւսիս-արևելքը խուժեցին, խառնեցին քաղաքակիրթ հարուստի հետ և կործանեցին Հին Աշխարհը: Դա նշանակում էր մարդկային զարգացման երկու խոշոր փուլեր՝ — բարբարոսութեան ամենաբարձր զարգացման և սկզբնական քաղաքակրթութեան նոյնպէս ամենաբարձր աստիճանի: Գերման բոլոր ցեղերը բարբարոս էին, դեռ նոր անցած հողային իրաւունքի, դեռ ևս նախնական կոմունիստական կարգերի ամենաթարմ մնացորդներով, որոնց մէջ կանայք դեռ ևս չէին ստրկացած ազատ մարդու ձեռքին, ստրկութիւնը համարեա գոյութիւն չունէր, չկար հասարակութեան մէջ շերտաւորում:

Այդ երկու տարբեր աստիճանները իրար խառնուեցին. ընկաւ, կործանուեց Հռոմի բարձր քաղաքակրթութիւնը և բարձրացաւ գերման բարբարոսութիւնը: Նրանց իրար բախուելուց ծնունդ առաւ միջնադարեան քաղաքակրթութիւնը, որ սկզբներում ցածր էր Հռոմի քաղաքակրթութիւնից, բայց բաւական բարձր էր գերման ցեղի վիճակից:

Ինչպէս տեսանք մի քիչ վերևում, Հին Աշխարհն արդէն սկսել էր նոր տեսակի տնտեսակարգերի ու դասակարգերի ծնունդ տալ, երբ կործանուեց: Եւ իսկապէս, հին հսկայական հողային կալուածները (լատիֆունդիա), որ մշակւում էին ստրուկների բանակներով, այլևս բաւարարութիւն չէին տալիս բոլոր ազնուականութեան՝ նրբացած ու հսկայական չափերի հասած կարիքներին: Ստրկատիրական լատիֆունդիալ տնտեսութիւնն այլևս ձեռնտու չէր, որովհետև հողային այդ հսկայական տարածութիւններում անհնար էր հսկել ստրկական աշխատանքի վրայ և այդ աշխատանքն այլևս դադարել էր եկամտալից (խոտ, ստակի) լինելուց: Ստրկատէրերի համար շատ աւելի ձեռնտու էր դարձնել իրենց ստրուկներին «ազատուածներ», թողել նրանց զբաղուել առևտրով կամ արհեստներով և ստանալ նրանցից խոշոր փրկանք, քան պահել մշտապէս ստրուկ: Այդ էլ դեռ ոչինչ. կեանքի փորձը սովորեցրել հողատէր-ստրկատէրերին, որ շատ աւելի ձեռնտու է իրենց հողերը յանձնել իրենց նախկին ստրուկներին,— ամէն մի ընտանիքին տալ մէկ կտոր հող, ասել նրան, որ նա ազատ է, թող մշակէ հողի այն ինչ կտորն իր համար, երբ իր հողը, միայն եկամուտի այսինչ կամ այնինչ մասը (օրինակ՝ կէսը, մի երրորդը, մի քառորդը եւ այլն) տայ իրեն՝ — ազնւականին, որին պատկանում է հողի սեփականութիւնը:

Եւ այդպէս էլ եղաւ. ստրկատիրութիւնը կամաց-կամաց վերացաւ եւ նրա տեղը բռնեց ճորտատիրութիւնը: Բոլոր բանւորները, բոլոր ստրուկները նստեցին հողի վրայ, կպան այդ հողին, ամրացան: Հողը պատկանում էր ազնւականին — բարոնին, վասալին, կոմսին, դուքսին, վանքին՝ ուրեմն նրա վանահօրն ու միաբանութեանը, իսկ գիւղացին ճորտ էր, հողից ժամանակաւորապէս օգտւող: Նա մշակում էր իր բաժին հողը եւ արդիւնքից որոշ մաս տալիս էր ազնւականին կամ հոգեւորականին, բացի այդ՝ մշակում էր նաեւ տիրոջ յատուկ հողը, նրա պարտէզն ու այգին, կատարում էր նրա համար ձրի աշխատանքներ — կոռ ու բեկեար, օրամ եւ անկարիա եւ այլն: Պատերազմի ժամանակ ազնւականն իր գիւղացիներից զօրք էր ժողովում եւ իր զօրքի գլուխն անցած՝ գնում էր կայսրի, կամ աւելի մեծ աւատական իշխանի բանակը զօրացնելու: Գիւղացին կամ ճորտը նախ վճարում էր իր արդիւնքի 1/2, 1/3, 1/4 մասը. իսկ յետոյ տնտեսական, մտաւոր ու քաղաքական զարգացման հետ միասին՝ սկսեց նւազել ճորտի վճարը եւ վերջապէս նա դարձաւ բերքի մի տասներորդը: Դա մի տուրք էր, որ յայտնի էր տասանորդ, dîme, աշար անուններով զանազան ժողովուրդների մէջ: Նա այսօր դեռ եւս գոյութիւն ունի Թիւրքիայում իբր պետական մի հարկ երկրագործական ու գիւղատնտեսական բերքերի վրայ: Նա մնում է իբր կամաւոր կամ պարտաւոր վճարում մեր եկեղեցու գործերում «պտղի», «հասոյթ», «տասանորդ» անուններով: Ճորտերը պարտաւոր էին մատակարարել ազնւականի համար անհրաժեշտ ծառաներ, որոնց թիւը միջին դարերում չափազանց շատ էր, դրանք եւ ամէն տեսակ ծառաներ եւ աղախիններ էին, եւ զինւած պահակ տիրոջ համար: Իսկ տէրը կերակրում էր նրանց բոլորին, որովհետեւ բնատնտեսութեան թագաւորութեան

լինելով, ամէն մարդ արտադրում էր թէ իր հացը եւ թէ իւղը, պանիրը կաթը եւ այլն. այդ արդիւնքները գնող չկար եւ ազնւականի ստացած բերքերի ահագին պաշարը (տասանորդը վճարւում էր բերքերով) կարող էր փթել, ոչնչանալ: Այդ է պատճառը, որ ամէն մի ազնւական ունէր ահագին թիւ ծառաներ: Գիւղացու արած այս բոլոր ծառայութիւնների փոխարէն տէրը պաշտպանում էր նրա դաշտերն ու այգիները, նրա կեանքն ու գոյքը միւս ազնւականների, այդ զինւած աւազակների անվերջ յարձակումներից:

Ստրկութիւնը մեղմացաւ, դարձաւ ճորտատիրութիւն: Նախկին ստրկատէրն ապրում էր ստրուկների յաւելեալ արժէքով, այժմեան ճորտատէրն էլ սկսեց ապրել իր ճորտերի յաւելեալ արժէքով: Թէեւ ճորտի վիճակն աւելի թեթեւ, աւելի մարդավայել էր քան ստրուկինը, բայց այդ երկու դասերի կամ այդ երկու դասակարգերի տնտեսական էութիւնը չը փոխւեց, որովհետեւ երկուսն էլ մնացին ազնւականութեան եւ հոգեւորականութեան ձեռքին կեղեքւողներ, նրանց ձրիաբար կերակրողներ. իրանք մնում էին կիսաքաղց եւ մերկ վիճակում, իսկ տէրերը՝ քանի գնում աւելի եւ աւելի փառաւոր էին ապրում:

Ինչպէս որ ստրկատիրութեան ժամանակ ազատ դասակարգի բոլոր անդամներն իրար հաւասար չէին տնտեսապէս եւ յաճախ նոյնիսկ իրաւապէս, այնպէս էլ ճորտատէր դասակարգը իր մէջ ունէր իր սեփական շերտաւորումը — հոգեւորականներ, խոշոր ազնւականներ, միջակ ազնւականներ, աղքատ ազնւականներ կամ հասարակ ասպետներ, որոնց ամբողջ հարստութիւնը կայանում էր իրանց զրահից, զէնքերից, ձիուց, մի քանի զինւած ծառաներից եւ որ եւ է ծերպի գլխին շինած այն ժամանակի համար անառիկ ամրոցից: Ստրուկ դասակարգի վիճակը ոչ մի շերտաւորման հնար չէր տալիս ստրուկներին: Այդպէս չէր ճորտերի դրութիւնը, նրանց համեմատաբար ազատ վիճակը հնարաւոր էր դարձնում շերտաւորում ճորտերի մէջ. կային աղքատ եւ հարուստ ճորտեր, կային ճորտեր, որոնք միայն երկրագործ էին եւ այնպիսիները, որոնք և երկրագործ էին, և՛ արհեստաւոր, և՛ մի քիչ էլ առեւտրական:

Գերման բարբարոսները տիրելով Հռոմի լայնածաւալ երկիրներին, տէր դարձան ամէն մէկը որ եւ է գաւառի, նահանգի եւ առանձին քաղաքների: Նախկին տիրող թագաւորները (քնեազ), դուքսերն ու հերցոգները, իրենց համարելով միւսների հետ լիապէս հաւասար կռւող, սկզբներում բաժանում էին իրենց յաղթութեան բոլոր պտուղները բոլորի մէջ: Սկզբնական այս խառնակ վիճակից կամաց-կամաց դուրս եկաւ մի պետական կարգ, որ կոչւեց աւատականութիւն: Որքան որ Հռոմի պետութիւնը կեդրոնացած էր, այնքան աւելի VII-VIII դարերի Եւրոպայում պետական կարգը ապակեդրոնացած էր. երկրի ամէն մի կտորը, յաճախ մի քաղաք, մի քանի գիւղեր ունէին իրենց ազնուական տէրերը, որոնք հպատակւում էին մի ուրիշ, աւելի խոշոր ազնուականի, նա էլ մի ուրիշին եւայլն, մինչեւ արքան մինչեւ կայսրը: Եթէ հպատակը ազնուական ուժեղ էր, նրա հնազանդութիւնը անւանական էր, իսկ եթէ թոյլ էր եւ սիւզրենը կամ իրանից բարձրը հզօր, հպատակութիւնը աւելի էական էր:

Նոյն ձեւի հպատակութեան ենթակայ էին նաեւ հնուց մնացած ու նոր հիմնարկւող քաղաքները, որոնք իրենց շուրջը եղած պարիսպների կամ բուրգերի անունով կոչւում էին բուրգեր կամ քաղաքներ, իսկ մէջի բնակիչները բուրժուաներ կամ քաղաքի բնակիչներ (քաղքցի), *) որ այն ժամանակ հակադիր էր գիւղում ապրողներին— գիւղացիներին, որոնք ճորտեր էին: Քաղաքների բնակիչները երբէք չենթարկւեցին լիակատար ճորտացման. նրանք միայն անձնականապէս ազատ, բայց հարկատու անհատներ, ենթակայ կամ կայսրին, կամ արքային եւ կամ այս ու այն խոշոր ազնուականին: Բոլոր տիրողները քաղաքների ազգաբնակութեան հետ շատ մեղմ եւ շատ լաւ էին

(*) Դժբաղդաբար մենք դեռ եւս չունենք ոչ մի համապատասխան տէրմին bourgeois եւ citoyen բառերի համար, երկուսն էլ ստիպւած ենք եղել կոչել քաղաքացի: Մեր գրականութեան մէջ ընդունել են գործածել բուրժուա իբր դասակարգ եւ քաղաքացի՝ իբր պետութեան անդամ, իսկ քաղաքի բնակիչ (bourgeois) բառը մենք դեռ եւս չունենք. լաւ կը լինէր գործածել ժողովրդական ձեւը— «քաղքցի» կամ քաղքենի:

վարւում, որովհետեւ այդ ազգաբնակութիւնը նախ ներկայացնում էր խոշոր թիւ, երկրորդ՝ նա էր, որ մատակարարում էր հնչիւն դրամ. ճորտերը տալիս էին լոկ բնական բերքեր: Ի հարկէ քաղաքներում էլ կար մի մաս, որ ապրում էր ծայրերում եւ մշակում քաղաքի շրջակայ հողերը. դա ռամիկը, երկրորդ մասն էր քաղաքում, որը յաճախ մատակարարում էր քաղաքի բնակիչների հացը եւ վաճառում դրամով, այդպիսով ընդունակութիւն ձեռք բերելով դրամական հարկ վճարելու ազնուականին:

Ճորտերից հարստացածները յաճախ դրամով, անտառներով կամ այլ հարստութիւններով գնում էին իրենց ազատութիւնը ազնուականից, թողնում գիւղը եւ բնակւում էին քաղաքում, պարապելով այնտեղ որեւէ արհեստով կամ նոյն իսկ քաղաքացին հողերի մշակութեամբ: Պատահում էին յաճախ նաեւ կտրիճ, ճարպիկ, խորամանկ ճորտեր, որոնք իրենց տէրերին մատուցանելով այս կամ այն զգալի ծառայութիւն, տէրերից ստանում էին, իբր շնորհ ու վարձատրութիւն, իրենց ազատութիւնը, մի քիչ էլ դրամ եւ գալիս հաստատւում էին քաղաքներում: Վերջապէս՝ յաճախ որեւէ ճորտ փախչում, թաքնւում էր քաղաքներում, ծածուկ, առանց ձերբակալւելու ապրում էր որոշ թիւ տարիների եւ ապա դուրս էր գալիս լոյս աշխարհ, ապրում իբր ազատ մարդ: Նոյն ձեւի փախուստի դիմում էին նաեւ յանցագործ ճորտեր, որոնց սպառնում էր տիրոջ դաժան դատականութիւնը, բանտը կամ կախաղանը: Նա էլ մի կերպ թաքնւում էր քաղաքներում, մինչեւ որ իր գոյութիւնը մոռանում էին եւ ապա ապրում այնտեղ իբր քաղաքի ազատ բնակիչ: Ինչ ասել կ'ուզէ, որ օտարերկրացի ամբողջ վաճառականների էլ միակ ապաստանը քաղաքներն էին:

Այսպիսով մեծանում էին ու բազմանում միջնադարեան քաղաքները: X-XI դարերում մենք արդէն գտնում ենք բաւական թւով խոշոր քաղաքներ, որոնք ձեռք էին բերել մեծ նշանակութիւն երկրի առեւտրի ու արտադրութեան մէջ: Նրանց բնակիչների ամենաէական զբաղմունքներն էին արհեստները եւ առեւտուրը: Արհեստաւորութիւնը, որ սկսում է կազմակերպւել իբր համքարութիւններ, ձեռք է բերում տիրող նշանակութիւն Եւրոպայի քաղաքներից մեծամասնութեան մէջ: Ծովափնեայ վաճառաշահ կենտրոններն են (կամ նաւարկելի գետերի ափերին), ուր տիրող դեր է կատարում առեւտրական դասը, արիստոկրատիան կամ դրամի նորածին ազնուականութիւնը:

Համքարութիւնները կամ էսնաֆները նախ կազմւում են իբր զուտ տնտեսական միութիւններ, փոխադարձ օժանդակութեան, իրար վրայ հսկելու, արհեստի պատիւ բարձր պահելու համար: Համքարութիւնն ունէր իր պետը, իր ընտրովի խորհուրդը, իր սեփական դրամարկղը, աղքատներին օգնելու գանձանակը, թաղման դրամարկղը եւայլն: Տնտեսական ու բարեգործական այս նպատակներով կազմակերպուելով ամէն մի արհեստի անդամները, կամաց կամաց բոլոր համքարութիւնները միացան, մի բանակ կազմեցին, որն իր ձեռքն առաւ ոչ միայն արհեստին վերաբերեալ ժամերի, աշխատավարձի, աշակերտելու, քարգարութեան (օգնական վարպետ) տարիների թւի, վարպետ դառնալու պայմանների, շինուած ապրանքի որակի որոշման գործերը, այլ եւ քաղաքի ինքնավարչութեան, նրա ներքին վարչութեան բոլոր գործերը: Համքարութիւնը դարձաւ մի հզօր ոյժ, որ իր ձեռքն առաւ քաղաքի կառավարութիւնը. նա վերածուեց նաեւ քաղաքական միութեան:

Ուրեմն միջին դարերի հասարակութեան ընդհանուր պատկերը հետեւեալն է. մի կողմում կանգնած է ազնուականութիւնն իր դասերով, միւս կողմում ճորտերը, իսկ այդ երկուսից դուրս, քաղաքների ամուր բուրգերին ապաւինած, ծնունդ է առնում մի նոր դասակարգ —Երրորդ դասակարգը (tiers état), որ էապէս տարբերւում է թէ հոգեւորականութիւնից, թէ ազնուականութիւնից եւ թէ ճորտերից: Նա բաղկացած է առեւտրականներից եւ արհեստաւորներից. նրա հետ միասին, նրա հետ համերաշխ ապրում են քաղաքներում ուսուցիչներ, փաստաբաններ, ժամանակի բժիշկները, վարձու բանուորներ—աշակերտ եւ քարգար: Դրանք անձնականապէս բոլորն էլ ազատ են, բայց ազնուական չեն,— ստոր են ազնուականներից օրէնքի առջեւ, սակայն ճորտ էլ չեն— աւելի բարձր են. դրանք bourgeois

են Ֆրանսիայում, bürger են Գերմանիայում, կարճ՝ նրանք բոլորն էլ քաղաքի բնակիչներ են, ազատ անձնաւորութիւններ: Բայց այդ քաղաքի հասարակութիւնը մանրանկարն է մեր ներկայ հասարակութեան: Նա իր մէջ կրում է ներկայ շերտաւորումների ամբողջ սաղմերը. այնտեղ կան տնատէրեր եւ փոքրիկ հողատէրեր, որ վարձու են տալիս իրենց անշարժ կալքերը. կան նախաձեռնողներ— առեւտրականներ՝ իրենց գործակատարներով եւ խոշոր վարպետներ՝ իրենց տնանեակների համար աշակերտներով ու բանուորներով (քարգարներ): Վարձւոր են գործակատարները, բանուորները, աշակերտները: Նրանք աշխատում են, եւ տէրը իւրացնում է նրանց յաւելեալ արժէքը: Սակայն դասակարգային այդ հակադրութիւնը դեռ աչքի չէ ընկնում երկու խոշոր պատճառներով. նախ՝ որովհետեւ վարպետը եւ խանութատէրը դեռ ես սովորեցնում են իրենց արհեստն աշակերտին, բանուորին ու գործակատարին, որոնց պահում են յաճախ իրենց տանը, համարում իրենց ընտանիքի բաղադրիչ մասը, երբեմն նոյն իսկ «տնփեսայ» դարձնում, իսկ միշտ նրանց վերջ ի վերջոյ՝ մի կտոր հացի են տիրացնում, վարպետ օրհնել տալիս, մի արհեստանոց բաց անում, մի խանութ սարքում՝ մէջը նստեցնում,—մի խօսքով՝ դարձնում մի ինքնուրոյն առեւտրական կամ արհեստաւոր: Ներքին հակադրութեան չերեւալու երկրորդ խոշոր պատճառն էլ այն է, որ քաղաքի բոլոր բնակիչների, նրանց ամբողջութեան դէմ կանգնած է մի հզօր թշնամի բանակ— ազնուականութիւնը, որի սպառնական ներկայութեամբ քաղաքի բնակիչների ներքին հակասութիւնները չէին կարող զարգանալ, հասնել որոշ բարձրութեան ու սրութեան: Ընդհանուր թշնամու ներկայութեամբ լռում են ներքին հակասութիւնները, զսպւում ժամանակաւորապէս:

Համքարութիւններն աճեցին ու զօրացան: XVI դարում նրանք արդէն հասել էին իրենց զարգացման ու փարթամութեան գագաթնակէտին: Նրանց ներքին կանոնները կամ «ստատուտները» հասել էին ծայրայեղ ճշտութեան ու նրբութեան: Ճշտիւ որոշուած էր, օրինակ, թէ քանի աշակերտ կարող է ունենալ ոսկերիչ վարպետը, քանիս կօշկակարը, դերձակը եւ բոլոր միւս արհեստաւորները. որոշուած էր բոլոր արհեստաւորների համար ունենալիք քարգարների բարձրագոյն թիւը, որից աւելի ոչ ոք չէր կարող ունենալ. սահմանուած էր, թէ որ արհեստում աշակերտը քանի ամիս պիտի աշակերտէ, ապա քարգար դառնայ և քանի տարի պէտք է բանւորութիւն անէ, որ արժանանայ վարպետութեան: Որոշուած էին վարպետ լինելու քննութեան բոլոր պայմանները. օրհնութեան արարողութիւնները նոյն: Այդ դեռ քիչ է. յաճախ նոյն իսկ որոշուած էին գինում նաև այն բոլոր գործիքները ու աշխատելու եղանակները, որոնցով պիտի կատարուէր արտադրութիւնը: Նորութիւն մտցնել համարեա՛ անհնար էր: Կար արգելքների բարեխղճութեան վրայ հսկող մարմին, որ համքարական ամբողջ խորհուրդն էր կամ նրա մի մասը: Այսպիսով՝ համքարական կարգը, որ սկզբներում դեռ երկա՛ր ժամանակ հանդիսանում էր իր առաջդիմութեան, կուլտուրայի մի զօրեղ խթան, հասարակական հարստութեան աւելի հզօր աղբիւր, քան նախնական բնատնտեսական սիստէմը, որի մէջ գոյութիւն չունէր աշխատանքի հասարակական բաժանում, — այդ նոյն համքարական կարգն էր զարգացման բարձր շրջանում, դառնում է բռնակալ, յառաջդիմութեան խոչընդոտ և հեռաւոր զարգացման արգելառիթ:

Սակայն թէ մարդկանց թւի աճեցողութիւնը և թէ կուլտուրական բարձրացող պահանջները — բոլոր մարդ էակների կարիքների շատանալը՝ պահանջում էին մարդկային հասարակութիւնից կամ հնարել արտադրութեան մի նոր, աւելի ինտենսիվ (սաստիկ), աւելի արդիւնաւոր ձև, մի ձև, որով քիչ եռանդ գործադրելով աւելի շատ արդիւնք ստացւէր, քան համքարական արհեստաւորական տնտեսութեան միջոցով և կամ դատապարտել հասարակութեան աւելացող թւի մի մասին կոտորելու, սովամահ լինելու:

Եւ արտադրական նոր սիսթէմը ծագեցաւ: Այդ նոր ձևի արտադրութիւնը կոչւեց «մանուֆակտուրական տնտեսութիւն» կամ ձեռնարւեստական արտադրութիւն: Վերածնութեան շրջանի ծաղկած գիտութիւնները ծնունդ տւին տպագրութեան

վառօդի գիւտին. բացւեց դէպի Հնդկաստան շուրջաֆրիկեան ուղին, գտնւեց վերջապէս Ամերիկան. Բերտոլդ Շւարց աբեղայի գտած վառօդը հնարաւոր դարձրեց ստեղծել «արքեբուզը» կամ սկզբնական թնդանօթ-հրացանը, որի գնդակների առջև այլևս չէին դիմանում աղքատացած մանր ազնւականների ու ասպետների զրահները, նոյնիսկ նրանց մանրիկ դղեակները. մի կողմից մանր ու աւատական ազնւականութիւնն սկսեց ընկնել, կենտրոնական պետական իշխանութիւնը հզօրանալ. առաջ եկան ազգային պետութիւններ ինչպէս Ֆրանսիան, Իսպանիան, Անգլիան և այլն, իսկ միւս կողմից՝ նոր գտնւած երկիրները ու գիտական գիւտերը հնարաւոր դարձրին առևտրի մինչ այդ չտեսնւած մի հսկայական զարգացում:

Համքարութիւնների կողքին ծնունդ առան նոր տեսակի արհեստանոցներ: Որ և է նախաձեռնող հարուստ մարդ բաց էր անում մի խոշոր արհեստանոց, հաւաքում այնտեղ բազմաթիւ աղքատ արհեստաւորներ, բոլորին տալիս էր գործիքներ և հում նիւթ ու օրավարձով աշխատեցնում, նրանց արտադրած ապրանքը հանում կամ ներքին շուկայ, կամ արտահանում այլ վայրեր և վաճառում, կամ յանձնում օտար և տեղացի առևտրականների վաճառելու: Ինչ ասել կուզէ, որ այդպիսի նոր տեսակի հսկայ արհեստանոցը պիտի դէմ լինէր համքարական սովորութիւններին և համքարական կարգերն արգելք պիտի դառնային նրանց: Այդ արգելքն առնելու նոր ձևի արհեստանոցներին քաշւել խոշոր գիւղերը, որ և է ազնւականի կալւածը կամ քաղաքների պարիսպներից դուրս, ուր չէր հասնում համքարութեան իրաւունքը:

Նոր բացւած հսկայական շուկան կարիք էր զգում ապրանքների, մանաւանդ ամէնից աւելի և ամէնից առաջ կտաւեղէնների: Բուրդը դառնում է ամենաանհրաժեշտ հում նիւթ, որի գինը բարձրանում է:

Հողատէր մանր ու խոշոր ազնւականութիւնն սկսում է ոչխարներ պահել, բուրդը վաճառելու համար: Կամաց-կամաց գիւղացիների արտերն ու տնտեսները խլում են ձեռքերից և դարձնում են իրենց խոշոր ու աճող հօտերի համար արօտատեղի: Գիւղացիների հողերն այնքան էին պակասում, որ նրանք, սովից տանջուած, թողնում էին իրենց տներն ու գիւղերը, գաղթում դէպի քաղաքներ: Գիւղեր, տներ, եկեղեցիներ հողի էին հաւասարեցնում և վերածում արօտատեղերի ու որսատեղերի: 1533 [illegible]ին Անգլիայում հրատարակուած մի օրէնք ասում է, որ մի քանի հողատէրեր ունեն ամէն մէկը 24,000 ոչխար: Այդ օրէնքը նրանց արգելում է 2000 ոչխարից աւելի պահել (*): Այդ երևոյթն է, որ տեղի է տուել անգլիական կանցլեր հռչակաւոր Թովմաս Մորին իր «Ուտօպիա» գրուածքում խօսել մի տարօրինակ երկրի մասին, «ուր ոչխարները մարդ են ուտում»:

Գիւղական ճորտ ազգաբնակութիւնն ազատ էր արձակւում, բայց ազատ՝ առանց հողի, առանց ապրուստի, «ազատ սովից մեռնելու», «թեթև ինչպէս օդը», համաձայն Մարքսի արտայայտութեան: Եւ այդ գիւղացիներն սկսեցին լցնել քաղաքները, խուժել գիւղերը, թափառել մեծ ճանապարհների վրայ, թալանել, գողանալ, կողոպտել... Սոսկալի կերպով զարգացաւ թափառաշրջիկութիւնը: Կառավարութիւնները հրատարակեցին դրակօնական օրէնքներ թափառաշրջիկութեան դէմ: Զինուած պահակները շրջում էին գաւառներում, ամէն կողմ, ուր հանդիպում էին ճամբորդների, որոնց մօտ մի էկիւ (5 ֆրանկ) գոնէ չէր գտնում, նրանց գնդակահարում էին իբր թափառաշրջիկ... Պարզ է ուրեմն, որ նոր ծնունդ առնող կապիտալիստական տնտեսութեան երկու խոշոր պայմանները կային առատօրէն. հում նիւթը առատ էր, մանաւանդ բուրդը, աւելի քան առատ էր աշխատող ձեռքը: Փոր հացի համար պատրաստ էին հողազուրկ եղած գիւղացիներն ու բանւորները ծառայել, բայց էլի տեղ չէր լինում: Սկզբնական մանուֆակտուրական կապիտալիստն առաջին օրից իսկ հանդիսանում է իբր «բանւորի բարերար», նրա մասին հոգացող, նրան գործ ու ապրուստ մատակարարող:

«Կապիտալիստական սիսթէմի հիմքում գոյութիւն ունի արտադրողի արմատական անջատումն արտադրութեան միջոցներից: Այդ անջատումը կատարւում է առաջնութեան օրէնքով (քանի գնում աւելի արագանում է նա), երբ մի անգամ արդէն կապիտալիստական սիստէմը հաստատւում է. բայց ուրեմն այդ անջատումը կազմում է կապիտալիզմի հիմքը, այդ պատճառով առանց նրան սա չէր կարող առաջանալ»: (*)

Արտադրական միջոցների այդ անջատումը կամ ճորտերի, գիւղացիների պրոլէտարացումն ամէնից առաջ տեղի ունեցաւ Իտալիայում, ուր մանրիկ հանրապետութիւններն, ինչպէս Վէնէտիկը, Ջէնովան, Միլանը, Ֆլօրէնցիան, Պիզան, Նէապօլը և այլն, խիստ զարգացած արտադրութիւն (մանուֆակտուրա) և առևտուր ունէին Միջերկրականի ընդարձակ աւազանում: Դրա համար էլ ճորտութիւնն ամէնից առաջ վերացաւ այնտեղից: Իսկ երբ XV դարի նոր գիւտերն ու ճանապարհները թեքեցին առևտրի ուղղութիւնը դէպի հարաւ ու արևմուտք, այն ժամանակ ծաղկել սկսեցին Անգլիան, Հօլլանդիան, Հանզէան քաղաքները, Ֆրանսիան, Իսպանիան ու Պորտուգալիան, իսկ Իտալիան սկսեց արագ ընկնել: Եւ քաղաքներում կուտակուած նրա անհամար թւով պրոլէտարիատն ստիպուած եղաւ կրկին վերադառնալ գիւղերը, աստիճանաբար տիրանալ մանր հողաբաժինների և հաց ճարել երկրագործութիւնով, մանաւանդ բանջարաբուծութիւնով:

Առաջին խոշոր արհեստանոցներում դեռ խմբւում էին սեփականազուրկ արհեստաւորներ, որոնք աշխատում էին դեռ ես ինքնուրոյնաբար, ինչպէս մի խանութատէր. մի վարպետ և մի օգնական կատարում էին բոլոր աշխատանքները: Բայց աստիճանաբար առաջ եկաւ արհեստանոցներում աշխատանքի տեխնիկական բաժանում. ամէն մի արտադրւող առարկայ անցնում էր մի քանի վարպետի ձեռքով, որոնցից ամէն մէկը կատարում էր աշխատանքի մի որոշ մասը: Ասեղն, օրինակ, ըստ Ադամ Սմիթի, անցնում էր 19 վարպետի ձեռքով. մէկը երկաթն էր թել դարձնում, միւսը թելն էր յղկում, երրորդը որոշ չափով թելը կտրատում էր ամբողջ օրը, չորրորդը սրում

(*) Տես Karl Marx-«Le Capital,» tome I p. 317.

(*) K. Marx— Նոյն աշխատութիւնը, եր. 315, առաջին սիւնակ:

էր գլխից մի ծայրը նոյնպէս ամբողջ օրը, հինգերորդը սափակցնում էր միւս ծայրը, վեցերորդը ծակում էր այդ սափակցրած ծայրը, եօթներորդը փայլեցնում և այլն, և այլն:

Ամէն մի վարպետ կատարում էր լոկ իր բաժին գործողութիւնը տարիներ շարունակ, իր ամբողջ կեանքում. նա դառնում էր իր գործի ստրուկը, մի վարժ մեքենայ, մի վիրտուօզ: Աշխատանքի այդ տեսակ բաժանումն, ունենալով իր շատ խոշոր առաւելութիւնները, տալիս էր, քիչ ծախսով, շատ աւելի առատ և աւելի լաւ արդիւնք, քան համքարական արհեստաւորական ձեռնարկութիւնն. այդ պատճառով մանուֆակտուրական ձեռնարկութիւնն սկսեց արագ զարգանալ, ճնշելով համքարութիւնների մղած կատաղի կռիւն նրա դէմ: Կամաց կամաց մանուֆակտուրական արտադրութիւնն սկսեց մտնել քաղաքները, գրաւել ասպարէզները համքարական արհեստաւորների ձեռքից, քայքայել և մահւան մօտեցնել նրանց փառաւոր կազմակերպութիւնները: Այդ կռիւը տևեց մօտ երեք դար.— սկսած XVI դարի սկիզբներից մինչև XVIII դարի վերջը, մինչև Տիւրգօյի նախարարութիւնը Ֆրանսիայում, Մեծ Յեղափոխութեան նախօրեակին, երբ նախարարական հրամանագրով լուծւած հրատարակւեցին բոլոր համքարութիւնները և ամէն մի արհեստաւոր ազատ ճանաչւեց օրէնքով: Դա կապիտալիստական արտադրութեան վերջնական յաղթանակն էր միջնադարեան մանր արհեստաւորական ձեռնարկութեան դէմ: Դրա հետ միասին Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնն ազատեց ճորտերին, քանդելով ճորտատիրական կարգերի բոլոր մնացորդները, հաւասար և ազատ ճանաչելով «մարդուն և քաղաքացուն» օրէնքի առջև: «Բոլոր մարդիկ եղբայրներ են, իրար հաւասար», ի հարկէ օրէնքի առջև: Սուրբ է մասնաւոր սեփականութիւնը: Մարդիկ ազատ են ամէն տեսակ... տնտեսական ձեռնարկութիւններում:

Դա երիտասարդ կապիտալիզմի յաղթանակն էր: Աշխատանքի տեխնիկական (մեքենական) բաժանումը արհեստանոցի ներսում գործերը վերածելով ամէնապարզ մասերի, դիւրացրեց այդ պարզ ու միապաղաղ գործողութիւնների համար մեքենաներ

հնարելը: XVIII դարի վերջերից սկսւում է մեքենաների գիւտը և զարգացումը, որի արագ ընթացքը դեռ չէ դանդաղել մինչև օրս: Արհեստանոցի ներսում մի անհատ, կատարելով աշխատանքի լոկ մի չնչին մասը, հանդիսանում էր իբր ուրիշներից, բոլոր աշխատողներից կախւած մի էակ, որ ինքնուրոյնաբար ոչինչ չէր կարող արտադրել: Արհեստանոցի բոլոր բանւորները միասին վերցրած՝ կազմում էին մի օրգանական արտադրական ամբողջութիւն, որից եթէ մի աշխատանք կատարող պակասէր, ամբողջ օրգանիզմը կը հիւանդանար: Կարճ, աշխատանքը դարձաւ հասարակական, այն ինչ նա զուտ անհատական էր արհեստաւորական ձեռնարկութեան մէջ: Հակառակին արհեստանոցի, որ այժմ կոչւում է գործարան, տէրը մի մարդ էր, մի կապիտալիստ. նա վարձում էր բոլորին, վճարում որոշ աշխատավարձ և ստիպում գալ գործարան, աշխատել 12—14—16 ժամ, արտադրել ապրանքներ և հեռանալ, չխառնւելով ամենևին նրանց, այդ իրենց ձեռքով արտադրւած ապրանքների գնի, վաճառման և նրանց գնի գանձման գործին: Տէրն էր ծախում արտադրած ապրանքները, օգուտ կամ վնաս անում, իւրացնում և օգուտը, և վնասը:

Մեքենաները հնարւելով ու զարգանալով, մտնում են գործածութեան. նրանք այլևս աւելորդ են դարձնում նախկին արհեստաւորների կարիքը կամ չափազանց կրճատում են այդ ուսուցման ժամանակը: Հին ձևի արտադրութեան մէջ թէ համքարական և թէ մանուֆակտուրական,— բոլոր աշխատողները արհեստի տէր մարդիկ էին,— կամ վարժւած վարպետներ, կամ վարժւող աշակերտներ ու քարգարներ, անվարժ, սև աշխատանքներ կատարող մշակներ համարեա՛ չկային, եղածներն էլ աննշան թւով էին: Իսկ երբ մեքենաները մտան, աշխատողների մեծամասնութեան գործն այնքան դիւրացաւ, որ այլևս սովորելու կարիք չկար. աշխատանքը դարձաւ «անորակ» (non qualifié): Եւ յիրաւի, ինչ վարպետութիւն է հարկաւոր մեքենայի որոշ ծակերում իւղ ածել, կամ անիւը դարձնել, կամ վառելիք լցնել հնոցը... եթէ վարժութիւն էլ հարկաւոր է, ընդամէնը մի քանի օր բաւական է:

Այդ դեռ քիչ է, մեքենան յաճախ ոչնչացնում է նաև ոյժ գործադրելու պահանջը, որովհետև չափազանց դիւրացնում է աշխատանքը և դրանով հնարաւոր է դարձնում կանանց և երեխաների մուտքը գործարանները, դարձնելով նրանց մըրցակից տղամարդ բանուորներին: Ընկնում է աշխատավարձը:

Մեքենան, մտնելով գործի, բանուորութեան բոլոր անդամներին բաժանում է երկու բաւական որոշ շերտերի, որակւած, վարժութեան, կրթութեան կարիք ունեցող աշխատանքներ կատարող բանուորներ և անորակ, վարժութեան, ուսման կարիք չունեցող աշխատանքներ կատարող բանուորներ: Առաջին մասը հանդիսանում է բանուորական արիստոկրատիան, կրթւած, համեմատաբար բարեկեցիկ և լաւ վճարւած: Իսկ երկրորդ մասը, որ բանուոր դասակարգի հսկայական մեծամասնութիւնն է կազմում, ընկնում է նիւթապէս, յետ է մնում մտաւորապէս:

Մանուֆակտուրական մեծ գործարանները և մեքենաների լայն գործածութիւնը, սաստիկ առաջացնելով արտադրութիւնը, ծնեցնում են կարիք հաղորդակցական նոր ու աւելի հզօր միջոցների. Եթէ արհեստաւորական ու բնական տնտեսութեան ժամանակ գործում էին կարաւանն ու եզան սայլը, մանուֆակտուրայի օրով հնարւեց առաջին անգամ Ֆրանսիայում (XVII դարում) խճուղին, իսկ մեքենաների արտադրած հսկայական քանակութեամբ ապրանքների տեղափոխութիւնը կատարել կարելի էր միայն շոգենաւերով ու երկաթուղիներով, որոնք և լոյս աշխարհ եկան XIX դարի շեմքում: Դրանցից ո՞րն է ծնողը, ո՞րը զաւակը, այդ հարցն անգամ անմիտ է. դրանք բոլորն էլ կազմում են մի ձոյլ ամբողջութիւն, հասարակական դրութեան մի անանջատելի մասերը, դրանք հաւասար եղբայրներ են, միասին ծնւած, միևնոյն հասակի, չկայ հայր և որդի նրանցում. Նրանց բոլորի միասնութիւնն է, որ կազմում է սինթեթիկական ամբողջութիւն:

Այսպիսով՝ մենք արդէն տեսնում ենք ներկայ հասարակութեան պատկերը: Կան հողատէրեր, կան գործարանատէրեր, կան առևտրականներ ու բազմաթիւ արհեստաւորներ (*), կան

(*) Կարլ Բիւխերի կարծիքով, կան մօտաւորապէս 10,0000 տեսակի արհեստներ:

մանր հողատէր գիւղացիներ, կայ վարձու աշխատողների մի հսկայական բանակ, որի մէջ մտնում են տարեկան 20-30,000 ռուբլի ստացող էնժէնեօրներ, բժիշկներ, քիմիկոսներ, մեքենագէտներ և այլն, կան և օրեկան հազիւ 30-40 կոպէկ ստացող բանւորներ, պրօլէտարներ:

Այս գլխում մենք մի համառօտ պատմական ակնարկ նետեցինք հասարակական շերտաւորումների անցեալի վրայ: Դիմենք այժմ դասակարգերի ներկայ պատկերին, նրանց բնորոշ յատկութիւններին:

ԳԼՈՒԽ II

Կեղեքւած դասակարգը:— Յաւելեալ արժէք:— Ներկայի գլխաւոր երեք դասակարգերը. հողատէր, դրամատէր և աշխատաւոր:— Ադամ Սմիթ և Մարքս:— Կաուցկին իբր շարունակող Մարքսի տեսակէտի:— Էնգէլս:— Արտադրութի՞ւնը թէ բաշխումն ընդունել երեք դասակարգերի բաժանման:— Ժամանակակից պրօլէտարիա՞տս թէ աշխատաւորութիւն:— Աշխատաւորական տեսակէտը:— Գիւղացին և բանւորը:— Թւեր և տեսակէտներ:— Ո՞ր դասակարգերն են ընդունակ ընկերվարօրէն մտածելու:— Ընկերվարականները և գիւղացին:

Մարդկային հասարակութիւնների հնագոյն շերտաւորումն ստրկութիւնն է, որը, ինչպէս տեսանք նախընթաց գլխում, հին դարի վերջում և միջին դարի սկզբում վերածւեց ճորտատիրութեան, իսկ այդ վերջինն աստիճանաբար, սկսած XIV-XVI դարերից, վերածւեց ազատ վարձու բանուորութեան: Այդ երեք դարաշրջանների դասերի— թէ ստրուկի, թէ ճորտի և թէ վարձու աշխատաւորութեան և ստրկատէր, ճորտատէր ազնւականութեան ու ներկայի գործատէր ու հողատէր բուրժուա դասակարգերի յարաբերութիւնների մէջ, չը նայելով իրաւական դրութիւնների հսկայական տարբերութիւններին, կայ մի էական նմանութիւն. երեք վիճակում էլ մի դասակարգը կեղեքում է միւսին, աշխատեցնում է նրան և վճարում ոչ թէ նրա աշխատանքի ամբողջական արդիւնքը, այլ այդ արդիւնքի լոկ մի մասը,— այնքան, որ աշխատաւորն ապրել կարողանայ որ և է կերպ, կէս կուշտ, կէս մերկ. իսկ մնացած արդիւնքը, որ կրում է յաւելեալ արժէք անունը, տոկոս, կեղեքող դասակարգը գրպանում, իւրացնում է: Այդ իւրացրած յաւելեալ արժէքի մի մասը նա բաժանում է պետութեան, պաշտօնէութեան եւ ուրիշ կեղեքիչ կամ պորտաբոյծ դասակարգերի հետ, իսկ միւսից էլ հանելով իր փառաւոր ապրուստի համար անհրաժեշտը, մնացորդը դարձնում է նոր կապիտալ, արտադրութեան նոր միջոցներ, որոնցով պիտի աշխատեցնէ աւելի թւով մարդիկ, քան առաջ, որպէսզի իւրացնէ աւելի քանակութեամբ յաւելեալ արժէք, քան առաջ: Ու այդպէս անվերջ — նոր կապիտալ, նոր ու աւելի թւով աշխատաւորներ, նոր շահագործում, կապիտալի նոր աճեցում... կանգ առնել անհնար է. դա կապիտալիզմի յատուկ, ներքին զարգացման օրէնքն է: Որ կապիտալիստը կանգ առաւ, չը մեծացրեց իր արտադրութիւնը, դրանով իսկ նա կանգնում է մահւան ճանապարհին. որովհետեւ շրջապատի բոլոր գործարանները մեծանում եւ մեծացնում են իրենց գործը. արտադրութեան ծախքերը դրանով նւազում են, իսկ մեր պարոնը մնում է նոյն վիճակում. այսօր չէ վաղը՝ նա այլ եւս չէ կարող դիմանալ խոշորացած ու խոշորացող իր դրացիների մրցմանը. կամ գործից կը փախչի, հանելով իր դրամագլխի մի մասը եւ դրամական բէնքայով (%ներով) ապրելով, կամ կը սնանկանայ, կը կորցնէ իր ունեցածը, կը դառնայ վարձւոր իր նախկին դրացի մրցակիցների ձեռքին, որոնք, ի հարկէ, նրան չեն դարձնի անմիջապէս հասարակ մշակ, այլ նախ կը տան, մի քիչ աւելի պատւաւոր տեղ, իսկ յետոյ, թերեւս աստիճանաբար իջեցնեն նա եւ դէպի ներքեւ:

Ինչպէս արդէն տեսանք, հին եւ միջնադարեան հասարակութիւնները, բացի այդ երկու խոշոր շերտերից, պարունակում էին իրենց մէջ նա եւ այլ տեսակի ստորաբաժանումներ կամ խաւեր: Ներկայի հասարակութիւնն էլ զերծ չէ այդ ստորաբաժանումներից:

Թէ հնադարեան կաստաները, թէ միջին դարերի ու նոր ժամանակների դասերը (իրաւական խաւեր) միայն արտաքին նմանութիւն ունեն ներկայի դասակարգ հասկացողութեան հետ:

Հնադարեան կաստան եւ այժմեան դասը իրաւական հասկացողութիւն են: Օրինակ՝ Եգիպտական «արհեստաւորների կաստան» չէր ներկայացնում որեւէ մշտական մեծութիւն: Նրա մէջ կային եւ աղքատ արհեստաւորներ, եւ՛ հարուստներ, եւ՛ բանւորներ, եւ՛ աշակերտներ: Այդ բոլորը միասին կոչւում էին՝ արհեստաւորներ, ինչպէս որ գիւղացի են կոչւում եւ հարուստ ու աղքատ երկրագործները, եւ՛ երկրագործ սեփականատէրն ու նրա մօտ վարձւած մշակները: Այժմ էլ եթէ մենք վերցնենք «քաղքենի» կամ քաղաքաբնակների դասը կամ գիւղացիների դասը, կը գտնենք նրանց մէջ բաւական խոշոր շերտաւորումներ, իրարից ահագին անդունդներով բաժանւած: Այսպէս, քաղքենի կամ քաղաքաբնակ է կոչւում մի քաղաքացի աղքատ արհեստաւոր, մի վարձու բանւոր, մի խոշոր արհեստանոցատէր, որի մօտ աշխատում են 60-70 բանւոր եւ որոնց յաւելեալ արժէքը նա իր գրպանն է դնում: Իսկ «գիւղացի» բառն իր տակը թաքցնում է եւ գիւղական վաշխառու կապիտալիստին, եւ գիւղի դարբին-արհեստաւորին, եւ՛ դերձակին, եւ բաւական խոշոր հողեր եւ հօտեր ունեցող գիւղական բուրժուային, որ ունի իր մօտ տասնեակներով վարձու մշակներ, եւ այն գիւղացուն, որը հազիւ այնքան հող ունի, որ կարողանայ ինքն ու իր ընտանիքի անդամները մշակել, եւ՛ սակաւահող գիւղացուն, որը տարւայ մի խոշոր մասն անպատճառ պէտք է անցկացնէ գործարանում կամ ուրիշ գիւղացիների՝ հարուստների գործերում՝ իբր վարձկան բանւոր, որպէսզի իր ապրուստը հանէ, — վերջապէս եւ հողազուրկ գիւղական պրոլէտարին, որը ծախում է իր աշխատանքը եւ դրանով ճարում իր ապրուստը:

Այդպէս չէ դասակարգը: Նա բոլորովին տնտեսական հասկացողութիւն է: Դասակարգ ասելով՝ այժմ մենք հասկանում ենք մարդկանց մի կարգ — շատ կամ քիչ թւով, դա միեւնոյն է, — որի բոլոր անդամներն ունեն միատեսակ շահեր, կամ, գիտականօրէն ճշտելով այդ միտքը, — որն ստանում է հասարակական հարստութիւնից կամ հասարակական ամբողջ արտադրութիւնից իր իւրայատուկ մասը: Այդ տեսակէտից նայելով՝ մենք դիտում ենք ներկայ հասարակութեան մէջ երեք խոշոր դա-

դասակարգեր. I դասակարգ— հողատէրեր, որոնք հասարակական ամբողջ հարստութիւնից, ինչպէս ասում է Ադամ Սմիթը, ստանում են մի խոշոր մաս, իբր եկամուտ իրենց հողերի, իբր ռենտա։ II դասակարգը կազմում են դրամատէրերը, որոնք ընդհանուր հարստութիւնից սպառում են կրկնակի բաժին՝ նախ տոկոսներ իրենց դրամագլխի, երկրորդ՝ նախաձեռնողի վաստակ։ Վերջապէս III դասակարգ—գործաւորութիւն, որն ստանում է ընդհանուր եկամուտից իր բաժինն աշխատավարձը։ «Հողի և աշխատանքի տարեկան արտադրութեան ընդհանուր գանգուածը, կամ որ միևնոյնն է, նրա արժէքի ընդհանուր գումարը— ասում է Ադամ Սմիթը,— բաժանւում է երեք մասի. հողի եկամուտ (ռէնտա), աշխատավարձ և կապիտալի վաստակ. դրանք կազմում են ժողովրդի երեք տարբեր դասակարգերի եկամուտը։ Այդ երեք մեծ բաժանումները կազմում են ամէն մի լուսաւորուած հասարակութեան երեք հիմնական դասակարգերը, որոնց եկամուտը վերջ ի վերջոյ կազմում է ամբողջ ազգաբնակութեան ապրուստի միջոցը» ։(*)

Պարզ և աներկբայելի բացատրութիւն. դասակարգերը որոշւում են՝ նայելով թէ հասարակական ամբողջ եկամուտի ինչ մասն են ստանում և ինչի համար։ Ադամ Սմիթի այդ միտքը հաւատարմութեամբ կրկնել է Կարլ Մարքսը։ Վերցնելով ներկայ հասարակութեան ցրւած երեք խոշոր շերտերը, Մարքսը հարց է տալիս. «Ի՞նչն է նրանցից կազմակերպում հասարակական երեք խոշոր դասակարգեր»։ Այդ հարցին նա պատասխանում է այսպէս.

«Առաջին հայեացքից՝ եկամուտների նոյնութիւնը և եկամուտի աղբիւրների նոյնութիւնը։ Գոյութիւն ունեն հասարակական երեք խոշոր խմբեր, որոնց բաղադրիչ մասերը—նրանց կազմող անհատները, ապրում են— աշխատավարձով, դրամատիրոջ վաստակով և հողային ռէնտայով, օգտւելով իրենց բանւորական ուժից, իրենց կապիտալից և իրենց հողային սեփականութիւնից» ։(**)

(*) «Ազգերի հարստութիւնը» I հատ. եր. 477, 1860 թւի ռուսերէն թարգմանութիւնը։

(**) «Կապիտալ», III հատոր, եր. 733 (ռուսերէն թարգմանութիւնը)։

Նմանութիւնն Ադամ Սմիթի հետ ակներև է։ Մարքսը ևս դասակարգային բաժանման հիմքն ընդունում է բաշխումը, եկամուտների աղբիւրը, այդ եկամուտների նմանութիւնը։ Բայց նա, իբր շարունակող Սմիթի, Ռիկարդօի և ուրիշ դասական տնտեսագէտների գործերի, ուզեցել է աւելի ևս խորացնել վարպետների տեսակէտները, առաջ մղել նրանց վերլուծութիւնը, այդ պատճառով նա շարունակում է նոյն երեսում,

«Բայց այդ տեսակէտից բժիշկները և պաշտօնեաներն էլ, օրինակ, կազմում են երկու դասակարգ, որովհետև նրանք պատկանում են հասարակական երկու տարբեր խմբերի, և նրանց ամէն մէկի անդամները եկամուտ են ստանում միևնոյն աղբիւրից։ Նոյն բանը կարելի է ասել նաև շահերի և դրութիւնների այն անվերջ տարաբաժանումների մասին, որ աշխատանքի հասարակական բաժանումն առաջ է բերում թէ բանւորի, թէ կապիտալիստների և թէ հողատէրերի մէջ,—վերջիններիս, օրինակ, վերածելով այգետէրերի, արօտատէրերի, անտառատէրերի, հանքատէրերի» . . . ։

Ուրեմն, ըստ Մարքսի, հասարակութիւնը բաժանւում է դասակարգերի՝ համաձայն ստացւող եկամուտի և նրա աղբիւրի նմանութեան։ Եթէ մի խումբ մարդիկ ստանում են նման եկամուտներ՝ շնորհիւ այս ինչ յատկութեան (օրինակ՝ շնորհիւ իրենց անձնական աշխատանքի, կամ կապիտալի և կամ հողերի), նշանակում է, որ այդ մարդիկը պատկանում են միևնոյն դասակարգին։ Սակայն Ադամ Սմիթի այդ բացատրութիւնը կրկնելով, Մարքսն ասում է, որ այդպիսի բացատրութիւնը միանգամայն ուղիղ և պարզ է թւում առաջին հայեացքից. այսինքն՝ եթէ լաւ մտածենք, կարող ենք գալ այն եզրակացութեան, որ այդ բացատրութիւնը մակերեսային է, որովհետև այդպէս մտածելով՝ բժշկին և պաշտօնեային, կամ արօտատէրին և հանքատէրին էլ պիտի համարենք տարբեր դասակարգեր, ինչպէս որ պիտի տարբեր դասակարգեր համարենք, օրինակ, գործարանական բանւորներին, հանքային բանւորներին, երկրագործական մշակներին կամ արհեստաւորների քարգարներին ևայլն։ Եւ ճշմարիտ որ՝ արօտատէրերն ստանում են իրենց եկամուները մի աղբիւրից. միանգամայն իրար նման—վարձահողերից, իսկ անտառատէրերի եկամուտի աղբիւրն էլ կտրած փայտն է, հնձած խոտը, հաւաքած վայրի մրգերը, որսի համար տրուած թոյլտուութիւնը, անտառներ արածացնելու համար տուած դրամը և այլն, ուրեմն՝ սրանք երկու միանգամայն տարբեր աղբիւրներ են բառ երևոյթին. կը նշանակէ, համաձայն այդ «եկամուտների և նրանց աղբիւրների նոյնութեան» բանաձևի՝ սրանք էլ պիտի կազմեն երկու ջոկ-ջոկ դասակարգեր:

Այո՛, մտածում է Մարքսը, բանաձևը ճշմարիտ է, բայց պէտք է նրան լրացնել, վերլուծութիւնը կամ անալիզը շարունակել: Ու ցանկացել է տաղանդաւոր անախագէտը շարունակել, բայց նրա աշխատանքը կիսատ է մնացել. ձեռագիրն ընդհատուած է այնտեղ, ուր մենք բազմակէտեր ենք դրել:

Ուսուցչի կիսատ թողածն աշխատել է շարունակել Կ. Կաուցկին, ներկայումս «ուղղափառ» Մարքսիզմի ամենահեղինակաւոր ներկայացուցիչը ոչ միայն Գերմանիայում այլ և ամէն տեղ:

«Անկարելի է, ի հարկէ, —ասում է Կաուցկին— որոշ կերպով ասել, թէ ինչ կը պարզացնէր այնուհետև Մարքսը: Բայց մենք ինքներս կարող ենք պատասխանել հարցին, ինքնուրոյնաբար հետազօտելով փաստերը»:(*) Եւ նա բացատրում է:

Հասարակական ամբողջ եկամուտից բանուորն ստանում է աշխատավարձ, դրամատէրը՝ վաստակ, հողատէրը՝ ռենտա: Եթէ ենթադրենք, որ ազգային եկամուտը, կամ աւելի ստոյգ է ասել, հասարակական եկամուտը, օրինակ, այս տարի ունի a մեծութիւն, այդ նոյն տարում, օրինակ, աշխատավարձը եթէ $^1/_3$ a է, վաստակն էլ $^1/_3$ a, ռենտան էլ $^1/_3$ a,—արդեօք ինչպէս կարող է հետևեալ տարում աշխատավարձն աւելանալ, դառնալ, օրինակ՝ $^1/_3$ a+s, ի հարկէ՝ ենթադրելով, որ առաջիկայ տարին էլ հասարակական ընդհանուր եկամուտի գումարը նոյնն է—a: Արդեօք որտեղից պէտք է խլել այդ s-ը և դնել աշխատավարձը կազմող $^1/_3$ a-ի վրայ և դարձնել նրան, օրինակ, $^1/_2$ a, հասարակական բոլոր եկամուտի կէսը: Ի՞նչ կասկած, որ

(*) Կ. Կաուցկի— «Դասակարգային շահերը», երես 6 (ռուսերէն թարգմանութիւնը)։

կայ միայն ու միայն մի ելք. խլել այդ s-ը կամ վաստակից, կամ ռենտայից և կամ երկուսից էլ և տալ աշխատավարձին: Այսպիսով՝ ակներև է, որ աշխատավարձի, ուրեմն և աշխատաւորութեան (բանուորների,—ասում է Կաուցկին) շահերը հակադիր են կապիտալիստների և հողատէրերի շահերին: Նոյն կերպով մտածելով, մենք կը գանք այն եզրակացութեան, որ ռենտան էլ կարելի է աւելացնել միայն պակասեցնելով կամ աշխատավարձը, կամ վաստակը և կամ երկուսն էլ: Բացարձակ նոյնն է համարում Կաուցկին, նրա հետ և Զերնօվը, վաստակի յաւելումը:

Այսպիսով, կը նշանակէ, մենք այստեղ գտնում ենք որոշ յենակէտ, որոնելու համար դասակարգային շահի աղբիւրը, աչքի առաջ ունենալով նրա հակադրութիւնը միւս դասակարգերի շահերի հետ: Ինչ կասկած, որ կարող են պատահել այնպիսի վայրկեաններ, երբ թէ աշխատավարձը, թէ վաստակը և թէ ռենտան միաժամանակ կարող են բարձրանալ. օրինակ, արտադրական բարգաւաճման րոպէներում, բայց դա կարճատև վայրկեանների գործ է. անմիջապէս սկսւում է կամ ճգնաժամ, երբ ընկնում են բոլոր անձանց եկամուտները և եկամտատէր դասակարգերն ամէն կերպ կռիւ են մղում անկման վնասները նետելու համար հակառակորդ դասակարգերի վզին, և կամ վրայ են հասնում կանգման, անշարժութեան րոպէները, երբ դասակարգերը կրկին մղում են կեանքի ու մահուան կռիւ, որպէսզի աւելացնեն իրենց եկամուտները ի հաշիւ միւս դասակարգերի:

Վերցնենք այժմ այդ երեք խմբերի ներքին ստորաբաժանումները: Բանուորներն, օրինակ, բաժանւում են բազմաթիւ տեսակների. հանքագործ բանուորներ, ագարակական, երկրագործական, արհեստաւորական և այլն, և այլն: Ենթադրենք, որ հանքագործ բանուորների աշխատավարձն աւելացրին 10%: Ո՞ւմ հաշւից է արդեօք այդ յաւելումը կատարւում: Վնասւում են դրանից, օրինակ, գրաշարները, կօշկակար բանուորները, կամ երկրագործական պրոլէտարները,—ամենքն. տրամաբանօրէն, մտածելով, պէտք է հասնենք միանգամայն հակառակ եզրակացութեան։ Հանքագործ բանւորների աշխատավարձի յաւելումը պիտի ծառայէ նախ իբր դրդիչ միւս տեսակի բոլոր բանւորներին ձգտելու այս կամ այն ձեւով բարձրացնելու նաև իրենց օրավարձը, երկրորդ՝ նա պիտի ծառայէ միւս գործատէրերին իբր օրինակ, իբր մղիչ աւելի շուտ զիջանելու իրենց բանւորների պահանջին աշխատավարձն աւելացնելու վերաբերմամբ։ Պարզ է ուրեմն, որ հանքագործ բանւորների աշխատավարձի յաւելումը երբէք չի կարող կատարուել ի վնաս միւս բանւորների աշխատավարձի։ Այդ յաւելումից տուժողն անպայման լինելու են հանքատէրերը։ Եւ անշուշտ երբ մի հանքում բարձրացում տեղի ունեցաւ, միւս հանքերում էլ նա տեղի կունենայ, այդպիսով վնասելով ոչ թէ անհատապէս այս կամ այն հանքատիրոջը, այլ բոլոր հանքատէրերին։

Քննենք այժմ կապիտալիստների ստորաբաժանումները։ Այդ դասակարգի վրայ առաջին անգամ նայողը կը տեսնի, որ դրա անդամների համար է սարքուած հին լատինական առածքը «homo homini lupus est»,—«Մարդը մարդու համար գայլ է»։ Այդ տեղ դուք կը տեսնէք ամէն մի կապիտալիստի,—լինի նա ճարտարարուեստական, առեւտրական, թէ դրամատիրական,—այդ միեւնոյնն է, մրցելիս իրար հետ։ Ամէն մէկը քաշւած իր բունը, դաւեր է նիւթում ուրիշին։ Մէկի արտադրութեան կամ առեւտրի խոշոր ընդլայնումն անպայման կործանման վտանգի մէջ է դնում միւսին։ Մրցումը դասակարգի ներսում, նման ձեռնարկութիւնների մէջ, կատաղի է։ Ճշմարիտ է, այդ մրցումը կայ նոյն իսկ երկու բանւորի մէջ. երկուսն էլ գործ են որոնում և այդ վայրկեանին հանդիսանում են իբր մրցակիցներ։ Միայն թէ աշխատաւորութեան մէջ, այդ կռիւը նախ սաստիկ չէ, երկրորդ՝ չափազանց կարճատև է, իսկ կապիտալիստների մէջ այդ կռիւը չափազանց զօրեղ է և յարատև։ Դժբաղդաբար Կ. Կաուցկին այդ կէտը չէ ենթարկել քննութեան իր վիճւած յօդւածում։ Ենթադրենք, որ մի դրամատէր (բանկիր) բուրժուա— զուտ $^0/_0$-ներով ապրող, տալիս է իր փողը մի կօշկի գործարանատիրոջ $10^0/_0$ով։ Ենթադրենք նոյնպէս, որ այդ բանկիրը հաւաքել է իր բանկում «մանր մարդկանց» խնայողութիւններ $3^1/_2$-$4^0/_0$ով։ Կօշիկի գործարանը բացւում է. գործարանատէրն աշխատեցնել է տալիս մօտ 2000 բանւոր և նրանց վճարում է, ասենք, օրական 1 րուբլի, իսկ նրանց յաւելեալ արժէքը՝ 50 կոպէկ, գրպանը դնում։ Կը նշանակէ յաւելեալ արժէքի նորման կամ չափը հաւասար է $50^0/_0$ի։ Այսպիսով ձեռնարկող կապիտալիստը մի օրում ստանում է 1000 րուբլի յաւելեալ արժէք։ Դրանից նա վճարում է պետական տուրքերը, հանում է իր փառաւոր ապրուստի միջոցը, մաս է տալիս բանկիրին, հաշւելով $10^0/_0$ փոխ առած կապիտալին. բանկիրն էլ, իր կարգին այդ $10^0/_0$ից բաժին է հանում «մանր մարդկանց», խնայողներին՝ 4-ական տոկոս, իսկ $6^0/_0$ աշխատում է դրանց դրամագլխից, իր սեփականից անպայման ստանալով $10^0/_0$ էլ։

Քննելով այս յարաբերութիւնները, անպայման մենք նկատում ենք, որ դրամատէր բուրժուայի տոկոսի բարձրութիւնը և գործատէր բուրժուայի վաստակի մեծութիւնն իրար հետ միանգամայն համերաշխ չեն և չեն էլ կարող լինել։ Սակայն երկուսի մէջ անպայման աւելի համերաշխութիւն կայ, քան բանւորական անհրաժեշտ արժէքի (աշխատավարձի) և յաւելեալ արժէքի միջև։ Կապիտալիստների երկու խմբերն էլ, զգալով իրենց հակառակորդների ույժը, արտաքուստ համերաշխութեամբ միանում են ընդհանուր թշնամու, բանւորութեան դէմ և ձգտում աւելացնել թէ $^0/_0$ը և թէ վաստակն աշխատավարձի հաշւով։

Ինչ որ էլ լինի արտաքին երևոյթը, մի բանկիրի շահն ամենևին չէ մեծանում միւս բանկիրի շահի փոքրանալով։ Եթէ կայ մրցում կապիտալիստների մէջ, դա անհատական է։ Բոլոր բանկիրների շահը կամ բոլոր կապիտալիստների դասակարգի շահը դիտելով մի ընդհանուր ամբողջութիւն, այսինքն անհատական ներդասակարգային մրցումը վերացնելով (աբստրակցիօն անել), դիւրին է նկատել, որ այդ շահը կարող է մեծանալ լոկ կամ աշխատավարձի հաշւով կամ հողավարձի (ռէնտա) նւազելով։ Ընդհակառակը, եթէ մի բանկիր կարողանում է իր դրամը տալ, օրինակ, սովորականից 1—$2^0/_0$ բարձր, դա լաւ կազդէ նաև այդ ապրանքի (դրամի) միւս տէրերի առևտրի, նրանց տուած %-ների վրայ: Կամ եթէ մի գործարանատէր կարողանում է թանկ գնով ծախել իր կօշիկները, գլխարկները եւայլն, դա կը նշանակէ, որ անպայման միւս գործարանների նոյնանման ապրանքները եւս պիտի բարձր գին ունենան, որովհետեւ շուկայում գները հաւասար են, եթէ ապրանքի որակն ու քանակը հաւասար է:

Ուրեմն թէեւ %-ի և վաստակի անհաւասարութիւնը յաճախ իրար հաշւով է կատարւում, բայց նրանք երկուսն էլ աւելի շատ են իրար հետ միաւորւում եւ երկուսն էլ միասին ձգտում են բարձրանալ աշխատավարձի հաշւով:

Բոլորովին նոյնը պէտք է ասել նաեւ հողատէր դասակարգի համար: Նրա անդամներն էլ անհատապէս հանդիսանում են իբր մրցակիցներ, բայց նրանցից մէկի հողի գնի բարձրացումն անպայման բարի նշան է նաեւ միւսների համանման հողերի համար: Սրանց շահն էլ, իբր ամբողջ դասակարգի, անպայման կազմում է մի ամբողջութիւն, հակադիր միւս դասակարգերի— աշխատաւորութեան եւ կապիտալիստների շահերի: Սրանք էլ կարող են ունենալ ներքին բազմաթիւ տարաձայնութիւններ, որոնց շահերն արտաքուստ բաւական իրար հակառակ, իրար մրցակից են հանդիսանում, բայց երբ քննում ենք նրանց աղբիւրի— հասարակական ամբողջ եկամուտի որ մասը կազմեն, այն ժամանակ տեսնում ենք, որ դրանք բոլորը մի դասակարգ են կազմում, եւ վերջ ի վերջոյ՝ որքան աւելի նրանք զարգանան, գիտակցեն իրենց դասակարգային շահերն, անպայման պէտք է աւելի եւ աւելի իրար մօտենան, կազմակերպուեն ընդդէմ միւս դասակարգերի:

Մենք դեռ մի քիչ առաջ կը գնանք այդ հարցում: Մենք կասենք. որքան աւելի սրուեն դասակարգային յարաբերութիւնները ու մօտենայ նրանց ընդհարման վճռական վայրկեանն, այնքան աւելի պիտի երկու դասակարգերը—կապիտալիստները և հողատէրերն իրար մօտենան, խառնեն շարքերը, միաձուլեն և միահամուռ կռիւ մղեն աշխատաւորութեան դէմ, որովհետեւ հասարակական համայն եկամուտն էապէս պէտք է բաժնել երկու մասի— անհրաժեշտ եւ յաւելեալ արժէքների: Թէ հողատէրը եւ թէ կապիտալիստն իրենց բազմաթիւ տարաձայնութիւններով, վերջ ի վերջոյ առնում են իրենց եկամուտները մարդկային քարացած աշխատանքից, որը մտել է մայր բնութեան տուած բնական բարիքների մէջ և նրանց վեր է ածել արժէքների՝ հարստութեան: Կասկած չկայ, որ գործատէր կապիտալիստը կամ հողատէր ընդհանրապէս եւս մտցնում են որոշ մաս այն հսկայական ստեղծագործող աշխատանքի մէջ, որը տալիս է հասարակական ամբողջ հարստութիւնը, սակայն եթէ նրանք այդ հարստութիւնից առանձին ճիշդ այնքան բաժին, որքան որ աշխատանք են թափել, դրա դէմ ոչ ոք ոչինչ չէր կարող առարկել: Բայց այն ժամանակ նրանք էլ կը դառնային աշխատաւորներ և այլեւս չէր լինի դասակարգային բաժանում, մի բան, որ այսօր ձգտման կէտ է, նպատակ է աշխատաւոր դասակարգերի համար: Բայց բանն էլ հէնց այդ է, որ կապիտալիստ և հողատէր դասակարգերն անպայման աշխատելով միայն րոպէներ ու ժամեր ամիսների ընթացքում, հասարակական եկամուտի հսկայական մասը վերցնում են ոչ իբրեւ վարձ իրենց աշխատանքի, այլ լոկ իբր կապիտալի %, նախաձեռնողի վաստակ (որ նա որոշ ռիսկ որոշ վտանգ է յանձն առել ձեռնարկելով որ եւ է գործ... չէ՞ որ նա կարող էր կորցնել այդ գործում իր ունեցածը...), իբր հողի վարձ եւ այլն: Կարծես թէ կապիտալն էլ իր կարգին երբ եւ է չէ արտադրւել մարդկային աշխատանքով, կարծես թէ նա էլ այսօր մարդկային քարացած աշխատանքի կուտակում չէ: Եւ կամ հողը, բնութեան այդ ձրի պարգեւը կարծես թէ չէ պատւաստւում մարդկային կենդանարար աշխատանքով, կամ եթէ հողը թողնէիր մենակ, իր գլխի, կարծես թէ իր վրայ պիտի [illegible] բուսցնէր, իր մէջի հանքերը պիտի ինքնիրան մշակէր, կամ պիտի ինքնիրան հերկէր ու բոյսեր տար, միանգամայն յարմար լենդլօրդի կարիքներին բաւարարութիւն տալու: Ոչ, բոլոր արժէքների միակ աղբիւրն աշխատանքն է, որովհետեւ երկրորդ աղբիւրը՝ մայր բնութիւնը ամէն ինչ տալիս է ձրի եւ նա տալիս է իր գրկում առաջացած բոլոր էակներին՝ առանց բացառութեան:

Անկասկած՝ դասակարգերի աւելի խոր վերլուծութիւնը մեզ հասցնում է երկու շերտերի. մի շերտ, որն աշխատում է է և ապրում, միւս շերտը, որը չէ աշխատում և ապրում է աշխատողների յաւելեալ արժէքով: Ու այդ երկու դասակարգերի շահերն անպայման հակադիր են: Մէկի ստացածի աւելանալն անպայման նւազեցնում է միւսի եկամուտը, որովհետև եթէ առաջինը չստանար, բնականօրէն պիտի ստանար երկրորդը:

Դասակարգերը գոյութիւն կունենան քանի դեռ գոյութիւն կունենայ դասակարգային շահերի հակադրութիւնը, նրանց իրար ջնջող որակը, կլանող բնոյթը, որ մենք տեսանք վերևում: Իսկ այդ դասակարգային հակառակութիւնն ու հակադրութիւնը միշտ կը լինի, քանի կայ կապիտալիստական տնտեսակարգը:

Ամէն մի դասակարգի ստանալիք մասի չափն ու մեծութիւնը հասարակական ամբողջ եկամուտից՝ կախւած է այդ դասակարգի տնտեսական զօրութիւնից, նրա քաղաքական կազմակերպութիւնից և խաղացած դերից, նրա մղած տնտեսական ու քաղաքական կռւից:

Արդիւնքների այս բաշխման վրայ են հիմնւում դասակարգային տարբերութիւնները. դասակարգային հակադրութիւնները և դասակարգային կռիւը... «Դասակարգի հասկացողութիւնն ամփոփում է իր մէջ դասակարգային հակադրութեան ըմբռնումը:»(*)

Ֆրիդրիխ Էնգէլսի մօտ մենք գտնում ենք այդ նոյն միտքը, միայն մի քիչ ձգձգւած, բայց աւելի խիտ ու վճռական ձևով:

«Որոշ պատմական հասարակութեան արտադրութեան տեսակի և եղանակի ու նոյն հասարակութեան պատմական նախորդող պարագաների հետ միասին տրւած են լինում նաև արդիւնքների բաշխման տեսակն ու եղանակը:»(*) Իսկոյն բերում է օրինակներ պատմական ասպարէզ մտնող, մեծ մասամբ դեռ համայնական հողատիրութեան ու բնատնտեսութեան շըրջանում ապրող սկզբնական հասարակութիւններին, որոնց մէջ

---

* Կ. Կաուցկի—«Դասակարգային շահեր», ռուսերէն, երես 8,

* Ֆր. Էնգելս—«Փիլիսոփայութիւն, քաղաքատնտեսութիւն, ընկերվարութիւն»—երես 193 ռուսերէն:

արդիւնքների բաշխումը կատարւում էր բաւական հաւասարաչափ ձևով. «ուր որ երևան է գալիս անդամների մէջ մի քիչ աւելի անհաւասար բաշխում, դա արդէն ծառայում է իբր նշան սկսւած քայքայման այդ համայնքի» (նոյն երես):

Բաշխման անհաւասարութեան առաջին խոշոր քայլը համարելով ստրկատիրութիւնը, Էնգէլսն ասում է, որ մանր ու խոշոր հողատիրութիւնը դեռ կարող են պարունակել իրենց գրկում բաւական բազմազան բաշխում, իսկ երբ մետաղէ դրամի գործածութիւնը առաջ է մղւում ու զարգանում, այն ժամանակ աճում է և բաշխման անհաւասարութիւնը, ուրեմն և աճում է հարուստների և աղքատների հակադրութիւնը: Սակայն միջնադարեան համքարական կազմը թոյլ չէ տալիս, որ գոյութիւն առնեն ու զարգանան խոշոր հարուստներ, ինչպէս և նա անհնար է դարձնում մշտական վարձու բանւորութեան դրութիւնը: Դրանք յատուկ են միայն ներկայ տնտեսակարգին:

«Բայց,— շարունակում է նա,— բաշխման զանազանութեան հետ միաժամանակ առաջ են գալիս և դասակարգերի տարբերութիւնները: Հասարակութիւնը բաժանւում է ընտրեալների և հալածւածների, կեղեքողների և կեղեքւողների, տիրող և կառավարւող դասակարգերի, և ճիշտ այդպէս էլ պետութիւնը, որ զարգացաւ ու առաջ եկաւ միացեալ համայնքներից, սկզբներում լոկ իրենց շահերի (օրինակ, արևելքում ոռոգումն) և արտաքին թշնամիներից պաշտպանելու համար,— այնուհետև ստանում է կռւում ուժով պաշտպանելու տիրող դասակարգի գոյութիւնը և տիրապետութիւնը»:

Այդ կտորի մէջ կարծես Էնգէլսն ուզում է կապել բաշխումն արտադրութեան գործողութեան հետ. չէ՞ որ մարքսիզմի հիմնաքարն է «արտադրական յարաբերութիւնները, վերջին հաշւում՝ արտադրութեան մեքենական միջոցները»: Բայց այդ կապի նշանակութիւնը չափազանց չմեծացնելու համար, Էնգէլսն իսկոյն շարունակում է.

«Սակայն բաշխումը չէ հանդիսանում իբր կրաւորական հասարակ արդիւնք արտադրութեան և փոխանակութեան. նա իր կարգին հակադրում է արտադրութեան եւ փոխանակութեան վրայ։ Արտադրութեան եւ փոխանակութեան բոլոր նոր եղանակների սկզբներում գտնւում են ոչ միայն իրենց հին ձեւերի եւ քաղաքական հիմնարկութիւնների ճնշման տակ, այլ եւ նրանց առաջանալուն եւ զարգանալուն արգելառիթ է լինում նաեւ հին ձեւի բաշխումը»(*)։

Ուրեմն մարքսիզմի հիմնադիրները— Մարքսն ու Էնգէլսը եւ նրանց աշակերտներից հեղինակաւորագոյնն այսօր— Կ. Կաուցկին. մեր բերած բոլոր վկայութիւններով գալիս են հետեւեալ եզրակացութեան. դասակարգերի կազմութեան մէջ վճռական նշանակութիւն ունի **եկամուտի աղբիւրների** ընդհանրութիւնը եւ դրանից բղխող **շահերի ընդհանրութիւնն** ու **նրանց հակադրութիւնը** հասարակական միւս խմբակցութիւնների շահերին։

Ուսուցիչների եւ գլխաւոր աշակերտի մտքերը դասակարգերի նկատմամբ խիստ լաւ բնորոշում է ռուս երիտասարդ գրող Վ. Չերնօվը. «տարբեր դասակարգերի մէջ մարդկանց միացնում են նրանց եկամուտի այն հիմնական, տարբեր աղբիւրները, որոնք ազգային (հասարակական) ընդհանուր եկամուտի որոշ մեծութեան ժամանակ, կարող են ընդարձակուել միայն մէկը ի հաշիւ միւսների։(**)

Բայց դժբաղդութիւնը հէնց նրանումն է, որ Կաուցկին միշտ չէ մնում այդ տեսակէտի վրայ, երբ խօսում է **բանւոր, պրօլետարիատ** դասակարգի մասին։ Օրինակ՝ նա հիմնականապէս շեղւում է այդ տեսակէտից իր մի խոշոր աշխատութեան մէջ, որի վերնագիրն է «Ագրարային հարցը»։ Այդ աշխատութեան մէջ նա մի ամբողջ գլուխ նւիրում է «գիւղացուն եւ բանւորին»։

Այդ գլխում նա իրար հակադիր շահերի տէր է հրատարակում գիւղացուն եւ բանւորին, որովհետեւ այլեւս «եկամուտի աղբիւրների եւ նրանցից բղխող շահերի նմանութեան»

(*) Նոյն գրուածքում, երես 194։

(**) Վ. Չերնօվ.— «Դասակարգային կռուի թէօրիայի շուրջը», գրադարան «Յառաջ»ի, երես 33։

տեսակէտի վրայ չէ կանգնած դասակարգ հասկացողութեան որոշման մէջ, այսինքն այլեւս բաշխումը չէ դնում դասակարգերի բաժանման արմատում, այլ **արտադրութիւնը**։

«Ժամանակակից պրօլէտարիատի բնորոշ գիծը, — ասում է նա, — կայանում է այն կարեւոր դերում, որ նա խաղում է արտադրական պրօցէսում։ Նրա վրայ է հանգչում այսօր գոյութիւն ունեցող կապիտալիստական արտադրական եղանակը»։(*) Դրանով հէնց ներկայ պրօլէտարիատը, որ արդիւնք է մեր ժամանակների, տարբերւում է լումպէնպրօլէտարիատից կամ մուրացիկ պրօլէտարներից, որոնք նոյն ընկած ժամանակը ձեռք են մեկնում, պորտաբոյծի կեանք անցկացնում։ Վերջինները **աղքատներ** են, նրանց համար արտադրական միջոցներ չունենալը ոչինչ է, միակ ցաւ պատճառողն սպառման միջոցներ չունենալն է. «Իսկ ներկայ բանւորական պրօլէտարիատի համար բնորոշ է հանդիսանում **արտադրական միջոցների** սեփականութեան բացակայութիւնը։ Գործածութեան իրերի անբաւականութիւնը կարող է կապւել դրա հետ, բայց դա պարտադիր չէ։ Ժամանակակից վարձու բանւորը կը մնայ պրօլէտար, քանի դեռ չի տիրանայ արտադրութեան միջոցներին, թէեւ նրա վիճակը, ինչպէս **սպառող**, կարող է լինել շատ տանելի եւ նա կարող է ձեռք բերել նոյնիսկ զարդարանքներ, կահ կարասիներ կամ նոյնիսկ սեփական տնակ։ Եթէ նա ձեռք բերէ որոշ բաժնեկցութիւն, դրանով չի դադարի դեռ վարձու բանւոր լինելուց, իր դասակարգային կռիւը շարունակելուց։ Ընդհակառակը, վիճակի այդ բարելաւումը «յաճախ նրան հնար է տալիս աւելի եւս ուժեղ կերպով մղելու այդ կռիւը։ Այդ կռիւը արդիւնք չէ նրա աղքատութեան, այլ արդիւնք այն անտագօնիզմի կամ հակադրութեան, որ կայ նրա եւ նրա արտադրութեան միջոցների տիրոջ մէջ։ Ոչ թէ աղքատութեան ոչնչացումով, եթէ դա հնարաւոր լինէր, — կարելի է հաստատել հասարակական խաղաղութիւնը, այլ այդ հակադրութեան

(*) Կ. Կաուցկի— «Ագրարական կամ հողային հարցը» («Ագրարային ծրագիր» —Էջմիածնի հրատարակութիւն) եր. 6։

վերացումով։ Իսկ դա հնարաւոր է միմիայն այն ժամանակ, երբ արտադրութեան միջոցները կրկին կանցնեն բանւորների ձեռքը»։ (Նոյն երեսում)։

Արտադրութեան միջոցները կարելի է սեփականացնել երկու կերպ՝ — անհատօրէն եւ խմբակցութիւնով։

Անհատական տիրապետութիւնը Կաուցկին համարում է ամէն դէպքում կապիտալիստական կամ բուրժուական երեւոյթ։ Նրա համար միեւնոյնն է, թէ արդեօք ով է արտադրական միջոցի տէրը — մի կապիտալիստ, որը ծառայեցնում է այդ միջոցները ուրիշների, վարձու աշխատաւորների ձեռքով, որպէսզի յաւելեալ արժէք ստանայ, թէ՞ մի աշխատաւոր, որը, ինչպէս սրամտօրէն նկատում է Մարքսը «Կապիտալի» I հատորի վերջին գլուխներում, «դեռ փտած հաւ չէ դառել» եւ ոչ ոքից յաւելեալ արժէք չէ կլանում, այլ իր ճակատի քրտինքով հազիւ իր հացն է ճարում, իր «խղճուկ տնակում»։ Այդ հիմնական սխալից, ինչպէս յետոյ կը տեսնենք, բղխում է այն դաժան ու միանգամայն անմարդավայել, ոչ գիտական վերաբերմունքը, որ Կաուցկու նման աշխարհահռչակ գիտնական ու մարդասէր մարդը ցոյց է տալիս դէպի գիւղացին, այդ բառն էլ գործածելով «գիւղացի դաս» վուլգէր կամ ընթացիկ մտքով։ Երկրորդ տեսակի իւրացումը կատարւում է խմբօրէն։ Սակայն խումբն էլ յարաբերական հասկացողութիւն է. կարելի է տիրել արտադրական միջոցներին ասօցիացիաներով կամ մանրիկ խմբակցութիւններով, որոնցից իւրաքանչիւր մէկը կը ներկայանայ օրէնքի առջեւ իբր մի իրաւական անհատ, այդպիսով դիտւելով կրկին անհատական սեփականատիրական մի երեւոյթ, եւ երկրորդ՝ կարելի է տիրել համայնօրէն, հասարակական կարգով։ Խմբակցական կամ ասօցիացիաներով կատարւած տիրապետութեան բոլոր փորձերը մինչեւ օրս յանգել են բուրժուական վախճանի։ Այդ պատճառով էլ թէ աշխատաւորութեան եւ թէ, մանաւանդ, պրօլէտարիատի ձգտման գերագոյն կէտը լինելու է արտադրական միջոցների հասարակական սեփականութիւնը, որովհետեւ այդպիսով միայն կարելի է վերջ դնել դասակարգերին ու նրանց հակադրութիւններին, վերջնականապէս հաստատել սօցիալական կամ ընկերային խաղաղութիւնը։

Միեւնոյն մարդու տւած երկու որոշումները միեւնոյն հասկացողութեան վերաբերմամբ, այսպիսով, իրարից բաւական տարբերւում են։ Ի՞նչ է դասակարգ ընդհանրապէս։ Այս հարցին Կաուցկին ձեզ կը պատասխանէ. մի կարգ մարդիկ, որոնց եկամուտները եւ նրանց աղբիւրները իրար նման են եւ որոնք ազգային կամ հասարակական ընդհանուր եկամուտի մի մասը կազմելով, կարող են մեծանալ միայն ու միայն միւս դասակարգերի հաշւով, ի հարկէ եթէ ընդհանուր եկամուտի մեծութիւնը մնայ անփոփոխ։ Ու այդ պատասխանն, ինչպէս տեսանք, համապատասխան է Մարքսի կիսատ թողած ձեռագրին եւ կազմում է նրա տրամաբանական շարունակութիւնը։ Դեռ մենք պէտք է տեսնենք, որ այդպիսի մտքեր Մարքսի մօտ յաճախ ենք պատահում, մանաւանդ երբ նա վեր է լուծում արտադրական միջոցների կուտակման խնդիրը, երբ քննում է, թէ ինչ է վաշխառութիւն, ինչպէս կապիտալիզմի ծնելուց առաջ արդէն բաշխումը միատեղել էր գործիքները որոշ ձեռքերում, եւայլն։

Անցնենք այժմ երկրորդ հարցին։ Ի՞նչ է պրօլէտարիատը կամ բանւոր դասակարգը։— Պարզ նկատելի է, որ նախընթաց հարցը աւելի ընդհանուր նշանակութիւն ունի, քան սա, որ մտնում է նախընթացի մէջ՝ իբր մասնակի մի հարց ընդհանուր սկզբունքային որոշման մէջ։ Դրա պատասխանը, համաձայն սկզբունքային նախկին որոշման, պիտի լինի հետեւեալը, «բանւոր դասակարգը մարդկանց այն մեծ խումբն է, որի եկամուտի միակ աղբիւրը կազմում է աշխատանքը եւ որի բաժին չահը հասարակական ամբողջ եկամուտից՝ կարող է մեծանալ միւս դասակարգերի— կապիտալիստների եւ հողատէրերի եկամուտների հաշւով, ի հարկէ եթէ չմեծանայ ընդհանուր եկամուտը»։ Ուրեմն՝ եթէ հետեւողական լինենք, անպայման պիտի հանենք այն եզրակացութեան, որ բանւոր կամ պրօլէտարիատ պէտք է կոչել այն բոլոր աշխատաւորներին, որոնց եկամուտի միակ աղբիւրը սեփական աշխատանքն է, որոնք չեն իւրացնում ուրիշների յաւելեալ արժէքը։ Իսկ այդ որոշման տակ միանգամայն ընկնում են բոլոր մանր արհեստաւորները, բոլոր մանր գիւղացիները, որոնց ընդհանրապէս ընդունւած է կոչել աշխատաւորներ եւ համարել մի դասակարգ, որովհետեւ բոլորի եկամուտի միակ աղբիւրն **անհրաժեշտ արժէքն է**, կեղեքւած ու կեղեքող աշխատանքը։— Բայց այդպէս չէ պատասխանում Կաուցկին։ Պրոլէտարիատը կամ բանւոր դասակարգը մարդկանց այն մեծ թիւն է, ասում է նա իր «Հողային հարցը» գրքում, որոնք նշանաւոր դերեր են կատարում արտադրութեան մէջ, որոնց վրայ է յենւած արտադրական ներկայ կապիտալիստական ձեւը եւ որոնք, որ ամենաէականն է, չունեն արտադրական միջոցներ։

Պատասխանների այս երկուութիւնն առաջ է գալիս առհասարակ մարքսիզմի զարգացման պատմութեան երկու փուլերից կամ փազերից։ Հնագոյն շրջանում, 40-60ական թւականներին Մարքսն ու Էնգէլսը, իբր երիտասարդ մարդիկ, դեռ իրենց տեսութիւնը (թէօրին) լաւ չհիմնաւորած ու շատ հարցեր դեռ չուսումնասիրած, համարում էին գիւղացիութիւնն անպայման յետադէմ տարր։ Էնգէլսը նոյնիսկ գրում էր, որ բանւորութիւնը ոչ շատ հեռաւոր ապագայում, դէպքերի բերումով, ստիպւած պիտի լինի «ճնշել ընդհանուր գիւղացիական պատերազմը», դուրս գալ գիւղացիական խաւար բանակի դէմ։ Այդ այն երիտասարդական շրջանն էր, երբ «տնտեսական մատէրիալիզմը» հասած էր իր ծայրայեղ գործադրութեանը, երբ ամենայն ինչ բղխեցնում էին լոկ արտադրական յարաբերութիւններից և վերջիվերջոյ արտադրութեան տեխնիքական միջոցներից։ Այդ շրջանում ընդգծւեց Մարքսի անմշակ ու հում տեսակէտը մանր ազգերի կեդրոնացման եւ ապակենտրոնացման վերաբերմամբ։ Սակայն նախընթաց հարցերի մասին ուսուցիչները ժամանակ ունեցան վերագնահատումներ կատարելու, ուղղելու սխալները, տաշելու սուր ծայրերը են. իսկ վերջին հարցերի վերաբերմամբ նրանք մինչեւ դերեզման մնացին նոյն հին տեսակէտի վրայ, որովհետեւ դրանցով, իբր այն ժամանակներում երկրորդական նշանակութիւն ունեցող հարցերով, նրանք զբաղւել, իրենց տեսակէտը վերաքննել ու խորացնել չկարողացան, ժամանակ չունեցան։ Էնգէլսն ինքը մեղմեց իր ծայրայեղ տնտեսական մատէրիալիզմն իր հռչակաւոր նամակներում ուղղած «Sozial.Akademik.» թերթի խմբագիր Կոնրադ Շմիդտին 1895 թւին։ Իսկ մեզ հետաքրքրող հարցի վերաբերմամբ նա իննսունական թւերին բաց-աշկարայ յայտարարեց. «Այսպիսով՝ մենք վճռականօրէն կանգնում ենք մանր գիւղացու կողմը»։

Քառասնական թւականների հին մնացորդների արձագանքները գիւղացիութեան եւ բանւորութեան վերաբերմամբ դեռ այսօր էլ մենք լսում ենք Գերմանիայում, ուր յաճախ լսում ենք այսպիսի ֆրազներ. «իսկական գիւղացիները միշտ մեր թշնամիներն են լինելու». կամ «գիւղացիները որպէս դասակարգ, պէտք է մեր դէմ կանգնած լինեն թշնամաբար...»։ Վերջապէս՝ դրանց բոլորի միջից լսւում է Կ. Կաուցկու ձայնը «Ագրարական հարցը» գրւածքում. «պատմութեան մէջ բանւորներն ու գիւղացիները պէտք է գնան տարբեր ճանապարհներով, և այսօրւայ դաշնակիցը վաղը կարող է թշնամի լինել.» եւ կամ հետեւեալ պարզ տողերը. «Պրոլէտարիատի, նոյնպէս եւ հասարակութեան զարգացման եւ գաճաճային գիւղացիութեան շահերն ընթանում են հակառակ ուղղութիւնով»(*)։

Իսկ ռուսական սօցիալ դէմօկրատիայի օրհնած սովորութեան համեմատ՝ այդ բոլոր հնացած կարծիքները մշտապէս կրկնւում են Ռուսիայում, ինչպէս քիչ յետոյ կը տեսնենք։ Բայց նախքան առաջ անցնելը, տեսնենք թէ այդ համոզման նախակարապետներն ովքեր են եղել Ֆրանսիայում, դասակարգային կռւի այդ դասական երկրում, ինչպէս կոչում է նրան պրօֆէսոր Զոմբարտը։

Ֆրանսական յայտնի սօցիալիստ Լուի Բլանն, իր «Histoire de dix ans».— «Տասը տարուայ պատմութիւնը» (1830—1840 թ.) խոշոր աշխատութեան մէջ բուրժուա հասկացողութիւնը բացատրում է «իբրեւ այն քաղաքացիների գումարը, որոնք ունեն աշխատանքի գործիքներ և կապիտալ, աշխատում են իրենց սեփական միջոցներով եւ այդ պատճառով միայն որոշ չափով կախում ունեն ուրիշներից»։ Իսկ «ժողովուրդ» կամ «բանւորներ» ասելով՝ նա ընդունում է այն «քաղաքացի-

---

(*) «Ագրարական հարցը», ռուսերէն, նոյն հրատարակութիւն, եր. 17։

ների գումարը, որոնք ոչ մի կապիտալ չունեն և այդ պատճառով կատարելապէս կախումն ունեն միւսներից, մինչև անգամ ամենատարրական կենսական պահանջների տեսակէտից».(**)

Թէ Լուի Բլանի և թէ Կաուցկու որոշումներն ունեն մի ընդհանուր գիծ. բանւորը նա է, որ զրկուած է արտադրական միջոցներից, գործիքներից: Դրան՝ այդպիսի բանւորին, Մարքսը, ինչպէս վերևում տեսանք, կոչել է «փետրած հաւ»: Այդ սրամիտ ու թունալի համեմատութիւնն իսկ ցոյց է տալիս, որ կան և դեռ ես «փետրած հաւ» չը դառած, դեռ փետուրները վրան պահած հաւեր կամ բանւորներ՝ արտադրական միջոցներով:

Լուի Բլանը գտնում է լոկ երկու հիմք կամ երկու բնորոշ կէտ բանւորի համար. կապիտալ կամ արտադրական միջոցներ չունենալ և կախման մէջ լինել ուրիշներից: Նախ մի կողմ դնենք կախման մէջ լինելը կամ «կախման աստիճանը», որովհետև դա բացարձակ անորոշ մի հասկացողութիւն է. թագաւորը կախուած է ժողովրդից, ժողովուրդը զօրքերից, կապիտալիստը տնատէրից, տնատէրն իր դրացուց, բուրժուան իր բանւորներից, որովհետև նրանք կարող են նրան լիապէս բօյկօտի ենթարկել, գործարանը փակել...մի խօսքով կախում կամ կախման աստիճան բառերը չունեն ոչ մի որոշիչ միտք:— Մնում է լոկ առաջին բնորոշիչ գիծը— «կապիտալ չունեն», և կապիտալ ասելով, նա ըմբռնում է արտադրական միջոցներ, այդ երկու տերմինները նա նոյնն է համարում— մի կոպիտ սխալ, որ կրկնում է և Կաուցկին, որի այդ սխալի առիթով դեռ պիտի խօսենք:

Լօրէնց ֆօն Շտայնը կարծում է, որ «բուրժուազիայի մէջ մարմնանում է սեփականութեան գաղափարը, իսկ պրոլետարիատը ոչ մի սեփականութիւն չունի, այլ ունի միայն աշխատանքի ուժ և ցանկութիւն այն գործադրելու»: Պրոլետարը սեփականատիրոջ մէջ իր թշնամուն է տեսնում, նախ որովհետև իրեն նրանից ստոր է զգում և, համեմատելով բարձր կանգնածների հետ, նկատում անհամապատասխանութիւն իր ծախսած եռանդի և նրա հետևանքների մէջ:(*)

Ուրեմն Լ. Ֆօն Շտայնի կարծիքով էլ սեփականութիւն ունենալը եւ չունենալն է դասակարգերի որոշիչ գիծը: Սա աւելի եւս ախտաւոր որոշում է, որովհետև չկայ մարդ, որ որ և է սեփականութիւն չունենայ: Իսկ երկրորդ որոշիչ յատկութիւնը, այն որ «պրոլետարն իրեն ստոր է զգում բարձր կանգնածներից»— այդ հոգեբանական գիծը դասակարգերի մէջ, մի նորութիւն է, որ չկայ մեր նախկին որոշումներում. սակայն դա էլ չափազանց առաձգական և անորոշ յատկանիշ է: Այսպէս՝ արհեստաւորների մօտ աշխատող բանւորները նախանձում են խոշոր գործարանում կամ երկաթուղու վրայ աշխատող բանւորի վիճակին, զգալով իրենց աւելի ստոր վիճակում, քան նրանք: Երկրագործական պրոլետարիատը իրեն անհամեմատ աւելի ստոր վիճակում է զգում այսօր Կովկասում, քան Նաւթաղաչի բանւորները: Մետաքսագործարաններում— Նուխու, Շուշու և Օրտուբաթի շրջաններում տառապող կիսաստրուկ բանւոր-բանւորուհիներն անպայման նախանձում են շատ ուրիշ բանւորների վիճակին, զգալով իրենց շատ ու շատ աւելի ստոր պայմաններում քան նրանք: Սակայն այդ բոլոր բանւորները չեն դառնում տարբեր դասակարգերի անդամներ, թէև զգում են իրենց վիճակների համեմատական ստորութիւնը. նրանք բոլորն էլ աշխատաւորութեան մեծ ընտանիքի անդամներն են:

XIX դարի սկզբներում Ֆրանսիայում գրող ու գործող պատմաբաններն, ինչպէս Գիզօ, Միշլէ, Մինէ և ուրիշները, տուել են դասակարգերի վերաբերմամբ համանման որոշումներ: Նրանց հետևելով՝ առաջինը եղան Լօրէնց-Ֆօն Շտայնը և Վիլհէլմ Մարրը, որոնք այս բնորոշումները արտացոլացրին գերմանական գրականութեան մէջ: Դրանց գործերից յետոյ է, որ լոյս աշխարհ են գալիս Մարքսն ու Էնգէլսն իրենց «Մանիֆէստով» և միւս գրութիւններով: Նրանք անպայման խորա-

---

[**] Վերցրել ենք Վ. Զէրնօվի «Դասակարգային կռւի թէօրիայի շուրջը» գրուածքից, երես 19:

(*) L. Von Stein- «Geschichte des Sosialismus und Kommunismus des heutigen Frankreichs», որից առաջ է բերել Վ, Զէրնօվը [նոյն երես 20] ցնում, առաջ են մղում դասակարգերի որոշման նրբութիւնները և մանաւանդ, դասակարգային կռուի թէօրին (տեսութիւնը): Ի՞նչ ասել կուզէ, որ Կ. Կաուցկին ամէն ճիգ գործ է դնում աւելի ևս պարզաբանելու ուսուցիչների թողած բանաձեւերը:

Ժամանակակից պրոլետարիատ ասելով, Կաուցկին նրա համար դնում է չորս յատկանիշ: Ահա նրանք. I) Այն նշանաւոր դերը, որ նա խաղում է արտադրական գործում. II) բացակայութիւն արտադրական միջոցների սեփականութեան: Այդ երկու պայմանը— կարևորագոյններն անկասկած— մենք արդէն առաջ բերինք մանրամասնօրէն, այդ պատճառով այստեղ անց ենք կենում համառօտակի, աւելի կանգ առնելով հետևեալ երկուսի վրայ: III) Նա աշխատում է արտադրական այնպիսի միջոցներով, որոնցով կարող է օգտուել ոչ թէ մի անհատ, այլ ամբողջ ասօցիացիա, մի ընկերակցութիւն կամ խմբակցութիւն: Արտադրութեան ներկայ միջոցների այդ ներքին յատկութիւնն է, որ պրօլէտարիատին դարձնում է խմբակցութեան համայնական, հասարակական աշխատանքի մարդ, այսինքն՝ տրամադրում է նրան դէպի սօցիալիզմ: IV) Նա այժմ օտար է գործատիրոջ տնից: Առաջ վարձու բանւորը համարւում էր մի տեսակ անբաժան մաս գործատիրոջ ընտանիքի, նրա տնտեսութեան. յարաբերութիւնները— «հին բարի ժամանակների» նահապետական յարաբերութիւններն էին: Այսպէս՝ բանւորը գործից դուրս էլ միշտապէս տիրոջ աչքի առջևն էր, նրա վերահսկողութեան տակը, նրան ենթակայ: Իսկ այժմեան բանւորը աշխատանքը վերջացնելուց յետոյ, ինքնիշխան է, ազատ տիրոջ մթնոլորտից, նրա հսկող աչքերից: Կապիտալիզմի զարգացումով և միջնադարեան առևտրական ձևերի վերացումով՝ աւելի և աւելի ազատագրւում է բանւորը և գործից ազատ ժամանակ դառնում մարդ, հաւասար կապիտալիստին:

Ահա այն չորս յատկանիշները, որոնք անհրաժեշտ են ժամանակակից պրօլէտարիատ տիտղոսն ստանալու համար: Ինչ կասկած, որ Կաուցկու այդ չորս յատկանիշներն այն աստիճան սահմանափակում, քչացնում են պրօլէտարիատ դասակարգի թիւը, այնքան են նրան կրճատում, որ այդ պրօլէտարիատի բանակով հասարակական խնդիրներում կարելի է լոկ «սքանչելի առանձնացման» մէջ մնալ և ոչ ոյժ կազմել ու ձգտել աշխատաւորութեան փրկութեան գործին:

Այդ դեռ ոչինչ. «մենք քիչ ենք, բայց մենք կը շատանանք, մերն է ապագան»... եթէ այդ նախադասութիւնը հնարաւոր լինէր ասել այդ ժամանակակից պրօլէտարիատի մասին, կրկին կարելի էր մխիթարուել. բայց այդ էլ անհնար է ասել:

Եւ վերջապէս, եթէ այդ չորս ընտրողական պահանջներով մօտենանք ներկայ բանւորութեան, պէտք է նրանցից դուրս վանենք, անկասկած ամէնից շատ, գիւղացիներին. Նրանք բուրժուաներ են, թէև մանր, որովհետև սեփականութիւն ունեն —գործիքներ, տնակ, հող,— մի խօսքով «ինվէնտար», ասում է Կաուցկին: Երկրորդ, պիտի դուրս անենք մայր բանակից մանր արհեստաւորներին ու արհեստաւորների մօտ աշխատող բոլոր բանւորներին, որովհետև որանց խաղացած դերն այնքան մեծ չէ արտադրութեան մէջ, որովհետև առանց նրանց էլ արհեստանոցի տէրը վարպետն է, կարող է մենակ աշխատել. չէ որ նա ունենում է իր մօտ ընդամենը մէկ, երկու կամ երեք բանւորներ և մի երկու աշակերտ: Խոշոր արհեստանոցի տէրերն արդէն մօտենում են խոշոր կապիտալիստի, որի անհրաժեշտ յատկանիշներից մէկն էլ բանւորների հետ չաշխատելն է. Երկրորդ՝ այդ սակաւաթիւ բանւորները չեն աշխատում «այնպիսի գործիքներով, որոնցով կարող է օգտուել մի ամբողջ ընկերութիւն». որանց գործիքներն անհատական են և ոչ կենտրոնացած, հասարակական: Դուրս են ընկնում և տան ծառաները ու աղախինները, որովհետև նրանք չեն համապատասխանում չորրորդ կէտին.—Նրանք միշտ տէրերի աչքի առջև են, նրանց վերահսկողութեան տակ և նրանց տնտեսութեան մշտական ու անհրաժեշտ մասը: Ինչ ասել կուզէ, որ «ցնցոտիների պրօլէտարիատը» կամ «լումպէնպրօլէտարիատը» նոյնպէս «ժամանակակից» չէ, թէև նա ծնունդ է մեքենական խոշոր կապիտալիստական արտադրութեան, յատկապէս 19-րդ դարի վերջին կէսերի։ Բայց նա «չէ խաղում նշանաւոր դեր արտադրական գործում»։ Դուրս են ընկնում նաև երկրագործական պրոլէտարները, որոնք թէև ամէնից աւելի նմանում են քաղաքային պրոլէտարներին, բայց միաժամանակ նրանցից տարբերւում են նրանով, որ կազմում են ուրիշի տնտեսութեան ու ընտանիքի յաւելումը, նրա մի բաղադրիչ մասը, ասում է ինքը. Կաուցկին։

Այս բոլոր աշխատաւորական շերտերը դուրս վանելով «ժամանակակից պրոլէտարիատից», այնուս ինչ է մնում տակին։ Մի շերտ միայն զուտ խոշոր գործարանների բանւորութիւնը, բանւորական արիստօկրատիան։ Եւ այնուհետև մեզ թւում է ծիծաղելի, երբ Կաուցկին հետևեալ բառերն է գրում.

«Եթէ որ սօցիալ-դէմօկրատիան իր շարքերն ընդունէ պրոլէտարիատի ամբողջ զանգուածը (եւ ո՞ւր մնաց «ժամանակակից» իր քաւանդած յատկանիշերով) և այն բոլոր գիւղացիներին ու արդինագործներին, որոնց ինքնուրոյնութիւնը լոկ երևակայական է և որոնք փաստօրէն հանդիսանում են կապիտալի վարձկան բանւորներ, այն ժամանակ չի գտնւի մի այնպիսի ուժ, որը կարող լինէր նրան դիմադրութիւն ցոյց տալ»(*)։

Մի՞թէ մի րոպէ կարելի է կասկածել, որ դասակարգային կռիւ մղելու համար պէտք է ուժ կազմել։ Իսկ աշխատաւորութեան դասակարգային կռւի միակ նպատակն է սօցիալիզմին հասնելը։ Ուրեմն, ապագայ լուսաւոր կարգերին հասնելու համար՝ պէտք է ուժ կազմել։ Իսկ քառեակ բնորոշումները վանում են, կրճատում, ջախջախում աշխատաւորութեան ուժը, թողնելով այնտեղ տրէդ-ունիօնիստական բանւորներին, բանւորական արիստօկրատիային, որն իր շահերի, իր կոպէկների համար գործադուլներ կանէ, բայց որը, փոքրիկ անյաջողութեան դէպքում անգամ, կը խորտակէ իր երէկւան կուռքերը, կը դաւաճանէ իր սկզբունքներին։

---

*«Ագրարական հարցը», յիշւած հրատարակութիւն, էջ 13

Այդպէս վարւեց Իվանօվօ-Վօզնեսենսկի, հնագոյն արդիւնագործական կենտրոններից մէկի «ամենագիտակից» հռչակւած պրոլէտարիատը, «իսկական ժամանակակից պրոլէտարիատը». նա սպանեց իր շրջանի ամենայայտնի սօցիալիստ հռետօրին, դարձաւ «սեւ հարիւրակային» տարր... որովհետև... գործադուլն անյաջող էր անցկացել(**)... Դրանով չենք ուզում ասել, թէ պրոլէտարիատը, մանաւանդ նրա «արիստօկրատիան» այդպէս է, այդպէս էլ պիտի լինի։ Ամենևին։ Երբ գիւղացու աշխատաւոր մասը համարում են հակայեղափոխական տարր, երբ նրան, իբր «մասնաւոր սեփականատիրոջ», անընդունակ են համարում ընկերվարօրէն մտածելու, բերելով փաստեր ու ինչ որ կասկածելի, վերացական դատողութիւններ, այն ժամանակ մեր միտն են գալիս նաև բանւորութեան յաճախ ցոյց տւած այդպիսի յետադիմական քայլերը, որոնք պիտի գրգռեն հետազօտողներին չհիմնւել այս ու այն պատահական երևոյթի, արտաքին, ձևական յատկանիշի վրայ, այլ աւելի խորը թափանցել դասակարգային շերտաւորումների սկզբունքային տարբերութիւնների մէջ։ Եւ Կաուցկին յետոյ շարունակեց այդ գործողութիւնը. «Ագրարային հարցից» յետոյ դուրս եկած իր աշխատութեան մէջ, յատկապէս նւիրւած դասակարգերի հարցին, նա, քննելով «դասակարգային շահերը», եկաւ այն եզրակացութեան, որ առաջ բերինք այս գլխի սկզբում։

Իր այդ եզրակացութիւնները հիմնելով Մարքսի կիսատ մնացած ձեռագրի վրայ, Կաուցկին նրանց ամրապնդել է աշխատում փաստերով, թւանշաններով, որոնք մեզ աւելի եւս կը պարզեն նրա միտքը դասակարգերի վերաբերմամբ։ Նրա բերած թւերը վերաբերւում են Գերմանիային, այն էլ 1895 թւին։ Առևտրի և արդիւնաբերութեան մէջ կային.

1) Ձեռնարկուներ (ինքնուրոյն, առանց օգնականների և վարձւած աշխատաւորութիւնով)-1,721,418 հոգի։

2) Մանր վարպետներ եւ առեւտրականներ (մէկ և ղեկավար 2-5 բանւորից գործերի)-900,850 հոգի։

** Ե. Տագ-ին (Մաքսիմալիստ)-«Աշխատաւորական թէօրիայի սկզբունքները», 1906 թիւ, Ս. Պետերբուրգ, երես 56։ Այսպիսի փաստեր կան և այլ երկրների «գիտակից» բանւորների կեանքից։

3) Մանր կապիտալիստներ-(5-20 բանւոր ունեցող գործատէրեր)- 200,471 հոգի։

4) Խոշոր կապիտալիստներ-(20ից աւելի անձերով ձեռնարկութեան տէրեր)-48,765 հոգի։

Ինչպէս տեսնում ենք, առաջի խմբի անունը կարող ենք ամենայն հանգստութիւնով դնել աշխատաւորական կամ պրօլէտարական խմբակ, որովհետեւ դրանք բոլորն էլ իբր թէ ինքնուրոյն են, առանց օգնականների, իրենք աշխատող, իրենց ճակատի քրտինքով ապրուստ ճարողներ. ոչ ոք դրանցից չէ ապրում ուրիշի յաւելեալ արժէքով, չէ կեղեքում ոչ ոքի, այլ անշուշտ այս կամ այն ձեւով ինքն է կեղեքւում աշխարհի հզօրներից... «Իբր թէ ինքնուրոյնների թւի մէջ, ասում է Կաուցկին, փաստացի պրօլէտարների թիւը շատ աւելի է, քան մանր կապիտալիստների թիւը, հետը միասին վերցրած նրանց, որոնք կանգնած են կապիտալիստի և պրօլէտարիատի միջավայրում. և դա դեռ «առեւտրական և արդիւնաբերական ձեռնարկութիւններում»։ Բայց, նկատում է նա, յաճախ 4-5 հոգի աշխատաւոր պարունակող առեւտրական ձեռնարկութիւնը կարող է շատ խոշոր կապիտալ պարունակել, այն ինչ «երկու բանւորներով, օրինակ՝ մի քարգար և մի աշակերտ ունեցող, մի քանի ձեռնարկութիւններ պէտք է համարել պրօլէտարական»(**)։

Ակներեւ է, որ այստեղ բաժանման հիմք դրւած է կեղեքման սկզբունքը, բաշխումը և ոչ արտադրութեան մէջ խաղացած դերն ու արտադրական միջոցների սեփականութիւնը»։ Ուրիշ կերպ նա երբէք «ինքնուրոյններին ու տնայնագործներին», որոնք ունեն արտադրական միջոցներ, նոյնիսկ մի «քանի ձեռնարկութիւններ երկու բանւորով», չէր դնի պրօլէտարական բաժնի մէջ։

Յետոյ նա անցնում է դէպի երկրագործները։ Այստեղ այլեւս «Ագրարական հարցի» Կաուցկին չէ, որ «գիւղացի» բառի տակ խցկում է բոլոր գիւղական դասը, որ բոլոր գիւղում ապրողներին համարում է մի դասակարգ։ Ոչ, այժմ նա գիտնականին վայել խորաթափանցութեամբ, հողատէր գիւղացիներին բաժանում է չորս կարգի։

1) Չունեւորներ (2 հէկտարից նւազ հող ունեցողներ)... 548,572։

2) Մանր գիւղացիներ (2-5 հէկտար հող ունեցողներ)... 694,850

3) Միջակ գիւղացիներ (5-50 » » »)... 1,221,284

4) Խոշոր հողատէրեր (50ից աւելի ունեցողներ)... 98,224

Հէկտարը մեր դեսեատինից (երկու օրավարից) մի քիչ փոքր է (դեսեատինը 2400 քառ. սաժէն է, իսկ հէկտարը 2100 քառ. սաժէն)։ Վերածելով մեր չափերին, մենք տեսնում ենք որ առաջին երկու խմբերն անպայման, աշխատաւորական են, այսինքն՝ կազմւած են այնպիսի գիւղացիներից, որոնց հողը կամ բոլորովին բաւական չէ իրենց և ստիպւած են տարւայ մի խոշոր մասը որոնել աշխատանք այլ տեղ՝ —ծախել իրենց աշխատանքը, տալ ուրիշին իրենց «յաւելեալ արժէքը», կեղեքւել ամենադաժանի ձեւով, կամ (երկրորդ խումբը) այնքան հող ունեն, որ հազիւ-հազ բաւարարութիւն է պատճառում արտադրող ընտանիքին, որը կարողանում է իր սեփական ուժերով, առանց կողմնակի վարձւոր բանւորների, առանց ուրիշին կեղեքելու, առանց յաւելեալ արժէքի թոյնը ներծծելու,— աշխատել և ապրել սեփական աշխատանքով։ Առաջին երկու խումբը միասին կազմում են 1,243,422 ընտանիք։ Ինչ կասկած, որ ընտանիքի անդամների թւի և ունեցած հողերի քանակութեան յարաբերութեան աւելի խիստ քննութիւնը մեզ կը ստիպէր երրորդ խմբից մի խոշոր մաս 5-6-10 հէկտար ունեցող շատ սեփականատէրերի նետել նախընթաց երկու խմբերի —զուտ աշխատաւորների գիրկը։ Այն ժամանակ վերջին երկու խմբերի 1,319,508 թիւը կը նւազէր և աշխատաւորական ընտանիքների թիւն անպայման կը գերազանցէր գիւղական մանր ու խոշոր բուրժուազիայից, որն անպայման օգտւում է, բացի իր ընտանիքի անդամներից, նաեւ կողմ-

---

[**] Կ. Կաուցկի-«Դասակարգային շահերը»,- էջ 10։

նակի վարձւոր մշակների աշխատանքից, խուսափում է յաւելող արժէք, դասակարգերի բաժանման այդ «ծառ պտղոյ գիտութեան բարւոյ և չարի:»—Իսկ առաջին երկու խմբերից որ ընտանիքն էլ վերցնէք, դժւար թէ գտնէք այնպիսին, որի աշխատաչափից աւելի լինի հողը: Ի հարկէ այդպիսի դէպքերում չպէտք է բուրժուա համարել, օրինակ, մի այրի կնոջ իր 2-4-5 մանր, աշխատելու դեռ եւս անընդունակ որդւոցներով, եթէ այդ ընտանիքն, իրերի դասաւորութիւնից ստիպւած, վարձում է աշխատող ձեռքեր: Կամ բուրժուա չէ Զանգեզուրցի այն ընտանիքը, որի տղամարդ անդամներից 2-3ը Բագւում բանւոր են, իսկ տանը մնացած հայրը հրաւիրում է վարձու բանւորներ իր հողերը մշակելու, որովհետև եթէ որդիները տանը մնային, նրանց իւրաքանչիւրի սեփական աշխատանքը տալու էր հազիւ տարեկան, ասենք, 50-60-100 րուբլի, իսկ Բագւում նրանք ստանում են 240-360 ր. և աւելի վարձագին: Կեանքի մէջ այդպիսի բազմաթիւ խարթափորթութիւններ կան, որոնց մէջ պէտք է կարենալ դիրք բռնել, առանց բռնադատելու ընդհանուր սկզբունքները:

Միջակ գիւղացիների 1,221,284 ընտանիքի թւից, ինքնըստինքեան հասկանալի է —անկարելի է ջոկել և ասել, թէ քանիսը դրանցից աշխատաւորական ընտանիքներ են, որովհետև վիճակագրական տեղեկութիւններում չեն լինում ամէն մի ընտանիքի անդամների և նրանց ունեցած հողի քանակութիւններն առանձնապէս. Ուստի՝ Կաուցկին չէ կատարում և անկարող էր կատարել այդ աշխատանքը, բայց նա կարող էր և պարտաւոր էր ակնարկել այդ, ինչպէս արել է նախընթաց խմբերի 2 գործաւոր ունեցող ձեռնարկութիւնների մասին: Դժբախտութիւնն էլ հէնց նրանում է, որ այս տեղ էլ Կաուցկին միայն առաջին խումբն է համարում «իբր թէ սեփականատէր» և դնում պրոլէտարիատի շարքը, իսկ երկրորդ խումբը զետեղում է «սեփականատէրերի» մէջ, առանց աչքի առաջ ունենալու, որ այդքան հողը հազիւ բաւականութիւն կարող է տալ գիւղական ընտանիքին: Դրանից էլ բղխում է հետևեալ թւերի մէջ սպրդած սխալը:

Այնուհետև նա առաջ է բերում գիւղատնտեսական ասպարէզում նաև վարձու բանւորների չիֆրը և ստանում է հետևեալ թւերը.

1) Վարձու բանւորներ.—	5,723,967	6,272,539
2) Ինքնուրոյններ, որոնք վարձւում են	548,572	

Այնուհետև երրորդ խմբի մէջ Կաուցկին միացնում է 2-5 հէկտար հող ունեցող մանր գիւղացիներին 5-50 հէկտար ունեցող գիւղական բուրժուազիայի հետ և կազմում մի չիֆր:

3) Գիւղացիներ	1,916,134
4) Խոշոր հողատէրեր	98,224

Մենք բացարձակ անարդար և անհետևողական ենք գտնում երրորդ խմբի 1,916,134 ընտանիքների միատեղումը գիւղացի անւան տակ, որովհետև դրանցից 694,850 ընտանիք զուտ աշխատաւորներ են, առանց այլոց յաւելեալ արժէքի ապրող, իսկ միւս 1,221,284 ընտանիքն, այսպէս թէ այնպէս, մտնում են բուրժուազիայի շրջանը, որովհետև 5-50 հէկտար հող չեն կարող լոկ իրանց ընտանիքի ուժերով մշակել. Նրանք պարտաւոր են վարձել բանւորներ, իւրացնել նրանց յաւելեալ արժէքը: Այդ պատճառով մենք 694,850 ընտանիքն, իբր աշխատաւոր, աւելացնում ենք 6,272,539 վարձու և կիսավարձու ընտանիքների վրայ և ստանում 6,967,389 ընտանիք:

Առևտրական և արդիւնաբերական ձեռնարկութիւնների համար ստացւում են հետևեալ թւերը.

1) Վարձու բանւորներ	7,714,410	9,435,828
2) Ինքնուրոյն չունևորներ	1,721,418	
3) Միջին դասակարգ	1,101,321	
4) Խոշոր կապիտալիստներ	48,765	

Այդ բոլորը միատեղելով, կ՚ստանանք.

1) Վարձու բանւորներ	13,438,377	16,403,217
2) Ինքնուրոյն չունևորներ	2,964,840	
3) Միջին դասակարգ	2,322,605	
4) Խոշոր կապիտալիստներ և հողատէրեր	146,989	

Ինչպէս տեսանք, մանր գիւղացիութիւնը Կաուցկին միատեղում է միջին բուրժուազիայի հետ և, առաջին ու երկր. խումբը համարելով վարձւորներ, ստանում է նրանց համար 15,708,367 թիւը, իսկ «միջին դաս» կոչուածի թիւը հասնում է 3,017,455ի:

Ի նկատի ունենալով այդ ընտանիքների անդամների ընդհանուր թիւը, մենք կը տեսնենք, որ վարձուոր եւ ինքնուրոյն չունեւոր ընտանիքների անդամների մեծ մասն արդէն իսկ աշխատողներ լինելով, բաւական քիչ է դուրս գալիս ընդհ. թիւը:

1) Վարձու բանւորական ընտանիքների բոլոր անդամները: 28,757,058—55,55 %

1) Չունեւոր անկախ ընտանիքների անդամների ընդհանուր թիւը: 6,492,384—12,54%

3) Հասարակ կամ աշխատաւոր գիւղացիներ 3,474,300—մօտ. 7%

4) Միջին դասակարգ կամ բուրժուազիա: 12,400,350—23,66%

5) Խոշոր կալուածատէրեր եւ հողատէրեր: 646,242,— 1,25%

Համախմբելով բոլոր աշխատաւորական տարրերն ի միասին, այն տարրերը, որոնց շահերն անպայման իրար համերաշխ են,— իսկ մանր ու խոշոր բուրժուազիային (բոլոր յաւելեալ արժէքով ապրողներն) էլ միասին, կ'ըստանանք.

1) Աշխատաւորական տարրեր և նրանց ընտանիքի անդամները 38,723,742-75% (մօտ)

2) Կապիտալիստական եւ հողատիրական տարրեր եւ նրանց ընտանիքի անդամները 13,046,592-25% (մօտ)

Այդ թւերի լեզուն հետևեալն է: Ամբողջ ազգաբնակութեան 75%ը կամ երեք քառորդ մասը 1895 թւին Գերմանիայում ապրում էր անպայման կեղեքւելով, կամ իր ամբողջ աշխատանքը ծախելով (55, 55%) կամ ծախելով իր աշխատանքի մի խոշոր մասը (ազգաբնակութեան 12, 54%ը) և կամ ոչ ուրիշին իր աշխատանքը ծախելով, ոչ էլ ուրիշներից աշխատանք ծախու առնելով (մօտ 7%): Դրանցից առաջին երկու խմբերն անմիջապէս, գռեհիկ ձևով կեղեքւողներն են, իսկ մի փոքրաթիւ մասը— մանր ինքնուրոյն երկրագործները, 2-5 հէկտար հող ունեցողները, կեղեքւում են շեղակի, ծուռ ու մուռ ճանապարհներով, թէ իր հողերը գրաւ դնելու կամ հիպօթէք,

միջոցով, թէ իբր վաճառող ու գնող, ինչպէս կը տեսնենք մի քիչ յետոյ:

Լոկ այդ փոքրիկ խմբակն է, այդ 7%ը, որ Կաուցկին, համարելով միջին դասակարգ, դնում է բուրժուազիայի մէջ: Նրան դրդում է այդպէս վարւելու այն թիւր ու սխալ ըմբռնումը, թէ ամէն մի արտադրական միջոցներ ունեցող բուրժուա է, կապիտալիստ է, որովհետև արտադրական միջոց և կապիտալ Կաուցկու համար հանդիսանում են նոյնութիւն:

Այս բոլոր բացատրութիւններից ակներև է, որ մենք կանգնած ենք երկու խոշոր տեսութիւնների առջև— հնաւանդ մարքսիստական և աշխատաւորական: Այդ երկու տեսութիւնների մէջ թէ պրօլէտար կամ վարձու բանւոր և թէ կապիտալիստ ու խոշոր հողատէր հասկացողութիւնները միանգամայն պարզ են: Վիճելի միակ կէտը հանդիսանում է մանր, աշխատաւոր գիւղացիութիւնը և մանր աշխատաւոր արհեստաւորութիւնը: Պարզենք նորից նախ աշխատաւորական տեսակէտը, որ հնագոյնն է Ռուսաստանում:

Դեռ նախ քան Մարքսի «Կապիտալ»ի I հատորի երևալը, նախ քան Կաուցկու գրական ասպարէզ մտնելը, 1862 թւին մենք պատահում ենք Ռուսական ամենամեծ հանճարին, Ն. Գ. Չերնիշևսկուն, որ իր յատուկ պարզութեամբ, իր մտքի սրաթափանց եղանակով մեզ ներկայացնում է աշխատաւորական թէօրիան կամ տեսութիւնը:

«Ռէնտան, ասում է նա, վաստակի և աշխատավարձի վերաբերմամբ ճիշդ նոյնպիսի դեր է խաղում, որպիսի դեր խաղում է վաստակն աշխատավարձի վերաբերմամբ:... Ռէնտան դիմում է դէպի վաստակի և աշխատավարձի կլանումը»: Կապիտալիստական սիսթէմի մէջ եռանդամ բաշխման մասերն իրար դէմ մղւում են. «Այս սիսթէմում վաստակը դիմում է դէպի բանւորի հպատակեցումը կապիտալիստին, իսկ ռէնտան ձգտում է կապիտալիստին և բանւորին միասին հպատակեցնել հողատիրոջը»: Այնուհետև նա պարզաբանում է իր առաջադրած դասակարգային շահերի մղումը՝ կենսական պարզ օրինակներով:

«Ռենտան ձգտում է իրեն հպատակեցնելու վաստակին ու աշխատավարձը: Եթէ դա վերածենք իրական փաստերի, կը նշանակէ, որ լենդլորդը (հողատէր լորդը) թշնամի է ֆերմերի (կապիտալի) եւ բանւորի ինքնուրոյնութեանը: Եւ մենք Անգլիայում տեսնում ենք, որ կալուածատէր լորդն աշխատում է նրանց պահել իրենից կախուած, մինչեւ անգամ ի վնաս բոլորի, ի վնաս իր շահերի»:

«Մենք տեսանք, որ վաստակը ձգտում է կլանել աշխատավարձը. դա նշանակում է, որ կապիտալիստը պէտք է բանւորին կախուած պահէ իրենից այնպէս, ինչպէս որ կալուածատէր լորդը պիտի պահէ կապիտալիստին եւ բանւորին: Բոլոր քաղաքակիրթ երկիրների պատմութիւնն այդ ձգման մշտական գոյութեան անընդհատ վկայութիւնն է տալիս»:

«Մենք տեսանք, որ ռենտայի շահերը հակառակ են վաստակի եւ աշխատավարձի շահերին միասին: Միջին դասակարգը եւ հասարակ ժողովուրդը միշտ միասին դաշնակցել են այն դասի դէմ, որին բաժին է ընկնում ռենտան: Մենք տեսանք, որ վաստակի շահը հակառակ է աշխատավարձի շահին: Հէնց որ բանւորների ու կապիտալիստների դասերը դաշնակցելով իրար, յաղթահարում են ռենտա ստացող դասին, այնուհետեւ այդ երկրի պատմութեան գլխաւոր նիւթն է դառնում միջին դասի (բուրժուազիայի) կռիւը ժողովրդի դէմ» (*): Ի հարկէ աւելի ճիշդ կը լինէր ասել «ժողովրդի կռիւը բուրժուազիայի դէմ», որովհետեւ «ժողովուրդը աշխատաւոր մասսան է, որ կռիւ է մղել բուրժուազիայի դէմ, նրանից որոշ իրաւունքներ պոկելու նպատակով, իրաւունքներ, որ բուրժուազիան խլել է ժողովրդից՝ առանց որ եւ է զգալի դիմադրութեան հանդիպելու:

Չերնիշեւսկի, Գէրցէն, Լաւրով, Միխայլովսկի եւ վերջերս էլ սոց.-յեղափոխականների մի ամբողջ շարք թէօրետիկոսներ զարգացրին այդ տեսակէտը, որ ստացաւ «աշխատաւորական թէօրիա» անունը: Մենք արդէն տեսանք, որ Մարքսն ու Էնգէլսն էլ, իրենց զարգացման լաւագոյն շրջանում, նոյն թէօրիայի սկզբունքներով էին մօտենում դասակարգային կռուի եւ առհասարակ դասակարգերի բաժանման երեւոյթին: Այդ էլ դեռ քիչ է. մենք տեսանք նոյնպէս, որ Կ. Կաուցկին դասակարգերի բաժանման հարցում չափազանց ակներեւ երկուութեան մէջ է: Երբ նա քննում է ընդհանրապէս դասակարգն ու դասակարգային շահերը, բաժանման սկզբունք դնում է հարստութիւնների բաշխումը, մի բառ անգամ չասելով արտադրական յարաբերութիւնների մասին: Իսկ երբ մասնաւորապէս նա խօսում է հողային հարցի մասին, շօշափում բանւոր և գիւղացի դասակարգերի բնորոշման խնդիրը, նա դնում է արտադրութեան մէջ մասնակցելու և արտադրական միջոցների սեփականութեան խնդիրը, հետեւելով հէնց Մարքսիզմի քարոզներին:

Բառերի այդ չնչին տարբերութիւնից առաջ է գալիս այն, որ իրենց աշխատանքով ապրող մարդիկ դառնում են բուրժուա, ինչպէս մանր արհեստաւորները, մանր, աշխատաւոր գիւղացիները եւայլն. իսկ արտադրական միջոցներ չունեցող եւ ահագին ռոճիկներ ստացող բժիշկները, փաստաբանները, ինժեները, պաշտօնեաները, քիմիկոսները, համաձայն այդ որոշման, պիտի մնան «պրոլետարիատի» շարքերում:

Կրկնենք մի անգամ եւս մեր տեսական դրութիւնները:

Աշխատաւորական տեսակէտն, ուրեմն, սկզբունք է ընդունում հասարակական հարստութեան բաշխումը. ով ապրում է իր սեփական աշխատանքով, առանց ուրիշների յաւելեալ արժէքը իւրացնելու, առանց կեղեքելու, — նա աշխատաւոր է. իսկ ով մասամբ կամ ամբողջովին ապրում է յաւելեալ արժէքով, — նա բուրժուա է: Այս որոշումը պարզ է արեւի լոյսի նման: Ամէն տեսակի բանւորներ, բոլոր մանր արհեստաւորները, բոլոր մանր հողատէր, սակաւահող եւ անհող գիւղացիները աշխատաւորներ են: Աշխատաւորներ են նաեւ մտաւոր պրոլետարները, որոնք իրենց սօցիալական դրութիւնով աւելի մօտ են կանգնած աշխատաւորութեան, որովհետեւ իսկ իրենց մտքի աշխատանքով են ապրում, մասնակից չլինելով յաւելեալ արժէքի, այլ յաճախ իրենք եւս կեղեքւելով:

Այս պարզ ու յստակ տեսութեան դէմ ռուսական սօց.

(*) Ն. Գ. Չերնիշեւսկու գործերը, IV հատոր եր. 201—205 (Այս վկայութիւն առաջ է բերուած նաև Չէրնովի կողմից)։

դէմօկրատիան, համաձայն իր հնաւանդ սովորութեան, դնում է 40—50 թւականների մարքսիզմի հնացած, իրենց՝ Մարքսի և Էնգէլսի կողմից վերաքննւած, սրբագրւած և ուղղւած տեսակէտը: Կաուցկուց էլ նրանք վերցնում են ո՛չ այն տեսակէտը, որ նա պաշտպանել է, յենւելով Մարքսի կլասս ձևագրի մտքերի տրամաբանական ամբողջութեան վրայ, այլ օգտւում են այն շարադրութիւնից, որը հին մարքսիզմի արձագանքն է կազմում:

Ռուսական սոցիալ-դէմօկրատիան, որի թէօրէտիքների մի խոշոր մասը հաւաքւած էր մի ժամանակ «Իսկրա» (Կայծ) կոչւած արտասահմանեան թերթի շուրջը, հետևեալ տեսակէտն է պաշտպանում դասակարգերի բաժանման խնդրի առիթով: Դասակարգը «մարդկանց աւելի կամ պակաս ընդարձակ մի կարգ է, որոնք արտադրութեան նոյնանման յարաբերութիւնների մէջ են դէպի միւս կարգերը»:(*)

Առաջին վայրկեանից իսկ տեսնում ենք, թէ ինչ ստրկական ընդօրինակումն է այդ որոշումը Կ. Կաուցկու տւած որոշման, որ մենք առաջ բերինք վերևում «Ագրարային հարցը» գրքից: Բայց այնտեղ գոնէ մարդ զգում է, որ գիտնականը, տեսնելով իր բնորոշման խախուտութիւնը, պրօլէտարիատի համար դնում է չորս տարբեր, իրար լրացնող յատկանիշներ, իսկ այստեղ, խորաթափանց գիտնականին ոչ սազական մի շարժումով, պարոն թէօրէտիկոսները ամէն ինչ լուծել, ամէն ինչ պարզել, նոյնիսկ գռեհկացրել են: Նրանք գիտեն, որ ուսուցիչները միաժամանակ ասել են, որ հասարակական բոլոր երևոյթները «արտացոլումն են արտադրական յարաբերութիւնների». և այդ դօգման (հաւատալիքը), այդ կրօն դարձած նախադասութիւնն ուզում են գործադրել ամէն տեղ: Կարծես թէ այդ մարդոց համար գոյութիւն չունի ո՛չ միայն Մախի, Աւէնարիուսի, Ալֆրէդ Բինէի, Բէլֆորտ Բաքսի, Շտամլէրի, Ժօրէսի և ուրիշների սինթէթիքական մօնիզմը, այլ և իրենց իսկ ուսուցիչների, մանաւանդ Էնգէլսի կատարած վերջին սրբագրութիւնները «տնտեսական կամ դիալէքտիքական մատէրիալիզմի» վարդապետութեան մէջ. նրա մոռցած «փոխազդեցութեան» գաղափարը: Նրանք անպատճառ ուզում են դասակարգերի բաժանման սկզբունքն անմիջապէս կապել արտադրութեան հետ, համարելով բաշխումն իբր արտադրութեան պարզ հետևանք: Մինչ Մարքսի մօտ մենք գտնում ենք բոլորովին տարբեր մտքեր այդ առիթով:

«Կապիտալիստական սիսթէմի հիմքում դրւած է արտադրողի արմատական անջատումն արտադրական միջոցներից: Այդ անջատումը տեղի է ունենում յառաջատական սանդուխքով, հէնց որ կապիտալիստական սիսթէմը մի անգամ արդէն հաստատւում է: Բայց որովհետև առաջինը (անջատումը) կազմում է երկրորդի (կապիտալիզմի) հիմքը, ուրեմն՝ վերջինս չէր կարող հաստատւել՝ առանց առաջինի: Որպէսզի նա աշխարհ գայ, պէտք էր որ, ուրեմն, գոնէ մասամբ, արտադրական միջոցներն արդէն, առանց ֆրազի, խլւած լինէին արտադրողներից. որոնք գործ էին ածում այդ միջոցները՝ իրականացնելու համար իրենց սեփական աշխատանքը»:(*)

Արտադրական միջոցների կուտակումը մի քանի ձեռքերում, գոնէ մասամբ, պիտի տեղի ունեցած լինէր՝ նախ քան կապիտալիստական արտադրութեան երևան գալը: Իսկ ինչ է արդեօք «արտադրական միջոցների կուտակումը» և «արտադրողի զրկելն» այդ միջոցներից, միթէ դա արդէն բաշխման գործողութիւն չէ: Այո՛, դա բաշխումն է: Բաշխումն ազդում արտադրական նոր եղանակի վրայ, իսկ վերջինս, մի անգամ արդէն ծնունդ առնելով, իր կարգին աւելի ևս արագացնում է հասարակական այդ անհաւասար բաշխման և դասակարգերի հակադրութեան գործողութիւնը:

Դրանից շատ աւելի պարզ ու յստակ ձևով արտայայտւել է Մարքսը «Կապիտալի» III հատորում. «յամենայն դէպս՝ կարելի է ասել, որ կապիտալն ինքն արդէն ենթադրում է բաշխումն, այն է՝ բանւորներին զրկելն աշխատանքի միջոցների սեփականութիւնից, այդ նոյն միջոցների կենտրոնացումը փոքրամասնութեան ձեռքում»: (**)

(*) «Իսկրա», No. 33 երես 4 (ըստ Չեռնովի):

(*) K. Marx «Le Capital», tome I. page 315, առաջին [illegible], թարգմանութիւն Roy-ի

(**) «Կապիտալ», III հատոր, Ռուսերէն, երես 729:

«Կապիտալի» այս կտորների հետ ամենեւին գործ չունեն «Իսկրա» ի թէօրէտիկոսները։

Մեկնելով իր տուած ախտաւոր որոշումից «Իսկրա»ն շարունակում է մի այլ յօդուածում.

«Հասարակական արտադրական միջոցների այս կամ այն մասի իւրացումը եւ նրանց գործադրութիւնը մասնաւոր տնտեսութեան համար, այսինքն՝ արդիւնքները վաճառքի հանելու տնտեսութեան համար,— ահա ժամանակակից հասարակութեան մի դասակարգի (բուրժուազիայի) հիմնական տարբերութիւնը պրօլէտարիատից, որը զրկուած է արտադրական միջոցներից եւ ծախում է իր աշխատանքի ոյժը»։ (*)

Նախ եւ առաջ մի անմիտ խառնաշփոթութիւն։ «Արտադրութեան հասարակական միջոցներ» տերմինն է գործածում յօդուածագիրը, այսինքն թերթի խմբագրութիւնը։ «Արտադրութեան հասարակական միջոցներ» կոչւում են այն միջոցները, որոնցով չէ կարելի գործել անհատօրէն, այլ պէտք է աշխատել խմբով, հասարակական աշխատանքով։ Այդպէս էին կապիտալիստական սկզբնական շրջանի մանուֆակտուրական արտադրութեան միջոցները, որոնց ամէն մէկ գործիքով թէեւ աշխատում էր մի մարդ, բայց այդ մի մարդը պատրաստում էր, օրինակ, ասեղի 1/19-դ մասը եւ որը, առանց միւս 18 ընկերների, որոնք պատրաստում էին ասեղի միւս մասերը,—ոչինչ էր, նա չէր կարող արտադրել ոչինչ, առանց արհեստանոցի ներսի բոլոր համայնքի, բոլոր բանւորների հասարակութեան։ Դա կոչւում է «հասարակական աշխատանք», իսկ դրա գործիքները «արտադրական հասարակական միջոցներ» են, թէեւ արդիւնքի իւրացումը կամ սեփականացումը, այսինքն բաշխումը կատարւում է անհատաբար, մասնաւոր սեփականութեան տեսակէտից։ Նոյնպիսի հասարակական աշխատանք է պահանջում նաեւ ներկայի «մաշինոֆակտուրական» արտադրութիւնը, ինչպէս սրամտօրէն կոչում է Վ. Զէրնօվը կապիտալիստական խոշոր արտադրութիւնը։ Այս վերջին ձեւի արտադրական միջոցներն էլ կոչւում են «արտադրական հասարակական միջոցներ», որովհետեւ պահանջում են խմբական, գործակցական կամ հասարակական աշխատանք։

Արդ, եթէ որոշումն աչքի առաջ ունի այդպիսի «հասարակական արտադրական միջոցներ», իբր հակադրութիւն մանր արհեստաւորի կամ մանր գիւղացու արտադրական միջոցներին, որոնց կարելի է գործադրել անհատօրէն, անհատական աշխատանքով,— այն ժամանակ թէ մանր արհեստաւորը, որ ունի իր արտադրական անհատական միջոցները եւ թէ մանր գիւղացին —2-5 հէկտար հող ունեցող որ ունի իր գութանն ու արօրը, իր եզն ու կովը, իր տունն ու հողը՝ բոլորն էլ «արտադրական մասնաւոր միջոցներ»,— այդ երկու խաւերն էլ համարւում են բանւորներ, պրօլէտարներ, աշխատաւորներ։

Բայց հէնց դժբաղդութիւնն այն է, որ «Իսկրա»-ի խմբագրութիւնն այդ մտքով չէ գործածում «արտադրական հասարակական միջոցներ» տերմինը, այլ այնպէս, լոկ ձեւի համար է դրուած հասարակական բառը, որովհետեւ նոյն այդ խմբագրութիւնը, չափազանց խոշոր յանդգնութեամբ, «մանր բուրժուա» է կոչում այն բոլոր մտածողներին, որոնք պաշտպանում են մանր, աշխատաւոր գիւղացիներին եւ արհեստաւորներին։

Այնուհետեւ որոշման մէջ ասուած է, որ բուրժուայի եւ պրօլէտարի էական տարբերութիւնը նրանումն է, որ մէկը ունի արտադրական միջոցներ, իւրացրել է դրանք եւ «գործադրում է մասնաւոր տնտեսութեան —արդիւնքներ վաճառելու տնտեսութեան համար», մինչ միւսը— պրօլէտարը, «զրկուած է արտադրական միջոցներից»։ Այդ բառերից տրամաբանականօրէն հետեւում է, որ 2-3-5 հէկտար հող ունեցող աշխատաւոր գիւղացին եւ աշխատաւոր արհեստաւորը, որոնք ունեն արտադրական միջոցներ, կապիտալիստ են, բուրժուա են, մինչ մի խոշոր առեւտրական, որ, օրինակ ունի 20-30,000 րուբլի դրամագլուխ, որ ոչ մի դեր չէ խաղում արտադրութեան մէջ եւ չունի արտադրական ոչ մի միջոց—ոչ հասարակական, ոչ էլ անհատական, կամ մի խոշոր պաշտօնեայ, որ ստանում է տաս-

---

(*) «Իսկրա», No 27 երես, 2 (ըստ Զեռնովի)։

նեակ հողամասերով առձիկ, կամ մի բանկիր, մի ինժեներ, մի բժիշկ... բոլորն էլ բուրժուա չեն, կապիտալիստ չեն... Դրանք «արտադրական միջոցներ» չունեն, իրենց մասնաւոր տնտեսութեան, այսինքն արդիւնքներ վաճառելու տնտեսութեան համար չեն գործածում արտադրական կոչուած միջոցները. իսկ աշխատաւոր արհեստաւորն ու աշխատաւոր գիւղացին արտադրում են ծախելու համար եթէ ոչ իրենց բոլոր արտադրած ապրանքները, գոնէ նրանց մի մասը։

«Բուրժուա» գաղափարի որոշման մէջ ռուս սօց. դեմօկրատիան մնացել է «սառուցման կէտի» վրայ. նա կրկնում է Լուի Բլանի բնորոշումը։ Դրանում մեղանչում է եւ Կաուցկին, միայն ոչ բոլոր գրուածքներում, այլ «Ագրարային հարցի» մէջ։ Դրանք բոլորն էլ բուրժուա են անուանում արտադրական միջոցներ ունեցող բոլոր անհատներին, որովհետեւ նրանց համար, Կաուցկուն էլ հետեւողները հաշուած, ամէն մի արտադրական միջոց կապիտալ է, ուրեմն՝ ամէն մի արտադրամիջոցի տէր կապիտալիստ է, բուրժուա է։ Ահա այն ողբալի թիւրիմացութիւնը, որ բղխում է «կապիտալ» բառի բնորոշման հնութիւնից։

Ինչ է կապիտալ։ Ֆրանսիացի յայտնի ֆիզիօկրատ եւ Մեծ Յեղափոխութեան նախօրեակին մինիստր Տիւրգօն այսպէս է որոշում. —«Ով մշտապէս... ամէն տարի, ստանում է աւելի արժէքներ, քան ծախսում է, նա կարող է աւելորդները կուտակել։ Այդ կուտակուած արժէքները կազմում են կապիտալ կոչուածը։ Բոլորովին միեւնոյն է, թէ արդեօք այդ կուտակուած արժէքների գումարը դրամներից է բաղկացած, թէ այլ իրերից— որովհետեւ դրամը ներկայացնում է իրենից ամէն տեսակի արժէքներ, ինչպէս եւ բոլոր միւս տեսակի արժէքները ներկայացնում են դրամ»։(*)

Ինչպէս պարզ երեւում է, այս որոշումով ամէն մի արժէք, որ աւելանում է մարդու գործածութիւնից, կապիտալ է։ Կապիտալ են բոլոր գործածական արժէքները, բոլոր ուտելիքները, որ մի քիչ աւելացել են սովորական սպառումից. կապիտալ են բոլոր տեսակի գործիքները, մեքենաները... կապիտալ է, օրինակ, մի ձեռք զգեստը, որ նեղ է եկել քեզ վրայ եւ մնացել է առանց գործածութեան։ Պարզ է, որ այդ որոշումն ախտաւոր, պակասաւոր է։ Պէտք է տալ այնպիսի որոշում, որ ամփոփէ բոլոր տեսակի կապիտալները, չթողնելով մտնել այդ անուան տակ տարբեր երեւոյթներ ու հասկացողութիւններ։

(*) Turgot. —«Réflixions sur la formation des richesses». 359.

Շատ աւելի գիտական, սահմանաւորուած եւ իրականութեան մօտ է քաղաքատնտեսութեան հիմնադիր Ադամ Սմիթի որոշումը, որ տուել է իր «Ազգերի հարստութիւնը» եռահատոր գրուածքում. «Երբ մարդ ունի այնպիսի քանակութիւն խնայած պաշարների, որ բաւական է նրա կեանքի պահպանման համար ամիսներ ու տարիներ, այն ժամանակ նա, բնականաբար, աշխատում է եկամուտ ստանալ այդ պաշարների մեծ մասից, թողնելով իր ներկայ գործածութեան կամ սպառման համար նրանցից այնպիսի քանակութիւն, որը բաւական լինէր իր գոյութիւնը պահելու համար մինչեւ այն ժամանակ, երբ նա կը սկսէ եկամուտ ստանալ։ Կը նշանակէ՝ այդ բոլոր պաշարները կարելի է բաժանել երկու մասի. պաշարների այն մասը, որից նա սպասում է եկամուտ ստանալ, կոչւում է կապիտալ։ Իսկ միւս մասը ծառայում է անմիջական գործածութեան համար... Կուտակուած եւ կապիտալ դարձած արժէքները կարող են գործածել կամ այն մարդու ձեռքով, որին նրանք պատկանում են, կամ կարող են տրուել մի կողմնակի մարդու վարձով»։(*)

Թէեւ Ադամ Սմիթից յետոյ շատ ուրիշ որոշումներ են տրուած, բայց պաշտօնական քաղաքատնտեսութիւնը գործ է ածում Շէօնբէրգի որոշումը, որ մօտաւորապէս այն որոշման համառօտութիւնն է, ինչ որ տուել է Ա. Սմիթը. Կապիտալ են մարդկային աշխատանքով ստեղծուած այն արժէքները, որոնք գործ են ածւում նոր արժէքներ ստանալու համար: (Schönberg-l. c. եր. 173)

Ժան Բատիս Սէյ, խօսելով արտադրութեան գործօնների—

(*) A. Smith – „Recherches sur la nature et les causes de la richesse des Nations", vol. II. ch. I.

բնութեան և աշխատանքի մասին. չարունակում է. «Միւս արտադրական գործիքները բնութիւնից չեն ստեղծուած. նրանք աւելի առաջ եղած ճարտարարուեստի (ինդուստրիա) պտուղ են: Դրանք արդիւնքներ են. օրինակ՝ սերմնացուն, որ ձեռք է բերուած երկրագործութեամբ, ներկեր, բամբակ, որ մեզ տուել է առևտուրը, գործիքներ, մեքենաներ, շէնքերը, որ կառուցել են, անասուններ, որոնց աճեցրել ու պահել են մարդկային խնամքով: Կոչենք այս գործիքները, կամ գոնէ նրանք, որոնք միայն մի հատիկ արդիւնաբերական ձեռնարկութեան կարող են ծառայել՝—կապիտալ: Կոչենք կապիտալային արժէք նրանց ունեցած բոլոր արժէքը» (*):

Կապիտալը կարող է ընդունել շատ բազմազան ձևեր. օրինակ, դրամի ձև, տների, կահ-կարասիքի, ապրանքների ձև և այլն. «Այդ պատճառով, չարունակում է նա 137րդ երեսում, — հէնց որ այդ արժէքն ամփոփուած է արդիւնատու գործողութեան մէջ գործադրուող առարկաներում, ես այդ կոչում եմ կապիտալ, ինչ առարկայի մէջ էլ որ ամփոփուած լինի այդ արժէքը»:

Ռոշէր գերմանացի տնտեսագէտի որոշումը շատ աւելի կարճ է. «Մենք անուանում ենք կապիտալ այն արդիւնքը (Produkt), որը պահպանւում է յետագայ արտադրութեան համար»(**):

Վերևում բերուած բոլոր որոշումները տալիս են «կապիտալ» բառի իմաստը, ենթադրելով, որ այդ կապիտալը հասարակական է: Այսպէս՝ եթէ որ հասարակութիւնը լինէր ամբողջապէս մի տնտեսական միութիւնից բաղկացած, իր արտադրական բոլոր միջոցների տէրը, կարելի էր այն ժամանակ ասել, որ ամէն մի արտադրական միջոց կապիտալ է և դրա համեմատ էլ՝ ամբողջ հասարակութիւնը դիտել իբր մի կապիտալական եղանակով արտադրող ամբողջութիւն, գուցէ

---

* F. B. Say – «Cours complet d'économie politique pratique», Paris, 1840, p. 135.

** Schönberg «Handbuch der Polit. Oeconomie», S. 172, vol I. Այդ հատորում բերուած են բազմաթիւ այլ որոշումներ, որոնցից վերցրել ենք մի երկուսը:

նետելով «կապիտալիստ» հասկացողութիւնից վարձու բանուորներ բանեցնելու, յաւելեալ արժէք իւրացնելու գաղափարը: Եւ յիրաւի, այդ բոլոր որոշումների համեմատ, մի փոքրիկ արհեստաւոր, մի աշխատաւոր գիւղացի դառնում են կապիտալիստներ, չնայելով որ այս վերջին բառի հետ անխզելիօրէն միացած է վարձու բանուորի պատկերը, նրան կեղեքելու ըմբռնումը:

Այդ բոլոր որոշումները մենք վստահօրէն կարող ենք անուանել բուրժուական: Նրանց հեղինակները երբեք չեն ընդունում, որ կապիտալի գործադրութիւնը կապիտալիստի կողմից անպայման իր մէջն ունի մի բաղադրեալ, մի ճակատագրական տարր —ուրիշի յաւելեալ արժէքի իւրացում, դրամագլխի աճեցողութիւն ուրիշի աշխատանքով, որովհետև կապիտալիստի ամենաբնորոշ նշաններից մէկն էլ իր չաշխատելն է կամ ուրիշներին աշխատեցնելն է իր դրամի միջոցով:

Այդ բոլոր ընորոշումներին պակասում է պատմա-իրաւական մի տարր, —կապիտալիստին իւրայատուկ բաղկացուցիչ մասի— ինքնաճեցման գաղափարը:

Ադոլֆ Վագները (Պրոֆէսոր Բէրլինում) փորձում է դիտել կապիտալը նախ իբր «Rein ökonomische Kategorie» - «իբր զուտ տնտեսական կատէգորիա»: Քննելով իբր այդպիսին, նա «պաշար է այնպիսի տնտեսական բարիքների, որոնք պիտի գործադրուին մի տնտեսութեան մէջ.—նա արտադրական միջոց է: Այդ տեսակէտից հողը կապիտալ է այն չափով, որչափով որ նա, մարդկային աշխատանքի շնորհիվ, դառել է տնտեսական բարիք»... Մի քանի տող յետոյ նա դիտում է կապիտալը պատմա-իրաւական տեսակէտից և գտնում, որ նա անհատի կարողութեան այն մասն է, որը ծառայում է այդ անհատի համար իբր եկամուտ բերող աղբիւր»... *

Ակներև է, որ Վագները, իբր «մինչև ուղն ու ծուծը» բուրժուա տնտեսագէտ, չէ կարողացել կամ չէ կամեցել քննել կապիտալն իբր պատմա-իրաւական երևոյթ, այլ այդ տեսակէտը դրել է, որպէս զի խոշոր հողատէր դասակարգին էլ տանէ գիտական պաշտպանութեան թևերի տակ:

---

* Ad. Wagner «Grundlegung» 1 Aufl. 27

Այդ տեսակէտը լիապէս ներկայացւած ենք գտնում մենք Մարքսի և Լասալի մօտ:

«Դրամն իբր դրամ և դրամն իբր կապիտալ, —ասում է Մարքսը, —նախ և առաջ իրարից տարբերւում են իրանց շրջանառութեան զանազան ձևերով: Ապրանքների շրջանառութեան անմիջական ձևն է Ա.-Փ.-Ա. (Ապրանք-փող—ապրանք), ապրանքի ձևափոխումը դրամի և դրամի վերաձևափոխումը կամ կրկին ձևափոխումն ապրանքի. ծախել՝ գնելու համար: Բայց այդ ձևի կողքին մենք գտնում ենք մի բոլորովին տարբեր ձև, Փ.-Ա.-Փ., փողի ձևափոխումն ապրանքի և այս կրկին ձևափոխումը փողի. գնել՝ ծախելու համար. այս վերջին շրջանը կատարող ամէն փող դառնում է կապիտալ, ձևափոխւում է կապիտալի և իր կոչումով իսկ արդէն կապիտալ է»: Այնուհետև Մարքսն սկսում է այդ շրջանառական ձևի խոր քննութիւնը և դուրս բերում, որ Փ.-Ա.-Փ. շարքի Փ. և Փ. իրար հաւասար չեն. այլ վերջին Փ. անպայման աւելի մեծ է, քան առաջինը: Եթէ այդպէս չլինէր, այլևս անմիտ կը լինէր և՛ առևտուր, և՛ կապիտալիստական արտադրութիւն:

Մանրամասն քննութիւնը հասցնում է Մարքսին հետևեալ եզրակացութեան. «Կապիտալը փող է, կապիտալն ապրանք է: Բայց նա իբր արժէք՝ այստեղ ներկայացնում է իբր մի ինքնաշարժ էութիւն (Substance automatique) և ինքնաբերաբար, ինչպէս մայր արժէք, արտադրում է մի նոր ծիլ, մի յաւելեալ արժէք, և վերջնապէս աճում է իր սեփական յատկութիւնով: Մի խօսքով՝ —կարծես թէ արժէքը ձեռք է բերել մի խորհրդաւոր յատկութիւն՝— ծնելու նոր արժէք, նրանով, որ նա արժէք է, բերելու ձագեր և կամ, գոնէ, ածելու ոսկէ ձուեր»(**):

Իր միտքն աւելի ևս պարզաբանելու համար, Մարքսը վերցնում է հետևեալ օրինակը. 100 ֆ. ստէրլինգը տալիս՝ գնում են 200 լիտր բամբակ, իսկ վերջինը ծախում, ստանում են 110 ֆունտ ստէրլինգ: Եթէ ենթադրենք, որ այդ շրջանա-

---

** K. Marx «Le Capital», T. *II*, section *I*, chap. JV, pages 61 et 64.

ռութիւնն առաջին կապիտալիստական գործողութիւնն է աշխարհի վրայ, մենք կը նկատենք, որ 110 ֆ. ստէրլինգը «տարբերւում է իր մէջ և իր սկզբնական արժէքը, և՛ իր յաւելեալ արժէքը, ճիշդ այնպէս, ինչպէս Աստուած զանազանում է իր անձի մէջ հօրը և որդուն, և ինչպէս որ երկուսը մի են և միևնոյն հասակն ունին, որովհետև 10 ֆ. ստէրլինգ յաւելեալ արժէքի շնորհիւ է, որ սկզբնական 100 ֆ. ստէրլինգը դառնում է կապիտալ: Եւ հէնց որ այդ արդէն կատարուել է, հէնց որ հայրը ծնել է որդուն և ընդհակառակը, ամէն մի տարբերութիւն չքանում է և մնում է միայն մի էակ.— 100 ֆ. ստէրլինգ»: Դրանից յետոյ նա եզրափակում է. «Ուրեմն՝ արժէքը դառնում է պրօցէսիվ (աճող) արժէք, մշտապէս ծիլեր արձակող, յարաճուն դրամ, և իբր այդպիսին՝— կապիտալ (երես 65): Ու անմիջապէս Մարքսն իր խօսքը վկայական պաշարով պատրաստ ունի օրինակներ. «Կապիտալը մի կայուն արժէք է, ասում է հռչակաւոր ֆրանսիացի տնտեսագէտ Սիմոն դը Սիսմոնդի, որը ինքնիրեն աճում է անընդհատ» (*).

Վերջապէս, ամենակտրուկ և իւրայատուկ բացատրութիւն է տալիս մեր հեղինակը. կապիտալն է «Փ.-Փ. դրամ կամ փող, որ ածում է փող. դրամ, որ ձագ է բերում, —այս է կապիտալի բնորոշումն՝ իր առաջին մեկնաբանողների— մէրկանտիլիստների բերանում»: (երես 65)

Վաղուց է որ մարդիկ դադարել են հրաշքների հաւատալ: Իսկ ինքնիրեն յաւիտենապէս, անընդհատ աճող դրամի գոյութիւնը մի հրաշք է:

Մեսսայը կարող է անել Մօլլա-Նասր-Էդդինի անէկդօտներում, որոնց մէջ կաթսան զաւակ է բերում, մի փոքրիկ կաթսայ, որպէսզի միւս անգամ խարամանկ մօլլան տանի դրացու «ձագ բերող» մեծ կաթսան և այլևս չվերադարձնէ, առարկելով, որ «նա մեռել է». Եւ ինչու չէ կարող «ձագ բերող» կաթսան նաև մեռնել: Խարամանկ է եղել Նասր-Էդդին-Խօջան. խարամանկ են և բոլոր կապիտալիստները, փոխանակ մեռածի ծնունդը խոստանալու, անփոփոխացնում են մարդ արարածի ծնած հարստութիւնները։ Նրանք ունեն կապիտալ, իսկ մարդկանց մի հսկայական մասը ոչինչ չունի, —ասված է։ Վերջիններս ունեն աշխատելու ընդունակ բազուկներ։ Եւ ահա ձեզ կապիտալ։ Նա այն բոլոր արժէքներն է, որոնք ստեղծուած են մարդկային աշխատանքով (ինչ ասել կ'ուզէ—նախ բնութեան տուած նիւթերով) և որոնք գործադրւում են վարձու բանուորների ձեռքով նոր արժէքներ ստանալու համար։

---

* S. Sismondi— «Nouveaux principes de l'économie politique» T. *I*. p. 90.

Ֆ. Լասսալը չա՛տ աւելի պարզ ու աներկբայելի բացատրութիւն է տալիս կապիտալի մասին. «կապիտալն է աշխատանքի բաժանման, փոխանակական արժէքներ արտադրելու սիստէմի և ազատ մրցման ժամանակ նախապէս իրականացուած այն պաշարը, որ անհրաժեշտ է արտադրողների կեանքի պահպանման համար՝ մինչեւ արդիւնքի ծախսը վերջնական սպառողին, և որին հետեւում է այն, որ այդ ապրանքի միջոցներից աւել մնացած եկամտամասը մնում է այն մարդուն կամ բաժանւում է այն մարդկանց մէջ, որոնք մատակարարել են այդ պաշարը»։ Իսկ դրանից մի տող առաջ, նա ասում է. «Աշխատանքի գործիքը, որ գտել է ինքնուրոյն և դերը փոխել բանուորի հետ, կենդանի բանուորին նետել է մեռած գործիքի դրութեան մէջ, իսկ աշխատանքի մեռած գործիքը զարգացրել, դարձրել է վերարտադրութեան կենդանի օրգան. ահա այդ է հէնց ինքը կապիտալը»(*)։

Գերմանացի բուրժուա-տնտեսագէտ Կլեյնվէխտէրն, առաջ բերելով Մարքսի և Լասսալի այդ որոշումների էութիւնն, աւելացնում է. «երկուսն էլ —Մարքսն ու Լասսալը, շատ աւելի կարճ ու պարզ կերպով բացատրած կը լինէին իրենց տեսակէտով կապիտալը, եթէ ասէին. «կապիտալը կեղեքման միջոց է», այսինքն մի կարողութիւն է, որն իր տիրոջ՝ գործատէր կապիտալիստին ներկայ հասարակական տնտեսակարգում հնար է տալիս բանուորին կեղեքելու, այսինքն նրա աշխատանքով ստացած եկամուտի մի մասը ապօրինաբար սեփականացնելու»։ (**)

(*) Lassale— «Herrn Bastiat-Schulze», ռուսերէն III հրտ. եր. 189.

** Kleinwächter— «Die volkswirisch. Prodution»— Schönbergի գըրքում, հատ. I, եր. 173։

Բուրժուական տեսակէտը պարզ է. նա կապիտալ է համարում այն բոլոր արժէքները, որոնք ստեղծուած են մարդկային աշխատանքի և բնութեան մատակարարած իրերի միացումից, և որոնք ծառայում են նոր արտադրութեան համար. կարճ— ամեն տեսակ արտադրական միջոցներ՝— ահա կապիտալը։

Դրա դէմ դրուած են Մարքսի և Լասսալի որոշումները, որոնք յանգում են միեւնոյն սկզբունքին։ Դա սոցիալիստական տեսակէտն է, որն աւելացնում է բուրժուական տեսակէտի վրայ, իբր անհրաժեշտ բաղադրիչ մաս կապիտալի հասկացողութեան, նաեւ կեղեքման, յաւելեալ արժէքի գաղափարը։ Կապիտալը մարդկային աշխատանքով ստեղծուած և նոր արտադրութեան համար գործադրւող այն արժէքներն են, որոնք պահանջում են վարձու բանուորներ կամ մասամբ, կամ ամբողջովին։

Առաջին որոշման համեմատ՝ կապիտալի տէր կամ կապիլիստ են այն զուտ պրոլէտարները, որոնք ունեն մի քանի րուբլի խնայողութիւն որ եւ է խնայողական արկղում. արհեստաւորները, որոնք իրենք են աշխատում, թերեւս ունենալով մի աշակերտ, որին սովորեցնում են արհեստ. գիւղացին, որը հազիւ այնքան հող ունի, որ կարողանում է ինքն ու իր ընտանիքը մշակել, մի կերպ ապրել... Սրանք բոլորը կապիտալիստներ, բուրժուաներ են. ինչ ասել կուզէ— մանր բուրժուաներ։

Երկրորդ որոշումը, լինելով շատ աւելի գիտական, հնարաւորութիւն չէ տալիս մի «փինաչու», որի կապիտալը մի խոշոր կոճղ է, մի երկու ասեղ, մի բիզ ու մի հատ դեղին թուջէ «մուշտի»՝ կաշի ծեծելու գործիք, —մի այդպիսի ողորմելի փինաչու կոչել կապիտալիստ, բուրժուա... թէեւ փոքր... Նա հնար չէ տալիս Կովկասեան Ս. Դէմոկրատ պրոպագանդիստներին հասնելու այն ծաղրածուական եզրակացութեան, թէ «կապիկ պարածողը, տրամաբանօրէն մտածելով, բուրժուա է, որովհետեւ ունի տուֆ և կապիկ,— այսինքն արտադրութեան միջոցներ»։

Ոչ, ո՛չ, Մարքսի նման հանճարը չէր կարող այդքան մակերեսային, ա՛յդքան ծանծաղ լինել։

«Նոյն չարը, որ մղում է կապիտալի փոքրագլուխ պաշտօնեային—անտեսագէտին, պաշտպանելու իր մօտ կապիտալիստական սեփականութեան և նրա հակադրութեան տեսական նոյնութիւնը, նրան ստիպում է գաղութներում մտնել խոստովանութիւնների ճանապարհը, բարձրաձայն յայտարարել այդ երկու հասարակակարգերի անմիաւորելի լինելը։ Նա սկսում է ապացուցանել, որ կամ պէտք է հրաժարել աշխատանքի համայնական կարողութիւնների զարգացումից, գործակցութիւնից, աշխատանքի մանուֆակտուրական բաժանումից, մեքենաների լայն գործադրութիւնից եւայլն, և կամ գտնել արդարացուցիչ պատրուակներ սեփականազուրկ անելու աշխատաւորներին եւ դարձնելու նրանց արտադրական միջոցները կապիտալ» (*)։

Կասկած կարո՞ղ է լինել, որ մեծ տնտեսագէտի համար «աշխատաւորի արտադրական միջոցները» կապիտալ չեն։ Եթէ այդ մի օրինակը բաւական չէ, շարունակենք. «Կապիտալի» առաջին հատորի 32րդ գլխում, մանրամասն քննելով, թէ ինչպէս մանր, անկախ աշխատաւորներին կապիտալիստական տնտեսութիւնը սեփականազուրկ է արել, նա գրում է. «Հէնց որ ձեւափոխման այս գործողութիւնը բաւարար կերպով քայքայել և վեր ու վար է արել հին հասարակութիւնը, երբ արդէն արտադրողները դառել են պրոլէտարներ, իսկ նրանց աշխատանքի պարագաները-կապիտալ»(**), երբ կապիտալիստական րէժիմը միմիայն իրերի բերմունքամբ է զինանում, —այսպիսի պարագաներում, շարունակում է Մարքսը, արտադրութեան բոլոր միջոցների հասարակացումը կամ սօցիալիզացիօնը պիտի նոր ձեւեր ստանայ. այժմ պէտք է սեփականազուրկ անել ոչ թէ անկախ աշխատաւորներին, այլ կապիտալիստներին...

Այս ամբողջ հատուածի մէջ մեզ հետաքրքրողը լոկ մեր ստորագծած կողմն է. «Նրանց աշխատանքի պարագաները դառել են կապիտալ»։ Կրկին «արտադրական պարագաները» հակադրուած են «կապիտալին»։

Մի ուրիշ, աւելի պարզ օրինակ. «...Դրամ ունենալը, ապրուստի միջոցներ, մեքենաներ և արտադրական այլ միջոցներ ունենալը, մարդուն երբէք կապիտալիստ չէ դարձնում, քանի դեռ չկայ մի լրացուցիչ մաս, որն է վարձուորը, մի այլ մարդ, որը, կարճ ասենք, բռնադատուած լինի ինքն իրեն վաճառելու կամովին։ ...Կապիտալը մի իր չէ, այլ անհատների միջեւ հասարակական յարաբերութիւն, որը հաստատւում է իրերի միջոցով» (*)։

Այո՛, ոչ ոք կապիտալիստ չէ, քանի դեռ այս կամ այն ձեւով, անմիջապէս —ինչպէս գործատէրը, միջնորդաբար— ինչպէս —բանկիրը կամ կալուածատէրը,— չէ կեղեքում «անհրաժեշտ լրացուցչին» —վարձու բանուորին։ Մարքսը դեռ իր երիտասարդ ժամանակի գրութիւններից մէկում— «Վարձու աշխատանք և կապիտալ» (1844 թ.) յայտնել է նոյն միտքը կապիտալի էութեան մասին. որ նա իրը ինքը չէ, ոչ գործիքը, ոչ էլ մեքենան, այլ գործարանատիրոջ և վարձու աշխատողի միջեւ մի յարաբերութիւն է, մի իրաւունք՝ իւրացնելու նրա աշխատանքի ամբողջ պտուղը, տալով նրան դրամ, կամ ապրելու այլ միջոցներ։

Վերջապէս Մարքսին են պատկանում հետեւեալ խօսքերը. «Ամէնքին յայտնի է, որ արտադրութեան և կերակրելու միջոցները, որոնք պատկանում են անմիջական արտադրողին, աշխատաւորին իրեն, կապիտալ չեն։ Նրանք դառնում են կապիտալ միմիայն այն ժամանակ, երբ ծառայում են իբր միջոց կեղեքելու և տիրանալու աշխատանքին։ Բայց նրանց այդ յատկութիւնը, — այսպէս ասենք՝ նրանց կապիտալիստական հոգին— այնքան է խառնւում նրանց նիւթական գոյութեան հետ տնտեսագէտի ուղեղում, որ նա նրանց կնքում է կապիտալ անունով՝ բոլոր հանգամանքներում, նոյնիսկ այն ժամանակ, երբ նրանք ուղղակի կապիտալի հակառակն են» (**)։

---

[*] K—Marx «Le Capital» — T. I. Chap. XXXIII P. 343.

[**] Նոյն տեղում, երես 342

[*] Նոյն, երես 344

[**] Նոյն, 344։

Ոչ մի թիւրիմացութիւն թող չտայ այս պարզ, այս ակներեւ մտքերն են, որ Մարքսի մտերիմն եւ հին դպրոցի մարքսիզմի ամենախոշոր ներկայացուցիչներից մէկին, հանգուցեալ Լիբկնէխտին՝ ստիպել են ասել. «Յաճախ աշխատել են մեզ ցոյց տալ իբր բացառապէս բանւորների պաշտպան. «բանւոր» բառն էլ բացատրելով վարձու բանւորների նեղ ու սահմանափակ մտքով: Բայց միթէ երկրագործութիւնն էլ նոյնպիսի մի արդիւնագործութիւն չէ, ինչպէս եւ միւսները: Ոչ թէ միայն քաղաքի ու գիւղի վարձու բանւորն է բանւոր. այլ այն բոլոր մարդիկ. որոնք չեն ապրում ուրիշի աշխատանքի շահագործութեամբ, ուրեմն՝ նոյնպէս եւ գիւղացին ու մանր արհեստաւորը»(*):

Լիբկնէխտի մահից յետոյ՝ նրա մի փոքրիկ, չը վերջացած աշխատութիւնը տպւեց գերմանական սոցիալ-դեմօկրատիայի կենտրոնական օրգանում, «Vorwärts»ում: Այնտեղ եւս հեղինակը յայտնում է նոյն կարծիքը, համարեա՛ բառացի. «Բանւոր դասակարգի գաղափարը չպէտք է չափազանց նեղ ըմբռնել: Բանւոր դասակարգ ասելով, մենք հասկանում ենք այն բոլոր մարդկանց, որոնք ապրում են բացառապէս կամ գլխաւորապէս իրենց սեփական աշխատանքի արդիւնքով եւ որոնք չեն հարստանում ուրիշների սեւ աշխատանքի հաշւով»:

Ներկայումս Գերմանիայում գործող սոցիալիստներից ամենից առաջ ու ամենից անկասկածելիօրէն աշխատաւորական տեսակէտը յայտնել է Ֆօլմարը, որ պատգամաւոր է Ռայխստագում Բաւարիայից, այդ «Գերմանական Վանդէայից», ըստ Կաուցկու արտայայտութեան: Ի միջի այլոց ասենք, որ Կաուցկին Բաւարեան Վանդէա է կոչում, որովհետեւ գիւղացիութիւնը այդտեղ կազմում է ազգաբնակութեան 61%ը: Ֆօլմարն իր տեսակէտն այսպէս է պարզաբանում. «տնտեսութիւնների ընդհանուր թւից $^{9}/_{10}$-ը մենք պէտք է համարենք սեփական տնտեսութիւն ունեցող (Selbstwirtschafter սեփական տնտեսատէր), որոնք մշակում են իրենց հողը իրենց եւ իրենց ընտանիքի անդամների ձեռքի աշխատանքով: Այդ գիւղացի-

---

* «Gund-und Bodenfrage»

ները ներկայ պրօլէտարիատից տնտեսականօրէն զանազանւում են միմիայն նրանով, որ դեռ եւս ունեն իրենց արտադրամիջոցները: Բայց այդ «տէր լինելը», այդ սեփականատիրութիւնը, որ յենւած է անկախ աշխատող անհատի եւ նրա աշխատամիջոցների անբաժանութեան վրայ, հիմնականապէս տարբերւում է սեփականութեան կապիտալիստ ձեւից, որ իր էութեամբ իսկ հիմնւած է ուրիշի աշխատանքի շահագործութեան վրայ: Այդ գիւղացիների տառապանքները նոյնն են, ինչ որ են վարձու բանւորներինը. եւ այդ տառապանքների աղբիւրը այն փաստն է, որ կապիտալիստական շահագործումն աւելի եւ աւելի է ներս թափանցում գիւղատնտեսութեան ասպարէզը: Գիւղատնտեսութեան զուտ արդիւնքն աւելի ու աւելի անցնում է կապիտալիստի ձեռքը. ահա դրանով է, որ գիւղացին ընկնում է տէր կամ աղայ կապիտալի հասարակ կառավարիչի, գործակատարի, նրա հարկատուի, նրա ստրուկի աստիճանին»: Ֆօլմարի կարծիքով, իր եւ իր ընկերների դաւանած սկզբունքը չպէտք է լինի «պրօլէտարիատի, վարձու բանւորութեան նեղ կուսակցական դօքտրին, այլ պէտք է արտայայտէ ամբողջ աշխատաւոր ժողովրդի շահերն ու ձգտումները»: (*)

Միանգամայն ճշմարիտ, միանգամայն իրաւացի միտք, միանգամայն հիմնական ու գլխական տեսակէտ: Բայց դա է հէնց որ կոչւում է աշխատաւորական տեսակէտ: Մենք արդէն տեսանք, որ Մարքսը, Էնգէլսը, Լասսալը, Լիբկնէխտը, եւ Կաուցկին (իր կեանքի մի մասում) պաշտպան են այդ տեսակէտին: Տեսանք նոյնպէս, որ նոյն Կաուցկին՝ մի այլ աշխատութեան մէջ, շատ ուրիշ գերմանական սոցիալիստ դեմօկրատներ, նրանց արձագանգելով նաեւ ռուսական սոցիալ-դեմօկրատները, դէմ են գնում այդ տեսակէտին, հակադրելով նրան «զուտ մարքսիստական» մի տեսակէտ, որի համեմատ Մարքսը դադարում է «մարքսիստ» լինելուց:

Մեր աշխատութեան ծաւալը չմեծացնելու պատճառով է, որ մենք առաջ չենք բերում Բէրնշտայնի, երիտասարդ Լիբկնէխտի, Վանդէրվէլդի, Ժօրէսի եւ շատ ուրիշների կարծիք-

---

(*) «Handbuch für Landtagswähler». Nürnberg.1899 (ըստ Չէրնովի):

ները որոնք միանգամայն զուգընթաց են «Կապիտալի» խորիմաստ հեղինակի տեսակէտին այդ հարցի առիթով:

Ի՞նչ է գտնում Կաուցկին («Ագրարական հարցում») այդ տեսակէտի դիմաց, ինչպէս է «խորիմաստ» տարբերութիւններ գտնում «գիւղացու» և բանուորի մէջ, ինչպէս վերջապէս, նա իրար է խառնում «կապիտալն» ու «արտադրութեան միջոցը», վերևում մենք այդ մասամբ տեսանք. շարունակենք այժմ մեր վերլուծութիւնը:

Կաուցկին «Ագրարական հարցում» միշտ գործ է ածում «պրօլետարիատ» տերմինը, կարծես նա խուսափում է «բանուոր» բառից, որպէսզի աւելի թանձր գոյնով դուրս բերէ «գիւղացու» և յատկապէս «պրօլետարի» իբրև թէ հակադրութիւնը կամ, գոնէ, նրանց տարբեր «տեսակներ», տարբեր հասարակական կատեգորիներ լինելը:

Պրօլետարիատի համար գտնելով մեզ արդէն ծանօթ չորս բնորոշիչ գծերը, նա շարունակում է. «պրօլետարիատի այդ բոլոր որոշիչ յատկութիւններն ամենևին չէ կարելի գտնել գիւղացու վրայ»:— Ահա մի խոշոր աղբիւր խոշորագոյն թիւրիմացութիւնների համար, որոնց մէջ անվերջ շրջում է և ինքը Կաուցկին: «Գիւղացի».— արդեօք ո՞ր գիւղացին է դա. վաշխառո՞ւն. հարուստ գիւղական բուրժուազի՞ն, որ 5—50 և աւելի հեքտար հող ունի. արդեօք 1-5 հեկտար հող ունեցող աշխատաւոր գիւղացի՞ն, թէ կիսապրօլետարիատը— երկու և աւելի նուազ հող ունեցողը, կամ անհող, հողազուրկ գիւղական զուտ պրօլետարը, «բատրակը», ինչպէս ասում են ռուսները: Մենք իրաւունք ունենք «չորս» խիստ նուրբ տարբերութիւններ պրօլետարիատի վերաբերմամբ գտնող գիտնականից պահանջել, որ նա լինի նոյնքան խիստ ու նուրբ վերլուծող «գիւղացի» հասկացողութեան: «Մասնայայց են լինում դրամատու կապիտալիստի վրայ, որն իբր թէ հանդիսանում է նրա կալուածի փաստական տէրը: Բայց իրապէս՝ գիւղացու և այս վերջինի յարաբերութիւնները, ինչպէս տեսանք, յիշեցնում են ոչ թէ կապիտալիստի յարաբերութիւնները դէպի բանուորը, այլ հողատիրոջ և ձեռնարկողների յարաբերութիւնները: Հողի դըրու գրեկուց գիւղացին նոյնքան քիչ է պրօլետար դառնում, որքան և գործարանատէրը նրանից, որ արտադրութիւնը կատարում է ոչ թէ իր սեփական շինութեան մէջ, այլ մի վարձու բնակարանում: Գիւղացին այնուամենայնիւ, մնում է արտադրութեան միջոցների տէր, իր գործիքների, իր կահկարասիքի, իր անասունների, մի խօսքով, իր ինվենտարի սեփականատէրը»: (*)

Տեսակէտն արտաքուստ խիստ տրամաբանական է. եթէ չլինի «գիւղացի» մութ ու բազմաբովանդակ բառը: Հետևողական է, աւելի հետևողական, նա և դրանից յետոյ եկող այմիտքը: «Ի հարկէ այդ բոլորն էլ կարող են գրաւ դրել, այնուամենայնիւ նա կատարում է ձեռնարկողի դեր կամ ֆունկցիա և իբր այդպիսին, գտնւում է հակադրութեան մէջ պրօլետարիատի հետ, ինչպէս և այն գործարանատէրը, որն իր գործը տանում է պարտք վերցրած կապիտալով, որին չեն պատկանում արտադրութեան միջոցները, բայց որը վարում է ձեռնարկութիւնը, ինչպէս գործատէր և, ինչպէս այդպիսին, թշնամական յարաբերութեան մէջ է գտնւում պրօլետարիատի հետ»:

Մեզ համար խի՜ստ պարզ է գործարանատիրոջ դրութիւնը —լինի նա սեփական կապիտալի, թէ $^{0}/_{0}$-ով վերցրած կապիտալի տէր.— նա ունի բանուորներ, որոնց յաւելեալ արժէքով պիտի աճեցնէ իր կապիտալը: Բայց անըմբռնելի է, թէ արդեօք ո՞ր պրօլետարի հետ է հակադրութեան, անտագօնիզմի մէջ գիւղացին. իր մօտ աշխատող բանուորի հե՞տ, թէ ընդհանրապէս պրօլետարիատի հետ է այդ հակադրութիւնը: Եթէ այդ գիւղացու մօտ կան պրօլետարներ, ուրեմն՝ նա բուրժուա է, մեզ համար ամենևին նշանակութիւն չունի նրա գիւղացի կամ քաղաքացի լինելը. Նա յաւելեալ արժէքի համը տեսնում է. նրանով է ձեռք բերում եթէ ոչ իր ամբողջ ապրուստը,— գոնէ նրա մի մասը: Եւ եթէ կան որոշ նպաստող պարագաներ, նա կարող է աճեցնել իր կապիտալը, կցելով նրան իր բանուորների յաւելեալ արժէքի մի մասը:

(*) «Ագրարական հարցը»—յիշուած հրատարակութիւն—եր. 7

Բայց ինչպէս երևում է հետևեալ նախադասութիւնից, Կաուցկին այստեղ չէ խօսում «գիւղական բուրժուազիայի» մասին, «կարողաւոր գիւղացիների»մասին, ինչպէս ինքն է ասում, այլ երևի 2-5 հէկտարնոց մանր, աշխատաւոր գիւղացիութեան մասին է խօսքը: — «Այդ հակադրութիւնը աւելի խստօրէն երևան է գալիս այն գիւղացիների մօտ, որոնք դիմում են վարձու բանուորների շահագործման, այսինքն՝ կարողաւոր կամ ունևոր գիւղացիների մօտ»: (*)

Ուրիշ խօսքով, կը նշանակէ նա—այդ հակադրութիւնը— կայ բոլոր գիւղացիների և պրօլէտարների մէջ առհասարակ, բայց «չ'ունևոր» կամ «վարձու բանուորներին չը շահագործող» գիւղացիների և բանուորների մէջ նա խստօրէն երևան չէ գալիս: Սա միակ տրամաբանական եզրակացութիւնն է, որ անհրաժեշտօրէն բղխում է Կաուցկու խօսքերից: Եւ նա կանգ չէ առնում այդ եզրակացութեան առջև. մի անգամ հիմքը սխալ դնելով, նա նոյն ծուռ ճանապարհով բարձրանում է մինչև վեր:

«Աւելի նւազ ուժեղ է հակադրութիւնը պրօլէտարիատի և միջակ գիւղացիութեան միջև, որ կամ քիչ է օգտւում կամ ամենևին չէ օգտւում վարձու բանուորներով, որն իր ընտանիքի ուժերով է վարում արտադրութիւնը, բայց և այնպէս ապրում է՝ արտադրելով շուկայի համար գործածելու իրեր»:

Դիտմամբ մենք ստորագծել ենք այդ կտորի մէջ երկու տեղ: Շատ հետաքրքրական է Կաուցկու դրած «կամ» շաղկապը երկու իրարից միանգամայն տարբեր հասարակական և տնտեսական երևոյթների միջև. «քիչ է օգտւում կամ ամենևին չէ օգտւում վարձու բանուորներով»: Վտանգաւո՛ր նախադասութիւն: Մեր կարծիքով միևնոյնը կը լինէր, եթէ այդ նախադասութիւնը թարգմանէինք այսպէս. «մանր բուրժուա է կամ աշխատաւոր»... այդ միևնոյնն է... Ահա այն ներքին հակասութիւնը, որ թագնւած է նրա տակ: Այն գիւղացին, որ ամբողջովին կամ մասամբ վարում է իր տնտեսութիւնը վարձու բանուորներով — բուրժուա է, ի հարկէ մեծ կամ փոքր:

(*) Նոյն, երես 8

Իսկ ով ապրում է իր և իր ընտանիքի աշխատանքով, նա բանւոր է, նա աշխատաւոր է, արտադրում է լոկ իր գործածութեան համար, կամ սպառում է իր արտադրածն ինքն անմիջապէս, թէ նրան վեր է ածում, Ա.—Փ.—Ա. շրջանի միջոցով, նախ փողի և ապա այլ գործածական իրերի, — դա մեզ համար բացարձակ միևնոյնն է: Իսկ Կաուցկու համար դա ծառայում է իբր բաժանման գիծ գիւղացու և բանւորի միջև: Շարունակելով վերևում մեր առաջ բերած տողերը իր աշխատանքով ապրող գիւղացու մասին, նա գրում է.

«Այստեղ, ի հարկէ, չկայ այն հակադրութիւնը, որ գոյութիւն ունի կեղեքողի և կեղեքւողի միջև, բայց մնում է վարձու պրօլէտարիատի հակադրութիւնը բոլոր ապրուստի միջոցներ արտադրողների վերաբերմամբ, գնողի և վաճառողի միջև եղած հակադրութիւնը»: (*)Ու պարզաբանում է նա իր այդ միտքն այսպէս. «երկրագործի համար ցանկալի է վաճառել իր արդիւնքները որքան կարելի թանկ, իսկ բանւորի համար՝ — գնել որքան կարելի է էժան»: (**)

Բայց չգիտեմ բարեբաղդութիւն, թէ դժբաղդութիւն անւանեմ այն, որ Կաուցկին ինքն իսկոյն ևեթ ցոյց է տալիս գիւղացու և պրօլէտարի համերաշխութիւնը: Չէ՞ որ հաց, կաթ, իւղ, միս մատակարարողը, գոնէ մասամբ, պիտի լինի աշխատաւոր գիւղացին, որը, որքան էլ իր սեփական գործածութեան համար արտադրէ, չէ կարող զերծ մնալ վաճառելու գործողութիւնից, որովհետև միայն ուտելիքը չէ մարդու պահանջը. կայ և հագնելիք, և խմելիք, և՛ բնակարան, և մտաւոր պահանջներ... Իսկ հացը կամ կաթը չէ կարելի հագնել, ոչ էլ կարդալ. պէտք է այդ բերքը կամ այդ գործածական արժէքը դարձնել ապրանք, հանել շուկայ, վերածել դրամի, — ի հարկէ ոչ հարստանալու, ոչ վաստակելու նպատակով, այլ նոյն դրամով կօշիկ, զգեստ, գիրք, պայտ, գութան և այլն գնելու համար: Նա վաճառում է, բայց վաճառում է միայն նոր ապ-

---

(*) Նոյն երես. 8

(**)Նոյն երես. 9

րանք գնելու կամ հարկերը դրամով վճարելու նպատակով։ Իհարկէ այդպիսի գիւղացու համար ցանկալի է, որ բանւորը լաւ աշխատավարձ ստանայ, որպէսզի իր ապրանքը երբէք ստիպուած չը լինի գիւղացին վաճառել մեռած գներով որ և է մանր առևտրականի, մի «մաստրաքաղի», կամ խոշոր կապիտալիստի ամէն կողմ վխտացող գործակալ գնորդներին. Նրա համար ցանկալի է, որ բերէ ապրանքը շուկայ և անմիջապէս ծախէ սպառողին, բանւորին, միջնորդ առևտրականներին ու վաշխառուներին հասանելիք եկամուտի մի մասն իրեն առնելով, իսկ մի մասը թողնելով գնորդին։ Այո՛, այսօր գիւղացիութիւնը գրեթէ բոլորովին կորուած է Եւրոպայում իր արդիւնքներն անմիջապէս սպառողներին ծախելու հնարաւորութիւնից. բազմաթիւ մանր ու խոշոր կապիտալիստներ, ցրւած գիւղերն իրենց գործակալներին, հաւաքում, առնում են գիւղացու բոլոր այն արդիւնքները. որոնք պիտի վերածուեն դրամի, որպէսզի յետոյ դրամով վճարուեն հարկերը, գնուեն այլ տեսակի գործածական արժէքներ, որ գիւղացին ինքը չէ արտադրում։ Այդ դեռ քիչ է. յաճախ կանխավճարով նա արդէն ծախած է լինում 1—2—3—6 ամիսներ յետոյ ստանալիք իր բերքերը՝— իր ցորենը, գարին, կաթը, իւղը, պանիրը.. Իբր վաճառող, երբ դիմացը կանգնած է կապիտալիստը, գիւղացին տալիս է խոշոր գնորդին յաւելեալ արժէք. Նրա ապրանքն անպայման շատ արժէ, այսինքն արժէ այնքան, որքանով ծախում են շուկաներում, իսկ նա ծախում է քչով։ Եթէ այդպէս չը լինէր, էլ ինչ միտք կունենար կապիտալիստի կատարած գնելու և վաճառելու գործողութիւնը, էլ ո՞րտեղից դուրս կը գար նրա խանութի վարձը. Նրա վճարելիք պատէնտի փողը, նրա փառահեղ ապրուստի խոշոր միջոցները...։ Այստեղ գիւղացին հանդիսանում է իբր տնայնագործ, իբր մի արտադրող, որն իր սեփական գործիքներով և հում նիւթերով արտադրում և վաճառում է կապիտալիստին, տալով նրան իր յաւելեալ արժէքը։ Իսկ եթէ գիւղացին բերէ շուկայ և վաճառէ անմիջապէս սպառողին, ինչ կասկած, որ մի քիչ աւելի գնով կարող է վաճառել, քան նա վաճառում է կապիտալիստին կամ նրա գործակալներին, բայց այդ գինը կը լինի անպայման աւելի նուազ, քան այն, որով նոյն ապրանքը ծախում է շուկայում կապիտալիստը։

Անկասկած է, որ եթէ սպառող հասարակական մեծամասնութիւնը,— աշխատաւոր դասակարգը,— լինի բարեկեցիկ, եթէ վարձու բանւորը լաւ աշխատավարձ ստանայ, աշխատաւոր գիւղացուն դա աւելի ձեռնտու է, որովհետև ժողովրդի մի ահագին մասի գնողական կարողութիւնն աճելով, աւելի պահանջ կը ծագի գիւղացու բերած հաւերի, հաւկիթների, իւղի, պանրի, որ բարեկեցութեան պակասութեան պատճառով՝ վարձու բանւոր դասակարգը երբէք հնար չունի գործածելու։ Բայց տարօրինակ է Կաուցկու մտածելակերպն այդ առթիւ։

«Եւ ինչ օգուտ գիւղացուն՝ բանւորի աշխատավարձի աւելանալուց,— հարցնում է նա,— եթէ աւելացնելը տանում է դէպի աւելի զօրեղ գործածութիւն մարգարինի, ամերիկական ճարպի, աւստրալական մսի և զանազան կոնսերվների։ Գիւղացին ձգտում է հեռացնել շուկայից բանւորների համար ա՛յնքան ձեռնտու մրցումը և արհեստականօրէն բարձրացնել իր արդիւնքների գինը»։ (եր. 9)

Աւելին տարօրինակութիւնը նրանումն է, որ Կաուցկին կարծում է թէ, եթէ երկրում գիւղատնտեսական ապրանքների պահանջը շատացաւ, վարձու բանւորը չպիտի գործածէ իր երկրի գիւղացու իւղն ու պանիրը, ձուն ու կաթը, այլ պիտի գնէ աւստրալական միսն, ամերիկական ճարպն եայլն։ Ինչո՞ւ. մի թէ բանւորի ճակատին՝ այդպէս է գրուած... Ինչո՞ւ պիտի նա ամերիկական ճարպ գործածէ, եթէ որ լաւ աշխատավարձ է ստանում, և ոչ գերմանական «բաուէրի. բուտերը» (գիւղացու իւղը)։ Սա արդէն միանգամայն անըմբռնելի է։

Գիւղացին միշտ պիտի ջանայ շուկայից հեռացնել օտար մրցակիցներին, ասում է Կաուցկին, որպէսզի արհեստականօրէն բարձրացնէ իր վաճառքի հանած ապրանքների գները։ Նախ և առաջ ասենք, որ դժուար թէ գիւղացին այդպիսի բաներ մտածէ, եթէ նա կազմակերպուած չէ, չունի ղեկավարներ, որոնք հասկացնէին նրան տնտեսական խնդիրներ, պօլիտիկայի բարդ հարցեր։ Երկրորդ,— եթէ գիւղացին այնքան զարգացել, այնքան ենթարկւել է կազմակերպութեան և պրօպագանդի, որ ըմբռնում է մրցակիցներին հեռացնելու անհրաժեշտութիւնը և դրա միջոցը,— դրսից եկող երկրագործական արդիւնքների վրայ խոշոր, պահպանողական մաքսեր նշանակելը, այն ժամանակ այդ նոյն գիւղացին և նրա ղեկավարները պիտի իմանան դեռ 1840ական թւերին ապացուցւած այն տնտեսական ճշմարտութիւնը, որ խնամող մաքսերը երբէք չեն օգնել, երբէք չեն նպաստել գիւղացու վիճակի բարձրացման, այլ նրանք ծառայել են միշտ ու ամէն տեղ լոկ խոշոր հողատէրերի, խոշոր կալւածատէրերի շահերի համար։ Նրա ղեկավարներն անշուշտ պիտի ըմբռնեն, որ խնամարկող մաքսերով (պրօտէկցիօնիզմ) չէ որ գիւղացին պիտի մրցէ օտարերկրեայ գիւղատնտեսական բերքերի հետ իր հայրենի շուկայում, այլ մրցման միակ ու միակ ուղին է գիտութեան, զարգացման ուղին. պիտի տարածել, տարրացնել գիտութիւնը գիւղերում, որպէսզի գիւղացին հնար ունենայ աւելի արդիւնաւէտ կուլտուրա մտցնել իր տնտեսութեան մէջ, որ նա երկրագործական աշխատանքներից ազատ ժամերը նւիրէ որ և է այլ արտադրութեան, որևէ օժանդակ արհեստի,— որ նա, միանալով իրեն նման աշխատաւոր գիւղացիների հետ, կազմէ գիւղացիական արտադրական և սպառողական միութիւններ, ձգտի հողերի և նրանց մշակման համայնացման... Ահա այն միակ ու ճշմարիտ ուղին, որով կարելի է յաղթել օտարերկրեայ մրցման։ Իսկ եթէ օտար երկրից բերում են այնպիսի ինքնատիպ արդիւնքներ, որ այն երկրում, բնական այս ու այն պայմանի շնորհով, շատ աւելի էժան է նստում, քան մեր երկրում,— այդպիսի դէպքում էլ ինչու՞ մրցել. թող այդ ապրանքը բերւի դրսից, ծախւի էժան գնով, աւելի էժան քան մեր գիւղացին կարող է արտադրել. իսկ մեր գիւղացին շուկայից դուրս կը քշէ այն բոլոր օտարերկրեայ մրցակիցներին, որոնք վաճառքի են հանում մեր երկրում, մեր գիւղացու համար հեշտ և էժան արտադրելի իրեր։

Զարմանալին այն է, որ Կաուցկին, գնելով գիւղացու մէջ մրցումը հեռացնելու զօրեղ ցանկութիւնը և միաժամանակ

պնդելով, որ հովանաւորող կամ խնամարկող մաքսերը երբէք գիւղացուն չեն օգնել, այլ վնասել են նրան,— չէ ցանկանում ենթադրել, որ կարող են գիւղացիները հետևել աւելի առողջ, աւելի գիտական ուղղութեան, որ կարող են նրանց մօտենալ ոչ միայն կարճատես տնտեսագէտներ, որոնք քարոզում են օտարերկրեայ մրցումից ազատւել միայն մաքսային սիստէմով, այլ և այնպիսի մարդիկ, որոնք կարող են գիւղացուն կանգնեցնել համայնացման, ընկերակցութեան, սօցիալիստական էական կուլտուրական ճանապարհի վրայ։

Այժմ արդէն մենք մտնում ենք ամենահիւանդոտ կէտին։ Ո՛չ, չեն կարող գիւղացու մօտ յաջողութիւն գտնել վերջին տեսակի պրօպագանդիստները, որովհետև ամէն մի պրօպագանդ յաջողութիւն է գտնում այն ժամանակ, երբ յենւում է զանգւածի, այն խաւի իրական շահերի վրայ, որի մէջ կատարւում է պրօպագանդը։ Խոշոր կալւածատէրերին ու կապիտալիստներին որքան որ կուզես քարոզիր սօցիալիզմ— հողերի և արտադրական բոլոր միջոցների համայնացում ու հասարակական արտադրութիւն միահամուռ ուժերով. նրանց մէջ յաջողութիւն չես գտնի, որովհետև այդպիսի հասարակական կազմը վնաս է նրանց, նրանք զրկւելու են իրենց ահագին կարողութիւններից, իրենց պորտաբուծական կեանքից և հրէշաւոր ճոխութեան հասած ապրուստից։ Անկասկած, կարող են պատահել լուսամիտ անհատներ, որ կըմբռնեն քո քարոզած տեսակէտը, իրենք էլ կընդունեն, որ այդպիսի կազմը լաւ է մարդկութեան համար. կանգնեն քո բանակը, կը դառնան շնորհալի, նոյնիսկ հզօր ու անձնազոհ գործիչներ.. բայց դրանք կը լինեն անհատներ, սակաւաթիւ, հազւագիւտ։ Իսկ ամբողջ դասակարգը կը վանէ քեզ իր միջից, կը ծաղրէ, կը ստեղծէ իր սեփական տեսութիւնները, իր սեփական իդէօլօգները, որոնք, փրփուրը բերաններին, կաշխատեն ապացուցանել, որ միակ բնական ու խելացի հասարակակարգը ներկայում գոյութիւն ունեցողն է, որի այս կամ այն թերութիւնները պիտի շտկել, սրբագրել. որ կապիտալ է ամէն մի արտադրական միջոց. որ այդ կապիտալը ծնունդ է խնայողութեան. որ բանւորներն ու գիւղացիները խմում են, շռայլում, յիմար են, չեն խնայում, որ իրենք էլ կապիտալիստ դառնան եւայլն, եւայլն:

Ճիշդ նոյնանման անյաջողութեան կը մատնուի սօցիալիստական պրօպագանդը գիւղացիների մէջ, մտածում է Կաուցկին, նրա հետ էլ շատ ուրիշ մարքսիստներ: Ինչո՞ւ: Պատասխանը մռայլ է, ողբերգական:

«Երկու հոգի կայ գաճաճ սեփականութիւն ունեցող գիւղացու մէջ— գիւղացու եւ պրօլէտարիատի: Պահպանողական կուսակցութիւններն ունեն բոլոր հիմքերը պահպանելու նրա մէջ գիւղացիական հոգին. իսկ պրօլէտարիատի, նոյնպէս և հասարակական ընդհանուր զարգացման ու նոյն այդ գիւղացու շահերն ընթանում են հակառակ ուղղութիւնով»:(*)

Այդ երկու հոգին դեռ եւս այն գիւղացու մէջն է, որը տարուայ մի խոշոր մասն անպատճառ պէտք է գործ դնէ իբր վարձու բանւոր, որովհետեւ նրա գաճաճ սեփականութիւնը նրան հնար չէ տալիս այլ կերպ ապրելու: Իսկ այն գիւղացին, որին մենք կոչում ենք նոյնպէս «աշխատաւոր», իսկ Կաուցկին «մանր ու միջակ», այդ գիւղացին, որ ստիպւած չէ վարձել իբր բանւոր, բայց որը չէ վարձում և ուրիշներին իբր բանւոր ու մշակ,—այդ գիւղացին, ինչ ասել կուզէ, միայն մի հոգի ունի, ի հարկէ ըստ Կաուցկու: Եւ այդ հոգին լիապէս պահպանողական է, որովհետեւ դա երկրագործական արդիւնքներ շուկայ ծախելու հանող մարդու հոգին է եւ ոչ նոյն շուկայում բանւորական ույժ վաճառող պրօլէտարի հոգին:

Այսպէս, կրկին մենք հասանք այնտեղ, որտեղից մեկնեցինք. այսինքն, գիւղացին իբր վաճառող, իր շահերով դէմ է բանւորին իբր գնողի. միտք, որի սխալ լինելը մենք արդէն ապացուցինք:

Եւ տեսէք, որպիսի անհեթեթութեան է հասցնում այդ «վաճառողի և գնողի շահերի հակադրութեան» դժբաղդ սխալը Կաուցկու նման ճարպիկ դիալէկտիկներին կամ տրամաբաններին: Նա հասնում է այն եզրակացութեան, որ պրօլէտարը պրօլէտար չէ, ոչ աւել, ոչ պակաս,— ճիշդ այդպիսի արտուղի է յանգում

(*) Կաուցկի, «Ագրար. հարց» նոյն, եր. 17

նրա խորաթափանց եւ ճարպիկ վերլուծութիւնը, որովհետեւ ելակէտը սխալ է:

«Այնտեղ, ուր գոյութիւն ունի բերքերով վճարւող աշխատավարձ, երկրագործ բանւորները շահագրգռւած են կենսական մթերքների բարձր գնով, որպէս աշխատավարձ ստացողներ: Եթէ նրանք, ասենք թէ, աշխատավարձի մի մասն ստանում են հաճարով, որ նրանք ծախում են, այդ դէպքում նրանք շահագրգռւած են հաճարի բարձր գնով. նոյնպէս եւ նրա վրայ եղող մաքսերով: Նրանք շուկայում հանդիսանում են ոչ թէ միմիայն իբր «բանւորական ուժ վաճառողներ, այլ եւ իբր կենսական մթերքներ վաճառողներ»: (Նոյն տեղ, եր. 16)

Ահա վերեւում ասածը: Դուրս է գալիս, որ գիւղական կամ երկրագործական պրօլէտարը պրօլէտար չէ... Եւ այդ խորհմաստ հետեւանքն ստացւում է այն պատճառով, որ այդ պրօլէտարը յիմարաբար ստանում է իր աշխատավարձի մի մասը ցորենով կամ հաճարով, որ, ստիպւած, ծախում է, որպէսզի օրինակ, կօշիկ գնելու դրամ ունենայ... Բայց, ենթադրենք, որ իբր ծախող, այդ պրօլէտարի շահը պահանջում է, որ ցորենի գինը բարձր լինի և, կրկին ենթադրենք, որ այդ պրօլէտարը ձայն է տալիս հովանաւորող մաքսերին, որպէսզի իր ցորենով ստացած աշխատավարձը թանկ գնով ծախէ: Ենթադրենք նոյնպէս, որ մաքսերն օտար ցորենի վրայ դրւել են եւ գները բարձրացան. 3-4 ամսում նոր գներն սկսեցին դառնալ սովորական երեւոյթ: Այնուհետեւ: Անկասկած Պ. Կաուցկին չի ենթադրում ապուշներ այն հողատէրերին, որոնց մօտ աշխատում են այդ գիւղական պրօլէտարները: Եթէ այդ հողատէրերն ու հարուստ գիւղացիները ապուշ չեն, ուրեմն նրանք, ցորենի նոր գներն ամրանալուն պէս իսկոյն կը պակասցնեն ցորենով տրւող աշխատավարձը և պրօլէտարի համար կրկին կըգայ նոյն դրութիւնը, ռէալ աշխատավարձի նոյն քանակը: Իսկ «ռէալ աշխատավարձ», արդէն Ռիկարդօն վաղո՛ւց ապացուցել է, կոչւում են այն բոլոր գործածական արժէքները, կենսական անհրաժեշտ արժէքները, որ կարելի է գնել «անւանական» կամ «նօմինալ» աշխատավարձով եւ որ նօմինալ աշխատավարձի մեծութիւնը կարող է փոփոխել այն ժամանակ, երբ ռէալ աշխատավարձը մնում է նոյն չափին։ Պարզ է, որ պրօլէտարիատի համար էական նշանակութիւն ունեցողը ռեալ աշխատավարձն է եւ ոչ նօմինալը։ Եթէ առաջ նա ստանում էր, օրինակ, ամսական 20 պուդ ցորեն, որի պուդն արժէ 80 կոպէկ, գիներն էժան էին, իսկ այժմ եթէ նոյն բանւորն ստանում է 16 պուդ ցորեն և պուդն արժէ մէկ րուբլի,— ինչ ասել կ՚ուզէ, որ բանւորի համար դա բացարձակ միեւնոյնն է, դեռ երկրորդ դէպքում նա ևս անպայման պիտի տուժէ, որովհետև ինքն էլ հաց գործածող է, որի համար այժմ մի քիչ աւելի պիտի վճարէ քան առաջ։

Ոչ, հացի գինը բարձրանալը ցորենով աշխատավարձ ստացող բանւորի համար, վարձագնի տեսակէտից, բոլորովին նշանակութիւն չունի, իսկ իբր սպառող— նրա համար վնաս է անպայման։ Էլ ո՞ւր մնաց Կաուցկու գիւղական պրօլէտարի շահերն իբր վաճառողի, ո՞ւր մնաց այդ պրօլէտարի շահերի հակասութիւնը քաղաքի եւ ուրիշ պրօլէտարների շահերի հետ, իբր գնողների։ Չափազանց աներեւոյթ է եւ խաբուսիկ Կաուցկու հնարած «գնողի և վաճառողի շահերի հակասութեան» այդ տեսակէտը։ Նա չոգի է, նա օդն է ցնդւում քննադատութեան թափանցող ճառագայթների առջեւ։

Այսպէս ուրեմն, գիւղացին թէեւ վաճառող է, բայց ոչ կապիտալիստ վաճառող, այլ կեղեքւող վաճառող, մի վաճառող որի համար անպայման ձեռնտու է աշխատավարձի աւելանալը։ Ինչպէս ասացինք, Կաուցկին ինքն է մատնանիշ լինում այդ երեւոյթը, այդ ներդաշնակութեան հնարաւորութիւնը։ Բայց անմիջապէս սկսում է հերքել այդ, անւանելով դա աներեւոյթ։

«Այդ փաստարանումն, ասում է նա, նորութիւն չէ. նրան են դիմում միշտ, երբ ցանկանում են գտնել շահերի ներդաշնակութիւն։ Բանւորների բարեկամներն ասում են գործարանատէրերին, որ նրանք պարտաւոր են աւելացնել աշխատավճարը. դա լաւագոյն միջոցն է ներքին շուկան մեծացնելու և ճգնաժամերից ազատւելու։—Միւս կողմից, գործարանատէրերի բարեկամները բանւորներին մատնանիշ են լինում թէ ինչպէս նրանք յիմարաբար են վարւում, տախպելով գործարանատէրերին բարձրացնելու աշխատավճարը։ Դրանից կամ աւելանում են կենսամթերքների գները, և այն ժամանակ բանւորը մի կողմում շահածը՝ կորցնում է միւս կողմում, կամ նւազում է վաստակը։ Բայց չէ՞ որ որքան բարձր է վաստակն, այնքան աւելի արագանում է կապիտալի կուտակումը, նոյնքան արագանում է բանող ձեռքերի պահանջը,— աշխատավճարի բարձրացման այդ հզօր միջոցը։ Այսպիսով՝ բանւորների շահն է հեռացնել այն ամէնը, ինչ որ առաջ է բերում վաստակի նւազում.— գործադուլներ եւն։ Հետեւապէս, բանւորները նոյնպէս շահագրգռւած են վաստակի յաւելումով, ինչպէս և գործատէրերը. այդպիսով՝ նրանց շահերը լիովին համապատասխան են իրար»։ (*) — Սակայն շարունակում է նա, այդ բոլորը ցոյց են տալիս, որ կապիտալիստական հասարակութիւնը մի օրգանիզմ է, որի զանազան մասերն ունեն որոշ կապակցութիւն, բայց որովհետեւ նա շատ անկատար օրգանիզմ է, այդ պատճառով էլ այդ կապերից զատ կան նաեւ բազմաթիւ խոշոր հակադրութիւններ, որոնք աւելի հզօր են, քան համերաշխութեան կապերը։

Կաուցկու բերած համեմատութիւնը բանւորի և գիւղացու մի կողմից, իսկ միւս կողմից նոյն բանւորի և կապիտալիստի միջեւ աներեւոյթ է, մակերեւութական. չկայ ոչ մի խորութիւն այդ համեմատութեան միջոցով կատարւած վերլուծութեան մէջ։ Երբ զանազան Միկար-Իմաստուններ քարոզում են կապիտալիստին աւելացնել իր գրպանից աշխատավճարը, որպէսզի աւելանայ բանւորի սպառողական և գնողական կարողութիւնը, և ներքին շուկան մեծանայ, դա նշանակում է, որ այդ Միկարներն ասում են կապիտալիստին— «Դու քո դրամով գնիր քո ապրանքները, որպէս զի գերարտադրութեան տեղիք չտաս». այլ խօսքով— «հանիր աջ գրպանից և դիր ձախ գրպանդ քո դրամները. և դեռ կէսն էլ այդ գործողութեան պահուն թափթփելու պայմանով»։

(*) Կաուցկի «Ագրար. հարց»,— նոյն, եր. 9

Երբ նոյն Խիկարները բանւորներին քարոզում են գործադուլ չանել, որպէս զի վաստակը բարձր մնայ, նրանք, այդ խօսքով, հրամայում են բանւորին մնալ անխօս, լուռ վկայ և չը բողոքել, անտեսելով թէ ինչպէս կապիտալիստն իր վաստակն աւելացնում է, պակասեցնելով բանւորի աշխատավարձը։

Թէ առաջին և թէ երկրորդ դէպքում մի կողմի շահը կարող է աւելանալ առհասարակ միւսի շահերի նւազումով. աշխատավարձն աւելանում է վաստակի հաշւով, իսկ վերջինը նախորդի հաշւով։ Մենք արդէն գիտենք, որ այդ երկուսն էլ կարող են միասին աւելանալ խիստ բացառիկ պայմաններում և դա կը լինի կարճատև։ Բայց մի բոպէ դեռ այս վերջին հնարաւորութիւնը հանենք մէջտեղից։

Արդեօք այդպէ՞ս է գիւղացու և բանւորի շահերի յարաբերութիւնը հասարակական ընդհանուր երևոյթի գծում։ Ամենևին. չկայ և ոչ մի կաթիլ նմանութեան, և ոչ մի գիծ նմանաբանութեան։ Երբ աւելանում է աշխատավարձը, դա կատարւում է կապիտալիստի վաստակի հաշւով, իսկ գիւղացու դրութիւնը մնում է միանգամայն անձեռնմխելի այդ երևոյթի ժամանակ, ինչպէս և դրա հակառակ պարագային։ Ընդհակառակը, եթէ որևէ փոփոխութիւն կատարւում է այդ պահուն գիւղացու դրութեան, դա հետևանքն է, որի վրայ վերևում երկար կանգ առանք. աշխատավարձի յաւելումով աճում է և գիւղացու բերքերի պահանջը, որից կարող է գիւղացին տանել որևէ օգուտ, նրա գրպանը կարող է մտնել մի քիչ աւելի դրամ։ Իսկ երբ նւազում, ընկնում է աշխատավարձը, գիւղացին կարող է վնասւել բանւորների սպառողութեան կրճատումից, նրանց գնողական կարողութեան նւազումից, որովհետև շուկայում կը քչանայ գիւղատնտեսական արդիւնքների պահանջը և կ՚ընկնի նրանց գինը։

Մի հարց։ Արդեօք եթէ կապիտալիստը գիտենար, որ հնարաւոր է բարւոքել բանւորների բնակարանները, բանալ նրանց համար դպրոցներ, աւելացնել աշխատավարձը, չէ՞ր անի այդ ամէնը, ի հարկէ, եթէ որ դա չպահանջէր իրենից ոչ մի կոպէկ։ Ում ուզում էք տւէք այդ հարցը, պատասխանը կը

լինի դրական։ Եթէ կապիտալիստից ոչ մի ծախք չը պահանջէ, նա պայմանների մէջ կը բնակեցնէ իր բանւորներին։ Եւ արդեօք սակա՞ւ են այդպիսի դէպքեր Եւրոպայի դասակարգային շարժումների տարեգրութիւններում։ Ամենևին։ Կապիտալիստները շատ յաճախ պաշտպանել են երկրագործական բանւորներին, իսկ հողատէրերը բռնել են յաճախ գործարանական բանւորների կողմը, որպէս զի նւազեցնեն վաստակը կամ ռէնտան և իրենք ձեռք բերեն պրոլետարիատի մի մասի գէթ ժամանակաւոր համակրանքը, և որ գլխաւորն է, թուլացնեն իրենց հասարակական հակառակորդին, հողատէրերը՝ կապիտալիստներին և ընդհակառակը։ Երբ հողատէրերը յաջողում են թուլացնել կապիտալիստների ազդեցութիւնը, դրանով նրանք հանդիսանում են դրութեան տէրերը թէ պարլամէնտում և թէ հասարակութեան մէջ։

Միւս կողմից՝ մենք ունենք շատ աւելի փայլուն փաստեր, որոնք ցոյց են տալիս, որ բանւորը ուրախութեամբ ցանկանում է վաստակի յաւելումը, որովհետև այդ յաւելումը ոչ միայն չէ կատարւում իր հաշւով, ոչ միայն նա կատարւում է ուրիշների, օրինակ՝ գաղութների, ուրիշ երկիրների հաշւով, այլ և այդ յաւելումից մի քիչ էլ ինքն է օգտւում։ Երկա՛ր տարիներ անգլիական բանւորները մնում էին բոլորովին անմատչելի սոցիալիստական քարոզների ու կազմակերպութեան համար. Նրանք միշտ համերաշխ էին գնում լիբերալ-բուրժուազիի հետ, որովհետև վաստակն ու աշխատավարձը միաժամանակ աճում էին օտար երկիրների հաշւով։ Ջերոմն իր բրօշիւրում առաջ է բերում մի երկու փաստ, վերցրած «Petite République» թերթի 1900թւի հոկտ. 7ի համարից և այլ տեղերից, թէ ինչպէս անգլիական բանւորները, օրինակ, Շէֆֆիլդի թնդանօթարանների ձուլիչ բանւորները, ձայն են տւել Չէմբէրլէնի նման մի բուրժուա իմպերիալիստի, մի ջինգօի կամ մի օտարակեր և գրաւողական քաղաքականութեան քարոզող թթու ազգասէրի։ Ինչու՞։ Որովհետև իրենց արհեստի շահը պահանջում է շատ թնդանօթ ծախել։ (*) Բացի այդ՝ Փր-

---

(*) Ջէրոմ,— «Գիւղացին և բանւորը»։

ռանսիական Մեծ Յեղափոխութեան ժամանակ ազնուականութեան կողմը բռնեցին երկու ծայրեր — խաւար Վանդէա նահանգի մութ ու մոլեռանդ գիւղացիութիւնը և ամենից աւելի զարգացած գործարանական կենտրոնը — Լիօնը, որ արդէն մետաքսի ահագին գործարաններ ունէր, բազմաթիւ և բաւական գիտակից բանւոր դասակարգով միասին, որը XVIII դարի ընթացքում, նախ քան Մեծ Յեղափոխութիւնը, տասնեակներով գործադուլներ էր արել իր վիճակի բարւոքման համար: (*) Լիօնը և առհասարակ բազմաթիւ զարդեղէններ արտադրող կապիտալիստներ բռնեցին հին կարգի կողմը, որովհետև նրանց անմիջական, ոչ խորապէս ըմբռնւած շահն այդպէս էր պահանջում: Լիօնի բռնած դիրքը հասցրեց այնտեղ, որ յեղափոխութեան պաշտպանները երկաթի կտորներով լցրած ռումբեր էին նետում հրապարակներում հաւաքուած «հայրենիքի թշնամիների» մէջ և կոտորում, որովհետև գիլիօտին ու կախաղանը բաւական չէին: Եւ այդ «հայրենիքի թշնամիները» Լիօնում, Մարսէլում, Բորդօում ևայլն, ոչ միայն ազնուականներն էին, այլ և երրորդ դասակարգից շատ առևտրականներ և գործարանատէրեր:

Ակներև է, որ գիւղացու համար ամենևին միևնոյն չէ բանւորի բարօրութեան աստիճանը. Նրա շահը պահանջում է, որ բանւորը լինի լաւ վիճակի մէջ:

Իսկ ինչպէս է վերաբերւում բանւորը դէպի գիւղացին: Նրա համար էլ անպայման ցանկալի է, որ գիւղացին լինի բարօր վիճակում: Նրա շահն այդ է պահանջում: Կանգ առնենք այդ խնդրի վրայ:

Մեծ քաղաքների ազգաբնակութիւնն աճում է, իսկ գիւղերինն առհասարակ նուազում: Քաղաքների ազգաբնակութիւնն արդիւնք չէ միայն նրա բնական աճեցողութեան, այլ թէ դրա և թէ գիւղերից անդադար քաղաք հոսող գաղթականութեան: Այսպէս՝ 1848 թւին Գերմանիայում գիւղական

(*) Տես, Մ. Կովալևսկի— «Ժամանակակից դէմօկրատիայի ծագումը», I. հատ.: Ժ. Ժօրէս— «Ֆրանսական Յեղափ. Պատմութիւնը»— պատճառներ: Մարիշալ,— «XIX դարի պատմութիւնը»:

ազգաբնակութիւնը կազմում էր ամբողջ երկրի բնակչութեան $^{3}/_{4}$ մասը կամ 75%ը. իսկ 1882 թւին գիւղացիները 19,225,000 հոգի էին, այնինչ բոլոր ազգաբնակութիւնը 45,222,000 մարդ էր, ուրեմն գիւղացիութիւնը կազմում էր բոլոր բնակիչների մօտ $^{2}/_{5}$ մասը կամ 42,54%-ը: XIX դարի վերջերին երկրի ազգաբնակութիւնը բաղկացած էր 51,500,000 հոգուց, որից միայն գիւղացիները 18,500,000 հոգի էին, բոլոր բնակիչների մօտ $^{1}/_{3}$ մասը, կամ 35,7%: Ֆրանսիայում 1876 թւին գիւղական ազգաբնակութիւնը կազմում էր երկրի բոլոր բնակիչների 51,4%ը, 1881-ին— 48,4%-ը, 1886 թւին— 46%-ը, իսկ 1881-ին— 45%-ը: Այդ երկու երկրներում, ինչպէս տեսնում ենք թւերից, քաղաքների ազգաբնակութիւնն աճում է, իսկ գիւղերինը պակասում:

Անգլիայում այդ գործողութիւնը հասել է իր գագաթնակէտին: 1890 թւին Անգլիայում գիւղացիութիւնն արդէն ընկել էր ամբողջ ազգաբնակութեան 10%ին: Այդ նոյն շարժումը հասել է որոշ բարձրութեան Բէլգիայում, Աւստրիայում, մասամբ Իտալիայում ևայլն. նա սկսել է և բաւական ուժեղ թափով առաջ է գնում Ռուսիայում և միւս բոլոր կուլտուրական պետութիւններում:

Գիւղական ազգաբնակութեան պակասելն ունի բազմաթիւ պատճառներ, որոնց մէջ տնտեսական պատճառներն անպայման ահագին տեղ են բռնում: Դեռ մի կողմ թողնենք երկրագործութեան դանդաղ յառաջդիմութիւնը, նրանում տէխնիքայի կամ մեքենաների կրիայի քայլերով մուտ գործելը և այլ այդ կարգի երևոյթներ, որոնք նոյնպէս պատճառ են դառնում ազգաբնակութեան պակասելուն: Վերցնենք գըլխաւոր պատճառներից երկուսը միայն, խոշոր կալուածների մրցումը մանր արտադրողների դէմ և գիւղացիութեան դեգերումները պարտատէրերի ձեռքին:

Գիւղական ազգաբնակութիւնն այնքան ծանրաբեռնւած է կապիտալիստներից ու կալուածատէրերից բաղկացած և նրանց շահերին միայն ծառայող ներկայ պետութեան ճզմող հարկերով—, որ յաճախ ստիպւած է լինում դառնալ գործիք ամէն մի վաշխառու կապիտալիստի ձեռքում, գրաւ դնելով նրա մօտ թէ իր հողը, թէ անասունները և թէ նոյնիսկ իր գործիքները: Գիւղացու ունեցած հողը, նրա արտադրական միջոցները շատ յաճախ նրան ստիպում, կապում են հողի հետ, չթողնելով նոյնիսկ դառնալ վարձու պրոլէտար, ստանալ աշխատավարձ և աւելի բարձր կեանքի հասնել: Մրցումը դրացի խոշոր հողատէրերի հետ երբեմն մահացու հարուածներ է հասցնում մանր, աշխատաւոր գիւղացուն, որը յաճախ ստիպուած է լինում հողի սակաւութեան պատճառով, դիմել դրացի խոշոր հողատէրին, վճարելով նրան չափազանց բարձր ռենտա կամ կապալադրամ և մշակել նրա հողը: Այդ հողից ստացուած բերքը, վճարուող ռէնտան ու գիւղացու թափած աշխատանքը քննելով, մենք տեսնում ենք, որ հողատէրն առնում է գիւղացուց շատ աւելի բարձր յաւելեալ արժէք, քան որ և է գործարանատէր իր բանւորից:

Այս բոլոր պարագաները ստիպում են գիւղացուն ընկնել պարտքի տակ, թողնել իր անտեսութիւնը կամ մասամբ, կամ ամբողջովին,—այսինքն կամ ընտանիքի մի մասը մէկ, երկու և աւելի անդամը, և կամ ամբողջ ընտանիքը,—գաղթել քաղաք, դառնալ վարձու բանւոր: Բանի դեռ նա գիւղացի էր, իր սեփական արտադրական միջոցների տէրը, նրան կեղեքում էր գնող կապիտալիստը, որ առնում էր նրա արդիւնքները քաղաք և նրանց վաճառումից ահագին դրամ վաստակում: Արտադրող գիւղացին յաճախ իր ընտանիքի համար գործածելու պահած ցորենը վաճառում էր, իսկ յետոյ, նեղն ընկնելով, նորից պարտք էր անում, մէկին-մէկ, մէկին երկուս և աւելի վճարելով, յետ էր գնում իր ծախած ցորենը վաշխառու հացավաճառից, որ իր ընտանիքը կերակրէր: Իսկ այժմ քաղաք է գալիս, դառնում է բանւոր և հանգստանում, խե՜ղճ հանգստանում, որովհետև գիւղացի ժամանակ նա ենթակայ էր մի չորք, մի երկո՛ւ չորք կեղեքումների. նրանցից քերթում էին, Չերնօվի ասածի պէս, մի քանի կաշի: Իսկ այժմ գոնէ նրան քերթողը մի մարդ է և այն էլ մի անգամ:

Գիւղից մարդկանց հոսանքը լցւում է քաղաքները: Դրանք ամէն միջոցից զուրկ մարդիկ են, սնանկներ, զրկուածներ: Դրանց ու վարձու բանւորների ընդհանուր գումարն է, որ կոչւում է աշխատանքի պահեստի բանակ: Այդ հսկայական

բանակի անդամներն առաջարկում են իրենց ունեցած միակ ապրանքն—աշխատանքը: Նրանք շուկայ են հանում այդ ապրանքը ահագին քանակութեամբ: Տնտեսական անխախտելի օրէնք է, որ երբ առաջարկը գերակշռում է պահանջից, ապրանքի գինն ընկնում է շուկայում: Այդ պատճառով կապիտալիստների համար անպայման ցանկալի է մեծացնել պահեստի բանակը, գիւղերից աւելացնել ազգաբնակութեան հոսանքը դէպի քաղաք, որպէսզի մշտապէս ունենան իրենց ձեռքի տակ պատրաստի աշխատող բազուկներ, որքան ցանկանան և մանաւանդ ցածր գներով:

Ուրեմն՝ պարզ է, որ բանւոր դասակարգի շահը պահանջում է բարձրացնել գիւղական ազգաբնակութեան մտաւոր դրութիւնը, տարածել կրթութիւն, գիտութիւն, կազմակերպել, ուժեղացնել աշխատաւոր գիւղացուն, դնել նրան այնպիսի վիճակում, որ նա չզրկւի իր արտադրական միջոցներից, չդառնայ «փետրած հաւ», մնայ իր արտադրական միջոցների տէրը, մի խօսքով՝ ստիպուած չլինի խուժել քաղաք, աւելացնել պահեստի բանակի ծաւալը և կտրել աշխատավարձի նորմը կամ չափը:

Այս, բանւորի և գիւղացու շահն այդ տեսակէտից էլ անպայման զուգընթաց են, համերաշխ: Գիւղացին, ունենալով բարօր վիճակ, հասարակական ընդհանուր եկամուտից նուազեցնում է հողատէր կամ կալուածատէր բուրժուազիայի ռենտան: Նրա ստացած բաժինն ընդհանուր եկամուտից աշխատավարձի մի տեսակն է, տարբեր իր ձևով, բայց բացարձակ միևնոյն իր էութիւնով: Թէ գիւղացու և թէ բանւորի աշխատավարձերը համերաշխ են և երկուսը միասին թշնամի են ու հակադիր կապիտալիստի վաստակին ու հողատիրոջ ռենտային:

Ստեղծելով այս բոլոր «հակասութիւնները» բանւորի և գիւղացու շահերի միջև, Կաուցկին ձգտում է ցոյց տալ, ինչպէս վերևում առաջ բերինք, որ գիւղացու մէջ ապրում է «երկու հոգի—պրոլէտարական և գիւղացիական», և որ այդ երկու հոգին նրան դարձնում են մի երկերեսանի էակ, կրկնակի շահերի ճանկերում դեգերող, անվերջ հակասութիւնների մէջ մաշւող: Այս բոլոր վերլուծութեան մէջ տարօրինակ է Կաուցկու երկու տարբեր չափ ունենալը— մէկը վարձւոր բանւորի ու «բանւոր գիւղացու» համար, իսկ միւսը սեփականատէր, բայց աշխատաւոր գիւղացու համար: Հէնց որ վարձւելու մի նշան տեսնում է Կաուցկին, իսկոյն մեղմանում, քնքշանում է գիւղացու վերաբերմամբ և ամէն կերպ նրան պաշտպանելու հնարներ է մտածում:

«Աւելի լաւ է երկրագործական այն բանւորների գործը, որոնք ունեն նաև մի քիչ հող: Այն հանգամանքը, որ նրանք ունեն սեփական հող, երբէք նրանց պրոլէտարիատից բարձր չէ դնում, որովհետև այդ հողը լոկ մի աւելցուկ է նրանց տնային տնտեսութեան, իսկ մենք արդէն տեսանք, որ ժամանակակից պրոլէտարի տարբերիչ գիծը ոչ թէ սեփական գործածութեան իրերի պակասութիւնն է, այլ շուկայի համար արտադրելու միջոցների բացակայութիւնը: Ինչպէս որ հանքագործ բանւորը մնում է պրոլէտար, եթէ ունենայ մի տնակ, մի կտոր հող՝ գետնախնձոր ցանելու համար և մի կով, այնպէս էլ պրոլէտար է մնում հողի մի գաճաճ չերտի տէր, քանի դեռ նրա արտադրութիւնը ծառայում է միմիայն նրա տնտեսութեան համար»:(*)

Ուրեմն՝ եթէ մի հանքագործ բանւոր, մի երկաթուղային պահապան ունենայ մի կտոր հող գետնախնձոր կամ ցորեն ցանելու համար, մի կով, որի կաթը գործածեն բանւորն ինքը, նրա կինն ու երեխաները,—հարկէ դա ոչինչ. այդ բանւորը բանւոր է, թէև ունի արտադրական սեփական գործիքներ, բահ, թերևս գութան, սերմացու և այլն: Բայց ենթադրենք, որ այդ բանւորը «շատակեր և բազմածնունդ է» Շարայի նման — ունի 8-10 երեխայ, մի պառաւ մայր, մի ծերունի հայր ևն. ու բաւական քանակութեամբ հող, օրինակ 6 օրավար, որը տալիս է այնքան արդիւնք, որով կարելի է կերակրել հազիւ

(*) «Ագրար. հարցը» նոյն, երես, 15

7 մարդ, իսկ մնացած 7-ի համար էլ այդ մարդը վարձել է բանւոր: Ի հարկէ 6 օրավար հողը մշակելու համար անհրաժեշտ է արօր, գութան, մի երկու լուծ եզ կամ գոմէշ, մի խօսքով սեփական արտադրական միջոցներ: Այդքան մարդու համար անհրաժեշտ է մի քանի կով ու ոչխար՝ կաթի, մածնի, իւղի ու պանրի համար: Եւ ահա ձեզ մի տնտեսութիւն, գիւղացիական մի բաւական խոշոր տնտեսութիւն: Ինչ է այդ պահապանը— բանւո՞ր, թէ գիւղացի: Կաուցկին թերևս տատանւի դրան որևէ վճռական պատասխան տալ, որովհետև «գետնախնձոր ցանելու համար» յատկացւած նրա «մի կտոր հողը» մենք մեծացրինք, դարձրինք 3 հեկտարից էլ մի քիչ աւելի- 6 օրավար, որովհետև աւելացրինք և նրա ընտանիքի անդամների-ուտող բերանների թիւը: Մի կովը դարձրինք մի քանի կով և ոչխար...: Մի խօսքով, մենք քանակն աւելացրինք, բայց որակը նոյնը թողինք. այդ բոլորը ծառայում են լոկ այդ մարդու խոշոր ընտանիքի գործածութեան համար և ոչ շուկայ հանելու, ծախելու համար:

Այս դէպքում պահապանն ստանում է աշխատավարձ, հնչիւն դրամ, որով կարող է առնել իր զաւակներին կօշիկ, զգեստ, դասագիրք և այլն: Բայց երևակայենք, որ դրամի կարիքը նեղում է նրան. փողը բաւական չէ այս ամիս, որովհետև մի երախան հիւանդացաւ, բժիշկ, դեղ և այլն, պակասեցրին նրա ռոճիկի բիւջէից, օրինակ, 5 ռուբլի: Ինչ անել: Ընտանիքն իրեն զրկում է. կաթ չէ խմում, մածուն չէ ուտում. մնում է չոր հացի կապւած, օրինակ, երկու ամիս, և այդ ժամանակամիջոցում իր ունեցած կաթն ու մածունը հանում է շուկայ, վաճառում և 5 ռուբլին, որ պարտք էր վերցրել, և նրա մի ռուբլի էլ տոկոսը լրացնում, պարտքից ազատւում:

Այդ է աշխատաւոր գիւղացիութեան տնտեսութեան ընդհանուր պատկերը: Դրանից բարձր կանգնած տնտեսութիւնները դժւարութեամբ կարելի է ասել «աշխատաւորական» տնտեսութիւն: Երբ արդէն 5 և աւելի հեկտար հող ունի գիւղացին, նա կամաց-կամաց սկսում է մշակներ, հնձւորներ, հօտաղներ բանեցնել, դառնալ գիւղական բուրժուա, անցնել կեղեքողների դասակարգը: Իսկ մինչ այդ, քանի դեռ նա աշխատաւոր գիւղացի է, նա արտադրում է իր աշխատանքով, և իր արտադրածի ամենախոշոր մասն ինքն է գործածում, իսկ մի չնչին մասն, ստիպուած կամ հարկերից, կամ իր արտադրական ուժից դուրս գործածական արժէքների կարիքից, հանում է վաճառքի, յաւելեալ արժէք տալիս կապիտալիստ գնողներին, դրամ դարձնում և ապա այդ դրամով հարկերը վճարում, կօշիկ ու զգեստ առնում իր ընտանիքի գործածութեան համար: Վաճառելը նրա տնային տնտեսութեան մի լրացուցիչ մասը, էական նշանակութիւն չունեցող մի պոչն է կազմում, ինչպէս գիւղական կիսապրոլետարի կամ համքարգործ բանւորի մի չնչին չերտ հողը, իր գաճաճ տնտեսութիւնը:

Զափի այդ երկուութիւնը հասնում է մինչև այն աստիճանի, որ Կաուցկին դառնում է անսիրտ, դաժան, դէպի գիւղացին: Եթէ նոյն իսկ գիւղացու հողը, նրա տունը, գործիքները ու անասունները լինեն գրաւում, պարտքի տակ, այնուամենայնիւ դրանից նա չի դառնայ պրոլետար, չի վայելի Կաուցկու պաշտպանութիւնն ու համակրանքը, որովհետև նա կատարում է ձեռնարկողի կամ գործատիրոջ Funktion (դեր) և, իբր այդպիսին, հակադրութեան մէջ է գտնւում պրոլետարիատի հետ, ինչպէս և գործարանատէրը, որ գործը վարում է պարտք վերցրած կապիտալով»: Ուրեմն բոլոր հողն ու անասունները պարտքի մէջ թաղած գիւղացին նմանւում է մի կապիտալիստի, որը տոկոսներ է վճարում իր փոխ առած կապիտալի համար:

Քննենք այդ համեմատութիւնը:

Մենք արդէն վերևում միանգամ ասացինք, որ գործատէրը. վերցնելով բանկերից դրամ, ձեռնարկում է որ և է գործի վարձու բանւորներ բանեցնելով. Նա առնում է դրանց յաւելեալ արժէքը, նրանից մի խոշոր մաս հանում բանկերին, մի մասից էլ սովորական բաժինները տալիս պետութեանն ու, թերևս, կալուածատիրոջը, իսկ յաւելեալ արժէքի մի մասն էլ մնում է իրեն: Այս վերջին մասը կարող է լինել շատ, հա-

րստացնել ձեռնարկողին, ազատել նրան պարտքից, դարձնել ինքնուրոյն. սակայն նա կարող է լինել և փոքր, հազիւ ձեռնարկողին ամբողջովին մատակարարող: Ինչ էլ որ լինի, նա չէ կարող լինել բացարձակ վնասաբեր, որովհետև, այդպիսի դէպքում, խելոք ձեռնարկողը կը սնանկանայ, գործից կը քաշուի, դուրս կորզելով դրամագլխից այնքան, որքան՝ հնարաւոր է: Երկու դէպքում էլ ձեռնարկողը հանդիսանում է յաւելեալ արժէք իւրացնող, և այն էլ՝ յատկապէս իր բանւորների յաւելեալ արժէքը:

Պարտքով կարող է մի այլ ձեռնարկող վերցնել որ և է կալուածատիրոջ, որ և է լէնդ-լորդի հողը կապալով, վարձել մշակներ ու բանւորներ և մշակել հողը, ստանալ վարձւորներից յաւելեալ արժէք, բաժանել իր, պետութեան, կալուածատիրոջ, նոյնպէս և բանկերի միջև: Իր բաժինն այս դէպքում էլ կարող է լինել շատ կամ քիչ, բայց դրանից ձեռնարկողի, կապալառուի էութիւնը չի փոխւի. նա միշտ կը լինի իր շահերով հակադիր իր մշակներին: Որքան քիչ վճարէ իր բանւորներին, այնքան իրեն ձեռնտու է, որքան նրանց երկար և ինտէնսիվ (սաստիկ) աշխատեցնէ, նոյնպէս ձեռնտու է իրեն, որովհետև վաստակը կը բարձրանայ, աշխատավճարը մնալով նոյնը: Ինչ ասել կուզէ, որ գործարանատէր կապիտալիստը, որ իր դրամը փոխ է առել բանկերից տոկոսով, նոյնպէս հակադիր է իր բանւորներին ճիշդ այդ մասով. որքան իր բանւորների աշխատավարձը պակասեցնէ, այնքան իր վաստակը կաճի:

Վերցնենք այս երկու տեսակի ձեռնարկողից որը կուզէք և համեմատենք գիւղացու հետ: Սկսենք ուղղակի շահերի հակադրութիւնից: Ձեռնարկողը— թէ կապալառուն, թէ գործարանատէրը, ձգտում են պակասեցնել իրենց բանւորների աշխատավարձը. իսկ գիւղացին ո՞ւմ աշխատավարձն է նւազեցնելու, որ իր, ըստ Կաուցկու, այդ «Unternehmer»-ի կամ ձեռնարկողի վաստակն աւելանայ:

Այստեղ կապիտալիստն ու բանւորը նոյն անձերն են: Դուրս է գալիս, որ գիւղացին ձգտելու է նւազեցնելու իր սեփական աշխատավարձը, որպէսզի իրեն զրկէ, հարստացնելու համար ձեռնարկողն—կրկին ինքն: Ուրեմն՝ գիւղացին պակասեցնում է իր սեփական աշխատավարձը: Ահա այն անմտութիւնը, որին հասնում է մարդկային տրամաբանութիւնը, քննելով Կաուցկու յառաջադրած առաջին թէզը

Կայ մի զրկողութիւն այդտեղ, այո՛, բայց այդ զրկանքը պարտաւոր է կրել գիւղացին, եթէ ոչ կայ օրէնք, կայ բանտ, կայ նրա հողի, տան, անասունների գրաւում: Չէ՞ որ ժամանակակից պետութիւնը կարողաւորների—կապիտալիստների եւ կալուածատէրերի պետութիւն է: Այդ բանը վաղո՛ւց նկատել է Ադամ Սմիթը, բուրժուական քաղաքատնտեսութեան հիմնադիրը, եւ արտայայտել է չափազանց կծու ձեւով. «Ամէն տեղ, ուր օրէնսդրութիւնը ձգտում է կանոնաւորել բանւորների եւ նրանց տէրերի տարաձայնութիւնները, ամէն տեղ նա ունեցել է իր խորհրդակից՝ տէրերին»: Մեզ հետաքրքրող դէպքում օրէնքն իսկոյն իրաւունք է տալիս վաշխառուին, ատիկաններ է ուղարկում կամ գիւղացու կալուածը ծախում ու վաշխառուին տալիս իր դրամը կամ կալուածը յանձնում վաշխառուին: Երկու դէպքում էլ զրկւում է գիւղացին, մնում «ազատ» արտադրական միջոցներից, «ազատ՝ սովից մեռնելու»: Ահա այդ վիճակին չընկնելու զօրեղ ցանկութիւնն է, որ ստիպում է գիւղացուն զրկել իրեն, զաւակներին, կէս-կուշտ մնալ, տառապել, կիսամերկ... եւ հայցնել վաշխառուի տոկոսները եւ, եթէ հնարաւոր է, դրամագլխից էլ մի մաս պակասեցնել: Այստեղ գիւղացին հանում է ինքնիրենից, բռնութեամբ, շատ աւելի խոշոր յաւելեալ արժէք, քան բանւորը, եւ լցնում վաշխառուի գրպանը: Դժբաղդութիւնը հէնց նրանումն է, որ այդ ինքնազրկման գործն արտաքուստ ազատ կերպ ունի, թւում է մի կամովին վարմունք... բայց դա բռնութիւնների գերագոյնն է, որովհետեւ հնար չէ տալիս գէթ բողոքելու, պոռալու: Գոնէ բանւորն այդպիսի բռնութեան պահուն կարող է գործադուլ անել, մի ուրիշ գործարան չւել...

Անցնենք երկրորդ կէտին: Ձեռնարկողը հակադիր է պրոլէտարին, որովհետեւ նա ձգտում է երկարացնել աշխատանքի ժամերի թիւը,— աշխատեցնել փոխանակ բանւորի

համար ցանկալի 8 ժամին, 12, 13, նոյն իսկ 14-15 ժամ, որպէսզի իր վաստակին աճի, աշխատավարձը մնալով նոյնը: Բացի դրանից, նա Արգոսի աչքերով հետեւում է բանւորին, որ վերջինս մի րոպէ անգամ անգործ չը մնայ, ինչպէս ասում են, «քիթ սրբելու ժամանակ չէ տալիս», ու աշխատանքն էլ հրամայում է կատարել արագ, ուժով, խորէն կամ, օտար բառով ասենք,— ինտէնսիվ:

Այժմ գործադրենք այդ բանը գիւղացու վերաբերմամբ: Այստեղ կայ մի մարդ-գիւղացին, և՛ տէր, և՛ ծառայ: Այնտեղ կար մի ենթակայ-ձեռնարկողը, մի հատ էլ ստորադրեալ, որի կաշին քերթելով, որին երկար ու ինտէնսիվ աշխատեցնելով, ենթական-տէրը՝ աւելացնում էր իր վաստակը: Իսկ այստեղ կայ մի մարդ. նա ո՞ւմ ժամերն է երկարացնելու, ո՞ւմ է ստիպելու՝ կաշւից դուրս գալ, «քիթ սրբելու ժամանակ» չկորցնել... ինքն իրեն: Ուրեմն կրկին հասանք նախընթաց անմտութեանը. գիւղացին կեղեքում է ինքնիրեն, զրկում է ինքնիրեն, հալ ու մաշ է անում ինքնիրեն, որպէսզի, ըստ Կաուցկու տրամաբանութեան, իբր «Unternehmer», իբր ձեռնարկող, հարստանայ: Չէ՞ որ ամէն մի ձեռնարկողի միակ իդէալն է հարստանալ, խլելով բանւորներից որքան կարելի է մեծ յաւելեալ արժէք:

Ո՛չ, գիւղացին, որ ընկել է պարտքի տակ, որ «իր բերանից կտրում» ու տոկոսներ է վճարում վաշխառուին, ու չընչով, բացարձակ ոչնչով նման չէ ձեռնարկողի՝ ոչ գործարանական ասպարէզի, ոչ էլ կապալառուական ասպարէզի վրայ գործող:

Ակամայ միտս է գալիս Ֆ. Լասալի խօսքերն, ուղղած Շուլցէ Դէլիչին. «Եւ այնուամենայնիւ, Պ. Շուլցէ, ձեր սեփական զգացմունքը ձեզ թոյլ չի տայ կոչելու այդ հնդիկին (որ ունի տէգ, նիզակ, նետ ու աղեղ. մի խօսքով՝ որսորդի բոլոր արտադրական միջոցները) կապիտալիստ»: (*) Եւ այնուամենայնիւ, Պ. Պ. Կաուցքի եւ հետեւորդներ, ձեր սեփական զգացմունքը, ձեր խիղճը ձեզ թոյլ չի տայ այդ գիւղացուն անուանել կապիտալիստ, որովհետեւ նա ունի արտադրութեան

(*) Ֆ. Լասալ— «Գործերի ժողովածուն», հատոր III, երես 158 (ռուսերէն):

սեփական միջոց։ Թէև պարտքի տակ, թէև գրաւի մէջ. միջոցներ, որոնք, ինչպէս մենք ապացուցինք, ձեր ուսուցիչների վկայութեամբ իսկ կապիտալ չեն։

Գիւղացու և բանուորի վիճակների բարեխիղճ և անկաշառ ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ երկուսն էլ կեղեքւում են կապիտալի ձեռքով, որ այդ երկու՝ ձեւով միայն իրարից զանազանւող աշխատաւորական շերտերի շահը մէկ է և հակադիր մերթ կապիտալիստների, մերթ կալուածատէրերի շահերին աւելի խստորէն, իսկ միշտ կանգնած է այդ երկու կեղեքողների շահերի դիմաց. որ գիւղացու և բանուորի եկամուտների յաւելումը կատարւում է անպայման ի հաշիւ կապիտալի վաստակի և հողի ռէնտայի, իսկ վերջինների եկամուտի յաւելումը, ընդհանրապէս միշտ ունի իբր հետեւանք, բանուորի և գիւղացու աշխատավարձերի նուազումը։

Այդ բոլորն աչքի առաջ է ունեցել Կ. Մարքսը, երբ «Կապիտալի» III հատորում ասել է, հակառակ Կաուցկու, Պլեխանովի, Լենինի և ուրիշների. «ինչպէս տեսնում էք, գիւղացու շահագործումը միայն իր ձեւովն է տարբերւում բանուորի շահագործումից։ Թէ մէկին և թէ միւսին շահագործողը միևնոյնն է — կապիտալիստը»։ Եւ երբ միջոց գիւղացուն այս վիճակից փրկելու, նա առաջարկում է հետեւեալը. «Միայն կապիտալի անկումը կարող է բարձրացնել գիւղացու վիճակը»։

Ինչ ասել է «կապիտալի անկում». միթէ դա կը նշանակէ վերացնել, ոչնչացնել «այն բոլոր արժէքները, որոնք արտադրւած են մարդկային աշխատանքով և գործադրւում են նոր արժէքներ արտադրելու համար»։ Միթէ այդպիսի անմտութիւն կարող է ցանկալ ոչ միայն որ և է տնտեսագէտ, այլ որ և է մարդ, որը դեռ չէ խենթացել։ Դա կը նշանակէր սոված կոտորել մարդ արարածին, կամ ստիպել նրան վայրենանալ, դառնալ խոտաճարակ։ Այո՛, եթէ ամէն մի արտադրական միջոց կապիտալ է, ուրեմն Մարքսի այդ բառերը պիտի այդ միտքն ունենան։

Ո՛չ, այդ չէ Մարքսի քարոզածը. «կապիտալի անկում»

ցանկալ, կը նշանակէ ցանկալ ներկայ բաշխման ոչնչացումը և ներկայ հասարակական, համայնական աշխատանքի ընդլայնումը, բոլոր արտադրական միջոցների համայնացումը, ի հարկէ հողն էլ համարելով «զուտ արտադրական միջոց»։ Կը նշանակէ համայնական արտադրութիւն և հարստութիւնների կազմակերպւած բաշխում բոլոր աշխատողների մէջ։ Իսկ այդ ձգտումը չէ ենթադրում ոչ մի չաշխատող, ոչ մի յաւելեալ արժէքով ապրող, ոչ մի պարազիտ (պորտաբոյծ) անձնաւորութիւն։

Վերեւում առաջ բերած բոլոր փաստերի ու դատողութիւնների վրայ յենւած, մենք դէմ ենք կանգնում Կաուցկու տեսածին, թէ «երկու հոգի կայ մանր գիւղացու մէջ»։ Վերեւում մենք այդ ֆրազն առաջ բերելով, տեսանք, որ մօտենում ենք Կաուցկու տեսակէտի ամենահիւանդ կողմին։

Քննենք այդ վերջին կէտն էլ։

Իր սեփական աշխատանքով ապրող և իր ունեցած աշխատաչափ հողով բաւականացող գիւղացին Կաուցկու համար մի «Unternehmer»—մի ձեռնարկող է, մի կապիտալիստ, որի արտադրական միջոցները գրաւի մէջ են պարտքի փոխարէն՝ թէ ոչ, դա միևնոյնն է սկզբունքի տեսակէտից։ Այդպիսի աշխատաւոր գիւղացուն Կաուցկին զետեղում է «միջին դասակարգի» մէջ, այսինքն՝ համարում է բուրժուա։ Ինչ ասել կուզէ, որ այդ գիւղացին մի հատիկ հոգի ունի իր մէջ— բուրժուական, պահպանողական, մանր սեփականատիրական մի հոգի, որն անընդունակ է ըմբռնելու սոցիալիստական վարդապետութիւնը. Նրա մանր բուրժուական շահերը նրան շղթայում են իր մի կտոր հողին, որ նա միշտ յոյս ունի մեծացնել, դառնալ խոշոր գիւղացի, բանեցնել ուրիշ բանուորներ... Ահա Կաուցկու մտածելակերպն աշխատաւոր գիւղացիութեան մասին։

Իսկ մանր գիւղացին, որի ունեցած գաճաճ հողաչափն իրեն դարձրել է կէս-գիւղացի, կէս-վարձու բանւոր, — այդ մանր գիւղացին, ինչպէս տեսանք, Կաուցկու կարծիքով, ունի երկու հոգի — գիւղացիական կամ բուրժուական և վարձւոբական կամ պրոլէտարական: Դրանցից առաջինը միշտ ձըգտում է դէպի յետ, դէպի միջնադար, միշտ երազում է չատացնել իր հողը, դադարել վարձով աշխատելուց, դառնալ միջին ու խոշոր հողատէր: Այդ հոգին դէմ է սօցիալիզմի, նա անընդունակ է ըմբռնել սօցիալիզմը, մտածել սօցիալիստօրէն: Նա միշտ կը գնայ պահպանողական, նոյն իսկ յետադէմ տարրերի ետեւից, կը կազմէ նրանց զօրաւիղը, նրանց յենարանը: Եւ յիրաւի՝ մանր ու միջակ աշխատաւոր գիւղացիութիւնն է պրուսական իւնկերների, ագրարական կուսակցութեան, կենտրոնի կղերա-բուրժուական կուսակցութեան բանակը: Իսկ նրա երկրորդ հոգին պրոլէտարական է, ընդունակ թռիչքներ գործելու, ընդունակ ըմբռնելու ապագայ հասարակէր կարգերն, ընդունակ սօցիալիստի պէս մտածելու: Այդ ոգին անպայման յառաջդիմական է, նոյն իսկ յեղափոխական, որովհետեւ պրոլէտարիատի շահերը պահանջում են դասակարգերի վերացում, անդասակարգ կամ ապադասակարգ մի հասարակութեան ստեղծում, որի մէջ բոլորը լինեն աշխատող, իսկ արտադրական բոլոր միջոցները պատկանեն ընդհանրութեան: Այդ ոգին դէմ է բոլոր յետադէմ ու պահպանողական կուսակցութիւններին: Պրոլէտարիատը կազմում է սօցիալիստական կուսակցութիւնների հիմքը, նրանց յենարանն ու նրանց մարտնչող բանակը:

Աւելորդ է ասել, որ քաղաքի և գիւղի պրոլէտարիատն առհասարակ մի հոգի ունի, հակառակ գիւղացու պահպանողական, մանր-սեփականատիրական հոգուն:

Պարզ է, ի հարկէ, որ «երկու հոգի» ասելով, Կաուցկին հասկանում է սեփական դասակարգային շահի երկուութիւն և ոչ իսկական երկու հատ հոգի մի մարմնի մէջ:

Հոգիների այդ բաժանման ու տարաճանաչման հիմքը կազմում է հետեւեալը. «... Չը կայ ոչ մի դասակարգ, բացի պրոլէտարիատից — այսինքն՝ վարձու բանուորներից. հետը հաշուած ամենամանր գիւղացիները, արհեստաւորները և մանր տնայնագործները,— որն իր եկամուտի դէթ մի մասն ստանալիս չլինի ուրիշներին կեղեքելու շնորհիւ, որը շահագրգռուած չլինի

որ և է տեսակի կեղեքումով ու ճնշումով»: (*)

Մենք արդէն տեսանք, որ իր սեփական արտադրական միջոցների տէր գիւղացուն, որի համար իր հողն էլ «զուտ արտադրական միջոց է», այդ գիւղացուն Կաուցկին, անուանելով կապիտալիստ, դուրս է հանում պրոլէտարիատի ցանկից: Տեսանք արդէն, որ նրա բերած բոլոր հիմքերը սխալ են, հիմնովին սխալ. նրանք բաւարար չեն և չեն կարող ծառայել իբր հիմք իրար հակադիր շահերի տէր հրատարակելու բանւորին և աշխատաւոր գիւղացուն: Բացի այդ, մենք տեսանք որ այդ խնդրում Կաուցկին հանդիսանում է հակառակ կարծիքների տէր Մարքսի ու Լասսալի հետ, որոնց տեսակէտը թէ կապիտալի, թէ արտադրական միջոցների և թէ առուծախի հարցերում միանգամայն գիտական և խորաթափանց է:

Հիմնուելով իր սխալ ելակէտի վրայ, Կաուցկին անընդունակ է համարում աշխատաւոր գիւղացիութիւնն ըմբռնելու սօցիալիստական սկզբունքները, հետեւելու այդ վարդապետութեանը, նրա համար մարտնչող մի բանակ կազմելու՝ բանւորութեան հետ միասին: Այդ դեռ քիչ է. նա ընդունում է երկու հոգի կիսապրոլէտար, սակաւահող գիւղացու մէջ, բայց չէ կարողանում իր այդ միտքը մինչեւ վերջը պաշտպանել և նրան հրատարակում է մի դասակարգ պրոլէտարիատի, մանր արհեստաւորութեան և մանր տնայնագործների հետ միասին:

Ուրեմն, երկու տեսակէտների տարբերութիւնը որոշ է, արեւի լոյսի պէս պարզ. մէկն ասում է, որ աշխատաչափ հող ունեցող գիւղացին կապիտալիստ է. միւսն ասում է, որ նա աշխատաւոր է, բանւոր դասակարգի միայն մի մասը, որի կեղեքումը տարբերւում է միայն իր ձեւով: Դրանից անմիջապէս հետեւում է, որ գիւղացին (աշխատաւոր) իբր դասակարգ, չէ կարող լինել հետեւորդ սօցիալիզմի, ասում է առաջին կարծիքը. Նա կարող է լիովին հետեւել սօցիալիստական վարդապետութեան, իր ուսերի վրայ առնել այդ ցանկալի ապագայի համար մղուող մարտը, մտածում են երկրորդ տեսակէտն ունեցողները:

(*) «Դասակարգային շահերը».— երես 13.

Առաջին տեսակէտն ամրացնելու, նրա ճշմարտութիւնն ապացուցանելու նպատակով, Կաուցկին ասում է, որ կապիտալիզմը քաղաքում և առհասարակ ճարտարարուեստի մէջ հաւաքող դեր է կատարում. Նա միախմբում է բանուորներին, իրար մօտեցնում, նրանց աշխատանքը դարձնում համայնական կամ հասարակական, բաշխումը թողնելով անհատական. Նա մայրն է ներկայ հսկայական քաղաքների: Իսկ գիւղում:

«Այդպէս է ներգործում կապիտալիզմը գիւղի վրայ: Այստեղ նա չէ միացնում, այլ ցրւում է մարդկանց: Նրա զարգացումը, որչափ աստիճանի հասնելով, ոչ միայն համեմատաբար, այլ և բացարձակ կերպով նուազեցնում է գիւղական ազգաբնակութիւնը: Կապիտալիստական զարգացումը գիւղից դուրս է քշում հէնց ամենագործունեայ, եռանդուն և ինտէլլիգենտ տարրերը, թողնելով այնտեղ ամենաթոյլերին և անօգնականներին: Գիւղի զատարկման հետ միասին ընթանում է նրա մտաւոր անկումը»:(*)

Այդ հին դատողութիւնը ծառայում է Կաուցկու ձեռին իբր ապացոյց այն բանի, որ գիւղում պրօպագանդ մղելը դժուար է, որովհետև չկան ընդունակ տարրեր, չկայ մտաւորականութիւն: Ամէն մի ընթերցողի համար ակներև է, որ Կաուցկին այդ հարցում ընկնում է «դօգմայի» (հաւատամքի) · Իր վարդապետութեան կանխակալ ներշնչմամբ և ուռեցնում, մեծացնում է կեանքի երևոյթները: Կապիտալիզմը ներս է թափանցում գիւղ կրիայի քայլերով: Խոշոր հողատիրութիւնը դեռ ևս չի կարողանում մրցել մանր հողատիրութեան հետ: Մանր հողատէր գիւղացիութիւնն անպայման հանդիսանում է ընդունակ տարր գիւղական պրօլէտարիատի հետ միասին կազմակերպուելու: Կասկած չկայ, որ թէ գիւղացու և թէ գիւղական բանուորութեան երկրագործական զբաղմունքը հանում են մեծամեծ դժուարութիւններ ժողովների, դասախօսութիւնների պրօպագանդի և կազմակերպութեան համար: Անվիճելի է նոյնպէս, որ ինդուստրիական բանւորը, իր մղած աշխատանքի, իր գործընկերների ու իր շարժած մեքենայի շնորհիվ, իրեն զգում է

(*) Կ. Կաուցկի—«Ագր. հարցը» եր. 14:

հրամայող բնութեան. Նրա դէմ կռւող. Նա վստահութիւն է ձեռք բերում թէ անհատապէս իր ուժերի և թէ մանաւանդ, իր ընկերների համայնական միահամուռ կազմակերպական ուժի վրայ: Այդպէս չէ գիւղացին: Նա յաճախ խաղալիկ է բնութեան տարերային ուժերի ձեռքին. Նա թէ իրեն և թէ իր բոլոր նմաններին համարում է անուժ, ողորմելի գործիք բնութեան ձեռքին..կարկուտ, անձրև, քամի, չորութիւն—նրա տէրն են, նրան ստրկացնողները:

Ճշմարիտ է, շատ աւելի դիւրին է կազմակերպել քաղաքներում կենտրոնացած հսկայական բանւոր զանգուածը, քան գիւղերի անհուն դաշտերում ցրւած նրանց եղբայրներին,—բոլոր տեսակի աշխատաւոր գիւղացիներին: Բայց միթէ դժւարութիւնը մի որ և է սկզբունքային հարց է.— ամենևին: Նա քանակի խնդիր է և ոչ որակի: Դժւար է նրանց կազմակերպելը, այո՛, ճշմարիտ է, բայց ոչ անհնարին. չկայ շահերի որ և է հակադրութիւն, որը չի թոյլատրէր գիւղացուն և բանւորին կազմակերպուել միասին, միևնոյն սկզբունքներով՝ վարելու կռիւ միևնոյն վերջնանպատակի, միևնոյն իդէալի համար:

Կաուցկին ծայրայեղօրէն թերահաւատ է դէպի գիւղը և նրա յառաջդիմութեանը: Թէ դպրոցական գործի և թէ հաղորդակցական միջոցների զարգացումը, որոնք հնար են տալիս այնտեղ ներմուծել գրքեր ու լրագրեր, շատ սակաւ են օգնում գործին: Եւ գիտէ՞ք ինչու, որովհետև գիւղացիները կարդում են վատ գրքեր, վատ լրագիրներ, որոնք քարոզում են ծայրայեղ յետադիմութիւն, որոնք չեն լուսաբանում ներկայի հարցերն այնպէս, ինչպէս որ հարկաւոր է: Որովհետև «վաղուց անցած դարերի արդիւնք Աստուածաշունչի հետ միասին, նրանց համար ընթերցանութեան նիւթ են ծառայում ամենավատ տեսակի փողոցային վէպեր, որոնք ներկայացնելով իրականութիւնն աղաւաղւած ձևով, չափազանց վնասակար եզրակացութիւնների են յանգեցնում»: (*)

Այդ առթով, կարծես թէ Կաուցկին գտնում է դա գիւղացու էութեան հետ կապւած մի երևոյթ: Բնական է, երբ

(*) Կաուցկի— նոյն— եր. 14:

Կաուցկին եւ ուրիշ ուղղափառներ, հակառակելով Ֆոլմարի և ուրիշների խորհուրդին, չեն ուզում գործել գիւղում. չեն ուզում կազմակերպել այդ «մանր բուրժուաներին», չեն ուզում նոյնիսկ որ և է պաշտպանութիւն ցոյց տալ նրանց պարլամէնտներում, (*) բնական է, ասում ենք, որ գիւղը կը մնայ լայն ասպարէզ քահանաների, հոգեւորականների, ագրարների և այլ տեսակի ամենադարշելի տարրերի, որոնք ուժ կըստան իրենց Աստուածաշունչին, Սաղմոսին, հաւատարմութիւն և հնազանդութիւն քարոզող վէպերին... Այո, "Kreutz-Zeitung„-ի "Reichsbote„-ի և Kölnische Zeitung-ի նման խաւարամիտ, բորբոքած ուղղութեան և դեռ աւելի՝ կղերի օրգանների: Մտէք այնտեղ, տարածեցէք ձեր գրքերը, ձեր թերթերն ու հրատարակութիւնները, կազմակերպեցէք գիւղացուն դասակարգօրէն, որպէսզի նա, ձեռք ձեռքի տուած բոլոր աշխատաւորական տարրերի հետ, մաքառէ յանուն հաւասարէր կարգերի, յանուն համայնական արտադրութեան և կազմակերպուած, արդար բաշխման: Դժուար է այդ ամենը, բայց ոչ անհնար. սկզբունքային արգելք չկայ. Երբ մինչդամ արդէն շահերի հակամարտութիւն չկայ, մնում է գիտակցութիւնը, մնում է, որ բոլոր միատեսակ շահեր ունեցողները կամ, աւելի շուտ, հնարաւորութեան մէջ եղողները՝ գիտակցեն այդ երեւոյթը, հասկանան իրենց շահերը: Շահ ասած բանը բացարձակ օբեկտիվ կամ առարկայական երեւոյթ է, իսկ նրա գիտակցութիւնն անձնական կամ սուբեկտիվ է: Ո՞րն է այդ երկուսից աւելի կարեւոր — արտաքին, առարկայականը, օբեկտի՞վը, թէ ներքինը, սուբեկտիվը: Դասակարգային կռւի տեսակէտից՝ երկուսն էլ հաւասարապէս անհրաժեշտ են: Երկար դարեր իրար ետեւից գոյութիւն են ունեցել ստրուկներ ու ճորտեր, որոնց ամենադաժանի ձեւով կեղեքել են իրենց տէրերը, բայց բողոքող չէ եղել կամ եղել է հատ ու կտոր, անկապ, անգիտակցօրէն: Չեն եղել այն բոլոր օբեկտիվ պայմանները, որոնք հնարաւոր դարձնէին շահերի ներքին խոր հակասութիւնն ըմբռնել. որ ստիպէին մարդկանց մտածել, տեսնել այդ անտե-

---

(****) Տես Կաուցկու «Arbeiterschutz und Bauerschutz» յօդուածը:

սական, կրօնական ու քաղաքական գաղափարները. բայց ունէին աստուածների գաղափարը. բարոյականութեան, հայրենիքի, բնական դիրքի և այլ այդպիսի սրբագործուած բաների երեսից պատռէին դիմակը և մերկացնէին տնտեսական ու բարոյական շահագործման իսկական պատկերը: Լինում էին փայլուն, հանճարեղ անհատներ, որոնք պարզ ըմբռնում և գիտակցում էին այդ երեւոյթները: Այդպէս էին Սպարտակը հին դարերում, Թովմաս Մինցէրը, Լէյդէնցի Յոհաննէս դերձակը և շատ ուրիշ յայտնի և անյայտ մնացած անուններ. Նրանք ունեցել երբեմն չնչին, երբեմն էլ աշխարհադղորդ շարժումներ — ստրուկների ապստամբութիւնները Հռոմում և Սիկիլիայում, գիւղացիական շարժումները Գերմանիայում, ժաքերի շարժումը Ֆրանսիայում, Լօլարդներինը և Լուեւերներինը Անգլիայում եւ-այլն: Բայց գիտակցութիւնը չտարածուեց, չընդգրկեց ամբողջ դասակարգեր, որովհետեւ օբեկտիվ պայմանները դեռ չէին հասունացել: Եւ այսօր ո՞րն է դրանցից կարեւորագոյնը: Մենք կրկնում ենք. երկուսն էլ. առանց մէկի՝ միւսը ոչինչ է:

«Պրոլետարիատը հզօրագոյն դասակարգն է, ասում է Կաուցկին, (ի հարկէ իր թւով, կասենք մենք): Դեմոկրատիական արդիւնաբերական մի երկրում նրա յաղթանակը ապահովւած կը լինի այն վայրկեանին, երբ նրան կը յաջողուի զարթեցնել դասակարգային գիտակցութիւնն իր բոլոր դասակարգային ընկերների մէջ և յետ պահել, չթողնել նրանց գնալու բուրժուական կուսակցութիւնների ետեւից» (*):

Մենք դիտմամբ տարածեցինք այդ բանը: Դասակարգային կռւի տեսակէտից կարեւորութիւն ունեցողը գիտակցութիւնն է, սուբեկտիվ տարրը. եթէ ոչ օբեկտիվ տարրը, այս կամ այն ձեւով, գոյութիւն ունեցել է ահա 3000 երկա՜ր տարիներ է: Նա կայ այսօր և կայ վերին աստիճանի յաջող, ձեռնտու կերպով, որպէս զի բոլոր հնարներն ու արտաքին յարմարութիւնները տալ գիտակցութեան զարթնելուն, օրինակ, Գերմանիայում, Բելգիայում, Ֆրանսիայում, Աւստրիայում, Անգլիայում, ուր մեծ քաղաքներն իրենց հսկայական մարդ-

---

(*) «Դասակարգային շահերը» — երես 12:

կային կուտակումներով կամ ագլոմէրատներով, ուր խոշոր ճարտարարուեստ, հսկայական թիւ ներկայացնող բանուոր դասակարգը, մի խօսքով՝ ուր ամէն ինչ կայ, գոյութիւն ունի դասակարգային պայքարի յաջող ընթացքի համար. պահանջուած է սակայն մի բան — գիտակցութիւնը: Աշխատաւորական տարրերին պէտք է բերել գիտակցութեան, պէտք է կազմակերպել, պէտք է կորզել նրանց լիբերալների, խաւարամիտների, քրիստոնեայ կոչուած սոցիալիստների, ագրարների, «հայրենասէրների», բանակներից. պէտք է աշխատաւորական երկու խոշոր շերտերը — գիւղացիութիւնն ու բանուորութիւնը միացնել, դարձնել մի գիտակից բանակ, դասակարգօրէն կազմակերպուած և դասակարգօրէն պայքարող:

Երբ արտադրական խոշոր միջոցները կը զարգանան այնքան, որ հնարաւոր կը դարձնեն համայնական աշխատանքով կատարել անկախ նախագծուած, գիտակցօրէն ծրագրուած արտադրութիւն, որ լիապէս բաւականացնէ գոյութիւն ունեցող հասարակութիւնը. երբ աշխատաւորութեան կազմակերպութիւնը, դրա հետ միաժամանակ ու զուգընթացաբար, իր գրկից կ'ստեղծէ ապագային հիմք ծառայող արհեստակցական միութիւնները կամ սինդիկատները, արտադրական ու սպառողական խոշոր միութիւնները, որոնց միահամուռ գործակցութիւնը կը նախապատրաստէ աշխատաւորութեանը ներկայի մասնաւոր սեփականատիրական կարգերից անցնել համայնական կարգերին, — այն ժամանակ հարցը հասունացած կը լինի. հասարակութեան «կապիտալիստական շրջաթաղանթը կը պատռուի, ջարդ ու փշուր կը լինի: Կը ղօղանջէ՝ հնչել է՝ կապիտալիստական սեփականութեան ժամը: Ուրիշներին սեփականազրկողները, իրենց կարգին, սեփականազրկուած են լինում»: (*)

Բայց այդ իդէալին երբէք չէ կարելի հասնել, եթէ նա հրատարակուի լոկ վարձու բանուորների սեփականութիւն, եթէ նրա իրականացման համար չմարտնչեն բոլոր աշխատաւորները և հասարակութեան բոլոր յառաջդէմ, մտաւորական տարրերը: Երևակայել, որ լոկ վարձու բանուորութիւնն այնքան կը մեծանայ, որ մի օր կյանքում մեծամասնութիւն կը կազմէ, իր մէջ

(*) K. Marx "Le Capitale„. t. I, ch. XXXII. p. 342

կը ձուլէ հասարակութեան բոլոր մնացած տարրերը, դա այն միտքն է, որ գործեցին Մարքսն ու Էնգէլսն իրենց դեռ շատ երիտասարդ հասակներում: Ո՛չ, հասարակութեան միջին շերտերը չեն վերանում և երբէք չեն չքանայ անհետ: Մանր արհեստաւորութիւն և մանր սեփական տնտեսատէր գիւղացիութիւն միշտ կը լինի, ինչպէս խոստովանեց Էնգէլսն իր «վերջերի արտադրութիւններում», ինչպէս ապացուցին Բէրնշտայնը, Կրապօտկինը և շատ ուրիշները:

Եթէ հասարակական գործիչների համար թանգ է ոչ թէ դոգման, ոչ թէ «վարդապետի քարացած կրօնը», այլ ամբողջ մարդկութեան օր առաջ ազատագրումը, նրա օր առաջ հասնելը համայնական հաւասարատէր կարգերի, — ուրեմն՝ նրանք չպէտք է այդ իդէալը համարեն լոկ վարձով աշխատող պրօլէտարիատի սեփականութիւն, որովհետև այն ժամանակ այդ իդէալն «անընդունակ է յաղթելու, — ասում է Լիբկնէխտը, այդ ֆանատիկոս մարքսիստը. բայց, շարունակում է նա, — նրա յաղթանակն ապահովուած է, եթէ նա ընդունուած է աշխատաւոր ժողովրդի ամբողջութեան և ազգի ընտիր մասի, նրա մտաւոր և բարոյական տարրերի կողմից»:

Մեզ համար կարևորն այն էր, ինչ լիապէս ապացուցինք այս գլխում. բանուորն ու գիւղացին կազմում են միևնոյն դասակարգի ստորաբաժանումները. մանր, աշխատաւոր արհեստաւորութեան շահերն էլ զուգընթաց են այդ երկուսի շահերին: Նրանց բոլորին կեղեքողը մէկ է — կապիտալիստ և կալուածատէրը, որոնք ապրում են բանուորի և գիւղացու յաւելեալ արժէքով: Բոլոր յաւելեալ արժէքով ապրողներին (մասամբ թէ ամբողջապէս, միևնոյն է) մենք կոչում ենք կեղեքիչ կամ բուրժուական դասակարգեր, իսկ այն բոլոր մարդկանց, որոնք ապրում են սեփական աշխատանքով, առանց ուրիշի յաւելեալ արժէքի, մենք կոչում ենք աշխատաւոր ժողովուրդ (das werktätige Volk.):

ԳԼՈՒԽ III

Բաժանման գիծը։— Բուրժուական դասակարգ.— Աշխատաւորութիւնը— Դրանց ստորաբաժանումները։— Մտաւորականութիւնը և նրա դերը։— Խոշոր արտադրութիւնը։— Նրա ճակատագրական անհրաժեշտութիւնը։— Նրա լաւ և վատ կողմերը.— Նրա վատ կողմերը վերացնելու միակ միջոցը։

Նախընթաց գլխում մենք ցուցադրեցինք հիմնական սկզբունքը և հանեցինք նրանից բղխող կարևորագոյն հետևանքներից մի քանիսը։

Հասարակական գիտութիւնների մէջ անհնարին է զանազան խնդիրներ սահմանազատել պարզ ու անանցանելի գծերով, ինչպէս այդ տեղի ունի մաթէմաթիքի կամ մասամբ նաև բնական գիտութիւնների մէջ։ Հասարակական երևոյթների սկզբունքները որոշելիս, միշտ պէտք է աչքի առաջ ունենալ, որ այդ սկզբունքները գործադրութեան մէջ միշտ երևում են խոշոր գծերով, առանց իրարից խստապէս բաժանուելու, առանց ակնբախ տարբերութիւնների։ Կեանքն այդպիսի սահմաններ չէ սիրում, լաւն ու վատը, կեանքն ու մահը, գեղեցիկն ու տգեղը, կեղեքումն ու սեփական աշխատանքով ապրելը— այս բոլորն այնպիսի երևոյթներ են, որ անհուն մանր ու նուրբ շերտաւորումներով միանում են իրար, իրար մէջ մտնում, ձուլւում, կապկապւում որոշ տեղերում։ Իսկ երբ այդ միացման կամ իրար մէջ անցնելու սահմաններից սկսում ես հեռանալ, այն ժամանակ՝ քանի գնում, տարբերական տարրը խտանում է, զանազանութիւնը շեշտւում։

Այսպէս— ո՞ւր է վերջանում կեանքը և որտեղից սկսած տիրում է մահը։ Առաջին հայեացքից այնպէս է թւում, որ դրանից դիւրին որոշելու բան չկայ աշխարհում։ Սակայն լուրջ և գիտական մտածողութիւնը միշտ բերում կանգնեցնում է մի այնպիսի վիճակի առջև, ուր մենք ստիպւած ենք լինում խոստովանել մարդկային բանականութեան անզօրութիւնը։ Եւ յիրաւի, մարդ ամէն վայրկեան, ամէն երկվայրկեան և՛ մեռնում, և՛ ապրում է միաժամանակ. մի կողմից մարդու մարմնի վանդակիկները ծերանում, թեփ դառնում ու թափւում են կամ քրտինքի հետ շաղախւելով, աղտ են դառնում ու հեռացւում են կաշու վրայից, ածխածին դառնալով արտաշնչւում են թոքերով եայլն.— դա մահւան գործողութիւնն է, որ մշտական և անընդհատ է. իսկ միւս կողմից արիւնն անընդհատ շրջանառութիւն է գործում, մարմնի բոլոր մասերին նոր ու թարմ սնունդ հասցնելով... Քանի դեռ մանուկ ու թարմ է էակի կազմւածքը, սննդատու կամ կենսատու ուժն աւելի է, կեանքն աւելի զօրեղ է. էակն աճում, մեծանում է։ Գալիս է մի վայրկեան, երբ կեանքն ու մահը հաւասարակշիռ ուժեր են հանդիսանում և զարգացումը կանգ է առնում, որպէսզի այնուհետև մահը գերակշռէ և էակն աստիճանաբար դիմէ դէպի սպառում, անկում, քայքայում։ Բայց թէ յստակապէս կեանքի վերջում երբ մտաւ մահը, երբ կեանքը վերջնականապէս դադարեց էակի մէջ, կրկին անհնարին է մաթէմաթիքօրէն վճռել։ Գալիս է բժիշկը, բռնում է զարկերակը, հաստատում սրտի կանգ առնելը, արեան շրջանի դադարումը և յայտարարում էակը մեռած։ Այդ որոշման ձևը կոչւում է «խոշոր գծերով որոշել»։

Ճիշդ նոյնպիսի երևոյթի առջև ենք կանգնում հասարակական գրեթէ բոլոր խնդիրներում։ Նոյնն է և դասակարգերի բաժանման հարցում։ Ո՞վ է բուրժուա, ո՞վ է կեղեքող կամ ոչ կեղեքող, ոչ էլ կեղեքւող, այլ լոկ իր «հալալ» աշխատանքով ապրող, իր ճակատի քրտինքով կերակրւող։

Մի սկզբունք մենք արդէն դրինք նախընթաց գլուխներում և պարզաբանեցինք։ Մեր բաժանման գիծը կեղեքման սկզբունքն է կամ յաւելեալ արժէքը։

Այն բոլոր մարդիկ, որ ամբողջապէս կամ մասամբ օգտւում են ուրիշների արտադրած յաւելեալ արժէքից, այսինքն որոնք իւրացնում են ուրիշների աշխատանքի պտղի մի մասը, չվճարելով նրա արժէքի ամբողջ չափն աշխատողին— այդ բոլոր մարդիկը կեղեքողներ են, ուրեմն՝ բուրժուաներ։

Անկասկած՝ նրանցից մէկը կարող է շատ կեղեքել կամ քի–

ացնել մեծաքանակ յաւելեալ արժէքներ, իսկ միւսը քիչ: Մէկը կարող է ամենևին չաշխատել, այլ հանգիստ ու փառահեղօրէն վայելել կեանքն ուրիշների թափած քրտինքով, իսկ մի ուրիշը կարող է աշխատել ինքն էլ, բայց իւրացնել նաև ուրիշների աշխատանքի պտուղներն առանց փոխարինութեան:

Դրանցից մէկը կը լինի աւելի մեծ կեղեքիչ, իսկ միւսն աւելի փոքր: Եւ փոքրի ձգտումը կը լինի մշտապէս աշխատել մեծանալ, աւելի շատ յաւելեալ արժէքներ իւրացնել, աւելի շատերին կեղեքել, աւելի շատ թւով մարդկանց աշխատեցնել, իսկ ինքը որքան կարելի է քիչ աշխատի, այլ միմիայն իր ձեռքն առնէ մի հաճելի և շատ գեղեցիկ բան — գործի սանձը, բանկիրից դրամներ ստանալը և, որ ամէնից հաճելին է, առատ ծախսելը:

Իսկ այն բոլոր մարդիկ, որոնք կամ իրենք են կեղեքւում կամ ոչ կեղեքում են, ոչ էլ կեղեքւում,— կոչւում են աշխատաւորներ:

Ահա ուրեմն մի մասուր, մի գաղափարական գիծ՝— յաւելեալ արժէք: Ով օգտւում է դրանով, կեղեքող է, ով չէ օգտւում՝ աշխատաւոր է: Այդ գաղափարական սահմանից դէպի աջ, դէպի յաւելեալ արժէքի աւելի և աւելի իւրացումն, ընթանում են բուրժուաների խտացող ու թանձրացող շարքերը, իսկ դէպի ձախ, դէպի յաւելեալ արժէքի չքացումը և դրկանքի աճեցումը ձգւում են աշխատաւորների շարքերը— նախ բաւական գիրուկ, իրենք իրենց ապրող և ազատ, քանի դէպի ձախ էք հեռանում սահմանագծից, այնքան աւելի նիհար, այնքան աւելի աղքատացած և տառապող:

Մի ծայրում կանգնած են գէր, ինքնաբաւական միլիոնատէրերը և միլիարդատէրերը, միւս ծայրում կանգնած են նիհար, մշտապէս սոված թշւառների ու դժգոհների գնդերը: Որքան դէպի աջ էք գնում, այնքան նօսրանում են շարքերը բայց անհատները խոշորանում, գիրանում, որքան դէպի ձախ էք գնում, այնքան խտանում են շարքերը, բազմանում ամբոխը, իսկ անհատները լղարում, մանրանում, մաշւում: Իսկ որքան մօտենանք դէպի մեր գծած գաղափարական սահմանը,

այնքան աւելի անհատներ սկսում են իրար մօտենալ իրենց չափերով, իրենց դրամներով, իրենց վայելքների քանակով ու որակով: Եւ գալիս է մի բաւական ընդարձակ շերտ, երբ ամենախստապահանջ սկզբունքային անձն անգամ կանգնում, շւարում, մնում է, թէ արդեօ՞ք որ դասակարգին վերագրէ այս ու այն անհատներին:

Այսպէս, ինչ անուն տալ մի արհեստաւորի, որ իր սեփական խանութում աշխատում է անձամբ, որ ունի մի երկու աշակերտ, որոնց սովորեցնում է իր արհեստը, մի կամ երկու բանւոր, որոնց կատարելագործում է արհեստի մէջ, բայց որոնց աշխատեցնում, որոնց կեղեքում է: Քննել ես սկսում նրա բոլոր գործերը և պարզւում է հետևեալ պատկերը: Այդ վարպետն ունի արտադրութեան գործիքներ, որոնք խոշոր գումար չեն ներկայացնում. Նա ինքը շատ լաւ վարպետ է. ում մօտ էլ վարձով աշխատի, գրեթէ նոյնքան, թերևս և աւելի վարձ կստանայ, քան այժմ է ստանում իր սեփական խանութում: Նրա մօտ աշխատող բանւոր վարպետներն էլ գրեթէ նոյնքան են ստանում, որքան և ինքը, սակայն ազատ են խանութի պատասխանատուութեան բոլոր գլխացաւանքներից: Բազմաթիւ դէպքեր են պատահել, երբ գործատէրն առաջարկել է իր իսկ բանւորներին աշխատել ընկերովի, երբ հաւասար ընկերներ, սակայն բանւորները մերժել են...

Ինչ անուն տալ այդ արհեստաւորին, որ բուրժուա կոչւելու արտաքին նշաններ, գէթ մասամբ, ունի: Ո՞ր դասակարգի մէջ զետեղել նրան:

Ահա թէ ինչու մենք ասում ենք, որ կեանքի մէջ սկզբունքային հարցերը կերպարանացած ենք տեսնում յաճախ միայն խոշոր գծերով:

Այդպիսի մանր արհեստաւորին նոյնիսկ ուղղափառ մարքսիստ Կ. Կաուցկին զետեղում է բանւոր դասակարգի մէջ: Սակայն դրանք ոչ բուրժուա են, ոչ էլ աշխատաւոր: Դրանք նմանում են այն ստորին «կենդանաբուսական» օրգանիզմներին, որոնք ոչ բոյս են, ոչ էլ կենդանի, այլ այդ երկուսի մէջտեղը, նրանց ծնունդ տւող մայրը:

Մարդկային հասարակութեան այդ շերտն անդադար վերիվայրումների, յեղյեղումների մէջ է: Նրա անդամներից շատերն անցնում են խակական աշխատաւորութեան, նոյն իսկ անմիջապէս կեղեքւողների շարքերը. սակայն պատահում են, թէև խիստ սակաւ, նաև այնպիսիները, որոնք հարստանում, ընդարձակում են իրենց գործերը, զարգացնում են իրենց տընտեսութեան մէջ գտնւող կեղեքման սաղմերն, ինչպէս որ մեծամասնութեան տնտեսութիւնից դուրս են մղւում կեղեքման վերջին նշոյներն անգամ և անդամները կամ մնում են իրենց անձի թափած ջանքի յոյսով ապրելու, կամ ընկնում են վարձւորների բանակը:

Չպէտք է խաչ քաշել այդ երկերեսանի, անորոշ շերտի վրայ, իբր անյոյս, բուրժուական տարրի վրայ, այլ պէտք մօտենալ ու կազմակերպել նրա անդամներին, որովհետև դըրանք — այդ մանր արհեստաւորները, այդ 3—5 օրավար հող ունեցող գիւղացիները, այդ մանր առևտրականները, որ մի տեսակ ակամայ գործակատարներ են խոշոր առևտրականների ձեռքին — այդ բոլոր «մանր մարդիկն» անպայման օգուտ կունենան ընկերվարական կարգերի առաջացումից. Նըրանց համար, անկասկած, ձեռնտու է ընկերվարութիւնը, որովհետև, ինչ էլ որ լինի. նա նրանց կըտայ միջակ բարօրութեան աւելի բարձր մի չափ, քան նրանք այսօր ունեն ներկայ բուրժուական կարգերի տիրապետութեան տակ:

Այդ մտածելակերպն է, որ կոչւում է ընկերվարական մըտածելակերպ: Պէտք է մօտենալ և կազմակերպել այն բոլոր հասարակական խաւերը, որոնց շահը հակառակ չէ ընկերվարական սկզբունքներին: Եթէ որ և է անհատի կամ հասարակական որ և է խաւի համար աւելի ձեռնտու է ամբողջ հասարակութեան միահամուռ արտադրութիւնը և արտադրած բոլոր հարստութիւնների բաշխումը համաձայն ամէն մի անհատի թափած միջին հանրօգուտ աշխատանքի (կոլլէկտիվիզմ) և կամ ամէնքին հաւասարապէս (կոմմունիզմ) — այդ անհատի կամ այդ հանրային խաւի մտածելակերպը կարելի է դարձնել ընկերվարական. նրան կարելի է կազմակերպել յանուն ընկերվարութեան:

Իսկ եթէ մի անհատ — օրինակ 50 օրավար հող ունեցող մի գիւղացի, մտնի ընկերվարականների շարքերն, արդեօք ինչ շահ, ինչ օգուտ նա կարող է ունենալ ապագայում իրականանալի ընկերվարական կարգերից: Արդեօք այդ կարգերը կարո՞ղ են նրան ապահովել կենսական այնպիսի վայելքներ ու բարեկեցութիւն, որքան այժմ ինքը ունի կամ կարող է ունենալ — խելացիօրէն մշակելով իր 30—50 օրավար հողը: Պատասխանը պարզ է. — ոչ: Ուրեմն՝ նիւթական շահերի տեսակէտից նրա համար ձեռնտու չէ ընկերվարութիւնը: Մենք չենք խօսում այս ու այն բարձր բարոյականի ու անհատականութեան տէր անձերի մասին, որոնք բարոյական ներքին բաւականութեան համար կարող են դառնալ համոզումներով ընկերվարական, իրենց գոյքը, նոյն իսկ կեանքը զոհել աշխատաւոր մեծամասնութեան վիճակի բարելաւման գործին: Դըրանք անհատներ են, փայլուն ու զօրեղ բացառութիւններ. հասարական խաւերն ու զանգւածներն իրենց համոզումների և նիւթական կեանքի մէջ ունենում են ընդհանրապէս մի որոշաւուչ ներդաշնակութիւն:

Աչքի առաջ ունենալով մեր առաջադրած սկզբունքը և նրա կենսական ձևերը, քննենք այժմ հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող դասակարգերը:

Հասարակական խաւերից հնագոյններն են եղել հոգեւորականութիւնը և ազնւականութիւնը մի կողմից, աշխատաւորութիւնը — ստրուկ, ճորտ, վարձւոր — միւս կողմից: Բուրժուազին կամ պլուտօկրասին (դրամապետութիւնը) համեմատաբար ուշ ծնւած խաւեր են:

Ներկայ քաղաքակիրթ հասարակութեան մէջ հոգևորականութիւնը չունի այն դերը, ինչ նա ունեցել է սկզբնական վայրենի ու բարբարոս հասարակութիւնների մէջ: Այդ դեռ քիչ է. այժմ նա չունի այն ուժն ու ազդեցութիւնն, ինչ որ ունէր հին, միջին և նոյն իսկ նոր դարերի սկզբներում: Որքան հասարակութիւնները քաղաքակրթւում, որքան նրանք լուսաւորւում են, այնքան աւելի ընկնում է հոգևորականութեան ազդեցութիւնը:

Վայրենի և բարբարոս հասարակութիւնների մէջ վհուկը, սկզբնական այդ հոգևորականը, քուրմը տէր են կեանքի բոլոր ճիւղերում: Նրանք սերւում են աստուածներից. նրանք համարւում են ամենազօր, ամենագէտ. նրանք բարձր են սովորական ազնուականութիւնից և առնուազն հաւասար են արքայական տոհմերին: Թէ Փարաւոնների Եգիպտոսում, թէ Ինկաների Պէրուի մէջ, թէ արևելեան շատ երկրներում ամբողջ երկրի հողը բաժանւում էր երեք մասի. մի երրորդը հոգևորականներինն էր, մի երրորդը ազնուականներինը, մի երրորդը մնացած բոլոր մարդկային էակներինը: (*)

Հին քաղաքակիրթ աշխարհների թէ կաստայական և թէ մանաւանդ քրիստոնէական շրջաններում հոգևոր դասի թէ նիւթական և թէ բարոյական ուժը դեռ առաջին չափերի էր հասնում, թէև ոչ այնքան ամենակարող և ամենապարփակ ձևերով, ինչ որ վայրենական և բարբարոսական շրջաններում:

Այսօր հոգևորականութիւնը կորցրել է իր նախկին թէ բարոյական և թէ մանաւանդ նիւթական ուժը: Բայց և այնպէս նրա ձեռին կան դեռ ևս բաւական խոշոր հարստութիւններ: Կաթոլիկ, օրթոդոքս և մահմեդական հոգևորականութեան — վանքերի, մզկիթների ու միաբանութիւնների կարողութիւնը հասնում է միլիարդների: Համեմատաբար աւելի չնչին է աւետարանական, բողոքական, լութերական և այլ բարենորոգուած եկեղեցիների ու հայ հոգևորականութեան հարստութիւնը:

Հոգևոր դասի վերին կամ բարձր խաւերը այսօր հանդիսանում են հողատէր կամ խոշոր կալուածատէր դասի կողքին նստած: Այդ բարձր կոչւած խաւերը մի կողմից վայելում են հողային ռենտան (rente) կամ հողի եկամուտը — կեղեքելով հողը անմիջապէս մշակող աշխատաւորներին, կամ այդ անմիջական կեղեքումը յանձնելով միջնորդ կապալառուների կամ

(*) Այդ հարցով հետաքրքրւողներին յանձնարարում ենք կարդալ Շարլ Լէտուռնոյի «Evolution de la propriété» և «Evolutiou religieuse» գրութիւնները. Էմիլ դը Լավըլէի «De la propriété et de ses formes primitives» և այլն

ֆէրմէրների, իսկ իրենք ստանալով հողի եկամուտը (ռէնտան): Միւս կողմից էլ նրանք — իբր եկեղեցու պաշտօնեաներ — առաջնորդ, քարոզիչ և այլն, ստանում են չաղ-չաղ ռոճիկներ կամ անմիջապէս ժողովրդից կամ պետութիւնից: Այսպիսով նրանք հանդիսանում են կրկնակի կեղեքիչներ:

Հարցը մի քիչ աւելի բարդանում է, երբ ուզում ենք քննել ստորին հոգևորականութեան խնդիրը: Այստեղ մեր առջև այլևս չեն կանգնած հողի եկամուտով ու խոշոր ռոճիկներով ապրող անհատներ, այլ մեր գործն այնպիսի անձերի հետ է, որոնք պիտի ապրեն կամ պետութեան տուած չնչին ռոճիկով, կամ ծխականներից ստացւող կիսապարտաւորական-կիսակամաւոր նւէրներով, որոնք յաճախ ողորմութեան ձև են առնում: Արդեօք դրանց տուած այդ վարձատրութիւնը պէտք է համարել աշխատութեան վարձ, թէ ողորմածական կամ պարազիտական մի երևոյթ, — ահա հարցը:

Նայենք հարցի վրայ ամենածայրայեղ տեսակէտով: Ասենք, թէ «կրօնը մարդկային մտքի տկարութեան, նրա յիմարութեան արգասիքն է և ոչ նրա զօրութեան, նրա խելացիութեան պըտուղը» (Շառլ Լէտուռնոյի խօսքերն են). համաձայնինք անգլիական հանճարեղ բանաստեղծի — Բայրընի հետ, որ

«Նոյն իսկ աստուածներն ընկնում, գահավիժում են,
Կրօններն իրար են յաջորդում.
Երբեմն Իւպիտէրի կրօնն էր,
Այժմ Մահմէդինը և ուրիշները.
Տարբեր կրօններ դուրս կը գան
Ուրիշ տարիների հետ միասին,
Մինչև որ մարդը վերջապէս կը հասկանայ,
Որ իր խունկը զուր է ծխում,
Որ իր զոհերի արիւնը զուր է ցայտում:»

(«Չայլդ Հարօլդ»)

Ընդունենք, որ կրօնները փոփոխւում, բարեշրջման են ենթարկւում: Վերջապէս՝ ընդունենք նաև այն բաւական համարձակ ու անհաւանական տեսակէտը, թէ մի օր կրօն ասւած բանը պիտի վերանայ։ Այդ բոլորն աչքի առաջ ունենալով հանդերձ, դրական կամ պօզիտիվ մտածողութեան տէր ուղեղի համար դեռ ևս մնում է մի բաց խնդիր.

—Այսօր կրօնը կայ ժողովրդի սրտում. կան և նրա ծէսերն ու արարողութիւնները, ուրեմն՝ ինչպէս վերաբերուել դէպի այդ կարիքին բաւարարութիւն տուող անհատները. համարել նրանց հասարակական պաշտօնեաներ, ինչպէս, օրինակ, զինուորականներին, որոնց մատուցած ծառայութիւնն էլ ժամանակաւոր է և մի օր պիտի վերանայ։

Իբր մարտնչող (միլիտան) հասարակական գործիչ, իբր կուսակցական անհատ, դուք կարող էք շատ բան ասել կուսի վարդապետներին, բայց իբր գիտութեան մարդ, դուք պարտաւոր էք ընդունել, որ քանի դեռ կայ կրօնական պահանջը ժողովրդի մէջ, հոգևորականութիւնը կը լինի, ինչպէս նաև քանի դեռ կայ պատերազմի երկիւղը, կը լինի զինուորականութիւնը. ուրեմն՝ նրանք պիտի ստանան նաև իրենց աշխատանքի վարձը։

Երբ մի անգամ այս գիտական տեսակէտն ընդունեցինք, այնուհետև հարցը կը դիւրանայ։ Արդեօք ինչ դասակարգ է հոգևորականութիւնը. յետադէմ թէ յառաջադէմ։ Կասկած չկայ, նա յետադէմ է։ Սակայն նրա վերին շերտերը, բացի յետադէմ, բացի խաւարամիտ լինելը, նաև կեղեքիչներ են, իսկ ներքին շերտերը—հասարակ ծխատէր քահանաները, մոլլաները, քարոզիչները և այլն, լինելով հանդերձ պահպանողական բնակի մարդիկ, յաճախ տառապում են ժողովրդական աղքատ խաւերի ցաւերով, որովհետև վիճակակից են նրանց։ Աշխարհի շատ յեղափոխութիւնների մէջ այդ գիւղական պարզ քահանաներն ու վարդապետները երբեմն կատարել են շատ լաւ դերեր։ Բայց ամբողջ դասն, իբր հոգևոր սկզբունքի ներկայացուցիչ, միշտ եղել է ճնշողութեան կողմնակից, «ձեր սուրը, մեր պարանոցը» դարձուածքի երկրպագու։

Մտածել, թէ երբ և է հոգևորականութիւնը կարող է լինել ընկերվարական, միանգամայն անմտութիւն է։ Մօտենալ հոգևոր անհատներին՝ նրանց կազմակերպելու, ընկերվարական շարքերի մէջ առնելու համար,— դա ևս անմտութիւն է,

որովհետև ներկայումս գոյութիւն ունեցող բոլոր կրօնների էութիւնը դէմ է այդ վարդապետութեան—կարմիր աւետարանի ոգուն։

Տարբեր խնդիր է, երբ մի ժողովուրդ մղում է ազգային ազատագրման կռիւ։ Դաշնակցութեան կամ Հնչակեանութեան մէջ անցեալում, երբ դրանք մարտնչում էին թիւրքահայի ազատագրման խնդրի համար, ամէն մի հայ մարդ կարող էր տեղ բռնել նրանց շարքերում, որովհետև նա էլ հայ էր, նա էլ կամենում էր ազգի ազատագրումը։ Նոյնը կարող ենք ասել նաև Մակեդոնացիների նկատմամբ, նախ քան Թրքական Սահմանադրութիւնը։

Բայց երբ կայ սահմանադրութիւն, երբ կայ խօսքի և ժողովների ազատութիւն, այն ժամանակ ամէն մի կուսակցութիւն պարտաւոր է որոշել, թէ ինքն ինչ խաւի ներկայացուցիչ է, ինչ դասակարգի շահերի պաշտպան։ Երբ ամէն մի դասակարգ յառաջ կը մղէ իր սեփական կազմակերպութիւնը, այնուհետև շատ կը դիւրանայ հասարակական հարցերի լուծումը։ Կը մրցեն իրար հետ կազմակերպութիւնները, կը կռուեն։ Իսկ եթէ եղան այնպիսի համազգային պահանջներ, ինչպէս լեզու, դպրոց, գրականութիւն, ազգի ֆիզիքական գոյութիւն և այլն, բոլոր կուսակցութիւնները կամ բոլոր դասակարգերը կարող են կազմել ժամանակաւոր համաձայնութիւններ կամ բլօքներ։

Այդ մասին մենք դեռ երկար պէտք է խօսենք հետևեալ գլխում։ Այժմ այսքանը միայն ասենք, որ հոգևորական դասն անպայման անընդունակ է ընկերվարական սկզբունքը որդեգրելու. նրա մի մասն ապրում է շահագործութեամբ և համերաշխ շահեր ունի հողատէրերի և միւս տիրող դասերի հետ, իսկ ստորին մասը նոյնպէս ընկճուած, նոյն վիճակի մէջ է, և քանի գնում նրա վիճակն աւելի ևս վատանում է, որովհետև ժողովրդի գիտակցութեան բարձրանալով, ընկնում է նրա յարգանքը դէպի եկեղեցականը։

Անցնենք այժմ հետևեալ դասակարգին, կամ աւելի շուտ, նոյն կերպով դասակարգի հետեւեալ աւելի բնորոշ խումբն — ազնուականութիւնը։

Ազնուականութիւնն այնքան հին չէ, որքան հոգեւորականութիւնը։ Այն ժամանակ, երբ մարդկային հասարակութիւնները ապրում էին հաւասարական կամ կոմմունիստական կարգերով, երբ համայնքի ներսում բոլորն էլ նիւթապէս իրար հաւասար էին, երբ հողերն ու հօտերը կազմում էին հանրութեան սեփականութիւն եւ բոլորն աշխատում, բոլորն էլ գրեթէ հաւասարապէս ապրում էին, — ահա այդ շրջանում դեռ ազնուականութիւն չկար՝ նոյնիսկ սաղմնային ձեւով, այնինչ հոգեւորականներն արդէն կային, — վհուկներ, հմայողներ, գուշակներ, քուրմեր եւայլն՝ կազմում էին բաւական զօրեղ հասարակական մի խաւ։ Ազնուականութիւնն աւելի ուշ է երեւան գալիս, այն ժամանակ, երբ մասնաւոր սեփականութիւնը ծնունդ է առնում եւ երբ առաջ են գալիս տիրող դասակներ, հողատէրներ եւ տէրեր, նրանց հպատակ ստրուկներ։

Ազնուականութիւնն անմիջապէս իրեն տէր է հրատարակում երկրի բոլոր հողերի, տիրապետում մի խոշոր բաժին հանելով աստուածների ներկայացուցիչներին կամ կրօնաւորներին, իսկ վերջիններս էլ աստուածների դիրք են յայտարարում աշխարհի զօրութիւնների հաստատած կարգերը, նրանց կեղեքումները։ Թէ հին, թէ միջին եւ թէ նոր դարերում ազնուականութիւնը միշտ իր ձեռքն է պահել երկրի հողերը։ Երկրագործութիւնը երկա՛ր դարեր միակ արտադրական խոշոր ճիւղն էր. ճարտարարուեստ կամ ինդուստրին, արհեստներն ու արտադրութեան այլ ճիւղերը դեռ այնքան չնչին դեր էին խաղում, որ հարստութեան միակ աղբիւրը, նոյնիսկ XVIII դարի վերջում, Քէնէն, Տիւրգօն եւ ուրիշ տնտեսագէտներ, յայտարարեցին հողը եւ երկրագործութիւնը։ Այդ ուղղութեան դաւանողներն են, որ կոչւում են Ֆիզիոկրատներ։

Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը խորտակեց բոլոր հին դասերը։ Միւս կողմից էլ ճարտարարուեստի զարգացումը, մեքենաների գիւտը, երկաթուղիների ու շոգենաւերի տարածումը XIX դարում հիմնապէս փոխեցին արտադրութեան եղանակը։

Երկրագործութիւնը մնաց իր զբաղմունքի առարկայ եւ հարստութեան աղբիւր համեմատաբար աւելի յետամնաց երկիրներում, իսկ առաջիններում ժողովուրդները դիմեցին գործարանական եւ հանքային արտադրութեան։ Ֆրանսիական յեղափոխութիւնը եթէ սպանել էր ազնուականութիւնն իրաւական տեսակէտից, սակայն հողերը մեծ մասամբ կրկին թողել էր նրա ձեռքում, եթէ ոչ Ֆրանսիայում, գոնէ ուրիշ երկիրների մէջ։ Իսկ XIX դարի տնտեսական անհաւասար զարգացումն սպանեց ազնուականութեան տնտեսական նշանակութիւնը։ Նրանց հողերն ամէն տեղ սկսեցին ծախուել՝ յաճախ հրապարակային աճուրդների մէջ։ Հողն սկսեց բաժանուել, ընկնել դրամատէրերի, արհեստաւորների եւ գիւղացիների ձեռքն էլ։ Անգլիան էր միայն, որ բաւական ազատ մնաց այդ շարժումից, իր հողային յատուկ օրէնքի շնորհով։ Այնտեղ հօր թողած հողն անմիջապէս մնում է երէց որդուն։ Այդ պատճառով էլ այնտեղի ազնուականութիւնը դեռ հողատէր է եւ դեռ բաւական հզօր դեր է խաղում երկրի մէջ։

Ազնուականութիւնն իբր ուրոյն դաս, իբր արտօնեալ մի մարմին՝ չքացաւ, բայց հողը կրկին մնաց մի հասարակական խաւի ձեռք։ Այդ խաւը կոչւում է հողատէր դաս։ Այն ժամանակ, երբ ազնուական լինելու համար պէտք էր կամ ծնուել ազնուական հօրից եւ կամ երկրի պետից ստանալ այդ կոչումը անձնապէս կամ ժառանգների համար եւս, այժմ հողատէր լինելու համար ոչ մի ձեւականութիւն չէ պահանջւում, բաւական է ունենալ դրամ եւ հող գնել։

Սակայն ամէն մի հող ունեցող հողատէր չէ։ Եթէ այնքան հող ունես, որ հողին կարող ես մի տուն շինել ու մէջն ապրել, եթէ այնքան հող ունես, որ հողը դու քո քրտինքի հետ միասին կարող ես մշակել ու ապրել. կամ եթէ այնքան է քո հողը, որ չես կարող տալ վարձով եւ դրա արդիւնք ստանալ, — դու հողատէր չես։ Հողատէր են բոլոր այն մարդիկ, որոնք իրենց սեփական աշխատանքով մշակելու չափից աւելի ունեն եւ տալիս են կամ կապալով, կամ ուղղակի երկրագործներին մշակելու, որոնք իրենց հողից ռէնտա (rente) են ստանում ոչ իրենց, այլ ուրիշների աշխատանքի շնորհով։

Ներկայիս հողատէրերի մի մասը նախկին ազնուականներն են, բայց մեծագոյն մասը դրամով հող գնած բուրժուաներն են, նախկին երկրագործները, պետական պաշտօնեաները և այլն: Ինչ կասկած, որ հողատէրերն էլ կարող են լինել մանր, միջակ և խոշոր հողատէրեր: Մանրերը յաճախ իրենք էլ են աշխատում, բայց աշխատեցնում են նաև 2-3ից աւելի վարձու մշակներ: Սակայն այդ մանր հողատէրերի վիճակն այնքան էլ մեծ տարբերութիւն չէ կարող ունենալ հասարակ աշխատաւոր գիւղացիների վիճակից: Միջակ հողատէրերն արդէն իրենք այլևս չեն աշխատում, անմիջապէս գործ չունեն հողի հետ, այլ ղեկավարում են գործերը և վաճառում են արդիւնքները: Իսկ մեծ հողատէրերն առհասարակ զբաղուած են լինում պայմանագրեր ու թղթեր գրելով, բանկերից դրամներ ստանալով և զուարճանալով:

Հողատէր դասակարգն անպայման յաւելեալ արժէքով ապրող է: Նա կամ անմիջապէս կեղեքում է մշակ գիւղացիներին, աշխատեցնելով նրանց իր հողերի վրայ, և կամ իր հողերը տալիս է կապալով, կապալառուն է կեղեքում երկրագործներին, հաւաքում նրանից արտադրած յաւելեալ արժէքները և մի մասն իրեն պահում, միւսը տալիս հողատիրոջն իբր կապալադրամ:

Նախընթաց գլխում մենք արդէն մանրամասն քննութեան ենք ենթարկել, թէ ո՛ւր է աշխատաւոր գիւղացու և հողատիրոջ սահմանը: Մենք արդէն տեսել ենք, որ հողազուրկ, սակաւահող և 3-5 օրավար հող ունեցող բոլոր գիւղացիներին կարելի է կոչել աշխատաւոր, իսկ նրանցից բարձր արդէն ներս է մտնում կեղեքման սկզբունքը: Ուրեմն՝ մինչև այդ սահմանը եղողներին կարելի է միանալ, կազմակերպել իբր աշխատաւորներ, իբր ընկերվարականներ, իսկ նրանցից բարձր մանր, միջակ ու խոշոր հողատէրերին, որոնք կամ մասամբ կամ ամբողջովին ապրում են ռէնտայով, նրանց չէ կարելի կազմակերպել իբր ընկերվարականներ:

Այստեղ ևս պէտք է յիշենք, որ մեր խօսքն անհատների մասին չէ, այլ ամբողջ հասարակական մի խաւի, հողատէր դասի մասին:

Կեղեքումով ապրող կամ բուրժուական դասակարգի ամենից ընդարձակ և ամենից զօրաւոր մասը դրամատէրերի կամ կապիտալիստների խաւն է: Յաճախ, շատ յաճախ՝ երբ բուրժուա կամ բուրժուազի ենք ասում, հասկանում ենք միայն կապիտալիստների դասակարգը, իսկ նախընթաց երկու խաւերին կոչում ենք հողատէր դասակարգ և հոգևոր դաս: Իսկ մենք, ինչպէս մինչև այժմ մեր գրածից երևում է, այդ բոլոր խաւերը միասին համարում ենք մի դասակարգ — կեղեքողների, յաւելեալ արժէքով ապրողների դասակարգ, իսկ հոգևորականութիւն, հողատիրութիւն և կապիտալիստներ համարում ենք այդ դասակարգի մասերը կամ նրա զանազան խաւերը:

Հոգևորականութեան ծագումը թաղուած է դարերի մթութեան մէջ: Նրա ուժը միշտ եղել է գերբնականը, անյայտը, Աստուածը, ամենազօրը, ոգիները և այլն: Նա տիրապետել, կեղեքել ու փառայեղօրէն ապրել է, յենուելով մարդկային հաւատի, նրա սնոտիապաշտութեան վրայ: Երկիւղն ու ապագայի խաւարը, դժոխքն ու դրախտը եղել են նրա մշտական ու հաստատ զէնքերը:

Համեմատաբար աւելի նոր ու աւելի պարզ է հողատէր դասակարգի ծագումը: Նախ այդ դասակարգը ազնուականներից էր բաղկացած: Մի խումբ մարդիկ, զէնքը ձեռքերին, տիրում, հպատակեցնում են ուրիշներին. ստիպում են նրանց պահել իրենց հօտերը, մշակել իրենց — ազնուականների հողերը: Ժամանակակից արտադրութեան բոլոր միջոցները — հողն ու հօտերը իւրացնում են. իւրացնում են նաև ինքնապաշտպանութեան միակ միջոցը — զէնքը. զինազուրկ են անում տիրածներին և կեղեքում:

Այդպէս հզօր ու շառաչալի ծագում չունի կապիտալիստ դասակարգը, Ֆրանսիական յեղափոխութեան հռչակաւոր Tiers Etat կամ Երրորդ դասակարգը: Նախընթաց գլուխներում տեսանք, թէ ինչպէս նա աստիճանաբար ծնունդ է առել միջնադարեան բուրգերում կամ քաղաքներում և ինչպէս այդ խոնարհ, հպատակ վիճակից, աստիճանաբար զարգանալով, XIX դարում քայքայել է միւս հզօր դասակարգերին և դառել դրութեան տէրն ամբողջ քաղաքակիրթ աշխարհում:

Նրա բաղադրիչ տարրերը եղել են միջնադարեան արհեստաւորների համքարները կամ էսնաֆները, վաճառականները և մանուֆակտուրական արտադրութիւնով զբաղւողները։

Ներկայումս կապիտալիստ դասակարգի մէջ կարելի է նըշմարել հետևեալ ստորաբաժանումները. ա) Գործարանատէրեր, բ) Հանքատէրեր, գ) Առևտրականներ, կամ վաճառականներ, դ) Բանկիրներ կամ Բանկէներ և ե) Նաւային, երկաթուղային և այլն հաղորդակցական միջոցների ձեռնարկուներ։

Գործարանատէր բուրժուազիի նախահայրերը եղել են մի կողմից հարստացած և իրենց մանր արհեստանոցները ընդարձակած միջնադարեան արհեստաւոր էսնաֆները, իսկ միւս կողմից՝ միջին դարերի վերջերում խոշոր զարգացած մանուֆակտուրական կամ ձեռագործ արտադրութեան ներկայացուցիչները, որոնք մրցման մտան արհեստաւորների միջնադարեան հզօր կազմակերպութիւնների հետ և, երկար դար կռւելով, XVIII դարավերջում յաղթահարեցին, քայքայեցին նրանց։

Քաղաքատնտեսական գիտութեան մէջ ընդունւած է գործարան անւանել այն ճարտարարւեստական հիմնարկութիւնը, որի մէջ 5-ից աւելի գործաւորներ են աշխատում։ Իսկ մէկից մինչև հինգ մարդով գործող հիմնարկութիւնը կոչւում է արհեստանոց։

Գործարանատէր բուրժուազիի եկամուտի աղբիւրն իր բանեցրած աշխատաւորների կամ պրոլէտարների արտադրած յաւելեալ արժէքն է։ Յիշելն անգամ աւելորդ է, որ կան մանր, միջակ և խոշոր գործարանատէրեր։

Բուրժուա կապիտալիստների երկրորդ խումբն են կազմում հանքատէրերը կամ հանքագործ բուրժուաները։

Եթէ որ և է բուրժուա հողեր ունի, բայց ինքը չէ մշակում, այլ տալիս է ուրիշներին կապալով մշակելու, նա այլևս չէ կոչւում հանքատէր, այլ անւանւում է հողատէր և դասաւորւում է ռենտայով ապրողների մէջ։ Հանքատէր կամ հանքային բուրժուաներ նրանք են, որ անմիջապէս հանքերի գործով են զբաղւած, իսկ հանքը կարող է իր սեփականը լինել, — և այդ դէպքում բուրժուան ստանում է և՛ հողի ռենտան, նախաձեռնողի կամ ձեռնարկողի եկամուտը, — կամ թէ չէ՝ հանքը կարող է լինել ուրիշից կապալով վերցրած, և այդ դէպքում հանքագործ բուրժուային կը մնայ միայն նախաձեռնողի օգուտը և կապիտալի տոկոսը, իսկ հողի ռենտան կը գնայ հողատիրոջ գրպանը։

Եթէ մի քիչ աւելի խորը, աւելի սկզբունքային տեսակէտից մօտենանք հարցին, բուրժուական այս խումբը մի չափով կարող ենք համարել հողատէրերի մի մասը։ Սակայն, գործնական տեսակէտով, աւելի յարմար է սրանց բոլորին դասաւորել կապիտալիստների մէջ, քան հողատէրերի, որովհետև հողատէրը կարող է կապիտալ չունենալ իր սեփական հողը մշակելու, բացի այդ՝ հողատէրն ստանում է յաւելեալ արժէքը ոչ անմիջապէս, այլ միջնորդի — ֆէրմէրի, կապալառուի ձեռքով, իսկ հանքագործ բուրժուային գործ ունի բանւորի հետ անմիջապէս։

Բուրժուական դասակարգի երրորդ խումբն է վաճառականութիւնը կամ առևտրական դասը։

Հին, չափազանց հին երևոյթ է առևտուրն ու առևտրականութիւնը։ Դեռ գրաւոր պատմութեան նախօրեակում երգւած Հոմէրական երգերում մենք արդէն հանդիպում ենք առևտրականների։ Այդ դեռ քիչ է. բարբարոս ու վայրենի հասարակութիւնների մէջ անգամ գործածական արժէքների իրար հետ փոխանակելու գաղափարը կայ, թէև յատկապէս միայն այդ գործով պարապող անհատներ դեռ չկան։ Վայրենիներ, իրենց ունեցած որսերից աւելորդները տալիս են իրենց դրացիներին և փոխարէնն ստանում են ուրիշ գործածական նիւթեր, որ իրենք չունեն։ Բարբարոս հասարակութիւնների մէջ այդ փոխանակութիւնն աւելի ևս տարածւում, կանոնաւորւում է։ Քաղաքակրթութեան առաջին աստիճաններում իսկ մենք արդէն տեսնում ենք բաւական ծաղկած մի վաճառականութիւն, բաւական հարուստ մի առևտրական դաս, նոյն իսկ ամբողջ ժողովուրդներ, ինչպէս Փիւնիկեցիները, Յոյները, Կարթագէնացիները, — որոնք պարապում են գրեթէ բացառապէս առևտրով։

Վայրենական շրջանում, ինչպէս ասացինք, գործածական արժէքները փոխւում են իրար դէմ. տալիս են, օրինակ, մի քանի ձու, առնում այնչափ միրգ եւայլն: Բարբարոսական շրջանում արդէն ամբողջովին փոխանակութեան նւիրւած անհատներն առանձնաբար սկսում են բոլոր ապրանքների միջից ընտրել մի յատուկ ապրանք — շուտ չփճացող և համեմատաբար շատ թւով մարդկանց պիտանի մի իր — և դարձնում դա փոխանակական միութիւն կամ դրամ: Մի տեղ այդ սեփական դրամի դերը կատարում է ոչխարը, մի այլ տեղ, օրինակ Միջին Ասիայում՝ մոնղոլների մէջ — չուխը կամ շան կաշին (քէօփէկ, որից և ծագել է ռուսական կօպէկը), մի երրորդ տեղ՝ թանկագին մորթիները, մի չորրորդ տեղ՝ եղը, աղի տափակ կտորները եւայլն, եւայլն: Վերջ ի վերջոյ դրամի դեր է յատկացւում թանկագին մետաղներին, բայց սկզբներում դեռ քաշով, կտոր-կտոր ձողակների ձևով, իսկ վերջը միայն իսկական դրամ է կտրւում: Հնագոյն դրամը, որ յայտնւել է գտնել մինչև օրս, Լիդիայի թագաւորութեան մայրաքաղաքի — Սարդայի աւերակներից գտնւած կտրած դրամն է:

Դրամը մի ապրանք է, որ ամէն մարդ ընդունում է, ուրեմն ում էլ որ տաս, նա քեզ կտայ այդ դրամի փոխարէն իր ունեցած աւելորդ իրերից այս կամ այն չափով: Նա բոլոր ապրանքների էքիվալենտն է, հաւասարազօր արժէքը, փոխանակական միութիւնը: Թանկագին մետաղները դրամ դարձան, որովհետև նրանք չեն փչանում, իրենց քաշը չեն կորցնում, չափազանց երկար են դիմանում, կարող են ծեծւել ու տափակել կտոր-կտոր լինել ու դրանով նրանց արժէքի կամ գնի մէջ ոչ մի փոփոխութիւն չի յառաջանայ:

Երբ դրամի գործածութիւնը հնարւեց ու տարածւեց, ապրանքների փոխանակութիւնն արագ առաջ ընթացաւ, դրա հետ միասին՝ զարգացաւ նաև առևտրական դասը: Հին պատմութիւնը ճանաչում է շատ աւելի հզօր վաճառականութիւն, քան միջին դարերը, որովհետև միջնադարեան ծայրայեղ բաժանականութիւնը կամ պարտիկուլարիզմը թոյլ չէին տալիս առևտրի ազատ զարգացումը: Եթէ հնադարեան Հռոմի կայսրութեան մէջ ազնւականութիւնն ամօթ էր համարում առևտրով զբաղւել և այդ ձեռնտու գործը թողնում էր ստրկութիւնից ազատւածներին և «նոր մարդկանց» (homo novus), միջին դարերում էլ ամէն մի մանր հողատէր կամ աւատական (ֆէօդալ), մաքս էր առնում իր երկիրը մտնող, կամ իր հողով ու ջրով անցնող ապրանքներից: Ֆրանսիական Յեղափոխութեան նախօրեակին, Լիօնից մինչև Միջերկրական ծովը Ռօն գետով ապրանք իջեցնելու համար պէտք էր 29 տեղ՝ մաքս վճարել...

Եթէ հին դարերն ունէին իրենց Փիւնիկեցիները, Յոյները և Կարթագենացիները, միջին դարերն ունեցան Իտալական մանր հանրապետութիւնները — Վէնէտիկը, Ջէնովան, Նէապոլը, Միլանը, Պիզան, Ֆլօրէնցիան, — ունեցան իրենց Հանզէական քաղաքները — Լուբէկը, Համբուրգը, Բրէմէնը եայլն:

Նոր դարը, մինչև Ֆրանսիական Յեղափոխութիւնն, ունեցաւ այնպիսի առևտրական կենտրոններ, ինչպէս Պորտուգալիան, Հօլանդիան, Ֆլանդրիան, Իսպանիան և, վերջապէս, Անգլիան ու Ֆրանսիան:

Առևտուրը և առևտրական դասը հսկայական զարգացման հասան այն ժամանակ, երբ Վասկօ-դէ-Գաման Աֆրիկայի հարաւային ծայրը շրջելով՝ գնաց Հնդկաստան, երբ Կօլումբոսը յայտնագործեց Ամերիկան: Այդ և մի քանի այլ յայտնագործութիւնները հզօր զարկ տւին ծովային առևտրին: Սակայն նա իր այսօրւայ համաշխարհային ու տիտանական չափերին հասաւ այն ժամանակ, երբ հնարւեց շոգեշարժը — շոգենաւը և երկաթուղին, հեռագիրը, այսինքն XIX դարի մէջ:

Որքան առևտուրը զարգանում էր, այնքան աւելի առևտրական դասի ազդեցութիւնը հզօրանում էր հասարակութեան մէջ: Եւ այսօր, ներկայ բուրժուական կարգերում, այդ դասի ազդեցութիւնը խիստ մեծ ու զօրաւոր է, իսկ նրա հարստութիւնը հասնում է հսկայական չափերի:

Առևտրականը հանդիսանում է և՛ անմիջապէս իր մօտ բանող աշխատաւորների — ծառաների, բեռնակիրների, գործակատարների կեղեքիչ և, միւս կողմից, նա խոշոր մաս է ստանում գործարանատիրոջ ստացած յաւելեալ արժէքից: Ուրեմն՝ նա ներկայացուցիչ է թէ անմիջական և թէ, եթէ կարելի է այսպէս ասել, կողմնակի կամ միջնորդաբար ստացուող յաւելեալ արժէքի:

Այս դասի մի ծայրում կանգնած են միլիարդատէրերը և միլիոնատէրերը, իսկ միւս, վարի ծայրում կանգնած են մանր առևտրականները, փերեզակները, որոնք ապրանք առնում են խոշոր առևտրականներից ապառիկ, ծախում կամ իրենց մանրիկ խանութներում կամ փողոցներում, ուսի վրայ վաճառում, շաբաթ օրը դրամը տանում, մեծ վաճառականին տալիս, իրեն պահելով մի չնչին, մի ողորմելի բաժին: Այդպիսով ոչ միայն նրանց նիւթական վիճակն է մօտենում բանւորների և աշխատաւոր գիւղացիների խեղճ և թշուառ վիճակին, այլ նաև նրանք կարծես թէ հանդիսանում են վարձու աշխատաւորներ, մեծ առևտրականների գործակատարներ: Յաճախ, շատ յաճախ իսկական գործակատարները շատ աւելի ապահովուած են լինում, քան այդ մանր առևտրականները: Գործակատարն ունի աշխատանքի որոշ ժամեր և որոշ ռոճիկ: Նա մասնակից չէ ապրանքի փչանալուց, հրդեհից, նաւաբեկութիւնից և այլ բաներից առաջ եկող վնասներին: Նա մասնակից չէ էն ապրանքների գների անկումից և այլ այդպիսի երևոյթներից ծնուած նիւթական վնասներին: Իսկ մանր առևտրականը ենթակայ է դրանց մեծ մասին: Բացի այդ, խանութն իր սեփականը լինելով, նա շա՜տ աւելի երկար է աշխատում, քան մեծ վաճառականի գործակատարը: Իսկ եկամո՞ւտը: Դա այնքան անկայուն և անհաստատ է, որ նա յաճախ կարող է չոր հացի կարօտ մնալ:

Այս մի քանի տողերից պարզ է, որ առևտրականութեան միջին և խոշոր խաւերն անպայման պէտք է դէմ լինեն ընկերվարութեան, որովհետև ընկերվարութիւնը նրանց շահերին դէմ է, նրանց մահն է ցանկանում: Իսկ ստորին, մանր առևտրական խաւերի մէջ բազմաթիւ անհատներ կարող են՝ եթէ ոչ անմիջապէս ընկերվարականների կազմակերպութիւնների մէջ, գոնէ կարող են լինել նրանց շատ մօտ և համակիր տարրեր,

թէ ամսավճարներով և թէ ընտրական քուէներով, և մանաւանդ, թէ մարտական ուժով, նպաստել ընկերվարական բանակի միջուկին — բանւորութեան ու աշխատաւոր գիւղացիութեանը:

Այսօր բանկային բուրժուազին, թէև թուով քիչ, խաղում է առաջին դեր քաղաքակիրթ հասարակութիւնների մէջ:

Բուրժուական այս խաւն անծանօթ էր հին աշխարհին իր ներկայ ձևով: Նրա իսկական նախահայրերը ծնունդ են առել իտալական մանր հանրապետութիւնների մէջ, XIII և XIV դարերում: Հսկայական դրամական գործողութիւններ էին կատարում Վենետիկի, Ջենովայի, Միլանի և, մանաւանդ, Ֆլորենցիայի բանկիրները կամ սառաֆները: «Բանկ» բառը ծնունդ է առել այդ դրամափոխների ունեցած սեղաններից (սեղանը — le banc:) Երբ մի սեղանատէր կամ սնանկանում էր կամ խարդախութիւն անում ու բռնւում, հրապարակաւ կոտրում, ջարդում էին նրա banc-ը կամ սեղանը և յայտարարում նրան «բանկ-րուտ» կամ սնանկ:

Յետոյ, աւելի ուշ, այդ զբաղմունքը տարածւեց նաև պորտուգալական, հոլանդական և անգլիական քաղաքներում, իսկ XVII և XVIII դարերում հիմք դրւեց ներկայ բանկերի:

Աւելորդ է այստեղ կանգ առնել բանկերի և առհասարակ վարկի (կրէդի) նշանակութեան վրայ մեր ներկայ կեանքում. դա մեր նիւթից դուրս է և շա՜տ հեռու կը տանի մեզ:

Բուրժուական այս խաւն էլ և ուղղակի, անմիջապէս կեղեքում է իր մօտ եղող աշխատաւորներին— հաշուապահ, թղթակից, գրագիր, ծառայ, դրամահաւաք, բեռնակիր և այլն և մանաւանդ, նրա եկամուտը բաղկանում է այն տոկոսներից, որ նա ստանում է ուրիշներից. իսկ այդ ուրիշները կամ իրենք են անմիջապէս կեղեքում բանւորին կամ թէ չէ իրենք էլ կեղեքում են ուրիշներին և բերում մի մասը տալիս բանկին, իբր տոկոս:

Բուրժուական խոշոր ներկայացուցիչներից են նաւատէրերը, երկաթուղատէրերը, կառքերի, աւտոմոբիլների, հանրակառքերի և փոխադրութեան այլ միջոցների տէրերը: Դրանց մի մասը եղել են նաև հին ու միջին դարերում, իսկ մի մասն էլ էապես XIX և XX դարերի ծնունդ են: Դրանք էլ իրենց ձեռքի տակ ունենում են մշակներ, բանւորներ, վարձու գործակատարներ, կառավարիչներ և այլն, որոնց կեղեքում են, որոնց յաւելեալ արժէքները իւրացնում:

Բացի հողատիրութիւնից, բուրժուական միւս բոլոր խաւերի մէջ այսօր մտել է բաժնեւոր ընկերութեան սովորութիւնը: Հիմնւում են ակցիաներով կամ բաժիններով ընկերութիւններ, ծախւում են այդ թուղթերը բորսաներում կամ անհատաբար, կազմւում է մեծ կամ փոքր մի դրամագլուխ, որի տէրը մի մարդ չէ, այլ շատերն են, յաճախ նոյնիսկ իրար բոլորովին անծանօթ: Ընտրւում է մի վարչութիւն, բացւում մի բանկ, կամ մի մեծ վաճառատուն, կամ կառուցւում մի նաւ, մի երկաթուղի, մի քանի կառքեր կամ ինքնաշարժներ (օտօմօբիլ) և այլն, և գործում, դրամ վաստակում ու իրենց բաժնետէրերին դիվիդենտ կամ զուտ արդիւնք տալիս տոկոսների ձևով՝ ամէն մի թղթին իր չափով:

Այսպիսով դադարում է կապիտալն անհատական լինելուց և դառնում խմբական: Մի խումբ կապիտալիստներ կեղեքում են մի խումբ բանւորների: Եւ ոչ մի կասկած չկայ, որ կեղեքողների խումբը թւով շատ նուազ է, փոքր, իսկ կեղեքւողներինը թւով առատ է, խոշոր:

Անկասկած և աներկբայելի է, որ դրամի տոկոսներով ապրող բուրժուական խոշոր թիւ կազմող անհատներն ապրում են ուրիշների յաւելեալ արժէքով: Դրանք իրենց դրամները յանձնում են որ և է բանկային հիմնարկութեան և ձեռք քաշում ամէն տեսակ աշխատանքից: Դրամատան վարչութիւնը կատարում է բոլոր աշխատանքները, նրանցից փոխառութիւն կատարող կապիտալիստները նոյնպէս կատարում են աշխատանքի միացած մասը: Ձեռնարկողների այդ երկար շարքը ձգտում է մի բանի. ստեղծել հարստութիւններ, այսինքն՝ բնութեան ընծայած ձրի բարիքների մէջ խառնել մարդկային ստեղծագործող աշխատանքը և նրանց վերածել արժէքների կամ հարստութիւնների. այդ հարստութիւններից մի փոքրիկ մասը

տալ աշխատաւորներին ապրելու, գոյութիւնը և սերունդը— ապագայ աշխատաւորութիւնը շարունակելու համար, իսկ հարստութիւնների միացած մասը իւրացնել, բաժանելով հողատիրոջ, գործատիրոջ, բանկիրի, առևտրականի, պետութեան, փոխադրող կապիտալիստի միջև: Իսկ բանկիրն իր ստացած բաժնից մաս է հանում նաև այն մարդկանց, որոնք իրենց դրամները յանձնել են բանկին՝ տոկոսներ ստանալու պայմանով:

Այսօր քիչ են դրամի տոկոսներով միայն ապրող անձերն: Արտաքուստ նրանք ամենևին կեղեքիչի հանգամանք չունեն, բայց երբ քննում ես նրանց ապրուստի իսկական աղբիւրները, տեսնում ես, որ նրանց ստացած եկամուտն էլ յաւելեալ արժէքի մի մասն է միայն:

Մինչև այժմ մենք համառօտակի աչքէ անցրինք բուրժուական կամ կեղեքիչ դասակարգերի ծագումը, պատմական զարգացումը և այսօրւայ կերպարանքը: Սակայն, ինչպէս այս գլխի սկզբում շեշտեցինք, կենսական երևոյթներն իրարից խստօրէն չեն բաժանւում, չունեն շեշտւած սահմանագծեր: Այժմ էլ պարտաւոր ենք ասել, որ բուրժուական խաւերից իւրաքանչիւր մէկը,— որն էլ կ'ուզէք,— մի ծայրում ունի հարուստներ, միւս ծայրում աղքատներ: Եւ այդ ներքին, աղքատ ծայրին կանգնածներն այս կամ այն չափով մօտենում են աշխատաւորներին:

Սակայն միայն այդքանը չէ, բացի խաւերի ներսում եղած աստիճանաւորումից, մենք նկատում ենք նաև խաւերի տեսակների աստիճանաւորում: Այսպէս, զուտ բուրժուական խաւերից յետոյ անմիջապէս չեն գալիս զուտ աշխատաւորների խաւերը, այլ այդ երկուսի միջև զետեղւած են կիսաբուրժուական խաւերը, որոնք իրենց պորտի աղիքով կպած են լինում աշխատաւորութեան, բայց որոնք արդէն սկսել են օգտուել նաև շահագործման բուրժուական միջոցներից:

Այդ կիսաբուրժուական խաւերն են խոշոր արհեստաւորները և գիւղական բուրժուաները:

Անկասկած՝ կարելի է այդ բոլորը հաշւել բուրժուական խաւերի մէջ, խաւերի ներսի տարբերական աստիճաններից որ և է մէկի վրայ գնահատել նրանց: Այսպէս՝ կարելի է խոշոր արհեստաւորներին, որոնք և՛ իրենք են աշխատում և դրանով կապւում աշխատաւորութեան ճակատի հետ, և՛ աշխատեցնում են 1-2-ից աւելի վարձու բանւորներ և դրանով մտնում յաւելեալ արժէք իւրացնողների շարքերը,— այդպիսի արհեստաւորներին, ասում ենք, կարելի է համարել գործարանային կամ գործատէր բուրժուաների խաւի մէջ, միայն թէ ներքին շարքերում: Ինչպէս նաև 1-2-ից աւելի վարձու մշակներ, հօտաղներ, հնձւորներ և հերկողներ պահող խոշոր գիւղացուն կարելի է գնահատել ճողատէր դասի մէջ, միայն թէ համարել այնպիսի հողատէր, որը պարտաւոր է, ինչպէս խոշոր արհեստաւորը, և՛ ինքն աշխատել՝ եթէ ոչ իր սեփական բանւորներից աւելի, գոնէ նրանց հաւասար չափով, և՛ ունենալ վարձու աշխատաւորներ, կեղեքել նրանց, իւրացնել նրանց յաւելեալ արժէքները:

Սակայն ընդունւած է արհեստաւորական և գիւղական մանր բուրժուային դնել իբր բուրժուա դասակարգի մի ինքնայատուկ խաւը, որը թէ աշխատաւոր է և թէ միաժամանակ կեղեքիչ:

Ի միջի այլոց՝ ասենք և այն, որ մեր երկրներում— Արևմտեան Ասիայում տարածւած բուրժուական խաւերից ամենամեծն այդ երկու խաւերն են հետները ունենալով ազնուականութեան (աւատականութեան) մնացորդները, պաշտօնէութեան և հոգևորականութեան վերին շերտերը: Դեռ ևս իսկական գործարանատէր, դրամատէր (բանկիր), խոշոր հողատէր (ոչ աւատատէր) և նոյն իսկ խոշոր առևտրական բուրժուազի չունենք. եղածներն էլ ծովափերից ներս, դէպի Հայկական սահմանները չեն թափանցել: Իսկ ծովափերում եղածների էլ մեծագոյն մասը եկւորներ են, Եւրոպացիներ, օտար դրամագլխի ներկայացուցիչներ:

Անցնենք այժմ ներկայ հասարակութեան մեծամասնութիւնը կազմող աշխատաւոր դասակարգին և նրա խաւերին:

Առաջին հայեացքից իսկ այդ հսկայական զանգւածի մէջ մեր աչքին են ընկնում երեք խոշոր խաւեր. բանւորներ կամ

իսկական պրոլետարներ, արհեստաւորներ և գիւղացիներ: Ինչ ասել կուզէ, որ այդ վերին երկու խաւերից էլ մենք վերցնում ենք բուն աշխատաւոր մասերը և ոչ կիսաբուրժուական շերտերը, որ մենք գնահատեցինք վերևում, կեղեքող դասակարգի մէջ: Սկսենք առաջին խոշոր խաւից, պրոլետարներից:

Նախ բնորոշենք, թէ ինչ է պրոլետար:

Պրոլետարն այն անձն է, որը չունի սեփական արտադրական միջոցներ և այդ պատճառով ստիպւած է վաճառել իր աշխատանքն, ապրուստ ձեռք բերելու համար:

Եթէ պրոլետարը, չունենալով արտադրական միջոցներ, չգիտէ վարձւելու և չաշխատի, կը դառնայ մուրացիկ, կընկնի պրոլետարների այն խմբի մէջ, որ ընդունւած է կոչել «լումպէն պրոլետարիատ» կամ ցնցոտիաւոր պրոլետարիատ: Սակայն այդ «լումպէ» բառը (ցնցոտի) լաւ չէ բնորոշում այդ խմբակին. աւելի յարմար է նրանց անւանել մակաբոյծ պրոլետարներ, որովհետև դրանք աշխատանքից փախչողներից, ծոյլերից, դիւրին ապրուստ որոնողներից են բաղկացած: Այդ ստոր ու անպատուաբեր խմբի մէջ պէտք է հաշւել մուրացիկների այն մասը, որը կարող է աշխատել, բայց նախընտրում է մուրալ, պէտք է այդ շարքի մէջ դասաւորել թափառներին (բոսեակ), գողերին և այլն:

Սակայն կարող է պատահել և մի այլ երևոյթ: Մի իսկական պրոլետար, իր վարպետութեան և ծայրայեղ խնայողութեան շնորհիւ, կարող է ստեղծել մի քանի հարիւր մարկ, զետեղել խնայողական գանձարանը, պահել «սև օրւայ» համար: Բանւորի այդ խնայողութիւնը կարող է հասնել նոյն իսկ 2-3, մինչև իսկ 5 հազար մարկի: Նա դրանից կարող է ստանալ նոյն իսկ տարեկան 200 մարկի չափ տոկոս. բայց և այնպէս նա կը մնայ պրոլետար, նա կը լինի շահագործւող:

Ստիպւած ենք միանգամ էլ կրկնել, որ կեանքը չէ սիրում սահմանագծեր, խիստ իրարից տարբերող, մէկին ի մէկ իրարից անդունդներով բաժանւող երևոյթներ: Պրոլետարիատի մի ծայրը գնում թաղւում է աղքատութեան, թշւառութեան թանձր ջրապտոյտի մէջ, իսկ միւս ծայրն ստանձնաբար բարձրանում է դէպի բարեկեցիկ խաւերը։ Եւ կարհամարհէի եւս այն մտածողներին ու քաղաքական կազմակերպութիւնները, որոնք չէին դրդի բանւորին մի քանի փարա պահել «սեւ օրւայ համար»։ Դաժան և անմիտ է այսօր այն հնացած վարդապետութիւնը, որը քարոզում էր «որքան վատ, այնքան լաւ» սկզբունքը. այսինքն որքան վատանայ բանւորի և գիւղացու վիճակը, որքան նա աւելի խոր թաղւի աղքատութեան ու տառապանքի մութի մէջ, այնքան աւելի կըզգայ իր վիճակի խղճութիւնը, այնքան աւելի կը զայրանայ և ջարդ ու փշուր կանէ իր կեղեքիչներին։

Դառ՜ն մոլորութիւն։

Մարդկային էակն անընդունակ է երկար ժամանակ դիմագրաւելու ծայրայեղ թշւառութեան, առանց ընկճւելու։ Ճնշման, հալածանքի և թշւառութեան որոշ սահման կայ, մինչև որը, յիրաւի, մարդիկ ըմբոստանում են, բողոքում, իսկ երբ այդ սահմանն անցնում է, անհատների և նոյն իսկ ամբողջ հասարակութիւնների մէջ մեռնում է բողոքելու, ըմբոստացման ոգին. մարդն ընկնում, անասնանում է։ Եւ դա բնական օրէնք է— ինչպէս հոգեկան, այնպէս էլ ֆիզիքական աշխարհում։ Զարկեցէք երեխայի ձեռքին նախ կամաց և ապա աստիճանաբար սաստիկ ու սաստիկ։ Երեխան սկզբում կը բողոքէ, որովհետեւ ցաւ կը զգայ։ Եթէ, չլսելով նրա բողոքին, շարունակէք ձեր ուժգին հարւածները, կը հասնի մի վայրկեան, երբ նրա ձեռքն այլեւս կանզգայանայ։

Այդպէս է նաեւ դասակարգային հոգեբանութիւնը։ Ամէն ջանք պէտք է գործ դնել, որ պրոլէտարիատը կարողանայ աւելի և աւելի լաւ ապրել, ճանաչել կեանքի վայելքներին։ Դրանով ամենեւին չի մեռնի նրա մէջ կռւելու, աւելի և աւելի վեր բարձրանալու ձգտումը։ Բանւորութիւնը մինչեւ օրս ջանք է գործ դրել գրաւել մօտակայ դիրքը, բարձրանալու և այնտեղից կազմակերպելու իր ալիքի նոր գրոհը դէպի նոր, աւելի բարձր դիրք։ Սա աստիճանական զարգացման տեսութեան գործնական իրականացումն է։ Սակայն այդ տեսութիւնը և այդ ձեւի գործելակերպը չեն հակասում, արմատապէս չեն ժխտում վերջնական նպատակին հասնելու համար գործադրելիք յեղաշրջումը։

Թէորետիկաններից ոմանք պնդում են, որ դասակարգային կռիւն իր բոլոր աստիճանների վրայ կարիք ունի յեղաշրջման կամ ռէվօլիւսիօնի, իսկ ուրիշներ միանգամայն ժխտում են յեղաշրջման գաղափարը և պնդում, որ ներկայ բուրժուական կարգի մէջ պէտք է մարդկութիւնն անցնի դէպի ընկերվարութիւն դանդաղ բարեշրջման կամ էւօլիւսիօնի ճամբով։

Մենք դէմ ենք այդ երկու ծայրայեղութիւններին էլ։ Կեանքը չէ սիրում այդպիսի միատեսակ, միապաղաղ և ամէնքի համար պարտադիր օրէնքներ։ Կան երկիրներ, հասարակութիւններ ու վայրկեաններ, երբ յեղաշրջումը դառնում է ճակատագրական անհրաժեշտութիւն, իսկ մեծ մասամբ բարեշրջումն է, որ պէտք է դեր կատարէ։ Երբ հասարակական դասակարգերի յարաբերութիւնները կամաց-կամաց կը լարւեն, երբ նրանց շահերի հակադրութիւնը կը սաստկանայ, երբ բարեշրջումն անկարող կը լինի հակադիր դասակարգերին իրար մօտեցնել, հաշտեցնել, յղկել և իրար հետ ձուլելու տրամադրել, ահա այն ժամանակ գլուխ կը բարձրացնէ յեղաշրջումը— բռնի, ճնշիչ միջոցը։

Տնտեսական այդ խնդրին թերեւս մենք վերադառնանք հետեւեալ գլխում. իսկ այժմ կրկին դիմենք մեր վերլուծութեան թելին։

Պրօլէտարը չի դադարի պրօլէտար լինելուց, եթէ որ եւ է կերպ հնար գտնի խնայողական արկղը յանձնելու 2-3000 ֆրանկի մի չնչին գումար։ Պէտք է խրախուսել այդ ձգտումը բանւորների մէջ, որովհետեւ դասակարգային պատերազմի ահեղ րոպէներին նա շատ մեծ կարիք պիտի ունենայ այդ խնայած, «ատամից կտրած» դրամներին։

Գաղտնիք չէ, որ ներկայ բուրժուական հասարակակարգի ժամանակ բանւոր դասակարգն, իբր մի ամբողջութիւն, ոչ մի հնար չունի խնայողութիւն անելու. նրան վճարում են այնքան աշխատավարձ, որքան անհրաժեշտ է նւազագոյն ապրուստի համար։ Սակայն կեանքի ալիքների խոշոր վերիվայրումների պահուն լիապէս հնարաւոր է բազմաթիւ անհատների համար չնչին ջանքով բաւական զգալի խնայողութիւն կատարել:

Ուրեմն՝ մեր խօսքը չէ վերաբերում ամբողջ դասակարգին, այլ որքան կարելի է շատ թւով անհատների:

Երբ մենք ասում ենք պրօլետարիատ, նրա մէջ ենք զետեղում ա) բոլոր մանր ու խոշոր գործարանների, բ) բոլոր հանքերի, գ) բոլոր մանր ու խոշոր արհեստանոցների բանւորները: Դրա մէջ ենք հաշւում նաև դ) բոլոր հողազուրկ գիւղացիներին, որոնք վարձւում են գիւղերում իբր մշակներ, իբր գիւղական, գիւղատնտեսական բանւորներ: Դրա մէջն ենք համարում նոյնպէս ե) երկաթուղային, նաւային և փոխադրական այլ միջոցներում ծառայող վարձու մշակներին ու բանւորներին:

Աշխատաւոր դասակարգի այս խումբ հին քաղաքակրթութեան երկրներում գրեթէ գոյութիւն չունէր, որովհետև հին հասարակութիւնները բաժանւում էին երկու խոշոր դասակարգերի. ազնւական և ստրուկ: Ազնւականութեան հարուստ մասն անպայման ստրկատէր էր. նա բանեցնում էր իր սեփական ստրուկներին, իսկ աղքատ ազնւականութիւնն ինքն էր կատարում իր գործը: Վարձող տարրեր գրեթէ գոյութիւն չունէին: Իսկ ազնւականութեան աղքատ մասը համարում էր աշխատանքն ամօթ, անվայել պարապմունք. նա միայն իր անձնական սեփական գործերն էր կատարում, հպարտօրէն խուսափելով որ և է այլ գործից:

Հին դարերում եթէ եղել են վարձու աշխատողներ, դրանք կազմել են պատահական երևոյթներ և դրանց գլխաւոր բաղադրիչ մասը կազմել են օտարականները:

Միջին դարերում էլ բոլոր հոգևորական, հողատէր կամ ազնւական դասերն ունեցել են իրենց ճորտերը, որոնք կատարել են բոլոր անհրաժեշտ գործերը: Ազնւականութիւնն ու հոգևորականութիւնը գրեթէ չեն դիմել վարձու աշխատաւորներին, որովհետև այդ երկու «բարձր» խաւերն էլ առատօրէն ունեցել են իրենց ճորտերը, որոնք կատարել են բոլոր աշխա-

տանքները կամ իբր ուղղակի պարտականութիւն կամ իբր կոռ ու բէգեար, օրամ, ավանիա ևայլն:

Սակայն միջին դարերում վարձու աշխատանքն արդէն սկսում է դառնալ հասարակական որոշ երևոյթ, պատկառելի, աչքի ընկնող չափերի հասած: Եթէ հոգևորական ու ազնւական դասերը, իբր սեփական ճորտատէրեր, կարիք չունէին վարձու բանւորների, եթէ նրանց միակ վարձկանները վարձու կռւողներն էին, միւս կողմում, հասարակութեան միւս խաւերում արդէն սկսում էր ծայր տալ վարձու աշխատանքը: Նախ և առաջ նկատենք, որ նոյն իսկ գիւղում, ճորտ ազգաբնակութեան մէջ նիւթական դրութեան անհաւասարութիւնն սկսում էր կարգաւոր, մի քիչ աւելի հարուստ մի ճորտ գիւղացու վարձել իր չունևոր դրացու զաւակներից մէկին, օրինակ, իբր հոտաղ, իբր հնձւոր ևայլն: Այդ երևոյթը պէտք է զարգանար գիւղերում և հիմք դնէր գիւղացիութեան մէջ առաջացող խստօրէն շեշտւած շերտաւորումների:

Բայց միջնադարեան գիւղը չէ, որ դառնում է վարձու բանւորութեան հայրենիքը, նրան առատ զարգացման նիւթ մատակարարող միջավայրը, այլ միջնադարեան քաղաքն է, պարսպապատ բուրգը: Նախընթաց երեսներից մէկում մենք մի քանի խօսքով նկարագրեցինք այդ քաղաքների ծագումն ու զարգացումը: Նրանց այդ երկտող նկարագրութիւնն անգամ լիապէս բաւական է ցոյց տալու, որ այնտեղ անպայման պիտի թագաւորէր վարձու աշխատանքը: Ու այդպէս էլ եղաւ: Քաղաքներում սկզբն առան համքարութիւնները կամ էսնաֆութիւնները, որոնց մէջ վարպետների կողքին անպայման պիտի լինէին վարձու օգնականներ ու բանւորներ: Նոյն «բուրգ»երում կենտրոնացաւ առևտրական դասը, որը չէր կարող ապրել առանց վարձու մշակների, բանւորների ու գործակատարների:

XVI դարում, երբ երևան եկաւ մանուֆակտուրական արտադրութիւնը, որ համքարական կազմակերպութիւնների հզօր արգելքների շնորհիւ ստիպւած եղաւ նախ ապաստանել գիւղերում. միւս կողմից՝ երբ ազնւականութիւնն ու հոգեւորականութիւնն սկսեցին «իրենց հողերի» վրայից արտաքսել դարերով հաստատուած ճորտ գիւղացիներին, — ահա այդ ժամանակ իսկական վարձու բանւորութիւնն էլ սկսեց ցրւդալ թէ գիւղերում և թէ քաղաքներում:

Ճորտատիրութիւնն օրէնքով վերացւում է XVIII դարում: Նոյն դարավերջում հնարւում են բազմաթիւ մեքենաներ, բացւում են իսկական գործարաններ և վարձու բանւորութեան թիւն սկսում է աճել գլխապտոյտ արագութեամբ:

Սկզբներում վարձու աշխատաւորից պահանջւում է արհեստ, մասնագիտութիւն, իսկ յետոյ, մեքենայի յառաջանալու չափով, այդ պահանջն սկսում է ընկնել. մեքենան իրար է հաւասարեցնում բոլոր բանւորներին, թողնելով միայն արհեստաւորներին, գլխաւոր վարպետներին և մեքենագէտներին:

Այդ բոլորից պարզ երևում է, որ մեր ակնարկած բոլոր պրօլէտարական խաւերը — գործարանային, հանքային, արհեստանոցների, գիւղական, երկաթուղային — բոլորն էլ գրեթէ արդիւնք են XIX դարի. զաւակ են գործարանների ու նրանց կեանք ու հոգի ներշնչող մեքենաների — շոգեշարժների, էլէքտրաշարժների, գազօմօտօրների:

Որքան մի երկիր կապիտալապէս յառաջադիմում է, այնքան աւելի աճում են մշակող հանքերը, գործարանները, մեծ ու փոքր արհեստանոցները, երկաթուղիները, շոգենաւերը, կառքերը, ինքնաշարժները (աւտօմօբիլ) և այլն. աճում են, ի հարկէ, և դրանց մէջ ու դրանց վրայ աշխատող վարձու բանւորների թիւը. մեծանում, ուռճանում է պրօլէտարական բանակը, որը չափազանց նուազ ու խեղճ չափերի է լինում յետամնաց, անկուլտուր երկրներում:

Աշխատաւորութեան Երկրորդ ընդարձակ խաւն է աշխատաւոր գիւղացիութիւնը:

Նախընթաց գլխում մենք արդէն պարզել ենք, թէ ինչ ենք հասկանում «աշխատաւոր գիւղացի» բառերով: Այդ անունը մենք տալիս ենք այն գիւղացիներին, որոնց հողի քանակութիւնը չէ պահանջում նրանց հրաւիրել վարձու բանւորներ մշակութեան համար, այլ իրենք՝ հողատէրերը և իրենց

ընտանիքի աշխատունակ անդամները լիովին բաւարար են ունեցած հողերը մշակելու, իրենց ճակատի քրտինքով ապրելու, «իրենց իւղով տապակւելու»: Հողի այդ քանակը, որ մշակւում է միշտ իր տէրերի և նրանց ընտանիքի աշխատանքով, կոչւում է աշխատաչափ հող, իսկ այդչափ միայն և ոչ աւելի հող ունեցող գիւղացին — աշխատաւոր գիւղացի: Աշխատաչափից աւելի հող ունեցող գիւղացին սովորաբար սկսում է հեռանալ աշխատաւոր դասակարգից և մերձաւորւել կեղեքող կամ բուրժուական դասակարգերի խաւերում: Իսկ աշխատաչափից նուազ հող ունեցող գիւղացին սովորաբար մնում է պրօլէտարական խաւերը, զրկւելով արտադրական բոլոր միջոցներից:

Սկսած անյիշատակ ժամանակներից, միշտ գոյութիւն է ունեցել աշխատաւոր գիւղացիութիւն, միայն փոփոխւել է նրա հասարակական դիրքը և ազդեցութիւնը:

Սկզբնական հասարակութիւնները, որոնք դեռ չէին ճանաչել ստրկատիրութիւն, բաղկացած էին իրար հաւասար խաշնարած, որսորդ և այլ զբաղմունքի տէր աշխատաւորներից: Երբ ծագեց երկրագործութիւնը, մենք տեսնում ենք, որ մարդն աշխատեց այդ ծանր աշխատանքի բեռը նետել ստրուկների, ճորտերի վրայ: Սակայն Հռոմի փառաւորած շրջանը մեզ պարզ ցոյց է տալիս, որ պատրիկների ազնւական դասի գրեթէ բոլոր անդամները երկրագործներ էին. որ նոյն իսկ Հռոմի վտանգաւոր վայրկեաններում ինքնակալ, անսահման իշխանաւոր հրապարակւած տաղանդաւոր ազնւական անդամ, փրկելով հայրենիքը վերահաս վտանգից, մի կողմ է նետում դիկտատօրութիւնը կամ իշխանապետութիւնը և կրկին ձեռքն է առնում իր գութանը: Նոյն երկրագործներին ենք մենք պատահում և Յունաստանում, սկզբնական շրջանի պատմութեան մէջ: Սակայն յոյները, լինելով առևտրականներ, շուտով սկսեցին արհամարհանքով նայել երկիրը մշակելու արհեստին, իսկ հռոմայեցիները շատ աւելի երկար պահեցին յարգանքը դէպի երկրագործութիւնը:

Քաղաքակրթութեան կատարման հետ միասին՝ սովորանաբար ազնուականութիւնն սկսում է զբաղուել քաղաքական, քաղաքացիական, զինուորական ու դատական գործերով, արհամարհում Ֆիզիկական աշխատանքը, երկրագործութիւնը նետում նախ ստրուկների, ապա ճորտերի վրայ։ Ամբողջ միջին դարերի ընթացքում ազնուականութիւնն ու հոգեւորականութիւնն ազատ էին երկիրը մշակելու տաժանելի արհեստից. այդ բեռը նրանք բարդել էին ճորտ գիւղացիութեան վրայ, որից տասանորդ էին առնում և որին ստիպում էին կատարել բազմաթիւ ձրի աշխատանքներ զանազան անունների տակ։ Անհնազանդ ճորտերին ազնուականութիւնը հնազանդութեան էր բերում զէնքով, ինչպէս Թոմաս Մինցէրին օրերում Գերմանիայում, ինչպէս Ժակերի շարժումը Ֆրանսիայում, Լօլարդներինը Անգլիայում և այլն, և այլն։ Հոգեւոր դասն էլ Երկու տեսակ հասու զէնք ունէր իր բազմաթիւ ճորտերին հնազանդութեան մէջ պահելու համար. առաջին՝ ֆիզիկական զէնքը. հոգեւորականն էլ իբր աշխարհական ազնուական, պահում էր զինուած պահակներ, անցնում նրանց գլուխը և պատերազմի մասնակցում կամ կոտորում իր անհնազանդ ճորտերին։ Երկրորդ զէնքը շա՛տ աւելի հասու էր միջին դարերում, ուր համատարած խաւարն էր թագաւորում։ Դա հոգեւորականի այժմ բաւական բթացած, դուլ զէնքն է — դժոխքն ու դրախտը, բանադրանքը, որոնք գրեթէ ամենազօր էին միջին դարերում։ Պապերը կայսրներին էին զղջացնում բանադրանքով, իսկ ինչ կը լինէր ողորմելի ճորտի վիճակը, եթէ հրաւիրէր իր վրայ ամենազօր հոգեւորականի զայրոյթը։

Ճորտատիրութեան վերանալով միայն աստիճանաբար ըսկսեց բարձրանալ երկրագործութեան նշանակութիւնն ու երկրագործի պատիւը։ Ազատ գիւղացին ամօթ չէ համարում մշակել հողը։ Եւ գիւղացիութիւնը կազմում է այսօր ամէն տեղ մի հսկայական մաս բոլոր երկրների ազգաբնակութեան։ Շա՛տ աւելի մեծ է նրա դերը նոյն երկրների հարստութիւնների արտադրելու գործում։

Որքան մի երկիր աւելի յետամնաց է, այնքան նրա քաղաքների թիւը քիչ է և քաղաքներն էլ մանր են, սակաւ

բնակիչներով, իսկ գիւղական ազգաբնակութիւնն այնքան աւելի շատ է։ Եւ որքան երկիրն առաջ է գնում, այնքան աւելի աճում է քաղաքաբնակների թիւը, նուազում գիւղացիութիւնը։ Նախընթաց գլխում ասած լինելով թւեր, մենք այժմ աւելորդ ենք համարում կրկնել. այսքան միայն անհրաժեշտ է ասել, որ Թիւրքիայում, Ռուսաստանում և Պարսկաստանում, որոնց մէջ ապրում է Հայ ժողովուրդը, գիւղական ազգաբնակութիւնը դեռ եւս կազմում է, գրեթէ բոլորի համար էլ, ազգաբնակութեան առնուազը 75⁰/₀-ը։ Կը նշանակէ Հայ ազգի բնակավայրերում դեռ եւս ազգաբնակութեան երեք քառորդը գիւղերումն է ապրում, միայն մէկ քառորդը քաղաքներում։ Գիւղական ազգաբնակութեան այդ ճնշող թուական առաւելութիւնը մեզ պէտք է դրդէ աւելի մեծ ուշադրութեամբ վերաբերուել դէպի գիւղացիութեան ցաւերը, դէպի նրա կրթութիւնը և, մանաւանդ, դէպի նրա դասակարգային շահերը։

Մեր փրկութեան հզօրագոյն խարիսխը լինելու է գիւղացիութեան արագ լուսաւորութիւնը, գիւղական ամէն տեսակի ընկերութիւններն ու կազմակերպութիւնները, որոնց վրայ կռթնած, պէտք է կռուել գիւղացուն քայքայող բոլոր երեւոյթների դէմ, ինչպէս պետական հարկերի ծանրութեան, ինչպէս գիւղացու գլխին բազմած ֆէօդալական և, մասամբ, հոգեւոր դասերի դէմ, վաշխառուների, կեղեքիչ պաշտօնեաների, աւազակների և այլ ցեցերի դէմ։

Այդ բոլոր հարցերը, լինելով գործնական քաղաքականութեան խնդիրներ, մենք թողնում ենք լուծելու զանազան քաղաքական կազմակերպութիւնների և առաջ ենք մղում մեր վերլուծութեան զուտ տեսական մասը։

Վերեւում մենք պարզեցինք, թէ ինչ ենք հասկանում աշխատաչափ հող բառերով։ Սակայն ամէն տեղ և ամէն ժամանակ հողի աշխատաչափը միեւնոյնը չէ։ Վայրենին հողագործ չէ. մի կողմ թողնենք նրան։ Բարբարոս հողագործի համար աշխատաչափը շատ մեծ պիտի լինի, որովհետեւ նա մշակում է հողի երեսը չափազանց թեթեւ, դիւրին ու մատչելի եղանակով, որը սակայն այնքան արդիւնաբեր չէ, որքան քաղաքակիրթ մարդու մշակածը: Բացի այդ, բարբարոս միևնոյն հողը մշակում է 1-2, առաւելը 3 տարի և ապա մի տարի խամ թողնում, որպէսզի հողը ոյժ առնէ. Նրան անծանօթ է հողի պարարտացման հարցը: Մի խօսքով, նրա տնտեսութիւնը կամ մշակոյթն Ekstensiv է, այսինքն աւելի տարածական, աւելի շատ հող պահանջող, քան ծախք ու աշխատանք:

Այսպէս չէ քաղաքակիրթ գիւղացու մշակութիւնը: Նա ունի յառաջադիմած արօր ու գութան. նա լաւ խորն է մշակում իր արտը: Նա ուսումնասիրել է իր հողի յատկութիւնները. գիտէ, թէ ինչ բաղադրիչ մաս է նուազ նրա մէջ: Գիտէ նաև, թէ ինչ պարարտացուցիչ բաղադրութիւններ պէտք է խառնել հողի հետ, որպէսզի այսինչ բոյսն աւելի արդիւնք տայ...: Նրա հողը չէ յոգնում, որովհետև ամէն տարի աւելացնում է նրա պարարտացուցիչ միջոցներ և բնութեան կատարեալ վերանորոգիչ, կենդանարար գործն ինքն է կատարում: Բացի այդ, նա գիտէ ընտրել ու ցանել այնպիսի բոյսեր, որոնք և աւելի շատ են բերք տալիս, և՛ աւելի սուղ գնով են ծախւում: Մի խօսքով նրա մշակոյթն Ekstensiv կամ տարածական չէ, այլ Intensiv կամ սաստիկ է:

Այդ համառօտ պարզաբանութիւնից երևում է, որ ամէն տեղ և ամէն ժամանակ գիւղացու հողի աշխատաչափը միևնոյնը չէ. նա փոփոխւում է, նայելով թէ որքան զարգացած է երկիրը:

Մի ուշագրաւ կէտ ևս: Քանի աւելի զարգանում է գիւղացին, այնքան աւելի նրա մարդկային պահանջները աւելանում, այնքան աւելի բազմապատկւում են: Սակայն դրա հետ միասին նրա գիտութիւնը, նրա աշխատունակութիւնն ու արտադրական կարողութիւնն էլ այնքան աճում են: Այնպէս որ՝ մարդկանց աճող կարիքներին և անհատների աճող թւին բաւարարութիւն պէտք է տայ զարգացող արտադրութիւնը, կատարելագործւող տեխնիկան (մեքենագործութիւնը), արհեստները և մանաւանդ երկրագործութիւնը: Ֆրանսիայի հանճարեղ քիմիկոս և վիճակագիր Բէրտըլօն գրական փաստերով ապա-

ցուցանում էր, որ ներկայիս Ֆրանսիան, որ հազիւ է կերակրում 40 միլիօն ժողովուրդ, եթէ կանոնաւորապէս գործադրէ պարարտացման քիմիական միջոցները, որ յայտնի են արդէն գիտութեանը, դիւրութիւնով կարող կը լինի կերակրել 200 միլիօն ժողովուրդ:

Գիւղացիների և բանւորների խնդիրը քննելով նախընթաց գլխում մենք եկանք այն եզրակացութեան, որ թէ բանւորը և թէ գիւղացին հաւասարապէս ընդունակ են ըմբռնելու ընկերվարական վարդապետութիւնը, որ նրանց դասակարգային շահերը պահանջում են մտնել ընկերվարական բանակը, ճիգ ու ջանք թափել ընկերվարական կարգի արագ հաստատման համար, որովհետև այդ կարգն իրենց միանգամայն ձեռնտու է: Վէճի այդ տեսական մասից երբ պէտք է անցնել փորձնական գործադրութեան, խնդիրն սկսւում է ստուգման գործողութիւնը:

Աշխատաւոր գիւղացի. սակայն այդ անունը կարելի է տալ և՛ քիւրդ գիւղացուն, և՛ աֆրիկեան քաֆրներին, և՛ Ամազոնի ափունքների կուսական անտառներում մասամբ հողը մշակելով, մասամբ ձկնորսութիւնով պարապելով ապրող Դակօտաներին ու Բոտոկուդներին. և՛ հայ, և՛ ռուս գիւղացիներին, վերջապէս և դանիացի, գերման, ֆրանսիացի ու զւիցերացի գիւղացիներին: Դրանք բոլորն էլ աշխատաւորներ են, բոլորն էլ ապրում են իրենց «հալալ» աշխատանքով, չեն իւրացնում ոչ ոքի յաւելեալ արժէքը: Բայց դրանք բոլորն էլ հաւասարապէս ընդունակ չեն ըմբռնելու ընկերվարական վարդապետութիւնը:

Բաւական չէ լինել լոկ բանւոր կամ աշխատաւոր գիւղացի, որպէս զի ընդունակութիւն ձեռք բերէ ընկերվարական դաւանելու: Այդ և նման վարդապետութիւններ ըմբռնելու համար անհրաժեշտ է երկու պայման. նախ՝ արտաքին, երկրորդ՝ ներքին պայման: Արտաքինը երկրի ընդհանուր կուլտուրական վիճակն է, նրա դպրոցների, գրականութեան, հաղորդակցութեան միջոցների, մեքենաների, գործիքների զարգացման աստիճանը: Այնտեղ, ուր հողը մշակւում է մի ոսկրի կոթով կամ մի նախնադարեան փայտէ չութով, ընկերվարութիւնը հող չունի. այդպիսի երկրում ազգայնականութիւնը չափազանց նուրբ է լինում, հողը խիստ սուղ, ընկերային հարցերը ոչ մի ուշադրութեան չհասած . . . : Երկրորդ պայմանն է ներքին— մարդկանց մտաւոր կուլտուրան: Եթէ այսօր Ռուսաստանի արևմտեան նահանգներում լեհ, լատիշ, ռուս գիւղացիները ու բանւորները ընդունակ են կազմակերպուելու իբր ընկերվարական բանակներ, նոյնը չէ կարելի ասել Սիբիրի գիւղացիների, Արխանգելի մուժիկների կամ Թուրքեստանի տափարակների սարթերի մասին: Սակայն, նկատեցէք, դրանք բոլորն էլ Ռուսաստանի բնակիչներ են, բոլորի երկրում էլ երկաթուղիներ են անցնում, կան գործարաններ, խոշոր արհեստանոցներ, բանւոր դասակարգ, և այլն:

Ուրեմն՝ միայն արտաքին պայմանը չէ վճռողը. անհրաժեշտ է և ներքին պայմանը— գիտակցութիւնը, մտաւոր մշակութիւնը, դպրոցը, գրականութիւնը, գիտութիւնը, գեղարուեստը:

Արդեօք ո՞ր պայմանին պէտք է նախապատուութիւն տալ: Երկուսին էլ միատեղ, կ'ասենք մենք: Դրանք միշտ իրար հետ են ընթանում: Կան դէպքեր, երբ մտաւորն է աւելի մեր աչքին ընկնում. պակաս չեն այն դէպքերն էլ, երբ արտաքինն է մեր աչքին զարնողը:

Այսպէս, ուրեմն, երբ մենք ասում ենք աշխատաւոր գիւղացի. որն ընդունակ է կազմել՝ քաղաքական կուսակցութիւնների հիմնաքարը, պէտք է հասկանանք այն գիւղացիութիւնը, որը քիչ ու շատ բարձր կուլտուրական վիճակի վրայ է և ընդունակ ըմբռնելու այդ կուսակցութիւնների քարոզները: Իսկ այնպիսի երկրներում, ինչպիսին Թիւրքիան, Պարսկաստանը և Ռուսաստանն են, գիւղացիութիւնը ներկայանում է մի անկազմ, խաւար ու տգէտ ամբոխ, որին դեռ պէտք է սովորեցնել— թէ մտաւոր, թէ տնտեսական մշակոյթ պատուաստել, և ապա միայն ասել, որ այժմ նա ընդունակ է ըմբռնել ընկերային և ընկերվարական գաղափարներ: Իսկ առ այժմ նա ամբոխ է— անկերպարան, անգիտակից, որի վրայ կարելի է ազդել, որին կարելի է վարել այս ու այն ուղղութիւնով, բայց որը դեռ խարխափում է անգիտակցութեան ու խաւարի վիհերում:

Աշխատաւորութեան հետևեալ շերտը կազմում են մանր արհեստաւորները, նրանք, որոնք ունեն մի արհեստանոց, ուր բանում են իրենք, հետները ունենալով մի երկու աշակերտ և մէկ, առ առաւելն երկու բանւոր:

Մանր արհեստաւորութեան վիճակն այսօր այնպէս է, որ այդչափի մի խանութատէր արհեստաւորի և իր մօտ իսկ աշխատող բանւորի ստացած վարձատրութիւնների մէջ գրեթէ ոչ մի տարբերութիւն չկայ: Արհեստաւորի կամ վարպետի զգեստը, բնակարանը, ապրուստը գրեթէ նման են իր մօտ աշխատող բանւորի թէ զգեստին, թէ բնակարանին, թէ ապրուստին: Նրանց մտաւոր վիճակը, նրանց աշխարհայեացքն անգամ նոյնութիւն են: Յաճախ պատահում են այնպիսի պարագաներ, երբ բանւորի վիճակն անպայման աւելի լաւ և աւելի ապահով է, քան խանութատէր վարպետինը: Թէ անձնական բազմաթիւ փորձերով, թէ գրքերից գիտենք, որ այդ մանր արհեստաւորներից շատերը, որոնք ունեցել են ոչ թէ 1 կամ 2 բանւոր, այլ նոյն իսկ 6-8-10 վարձու գործաւորներ,— առաջարկել են իրենց բանւորներին միանալ իրենց հետ, կազմել մի արտադրական կօօպերատիվ կամ գործակցութիւն՝ հետևեալ պայմանով. խանութատէրը, որ առաջնակարգ վարպետ է, դնում է իր բոլոր գործիքները, սեղանները, աթոռները և այլն,— մի խօսքով այն ամէնը, ինչ որ անհրաժեշտ է արհեստանոցի համար. ինքն էլ, իբր մի անդամ կօօպերատիվի, մասնակցում է իր աշխատանքով, ինչպէս բոլոր միւս բանւորները, ստանալով միւս լաւագոյն բանւորներին հաւասար օրավարձ: Եւ այդ առաջարկները գրեթէ միշտ մերժել են վարձու բանւորների կողմից, որովհետև նրանք լաւ գիտեն մանր արհեստաւորի վիճակը: Թէև ռուս սոցիալ դէմօկրատները նրանց անւանում են «մանր բուրժուա», բայց նրանց մօտ իսկ վարձու բանող գործաւորները չեն բարեհաճում երբէք ընկնել նրանց վիճակին. եթէ մի օր յաջողւում է մանր արհեստաւորին մի չնչին գումար աւելի ստանալ իր բանւորի օրավարձից, նրա դիմաց յաճախ նա ցուցադրուած է լինում պատասխանատւութեան հոգերին,— այո՛, շատ յաճախ նրան աւելի քիչ է մնում վարձատրութիւն, քան իր մօտ վարձով աշխատող բանւորին։

Այդ երերուն ու թշւառ վիճակը մանր արհեստաւորին դարձնում է ընդունակ բմբռնելու ընկերվարական կազմակերպութիւնների սկզբունքները, դրդում է նրան փարելու այդ կազմակերպութիւնների դրօշակին, նրանց իդէալներին։ Բացի այդ, գործնականօրէն, այսօր ևեթ կարելի է մանր արհեստաւորներին միացնել, կազմել մի արտադրական խոշոր, նոյն իսկ հսկայական կօօպերատիվ և շարունակել արտադրութեան գործողութիւնը։ Դրանով, ի հարկէ, լուծւած չի լինի ներկայ ընկերային խնդիրը — կապիտալի և աշխատանքի կռիւը, բայց դրանով մենք կտանք հարցի լուծման հնարաւորութեան մի փորձնական օրինակ։

Արհեստաւորութիւնը նոր երեւոյթ չէ մարդկային պատմութեան մէջ։ Արհեստաւորներ գոյութիւն ունէին հին դարերում էլ։ Սակայն ստրկատիրական և միջնադարեան ճորտատիրական տնտեսութիւնները հնարաւորութիւն չէին տալիս արհեստաւորներին տարածւելու և ծաղկելու գիւղերում էլ. և նրանք մնում էին կենտրոնացած գրեթէ բացառապէս քաղաքներում։ Գիւղացիները իրենք էին կատարում արհեստաւորի գործը, որ պահանջւում էր գիւղերում. դա բնատնտեսութեան թագաւորութիւնն էր։

Քաղաքներում, սկսած XI դարից, արհեստաւորներն այնքան են զօրանում, որ նրանց էսնաֆութիւնները կամ համքարութիւնները դառնում են ամենազօր տէրեր միջնադարեան քաղաքներում կամ բուրգերում։ Յաճախ հպարտ ֆէօդալները ու գոռոզ հոգեւոր ֆէօդալները պարտւում, գլուխ են ծռում համքարական կուռ կազմակերպութիւնների առջեւ։

XVI դարում սկիզբն է առնում մանուֆակտուրական արտադրութիւնը, որ հալածւելով արհեստաւորական բռնակալ կազմակերպութիւններից, նախ ապաստանում է գիւղերում, այս ու այն իշխանի կամ եպիսկոպոսի գիւղերը, իսկ յետոյ, երբ աւելի և աւելի զարգանում, ուժ է ձեռք բերում, իսկ միւս կողմից, երբ համքարական կազմերը, քարանալով ու բռնակալ դառնալով՝ իբր հնացած աւելորդութիւններ, դառ-

նում են անտանելի թէ պետութեան, թէ հանրութեան և թէ՛, մանաւանդ, իրենց իսկ անդամների համար, քայքայւում և Տիւրգոի օրով, Մեծ Յեղափոխութեան նախօրեակին օրէնքով վերացւում են, — այդ ժամանակ առաջ մեքենական արտադրութիւնն սկսում է ասպարէզներն արագ խլել արհեստաւորական արտադրութեան ձեռքից։ Սակայն արհեստաւորութիւնը չէ ոչնչանում։ Կան շատ ճիւղեր, որոնց մէջ մեքենան կամ դեռ ամենեւին մուտ չէ գործել, կամ մուտ է գործում չափազանց դանդաղօրէն։ Այդ ճիւղերում ահա արհեստները դեռ կը մնան երկար, շա՛տ երկար։ Բացի այդ, արտադրական բոլոր այն ճիւղերը, ուր պէտք է գործ ունենալ մարդու անհատական ճաշակի հետ, այդ ասպարէզներից էլ արհեստը երբէք չի վերանայ, որքան էլ կատարելագործւեն մեքենաները, որքան էլ նրանք էժան արտադրեն։ Այսպէս, կօշկակար արհեստաւորը չի վերանայ, որքան էլ մեքենան զարգանայ. չեն վերանայ նաեւ դերձակները, գլխարկ կարողները (կանանց համար) եւայլն, որովհետեւ մեքենան անընդունակ է անհատների ճաշակներին բաւարարութիւն պատճառել, իսկ արհեստաւորը կարող է։

Այսօր արհեստաւորութեան թիւր նոյն իսկ Անգլիայի նման մի յառաջադէմ երկրում, չէ վերացել։ Նա կայ և Ֆրանսիայում, և՛ Գերմանիայում և՛ ամէն տեղ։ Ճշմարիտ է, Եւրոպայում արհեստաւորն ընկել է և դեռ շարունակում է ընկնել կապիտալիստի ճանկերի մէջ, աշխատել արտաքուստ ինքնուրոյն ձեւով, բայց ներքուստ՝ կախւած լինել դրամատիրոջ ամենազօր կամքից։ Սակայն, չնայելով այդ բոլոր պարագաներին, արհեստաւորութիւն դեռ կայ և դեռ երկար կը դիմանայ նոյն իսկ առաջընթաց երկրներում։ Իսկ այն յետամնաց երկրներում, ուր ապրում է Հայ ժողովուրդը, արհեստաւորութիւնը կազմում է քաղաքների ազգաբնակութեան խոշորագոյն խաւերից մէկը։ Այդ պատճառով՝ ամէն մի քաղաքական կուսակցութիւն, որ իրեն յայտարարել է աշխատաւորութեան շահերի պաշտպան, պէտք է մօտենայ աշխատաւորներին, կազմակերպէ նրանց իրենց իսկ դասակարգային շահերի տեսակէտից.

պարզաբանէ նրանց շահերը, հասկացնէ, որ այդ շահերը կարող են յաջող լուծում ստանալ միմիայն ընկերվարական կարգերում, ընկերվարական ձեւով...

Տան ծառաները եւս պէտք է հաշւել աշխատաւորների բանակի մի մաս։

Շատ բան չկայ ասելու հասարակական այդ խաւի մասին։ Նրանք գոյութիւն են ունեցել հին դարերից սկսած, միայն զանազան ձեւերով։ Նախ նրանք ընտրւում էին ստրուկներից, ապա ճորտերից և վերջն էլ ազատ վարձւորներից։ Նրանք էլ աշխատաւորներ են, ինչպէս միւս բոլոր աշխատաւորները, միայն թէ նրանց մշտական կենակցութիւնը տէրերի հետ, այն՝ որ նրանք մշտապէս տէրերի աչքի առջեւն են, նրանց հրամանից կախուած նոյն իսկ գիշերները, այդ և մի քանի այլ նուրբ, հոգեբանական հանգամանքներ այլակերպում, փչացնում են աշխատաւորական այդ խաւի նկարագիրը. Գողութիւնը, խորամանկութիւնը, քծնութիւնը, սուտը և կեղծիքն այնքան չեն տարածուած ոչ մի աշխատաւորական խաւի մէջ, որքան այս խաւում։ Այդ պատճառով էլ կուսակցական կամ անկուսակցական որ և է կազմակերպութիւն նրանց մէջ մտցնելու պահուն՝ պէտք է լինել չափազանց շրջահայեաց, ըզգուշաւոր։

Աշխատաւորութեան մէջ պէտք է համարել նաեւ պետական ստորին պաշտօնեաներից այնպիսիներին, որոնք ազատ վարձւորներ են, ինչպէս երկաթուղիների, պօստ-հեռագրատուների և այլ հաստատութիւնների ծառաները և ստորին պաշտօններ վարողները։ Պետութիւնը հանդիսանում է մի հսկայական կապիտալիստ, որ կեղեքում է այդ ողորմելիներին, յաճախ խաբելով նրանց մի երկու փայլուն կոճակներով և մի ողորմելի համազգեստով։ Այդ տեսակ պաշտօնեաների ստացած ռոճիկը հազիւ թէ հասնի բանւորների ստացած օրավարձին, յաճախ նրանց ստացածն աւելի նուազ է, քան բանւորի եկամուտը։ Բացի այդ, որանք էլ հանդէս են գալիս իբր անմիջական կեղեքողներ, որոնց յաւելեալ արժէքը իւրացնում է ամենախոշոր կապիտալիստը, ներկայիս պետութիւնը։

Վերջապէս՝ աշխատաւորների թւում են նաեւ առեւտրական, բանկային և այլ հաստատութիւնների գործակատարները, գրագիրները, հաշւապահները եայլն։

Աշխատաւորական այս խաւն անպայման կարեւորագոյն խաւերից պիտի լինի մեզ, Հայերիս համար, որովհետեւ այդ խաւը բաղկանում է մտաւորական և կիսամտաւորական տարրերից, որոնք կարող են շատ յաջողակ տարածողներ լինել քաղաքական և կուսակցական համոզումների, հանդիսանալ իբր ժրաջան բանւորներ կուսակցական կազմակերպութեան շէնքի կառուցման։ Այդ տարրերն են մանաւանդ հայերիս մէջ այն բոլոր ուժերը, որոնք ազատ արհեստների մէջ զբաղում չեն գտնում։ Այսօր գրական, ուսուցչական, բժշկական և իրաւաբանական ասպարէզներից յետոյ, ամենից աւելի մտաւորական տարրեր կարող ենք գտնել այդ խաւի մէջ։

Դրանք ամբողջովին հանդիսանում են աշխատաւորներ։ Բանկերը, վաճառականը, գրասենեակի տէրը նրանց ծառայեցնում, նրանց աշխատեցնում են և, վճարելով յաճախ մի չնչին գումար ամսական, նրա աշխատանքի իրական արժէքից մնացած յաւելեալ արժէքը նետում են իրենց անյատակ գրպանը։ Ուրեմն՝ սրանք ունեն վարձու բանւորի բոլոր յատկանիշները։ Սրանց կարելի է կոչել աւելի կրթուած բանւորներ։

Սակայն այդ գործակատարութիւնը մի միապաղաղ զանգուած չէ։ Նրանում գոյութիւն ունեցող զանազանութիւնն այնքան փոքր, այնքան չնչին չէ, որքան դա գործարանային կամ հանքային բանւորութեան մէջ։ Այստեղ, խաւի ներսում, վիճակների տարբերութիւնը երբեմն այնքան է մեծանում, որ հասարակ քանակական խնդիրը, ինչպէս մի այլ առիթով սրամտօրէն նկատում է գերմանացի փիլիսոփայ Հէգէլը, վեր է ածւում որակի հարցի. քանակական տարբերութիւնները կուտակւելով, փոխում են իրի որակը։

Գիտեմ, առաջին հայեացքից այդ միտքը տարօրինակ, անմիտ կը թւայ։ Ինչպէս, որքան կուզես աւելացրու քարի կամ աղիւսի, փայտի ու երկաթի քանակը, բայց նա տուն չի դառնայ. նա կը մնայ նոյն քարը, նոյն աղիւսը, փայտն ուերկաթը, միայն առաջ քիչ էր, այժմ շատ կը լինի: Սակայն որոշ չափի շարժումը, ինչպէս յայտնի է ֆիզիկայից, դառնում է ձայն կամ լոյս. մի այլ չափը, դառնում է տաքութիւն, էլէքտրականութիւն և այլն:

Այդ նոյն երևոյթը յաճախ նկատւում է նաև մարդկային հոգեբանութեան մէջ: Երբ մի գործակատար ստանում է մի վաճառականի մօտ չնչին տարեկան ռոճիկով, նա կամ լինում է անգիտակից էակ, կամ, եթէ մի քիչ գոնէ ինքնագիտակից է, դժգոհ է լինում իր վիճակից և, մանաւանդ, տիրոջ կեղեքումից: Իսկ երբ նոյն գործակատարը կամաց-կամաց բարձրանում է գործակատարական սանդուխքով դէպի վեր. երբ նրա ռոճիկը մեծանում, բաւական խոշոր չափերի է հասնում թէ տարիների յառաջացման և թէ, մանաւանդ, իր ճարպկութեան ու այլ պարագաների շնորհով. այն ժամանակ նախկին դժգոհ գործակատարը, որի շահերը հակադիր էին տէրերի շահերին, դառնում է ինքնագոհ, տէրերի շահերի ջերմ պաշտպան, որովհետև նկատում է, որ իր և տէրերի շահերն այժմ այլևս հակադիր չեն. ընդհակառակը, եթէ ինքն այժմ հեռանայ ներկայ տէրերից, ոչ մի տեղ այդքան խոշոր ռոճիկ կամ այդքան խոշոր $^0/_0$-ներ չէ կարող ստանալ:

Նման երևոյթներ հազւադէպ չեն գործակատարական ասպարէզում: Այդ հանրային խաւի անդամներից շատերն այնպիսի ռոճիկներ են ստանում, որ յաճախ ձուլւում են գործատէր կապիտալիստների հետ, զգալով իրենց և նրանց շահերի զուգահեռական լինելը: Այդ պատճառով էլ՝ գործակատարութեան մէջ պրօպագանդ մղող, այսինքն կազմակերպութիւն մտցնել ջանացող մարդիկ պէտք է մեծ զգուշութիւն գործ դնեն, որ բուրժուանման գործակատարները, դիմակաւորւելով զանազան սկզբունքներով, չսողոսկին ներս և քայքայման սերմը հետները բերեն: Նրանք յաճախ մտնում են գործում ընկերվարական նոր ու խամ կազմերի մէջ և գործատէրերի ձեռքում ծառայում իբր պրօվակացիօն առաջացնող գործակալներ, վիժել տալով գործադուլներ, բօյկօտներ և այլն:

Մենք աւելորդ ենք համարում կանգ առնել զանազան-

ների, բեռնակիրների և այլ տեսակի աշխատաւորական տարրերի վրայ, որովհետև նրանց աշխատաւոր լինելն անպայման ընդունելի է բոլորի կողմից. բացի այդ, նրանք այնքան էլ խոշոր և ազդեցիկ դեր խաղացող տարրեր չեն աշխատաւորական հսկայական բանակի մէջ:

Մտաւորականութիւնը և իր դերը. — Հասարակական երկու խոշոր դասակարգերը — բուրժուազիան և աշխատաւորութիւնը — կանգնած են իրար դէմ: Դրանք երկու բանակներ են, որոնց գիտակից, իրենց սեփական շահերն ու իրաւունքները ճանաչող մասերը մշտապէս կռւապատրաստ, մշտապէս մարտնչող, ձգտում են որոշ իդէալների, որոշ հասարակական կարգի. իսկ բանակների մեծագոյն մասը, երկուստեք էլ, դեռ խարխափում են անգիտակցութեան և անկազմակերպ, քաոսական վիճակում:

Բայց դրանցով, այդ կեղեքողների և կեղեքւողների բանակներով չէ սպառւում մարդկային հասարակութիւնը, մանաւանդ նրա այսօրւայ կազմը: Մի քիչ ուշադիր դիտողի աչքին կընկնի անհատների մի երրորդ խումբ, որ իր էութիւնով նման չէ նախընթաց երկու բանակներից և ոչ մէկին:

Այդ նոր խումբն աշխատաւորի բնորոշ յատկութիւններ չունի, որովհետև նա նիւթական բարիքներ ստեղծող չէ, նա չէ կարում կօշիկներ, զգեստ, նա չէ կերտում կահ-կարասիներ, չէ կառուցանում տներ և այլն: Մէկ խօսքով, նրա դերը ներկայիս նիւթական հարստութիւնների ստեղծման գործում աննշմարելի է առաջին նայւածքից:

Սակայն նա կապիտալիստ, գործատէր, նախաձեռնող էլ չէ, ոչ էլ դրամի տոկոսով կամ հողի րէնտայով ապրող: Մի խօսքով, նա դուրս է ներկայումս գոյութիւն ունեցող զուտ տնտեսական որակումներից:

Բայց նա դեր ունի մեր կապիտալիստական հասարակութեան մէջ, խիստ յատուկ և շատ կարևոր մի դեր: Նա աշխատում է թերևս երբեմն շատ աւելի, քան բանւորն ուգիւղացին, սակայն նրա աշխատանքի արտադրոյթը մնում է աննկատելի, որովհետև նրա արտադրածն ամենից կարեւորին է, բոլոր նիւթական հարստութիւնների նախապայմանը — գաղափարը:

Նա է, որ կարդալ-գրել է սովորեցնում մեր մանուկներին, նրանց զարգացնում, պիտանի, կեանքի կռւի համար յարմարւած քաղաքացի դարձնում. Թւաբանութիւն, պատմութիւն, բնական գիտութիւններ ու լեզուներ սովորեցնում: Նա է, որ կրթում է ժողովուրդն իր գրւածքներով, իր գրքերով, իր լրագիրներով: Նա է, որ գծում է, թղթի վրայ պատկերացնում տունը, գործարանը, երկաթուղին, շոգենաւը, նախ քան նրանց գոյութիւն առնելը, նախքան նրանց էանալը: Նա է, որ բուժում է ձեր հիւանդ անասուններին ու մարդկանցը: Նա է, որ պաշտպանում է ձեր արդար իրաւունքները ներկայ պետութեան դատարանների առջեւ: Նա է, որ պահում է ձեր հսկայական հաշիւները բանկերում, կատարում ձեր անվերջ գրագրութիւնները եւայլն, եւայլն: Մէկ խօսքով նա մտաւորականութիւնն է, ինտիլլեգենցիան:

Արդեօք ո՞ր դասակարգից է նա: Ոչ մէկից, այլ բոլոր դասակարգերից: Հասարակական բոլոր դասակարգերն էլ առատօրէն նետում են իրենց լուման այդ հանրային միջին խաւի մէջ: Սրա անդամները դուրս են գալիս բոլոր խաւերից. սկսած լումպէն պրոլէտարիատից (ցնցոտիների պրոլէտարիատ), սկսած բանւորութեան ամենախոնարհ շերտերից, մինչեւ բուրժուազիայի, հողատէրերի և հոգեւորականութեան ամենաբարձր ու հարուստ շերտերը մասնակից են լինում նրա կազմակերպմանը. իրենց անդամներից այս ու այն անհատները, որոշ պայմանների բերմունքով, հեռանում են իրենց դասակարգերից, աքսորւած կամ կամովին ընկնում են մտաւորականութեան մէջ:

Մտաւորականութիւնը մի դասակարգ չէ, այլ մի միջդասակարգային մեծութիւն: Նրա մէջ են բժիշկները, փաստաբանները, ճարտարապետները, էնժէնեօրները, երգիչները, նկարիչները, ուսուցիչները, գրողները, հրապարակագիրները

եւայլն, եւայլն, մի խօսքով, այն բոլոր մտաւոր տարրերը, որոնք միաժամանակ չեն հանդիսանում որ և է գործարանի, արհեստանոցի կամ այլ ձեռնարկութեան տէր: Օրինակ, մի ճարտարապետ, քանի դեռ վարձւում է, որպէսզի հսկէ բանւորների վրայ, նկարէ տան, եկեղեցու կամ գործարանի յատակագծերը, կառուցանել տայ նպատակադրւած շէնքը, — նա հանդիսանում է մի աշխատաւոր, մի մտաւոր տարր բոլոր միւս աշխատաւորների թւի մէջ, թէև տարբեր նրանցից իր որակով: Սակայն եթէ այդ նոյն ճարտարապետը կապալով վերցնէ կառուցանելու նոյն նախագծւող շէնքը, այլ եւս նա չէ մնում աշխատաւորի դերում, այլ դառնում է ձեռնարկող, կապիտալիստ կամ կեղեքող, նա պէտք է բանեցնէ բանւորներ ու վարպետներ և նրանց յաւելեալ արժէքներով հարստանայ: Կարող է պատահել, որ նոյն իսկ ունեցածը կորցնէ. բայց այն րոպէին, երբ նա հանդիսանում է նախաձեռնող, նա արդէն իսկ ծրագրում է իր մտքում բանեցնել բանւորներ ու վարպետներ, նրանց քիչ օրավարձ տալ, իսկ կապալադրամի աւելորդ մասը նետել իր գրպանը՝ հարստանալու յոյսով:

Մտաւորականութեան մէջ, ինչպէս և միւս դասակարգերում, մենք նկատում ենք բաղկացուցիչ անհատների վիճակի անհուն տարբերութիւններ: Այդ տարբերութիւններն այս դասի կամ այս հանրային խաւի մէջ երբեմն խիստ ակնառու, խիստ բողոքող ձեւ ունեն: Այստեղ մենք տեսնում ենք մի ծայրում կանգնած մի աղքատ գրագէտ, մի օրագրող, մի նախկին ուսուցիչ, այժմ գործի անընդունակ, ընկած նիւթական ծայրայեղ կարիքի մէջ, ապաւինած այս ու այն գիշերային ապաստանը, նետւած բոկոտների շարքերը... Իսկ դրա դիմաց բարձրանում է մի «յայտնի» բժշկի կամ փաստաբանի չաղլիկ կամ գիրուկ դէմքը, ինքնաբաւական կերպարանքը, մատերից մէկի կամ միւսի վրայ նազելիօրէն նստած փայլատակող մատանին, կուրծքից կօֆէսսօրէն կախւած ոսկէ ժամացոյցն ու շղթան, գրպանը միշտ ոսկով լի, իսկ բանկերում պահւած իր արժէթղթերը եւայլն...

Հասարակական հարստութեան սանդուխքի գրեթէ բոլոր ատիճաններին համապատասխանող տիպեր կը գտնէք դուք այս հասարակական խաւի մէջ։

Ներքին ծայրում հաւաքուած են մտաւորականութեան խեղճ մասը, նրա զրկուածները, իսկական մտաւոր պրօլէտարիատը։ Դրանց մէջ են լրագրական աշխատողներ, գրասենեակների գրագիրներ, հաշուապահներ, թղթակիցներ, ժողովրդական դպրոցների ուսուցիչներ, իրաւաբանների օգնականներ եւայլն։ Այնուհետեւ գալիս են աւելի և աւելի նպաստաւոր ռոճիկ ստացողներ, աւելի և աւելի նպաստաւոր դիրքերի տիրացածներ, մինչեւ որ կը հասնեն տարեկան մի քանի հազար ոսկի վաստակող բժիշկները, փաստաբանները, էժէնեօրները եւայլն։

Մտաւորականութեան մի մասը, որ կարող է կոչուել մտաւոր պրօլէտարիատ, իր նիւթական և հոգեկան վիճակով շատ մօտ է կանգնած բանուոր և գիւղացի աշխատաւորութեան։ Վիճակի այդ մօտիկութիւնը և մտաւոր աւելի բարձր պատրաստութիւնը նրան դարձնում են մեծ մասամբ ընկերվարական բանակի անդամ, ջերմ գործակից և ղեկավար. տանում են նրան բռնել աշխատաւորի կողմը այն ահաւոր մարտում, որ կոչւում է կապիտալի և աշխատանքի կռիւ։

Մտաւորականութեան վերին, հարուստ շերտերը նիւթապէս այնքան են ապահովուած, նրանց շահերն այնքան են սերտօրէն հիւսուած ներկայ հասարակութեան բուրժուական հարուստ և կեղեքիչ տարրերի շահերի հետ, որ նրանց համար անպայման ցանկալի և օգտակար է պահպանել ներկայիս հասարակակարգը, ուր բարձրագոյն իշխում է նիւթական հսկայական անհաւասարութիւնը։ Իսկ նախընթաց խմբի — մտաւորականութեան աղքատ մասի համար, ընդհակառակը, ցանկալի է օր առաջ քանդել գոյութիւն ունեցող հասարակակարգը, օր առաջ ստեղծել եթէ ոչ իսկական ընկերվարական մի հանրութիւն, այլ գոնէ մի այնպիսի հասարակութիւն, որի մէջ նիւթական դրութիւնների անհաւասարութիւնը չլինէր ա՛յնքան վրդովեցուցիչ, ա՛յնքան անարդար, մինչեւ երկինք բողոքող։ Նրանցից մէկի համար ներկայ կարգն իր բոլոր անարդարութիւններ-

րով բաղձալի է, թէեւ քննադատելի այս կամ այն մանրամասնութեան մէջ. իսկ միւսի համար՝ ներկայ կազմի սկզբունքն իսկ խոտելի է, անարդար։

Նրանցից մէկը, ինչպէս ասացինք, մտաւոր պրօլէտարիատն է, բանուորի վիճակակից եղբայրը։ Եթէ նա իսկական բանուորը չէ, որովհետեւ ֆիզիքական աշխատանք չէ կատարում, ուրեմն նրա եղբայրն է, որովհետեւ կատարում է ուղեղային, աննիւթ հարստութիւն արտադրող աշխատանք։ Եթէ մի օր, մի շաբաթ, մի ամիս անգործ մնայ, բանուորի նման նա էլ կը դառնայ գործազուրկ, հացազուրկ, սովի ճանկերում դեգերող։ Նրա և բանուորի մէջ գոյութիւն ունեցող տարբերական տարրը միայն արտաքուստ է տարբեր, ներքուստ երկուսն էլ միեւնոյն բանն են նրանք։

Եւ յիրաւի, ի՞նչ է աշխատանք։ Աշխատանքը մկանների, նեարդերի և ուղեղի մասնիկների շարժումն է, նրանց դրսեւորուած եռանդը։ Չկայ ոչ մի զուտ դնդերային կամ մկանային աշխատանք։ Մաթեմաթիքօրէն մտածելով, ամէն մի ֆիզիքական աշխատանք, ուր, մեզ թւում է թէ մասնակցում են միայն դնդերներն ու ոսկրները, անպայման կրում է իր մէջ և՛ նեարդերի, և՛ ուղեղի մասնակցութիւն։ Մարմինը մի այնպիսի միաձոյլ մեքենայ է, որի մէջ ոչ մի մաս չէ կարող մի մազաչափ շարժում անել, առանց ուղեղի այս կամ այն մասի մասնակցութեան։ Կան մշտական շարժումներ — սրտի, ստամոքսի, աղիքների, արիւնատար անօթների պատերի, — որոնք թւում են ընազդական, ինքնաշարժ, մեքենական, բայց նրանք էլ ունեն իրենց ղեկավար յատուկ նեարդերը, որոնք իրենց կարգին, միացած են կամ գլխի, կամ մէջքի ուղեղի այս ու այն մասերի հետ։ Աշխատանքներից մի քանիսը պահանջում են ուղեղի աւելի մեծ մասնակցութիւն, աւելի մեծ գործունէութիւն, այսինքն ուղեղային, նեարդային և ապա մկանային և ոսկրային մասնիկների շարժում, իսկ ուրիշ տեսակ աշխատանքների մէջ աւելի գերակշռող են մկանների, ջղերի ու ոսկրների մասնիկների շարժումը. ուղեղի մասնակցութիւնը կայ, բայց նուազ է, ինչպէս առաջին տեսակի մէջ նուազ էր մկանների դերը։ Երկրորդ տեսակը կոչւում է ֆիզիքական աշխատանք, առաջինը — մտաւոր։ Երկրորդ տեսակն ակներեւ է, կատարւում է ակնբախ ձեւով. կարելի է հնարել մի ուժաչափ գործիք եւ հաւաքել այն բոլոր եռանդը կամ էներժին, որ թափւում է, օրինակ, մի երկրագործ, մի կոշկակար կամ մի դարբին։ Այդ տեղ էլ, ի հարկէ, սկզբներում աւելի հնարաւոր կը լինի չափել միայն մկանների ու ոսկրների դերը. ուղեղի կատարած աշխատանքը դեռ երկա՛ր ժամանակ կը մնայ անչափելի մարդկային գիտութեան համար։ Իսկ առաջին տեսակ կամ մտաւոր աշխատանքը չափելու գործիք հնարելը դեռ չա՛տ անհաւանական, չա՛տ հեռաւոր է թւում մեզ ներկայումս, թէեւ ոչ անհնարին։ Վերջապէս մարդկային հասարակութիւնների դարեւոր փորձերը բերել են մեզ այն եզրակացութեան, որ ֆիզիքական աշխատանքը կարելի է չափել ժամանակով։ Օրինակ, 4 ժամ դերձակի աշխատանքը հաւասար է ընդունւում 4 ժամւայ դարբնի, 4 ժամւայ կոշկակարի, 4 ժամւայ ատաղձագործի եւ այլ արհեստաւորների աշխատանքի, եթէ դրանք բոլորն էլ ա) աշխատում են բարեխղճօրէն, բ) կանգնած են միեւնոյն կուլտուրական բարձրութեան վրայ, այսինքն մէկը չէ աշխատում անդրջրհեղեղեան գործիքներով, միւսը էլէքտրական մեքենայով։ Մարքսի արժէքների գնահատումը հիմնւած է զանազան աշխատանքների այս նոյնացման կամ հաւասարեցման վրայ։ Սակայն այդ հաւասարեցումը հնարաւոր չէ ներմուծել. օրինակ. ուսուցչի, գրողի, բժշկի եւ մի պատ շարող կամ որմնադիր բանւորի աշխատանքների մէջ։ Ուսուցչի կամ գրողի, բժշկի կամ ճարտարապետի մի ժամւայ մտաւոր աշխատանքը չա՛տ աւելի մաշող, չա՛տ աւելի եռանդ արտադրող է, քան որ եւ է ֆիզիքական աշխատանքի մէկ ժամը։ Եւ դեռ այստեղ մենք կանգ չենք առնում տաղանդի ու հանճարի արտադրութիւնների, նրանց աշխատութիւնների գնահատման կնճռոտ խնդրի վրայ։

Աշխատանքների չափելու այս դեռ եւս անլուծելի մնացած հարցերն են, որ առաջ են բերում անտեսական գիտութեան եւ դասակարգերի բաժանման ու նրանց մէջ հարստութիւնների բաշխման բոլոր դժւարութիւնները։

Մեր քննութեան առած հարցի մէջ էլ առաջին դժւարութիւն է ներկայացնում մտաւորականութեան աշխատանքի չափի եւ նրա արդար գնահատման հարցը։ Եթէ այդ չափն իմանալը հնարաւոր լինէր, այն ժամանակ աշխատաւոր եւ մտաւորականութիւն բառերն իսկ աւելորդ կը լինէին անտեսական գիտութեան տեսակէտից. երկուսն էլ կը ձուլէին մէկ բառի մէջ, որովհետեւ մտաւորականութեան մի մասը կը դիտւէր իբր իսկական աշխատաւորութիւն, իսկ միւս մասը՝ — իբր իսկական բուրժուա։

Մտաւորականութեան վերին, հարուստ շերտերը, ինչպէս ասացինք, իրենց հանրային դիրքով եւ շահերով, խառնւում են ներկայումս տիրող կեղեքիչ դասակարգերին։ Այդ պատճառով Վ. Զոմբարտ գերմանացի պրօֆէսորը մտաւորականութեան այդ մասը կոչում է բուրժուազօիդներ կամ բուրժուանմաններ: Սակայն Զոմբարտի այդ բառը չատ յաջող կերպով արտայայտում է մտաւորականութեան միայն վերին շերտերից մի մասի պատկերը. — նրանց, որոնք բաւարար եկամուտներ կամ ռոճիկներ ստանալով (որոնց մէջ նաեւ պաշտօնէութեան մի չատ խոշոր մասը), ապրում են բուրժուաների պէս, մտածում նրանց ձեւով, չափւում նրանց արշինով։ Իսկ այն մասը — թէ մտաւորական եւ թէ պաշտօնեայ, — որ իր եկամուտի աւելացած մասը դնում է կամ բանկերի մէջ կամ գետեղում է այս ու այն շահաւոր բաժնետիրական ձեռնարկութիւնների մէջ, ինչ ասել կուզէ, արդէն այլեւս բուրժուանրման չէ, այլ ուղղակի բուրժուա է։

Մեծ է, չա՛տ մեծ մտաւորականութեան դերը ներկայ հասարակութեան մէջ։ Թէ հին հայեացքների, թէ հին կարգերի պահպանման տեսաբանները դուրս են գալիս մտաւորականների շրջանից։ Սակայն նոյն այդ խաւից են ծնունդ առնում ներկայ ախտաւոր հանրակարգի ամէնից կատաղի, ամէնից տաղանդաւոր քննադատները. ապագայ հասարակութեան, նոր հանրակարգի սկզբունքների յայտնագործողները, նրանց ջատագովները, նոր եւ լուսաւոր ապագայի քարոզիչները, ընկերվարութեան պրօպագանդիստները նոյնպէս ծնունդ են առնում նոյն այդ մտաւորականութիւնից։

Մեր ուսումնասիրութեան ծաւալը մեզ թոյլ չէ տալիս աւելի երկար կանգ առնելու այդ մասնաւորական խնդրի վրայ. ով ուզում է աւելի մօտից, աւելի հիմնաւորապէս ծանօթանալ այդ խնդրի հետ, թող դիմէ Կ. Կաուցկու, Վ. Զոմբարտի, Իվանով-Րազումնիկի, Կօգանի և ուրիշների աշխատութիւններին յատկապէս այդ հարցի մասին:

Ամփոփենք մինչև այժմ III գլխում ասածները և զետեղենք մի տախտակի մէջ.

1. Բուրժուա դասակարգ
    - ա) Հոգևորականներ
    - բ) Հողատէրեր
    - գ) Կապիտալիստներ
        - a) Գործարանատէր
        - b) Հանքատէր
        - c) Արհեստանոցատէր
        - d) Առևտրական
        - e) Բանկային
        - f) Նաւային, երկաթուղային եւայլն.
2. Կիսաբուրժուական
    - ա) Խոշոր արհեստաւորներ
    - բ) Գիւղական բուրժուազիա
3. Աշխատաւորութիւն
    - ա) Պրոլէտարիատ
        - a) Գործարանային
        - b) Հանքային
        - c) Արհեստանոցային
        - d) Գիւղական
        - e) Երկաթուղային
    - բ) Մանր արհեստաւորութիւն
    - գ) Աշխատաւոր գիւղացիութիւն
    - դ) Ստորին պաշտօնեաներ
    - ե) Գործակատարութիւն
    - զ) Ծառաներ — տան, արհեստանոցների եւն.
4. Մտաւորականութիւն կամ ինտելլիգենցիա:

Խոշոր արտադրութիւնը.— Քննենք մի հարց էլ և ապա փակենք երրորդ գլուխը, անցնենք դասակարգերի նմանաքանական և տարբերիչ տարրերին:

Մի հարց յաճախ տնկւում է տնտեսական խնդիրներ ուսումնասիրողի առջև: Մեր պապերը, մեր հին նախնիքները մի՞թէ մեզանից աւելի երջանիկ չէին. Նրանք չունէին աշխատանքի և կապիտալի կռիւ, որ այսօր թունաւորում է հանրութեան հանգիստը, կլանում հանրութեան բոլոր դասակարգերի եռանդի հսկայական բաժինը. գործադուլ, բոյկոտ, միջնորդդատարան, լօկաուտ — սրանք բոլորը կռւի զէնքեր են: Իրար են կրծում աշխատաւոր և կեղեքող դասակարգերը: Ինչերի՞ս էր պէտք այդ խոշոր արտադրութիւնն իր պրոլէտարիատով, իր աշխատաւորութիւնով, իր միլիարդատէրերով: Այդ խոշոր արտադրութիւնն իր մեքենաներով, իր էլէքտրաշարժներով, շոգեշարժներով ու գազօմոտօրներով մեր մարդկային հասարակութիւնը բաժանել է երկու անհաշտ շերտերի — կեղեքւողների և կեղեքողների: Հին դարերում, «բարի ու երջանիկ հին օրերում» էլ եղել են կեղեքողներ և կեղեքւողներ, բայց ա՛յնքան չարիք, ա՛յնքան թշւառութիւն գոյութիւն չեն ունեցել: Այսօր աշխատաւոր մեծամասնութեանը բաժին է ընկել և՛ դառն աշխատանքը, և՛ դրա հետ միասին, աղքատութիւնը, թշւառութիւնը, սովը, տգիտութիւնը, ցընցոտին: Նա է ստեղծում ներկայիս հարստութիւնները. յաճախ նրա իսկ ստեղծած արժէքները կուտակւում, ամբարւում են, մնում առանց գնողի, իսկ իրենք, այդ հարստութիւններն իրենց աշխատանքով ստեղծագործողները կարիք են ունենում այդ նոյն հարստութիւններին, մնում են առանց նրանց, բայց թոյլ չէ տրւում նրանց միանալու, թոյլ չէ տրւում բանւորին սպառելու իր իսկ ստեղծագործած հարստութիւնը և կեանքից գոհ ապրելու: Մի աննշմարելի պատ բաժանում է նըրանց — մասնաւոր սեփականութեան իրաւունքը: Եւ եթէ մեծամասնութիւն կազմող աշխատաւորութիւնը, երբեմն ըմբոստանալով, համարձակւում է գիտակցութեան գալ, գրոհ տալ իր ստեղծած հարստութիւնների վրայ և գործ ածել, այն ժամանակ ահա հոգևորականն առաջ է գալիս իր Խաչով ու Աւետարանով, իր դժոխք ու դրախտով, իր «դարևոր» սրբութիւններով. բուրժուան գալիս է իր պետութեան զօրքովն ու ոստիկանութիւնովը, իր թնդանօթովն ու գնդացիրովը… Ճզմում, ջարդ ու փշուր են անում ըմբոստացած ապստամբներին և մրրկած ծովը նորից քշում իր ափերի կուռ ժայռերի մէջ:

Աշխատաւոր մեծամասնութեան բաժինը միայն քաղցածութիւնը չէ: Նա տգէտ է, խաւար: «Գողն ինչ կուզէ,» հարցնում է ժողովրդական առածը և պատասխանում — «մութ գիշեր»: Կեղեքողներն ինչ կուզեն: Խաւար ամբոխ, տգէտ աշխատաւոր: Որքան տգէտ լինեն, որքան ստամոքսի բեռի տակ ճզմուած, այնքան լաւ, այնքան ապահով են ըզգում իրենց կեղեքողները, աշխարհի զօրաւորները:

Ու ստեղծել են նոյն իսկ յատուկ բառեր այդ մտքերի համար, որ մենք ամէն օր գործ ենք ածում և ամենևին չենք վրդովւում: «Ժողովրդական դպրոց», այսինքն մի դպրոց, ուր հազիւ մի քիչ գրել-կարդալ, մի քիչ հաշուել և հետն էլ մեծ քանակութիւնով կեղծ աստուածպաշտութիւն են սովորեցնում, շնական հնազանդութիւն և համակերպութիւն ներարկում մանուկների մատղաշ հոգիների մէջ և ապա նետում փողոց: «Ժողովրդական» դպրոց է, դրանից աւելի սովորեցնելու իրաւունք չկայ ժողովրդի զաւակներին. եթէ բոլորը միջնակարգ և բարձրագոյն կրթութիւն ստանային, էլ ո՞վ պիտի աշխատէր, էլ ո՞վ պէտք է հնազանդուէր. չէ՞ որ կրթուած, լուսաւորուած անհատներին այնքան դիւրին չէ ստրկացնել, հնազանդութեան մէջ պահել:

Տգիտութեան հետ միասին բանւոր դասակարգի մէջ խոշոր չափով արմատ է բռնում և անբարոյականութիւնը, սեռական անընտրականութիւնը: Մեքենան, դիւրացնելով ֆիզիքական աշխատանքը, գործարան, արհեստանոց և հանքեր քաշեց կիներին ու երեխաներին էլ: Այդ երևոյթը մի կողմից պատճառ դարձաւ այր մարդկանց օրավարձի անկման, իսկ միւս կողմից աճեցրեց անբարոյականութիւնը: Կիսամերկ այրեր ու կիներ, մանուկներ և երիտասարդ աղջիկներ աշխատում են կողք-կողքի, գետնի գրկում, հանքերի կիսախաւարի մէջ, հսկայական գործարաններում կամ մենաւոր արհեստանոցներում: Սեռական ընդհանուր արիւնախառնութիւնը, անմաքրութիւնը և այլ բազմաթիւ պատճառներ կուտակւում, ֆիզիքապէս քայքայում են բանւոր-բանւորուհիների հոծ բազմութիւնը: Բանւորական օրէնսդրութեան ծայրայեղ ոչնչութիւնը գալիս է աւելացնելու թոքախտաւորների, կոյրերի, խուլերի, ամէն տեսակ հիւանդութիւններով հիւծւողների բանակը: Օր օրի վրայ մեծ ու հսկայական չափեր առնող գործարանները ու նրանցում գործող դժոխային բարդութեան հասած մեքենաները տարէց տարի դուրս են վիժում կտրւած թևով, ջարդւած ոտով, պոկւած մատով, խեղաթիւրւած, անդամահատւած ու այլանդակւած աշխատաւորների խոշոր թւեր: Ոչ բանւորների ախտաւոր ապահովագրութիւնը, ոչ բուրժուայի և հոգևորականի ստորացուցիչ բարեգործութիւնը, ոչ էլ բուրժուական պետութեան արգելակիչ օրէնքները չեն կարողանում զսպել ներկայի խոշոր արտադրութեան առաջ բերած այդ հսկայական վնասները:

Եւ քայքայւում, ուժասպառւում է աշխատաւորութիւնը, եթէ նա ինքն իր գլխի ճարը չտեսնէ:

Իսկ ինչ է կանգնած այդ տառապող մարդկային մեծամասնութեան դիմաց: Հարուստների, երջանիկների, կուշտ մարդկանց մի մեծ խումբ, որ իր ձեռքն է առել իրաւունքը, օրէնքը, պետութիւնը ու նրա կազմակերպւած ուժը: Դատել, աշխատել ու տքնել է տալիս նա մարդկութեան խոշոր մեծամասնութեանը, աշխատողին թողնում իր աշխատածի, իր արտադրոյթի մի չնչին մասը — ճիշտ այնքան, որքան անհրաժեշտ է ապրելու, սովից չմեռնելու համար, իսկ մնացած բոլոր արտադրոյթը լցնում է իր անյատակ գրպանը: Հարստութեան այդ ահագին կուտակումը փոքրամասնութեան ձեռքում՝ հնարաւոր է դարձնում այդ փոքրամասնութեան համար աշխարհի բոլոր վայելքները: Ուրախութիւն, զւարճութիւն, կեր ու խում, գեղեցկութեան բոլոր-բո՜լոր տեսակների միատեղ վայելում — սկսած բնութեան հմայքներից, սկսած արւեստի բոլոր հրաշալիքներից, մինչև կանանց գեղեցկութիւնը, որ դառել է վաճառքի առարկայ:

Ուրեմն՝ մի կողմում, հասարակութեան մի բևեռում հաւաքուած են ծայրայեղ աշխատանքը, թշուառութիւնը, կեղտը, որ ուժասպառում, քայքայում են աղքատ խաւերի հոգին ու մարմինը. իսկ միւս բևեռում կուտակուած են աշխատանքի բացակայութիւնը, ամէն տեսակի վայելքներն ու տռփանքները: Մի ծայրում մարդիկ այլասերւում են չափազանց պակասութիւնից, միւս ծայրում այլասերւում, հիւծւում, փչանում են չափազանց առատութիւնից:

Եւ ահա ծագում է հարցը. ինչի՞ս էր պէտք այդ խոշոր արտադրութիւնը, երբ նա մայր է ա՛յդքան չարիքների, ա՛յդքան ոճիրների: Քանդենք ներկայի գործարանները, ջարդ ու փշուր անենք ներկայի հրէշ-մեքենաները, ինչպէս արին Անգլիայի ջուլհակ բանուորները XVIII դարի վերջերում, Կարտրայտի մեքենայի վերաբերմամբ... Յե՛տ, յետ դէպի անցեալը, դէպի բնական հաւասարասէր, արդար, թէև բարբարոս հասարակութիւնը:

Ժ. Ժ. Ռուսօն դրա նման մի ճիչ արձակեց, երբ Դիժօնի ճեմարանը մրցանակ դրեց, թէ արդեօք գիտութիւնների և արուեստների վերածնութիւնն օգո՞ւտ ունի մարդուն: Մի այդ ձևի ճիչ էլ արձակեց Ժօզէֆ-դը-Մէստրը իր « Soirés de st. Pétersbourg »-ներում, այն երեկոյեան պերճախօս դատախօսութիւններում, որ Սավօյայի չնչին թագաւորութեան տաղանդաւոր խօսող դեսպանը տալիս էր ցարերի մայրաքաղաքում Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան օրերին: Սակայն Ռուսօն հետևանքները դնելով պատճառների տեղ, ուզում էր կանգնեցնել իրերի բնական հոսանքը, իսկ Ժօզէֆ-դը-Մէստրը, լինելով կատաղի միապետական և անդրալեռնական, կոչ էր անում ժամանակակիցներին դառնալ դէպի յետ, դէպի բնական մարդկութիւնը, վայրենիներին էլ համարելով ոչ թէ բնական մարդիկ, այլ այլասերուածներ, Ադամի ստեղծած բնական վիճակից, իրենց մեղքերի պատճառով, վտարուած արարածներ:

Նոյնպիսի մի ճիչ մենք լսում ենք Ռուս գեղարուեստական հանճարի, բայց թոյլ փիլիսոփայի - Լև Տոլստոյի բերանից: Լուսաւորութիւնը վնասում, տխմարացնում է մարդկանց, ուղում է մինչև Տոլստոյն իր «Լուսաւորութեան պտուղները» թատերագրութեան մէջ: Մի հասարակ գիւղացի աղջիկ, բնական առողջ ուղեղի տէր մի աղախին «ձեռք է առնում» իր բոլոր «պրօֆէսոր» տանուտէրերին, նրա ուսուցչապետ, բժիշկ, փաստաբան հիւրերին, ծաղրում է նրանց հիպնոտիզմը, նրանց մանէտիզմը, մէսմէրիզմը եւայլն:

Յետ դէպի բնականը, դէպի առողջ բնութիւնը:

Այդ կոչն առաջին հայեացքից շատ գեղեցիկ, շատ մաքուր և, որ գլխաւորն է, ազնւական է երևում: Սակայն քննադատ մտքի առաջին շունչն իսկ գլխակործ է անում նրան:

Յետ դէպի սկզբնականը, դէպի բնականը: Էլ ինչո՞ւ էինք յառաջ գալիս, երբ յետ պիտի գնայինք:

Մենք մի կողմ կը թողնենք Ռուսօի, դը Մէստրի, Տոլստոյի և ուրիշների թէզերը և կը վերլուծենք միմիայն տնտեսական երևոյթը կամ, աւելի ստոյգ է, երևոյթի տնտեսական արմատները:

Որքան էլ հսկայական վնասների, չարիքների ու ոճիրների աղբիւր լինի կապիտալիստական կամ խոշոր արտադրութիւնը, մենք չենք կարող պահանջել նրա ոչնչացումը և դարձ դէպի մանր, դէպի նախակապիտալիստական արհեստաւորական տնտեսութիւնը կամ նրանցից էլ առաջ եկած բնատնտեսութիւնը: Ներկայի խոշոր կամ կապիտալիստական արտադրելակերպը նախապատրաստական մի անհրաժեշտութիւն է:

Պարզենք, թէ ինչու է այդ այդպէս:

Հին և միջին դարերում, երբ թագաւորում էր բնատնտեսութիւնը, ամէն մի տնտեսատէր արտադրում էր իր և իր ընտանիքի համար անհրաժեշտ բոլոր արժէքները: Նա իր ընտանիքով մշակում էր իր հողը, շինում էր իր սայլը, արօրն ու գութանը, խուզում էր ոչխարների բուրդը, թել մանում, շալ գործում, զգեստ կարում. իր ոչխարի մորթուց փափախ կարում, իր եզի կաշուց չարուխ կամ տրեխ շինում եւայլն եւայլն: Ամէն մի ընտանիք կամ տուն իր համար մի ուրոյն, մի փակ աշխարհ էր, որ յարաբերութիւն գրեթէ չունէր միւսների հետ: Եթէ որ և է գործածական արժէքի, որ և է իրի պէտք էր ունենում, — այնպիսի իրի, որ ինքն անկարող էր արտադրել, — իր ունեցած արժէնքներից տալիս և փոխարէնն ստանում էր այդ իրը հեռաւոր դրացիներից կամ պատահաբար անցնող առևտրականից:

Այդ ձևի տնտեսութիւնն է, որ կրում է բնատնտեսութիւն անունը:

Սակայն միևնոյն մարդը չէ կարող լինել միաժամանակ և լաւ երկրագործ, և՛ լաւ դարբին, և լաւ ատաղձագործ, և լաւ դերձա՛կ. և լաւ կօշկակար և այլն: Նրա արտադրածը կը լինի կոպիտ՝ արտադրական բոլոր ճիւղերում: Բացի կոպիտը, կը լինի նուազ, սակաւ. Նրա աշխատանքը չէ կարող լինել բազմարդիւն, խիտ կամ ինտենսիւ:

Մարդկութիւնը կանգ չէ առնում, նրա թիւն աճում է անընդհատ, չնայելով անվերջ պատերազմներին, մահերին, համաճարակներին: Եւ ահա աճող մարդկութեան առջև դրւում է մի երկընտրանք կամ մի դիլեմ. կամ պէտք է փոխել տնտեսութեան բնական սակաւարդիւն ձևը գտնել մի նոր տնտեսական արտադրաձև. աւելի արդիւնաւոր քան առաջինը. — և կամ պէտք է ոչնչացնել մարդկութեան աճեցողութիւնը և արդէն աճած մասը:

Ու մարդկային հասարակութեան մէջ առաջ է գալիս աշխատանքի հասարակական բաժանումը. ծագում են արհեստները: Արհեստաւորական մանր տնտեսութիւնը մի հսկայական յառաջդիմութիւն էր, համեմատելով բարբարոսական բնատնտեսութեան հետ: Ամէն մի մարդ, զբաղուելով մի արհեստով, արտադրական մի ճիւղով, և՛ աւելի ճարպիկ. աւէլի մասնագէտ է դառնում, և աւելի կատարելագործում է իր սեփական արհեստի գործիքները:

Ծնունդ առնելով միջին դարերի սկիզբներում, արհեստաւորական տնտեսութիւնը բաւարարութիւն էր պատճառում գոյութիւն ունեցող ժողովուրդին մինչև XIV, XV դարերը. Եւ X—XV դարն արհեստների ու համքարութիւնների ծաղկման շրջանն էր:

Կրկին աճում է մարդկութիւնը, կրկին եղած արտադրական մանր, արհեստաւորական ձևերը բաւարարութիւն չեն տալիս ուտող բերաններին, բազմացած անհատներին: Եւ մարդը կրկին կանգնում է նոյն երկընտրանքի առջև. կամ կոտորուել, սովամահ լինել, իջնել X—XI դարերի բնակչութեան թւին, կամ գտնել արտադրութեան մի այնպիսի ձև, որն աւելի արդիւնաբեր լինի, քան արհեստաւորական տնտեսութիւնը:

Ու մարդը հնարեց մանուֆակտուրական արտադրաձևը, որ անպայման աւելի արդիւնաւոր էր, քան արհեստաւորական-ընտանեկանը:

Այդ արտադրաձևն էլ կարողացաւ բաւարարութիւն տալ մինչև XVIII դարի կէսերը: Աճող մարդկութիւնն ստիպուած եղաւ հնարել խոշոր կապիտալիստական արտադրութիւնը, որպէսզի կարողանայ բաւարարութիւն պատճառել 1 միլիարդ և 600 միլիոնաչափ մարդ էակներին, որոնք մրջիւնների պէս վխտում են մեր երկրագնդի վրայ:

Պարզ է, ակներև. խոշոր արտադրութիւնը ճակատագրական անհրաժեշտութիւն է, այժմ այլևս անհնարին է բաւարարութիւն տալ գոյութիւն ունեցող մարդկանց աճած, նրբացած և բազմապիսի կարիքներին: Թէ մարդ անհատների թիւն է հասել ահագին չափերի և թէ կրթուած անհատների ու հասարակութիւնների պահանջներն են բազմապատկել: Այլևս ոչ բնատնտեսութիւնը, ոչ արհեստաւորական, ոչ էլ մանուֆակտուրական տնտեսութիւնը կարող են բաւարարութիւն տալ եղած մարդկութեան բոլոր տեսակի կարիքներին: Միակ արտադրաձևը, որի ժամանակ մարդու աշխատանքն ամէնից աւելի սաստիկ (ինտենսիւ), ամէնից աւելի արդիւնաւոր է, դա ներկայի խոշոր կամ կապիտալիստական տնտեսութիւնն է: Վերացնել, ոչնչացնել այդ արտադրաձևը, կը նշանակէ դատապարտել ներկայ մարդկութիւնը սովի, ցրտի, մտաւոր ու բարոյական ամէն տեսակ զրկանքների:

Ուրեմն՝ պէտք է պահել արտադրութեան ներկայ ձևը, մեքենական խոշոր արտադրութիւնը և, որքան կարելի է, աւելի և աւելի խոշորացնել, աւելի արագ, աւելի շատ և աւելի լաւ հարստութիւններ արտադրել:

Այլեւս ոչնչանում է այն հարցը, թէ ինչերից է պէտք խոշոր արտադրանքը: Նրա տեղ դրւում է մի նոր, մի էական խնդիր: Եթէ խոշոր արտադրութիւնն անհրաժեշտութիւն է, ինչպէս անել, որ նա և գոյութիւն ունենայ, և՛ աւելի՛ու աւելի աճի, բայց և չվնասէ մարդկութեանը, չառաջացնէ այն անհամար չարիքները, որ մենք հաշւեցինք մի քիչ առաջ: Կարճ, ինչպէս անել, որ խոշոր, կապիտալիստական, մեքենական արտադրութեան բոլոր օգուտներն ստանանք, իսկ նրա հասցրած վնասներից ազատ պահենք հասարակութիւնը: Ահա այն հարցը, որ այսօր կոչւում է սօցիալական կամ ընկերային խնդիր, որի լուծման համար շատ գիտնականներ ու փիլիսոփաներ դրել են իրենց ամբողջ կեանքը, որի լուծման համար այսօր մարտնչում են միլիօնաւոր բանւորներ և գիւղացիներ մի կողմից, նրանցից թւով շատ նւազ հոգեւորականներ՝ դրամատէրեր ու հողատէրեր՝ միւս կողմից:

Ու ելքը գտել են տնտեսագէտները և մտածողները:

Խոշոր արտադրութեան մէջ էական տեղերից մէկը բռնում է մեքենան, XIX և XX դարերի հրաշալիքը: Արհեստաւորական տնտեսութեան ժամանակ ամէն մի արտադրող աշխատում էր իր սեփական գործիքներով: Բոլոր գործիքները մանր էին և աժան, մի արհեստաւորի կարողութեան ենթակայ — թէ նիւթականի կամ գնելու տեսակէտից, թէ ուժի, գործածելու տեսակէտից: Ամէն մի մանր արտադրող կարող էր ձեռք բերել իրեն համար անհրաժեշտ գործիքները և բանեցնել: Նեղն ընկած պարագային, արհեստաւորի նախկին վարպետը, դրացիները, էսնաֆը «ձեռք էին բռնում», «թաշկինակ ման ածում», մի քիչ դրամ հանգանակում և նրան խանութ էին դնում: Մեքենական արտադրութեան ժամանակ այդ ամէնը գրեթէ անհնար է: Այլեւս չկայ նախկին մանրը, չնչին արժէքով գործիքը. նրանց տեղը բռնել են այնպիսի խոշոր մեքենաներ, որ մի անհատի կամ անհատների հսկայական մեծամասնութեան համար այլեւս անկարելի է ձեռք բերել, անկարելի է գնել: Գնել կարող է կապիտալիստը, որ ինքն այլեւս չէ աշխատում, այլ եւս ձեռքերի վրայ

կոչւեր չունի, որոնք դարեր շարունակ զարդարել են մանր արհեստաւորի ու երկրագործի ձեռքը:

Ուրեմն՝ նախկին գործիքն այսօր այնքան է աճել, արժէքն այնքան է բարձրացել, որ միմիայն կապիտալիստն է ընդունակ գնելու, նրա համապատասխան գործարան շինելու, նրա համար անհրաժեշտ թանկարժէք հում նիւթեր (բուրդ, կաշի, փայտ եւայլն) և վառելիք ամբարելու և ապա միայն գործ սկսելու:

Կապիտալիստից ջոկ՝ հնարաւոր է և մի ուրիշ գործարանատէր. բաժնեւոր կամ ակցիօներական ընկերութիւնը: Միանում են բազմաթիւ մանր ու խոշոր դրամատէրեր, ամէն մէկը գնում է մի կամ մի քանի բաժնեթուղթ, գոյանում է մի խոշոր դրամագլուխ, և բաց են անում մի գործարան:

Թէ առաջին և թէ երկրորդ դէպքում՝ գործարանատէրը չէ աշխատում. լաւագոյն դէպքում՝ նա դառնում է «գործի ընդհանուր ղեկավար»: Վարձու է գործարանի կառավարիչը, վարձու են մեքենագէտներն ու մեքենավարները, վարձու են բոլոր տեսակի բանւորներն ու արհեստաւորները, գրագիրներն ու հաշւապահները... Վարձկանների այս մեծ բանակով գործն սկսւում է:

Ժամանակակից գործարանը, ժամանակակից մեքենան չեն բաւականանում մէկ-երկու մարդով. աշխատողները պիտի լինեն բազմաթիւ և նրանք պէտք է միասին, համերաշխ աշխատեն: Նրանք չեն կարող աշխատել մենակ, առանձնացած, նրանց աշխատանքներն այնպէս են իրար շաղկապւած, իրար հետ հիւսւած, թնջկւած, որ անհնարին է նրանց իրարից բաժանել: Դրւած է մի հսկայական մեքենայ, որի մէջ միաժամանակ զբաղւած են և բուրդը լւալու, և գզելու, և թել մանելու մասերը: Այդ հսկային ծառայութեան են դրւած տասնեակներով բանւորներ. մի քանիսը բուրդն են բերում, մի երկուսը հսկում են ջրի հոսանքի վրայ, միւսները իւղ են ածում, երրորդները հսկում են փակերի վրայ, մի այլ խումբ վառելիքն է լցնում ներս եւայլն, եւայլն: Դրանք բոլորն էլ երկաթէ հրէշի նրա ծառաներն են, ոչ տէրերը: Առաջ մարդն էր գործիքի տէրը, նրան հրամայողը, իսկ այսօր գործիքը, մեքենան է մարդ-աշխատողի տէրը, նրան հրամայող պարոնը. մարդն է, որ պէտք է հետեւի մեքենայի շարժումներին, նրա ցնցումներին, եթէ չէ կամենում թեւը կամ ոտը կտրել, մէջքը կամ գլուխը ջախջախուած տեսնել:

Այսպէս ուրեմն՝ բացի մեծանալուն ու ուժը, մեքենան ստիպում է աշխատողներին կազմել մի համայնք — փոքր թէ մեծ, այդ միեւնոյն է, — և աշխատել միասին, համայնօրէն: Եւ քանի որ այսօր արտադրական աշխատանքների այն բոլոր ճիւղերը, ուր մուտ է գործել մեքենան, աշխատանքը կատարուում է ոչ անհատաբար, այլ խմբովին կամ հանրօրէն:

Եթէ աշխատանքը գործարանի ներսում համայնական է, էլ ինչու գործարանները չեն շինւում միանգամայն առողջապահօրէն, մաքուր օդով, լուսաւոր, ընդարձակ, որպէս զի համայնօրէն աշխատող բանուորները ոչ թոքախտ ստանան, ոչ հիւծուեն լոյսի և օդի պակասութիւնից, ոչ էլ թեւերն ու ոտքերը մեքենայի բերանն ընկնեն, խեղաթիւրուեն:

Եթէ աշխատանքը համայնական է, եթէ այսօրուայ արտադրած հարստութիւնների հսկայական մեծամասնութիւնն արդիւնք է մարդկանց խմբական կամ հասարակական աշխատանքի, էլ ինչպէս է լինում, որ բանուորները, հարստութիւնների ստեղծագործողները, մնում են աղքատ, նեղութեան մէջ, ցնցոտիների գրկում: Որտեղից է ծնունդ առնում այս սատանայական կարգը: Մարդն ինքն է շինում մեքենան և իր շինած մեքենայի ստրուկն է դառնում. մարդն ինքը համայնօրէն աշխատում և հարստութիւններ է ստեղծում, ինքը մնում է կրկին աղքատ, կրկին թշուառ, իսկ հարստութիւնը բաժին է ընկնում քչերին — կապիտալիստներին, հողատէրերին, հոգեւորականներին, պաշտօնեաներին:

Որտեղից է բղխում այդ անարդարութիւնը. ո՞ւր է նրա աղբերակը:

Հասարակական կեանքի բարեխիղճ վերլուծութիւնը մեզ բերում, կանգնեցնում է մի աղբիւրի գլխի:

Աշխատում են շատերը, խլում է մէկը: Հարստութիւնները արտադրում են աշխատաւորները հանրօրէն, արդիւնքը գրպանն է գնում կապիտալիստի անհատաբար: Գործարանների, հանքերի, արհեստանոցների, հողերի կազմակերպուած, հասարակական աշխատանքը մի անտեսանելի խողովակով միացուած է կապիտալիստի, հողատիրոջ, պաշտօնեայի գրպանի հետ. աշխատաւորներն արտադրում են, իսկ այդ անիծեալ խողովակն անընդհատ տանում է նրանց արտադրածը դէպի գործատէրերի գրպանը: Ու այդ խողովակի անունն է մասնաւոր սեփականութիւն: Մի հնար է մնում միայն. կտրել այդ սատանայական խողովակը, չթողնել, որ հանրութիւնն աշխատի, իսկ իւրացնէ անհատը. ու կտրած խողովակի բերանը տանել և բանալ աշխատող հանրութեան գրպանը:

Վերածենք այդ ճշմարտութիւնը կեանքի երեւոյթներին: Մարդիկ արդէն աշխատում են խմբովին, այսինքն՝ աշխատանքն արդէն իսկ համայնական է: Բայց այդ աշխատաւոր համայնքի կողքին եկել կանգնել է մի կապիտալիստ, մի հողատէր կամ մի այլ մարդկային էակ և պնդում, որ հողը և արտադրական միւս բոլոր միջոցները իրենն են, իր մասնաւոր սեփականութիւնը. որ ինքը ձեզ կը թողնէ իր հողի վրայ, իր սեփական արտադրամիջոցներով աշխատելու, եթէ դուք ստանաք ձեր աշխատանքի համար այսքան, իսկ ամբողջ արտադրանքը թողնէք ինձ: Ասում եմ, մնում է մի բան միայն. բոլոր հողը և բոլոր արտադրամիջոցները հրատարակել բովանդակ հասարակութեան սեփականութիւն, որպէսզի բոլոր մարդիկ աշխատեն և բոլորն էլ վայելեն իրենց աշխատանքի ամբողջ արդիւնքը: Ուրեմն՝ մինչեւ օրս բոլոր աշխատաւորների արտադրած հարստութիւնը օրէնքի, կրօնի, Աստծու, սրերի, զէնքերի ու զրահի, կառավարութիւնների ու բանակների միջոցով խլողների կամ էքսպլոատատորների ձեռքից պէտք է խլել բոլոր արտադրամիջոցները և հողը, և դնել հանրութեան իշխանութեան տակ, յայտարարել հանրութեան սեփականութիւն, որպէսզի բոլոր մարդիկ աշխատեն և բոլորն էլ վայելեն:

Այն ժամանակ միայն խոշոր արտադրութիւնը կը մնայ, աւելի ևս կը խոշորանայ, աւելի մեծ չափերով հարստութիւնները կը կուտակւին, իսկ նրա կործանարար, նրա քայքայիչ կողմերը կը չքանան, որովհետև այլևս չի լինի մասնաւոր սեփականատէրերի կործանարար մրցումը. գոյութիւն չի ունենայ արագ հարստանալու և դրա համար ուրիշների, աշխատաւորների կաշին քերթելու, նրանց զրկելու, նրանց կեղեքելու և իր գրպանները լցնելու կիրքն անգամ: Իրաւատէր և գործատէր հասարակութիւնն իր ընտրած մարդկանց ձեռքով կը կարգաւորէ ամբողջ արտադրութեան և բաշխման գործը, փրկելով մարդկանց առողջութիւնը և կեանքը, մտածելով բոլոր աշխատաւոր հասարակութեան մտաւոր, բարոյական, ֆիզիքական, գեղարուեստական հաճոյքների մասին:

Ահա այդ է, որ կոչւում է ընկերվարական կազմակերպութիւն, կամ աւելի լաւ է ասել, ընկերվարական ապագայ կազմակերպութեան հիմնական սկզբունքները միայն: Դրան է ձգտում աշխատաւորութեան գիտակից մասը, գիտէ որ այդ ձևի կենսական կազմակերպութեանն է տանում մեզ ներկայի հանրային կեանքի զարգացումը: Այդ իդէալական կազմակերպութեանը հասնելու համար է, որ յայտարարւած է կեանքի ու մահուան կռիւ աշխատանքի և կապիտալի միջև. դրա համար են իրար բաղխում դասակարգերը. դրա անունով է ծածանւում կարմիր դրօշակը:

Անցնենք այժմ դասակարգերի բաղխմանը, նրանց ահեղ կռւին:

ԳԼՈՒԽ IV

Դասակարգերի տարբերական և նմանողական տարրերը: — Դասակարգային կռիւը: — Ե՞րբ է հնարաւոր դասակարգերի համերաշխութիւնը: — Ազգ և դասակարգ: — Ազգային հարցի լուծումը: — Գործնական պահանջները:

Եթէ մենք բարձրից նայելու լինենք ամբողջ մարդկութեան վրայ, ամենից առաջ կը նկատենք, որ այդ մարդկութիւն կոչւածը մի ամբողջութիւն չէ. նա ապրում է մանր ու խոշոր խմբակցութիւններով, որոնք կոչւում են անիշխանական հորդաներ, երբ մարդիկ դեռ վայրենի վիճակումն են, կոչւում են տոհմեր, ցեղեր և ցեղերի դաշնակցութիւններ, երբ մարդը հասել է բարբարոսական շրջանին և ուզում է թևակոխել քաղաքակրթութեան շեմքը: Իսկ եթէ մենք նոյն բարձունքից — à vol d'oiseau, ինչպէս ընդունւած է ասել, — նայենք քաղաքակրթւած մարդկութեան վրայ, մենք նրա մէջ կը նկատենք աւելի խոշոր խմբակցութիւններ, որոնք կոչւում են ազգեր:

Այդ ազգերը հեռուից մեզ երևում են մի-մի օրգանական մի-մի բնական ամբողջութիւններ:

Իսկ եթէ այդ օրգանական ամբողջութիւնը վերցնենք առանձին և քննութեան առնենք, ահա այն ժամանակ է, որ պարզօրէն նկատւում է ազգութեան մէջ գոյութիւն ունեցող շերտաւորումը, այն ժամանակ երևան են գալիս դասակարգերը, որոնք գրեթէ գոյութիւն չունեն վայրենի բարբարոս վիճակներում գտնւող մարդկային համախմբումների և միութիւնների մէջ:

Ազգային միութիւնն ու ամբողջութիւնը չափից խանգարեն մեզ տեսնելու նրանց ներսում գոյութիւն ունեցող դասակարգերն, ինչպէս և դասակարգերի հակամարտ դիրքերն ու շահերը. շփոթել է խանգարեն մեզ ընդհանրապէս, պարզօրէն տեսնելու ազգութիւնների ամբողջական կազմերը:

Ամէն մի մարդ արարածի բնաւորութիւնը կազմակերպւում է երկու որոշ տարրերից, ժառանգական, ի ծնէ հետը բերած որոշ տրամադրութիւններից եւ կեանքի ընթացքում —ծնելուց մինչեւ մեռնելու օրը— անհատին շրջապատող միջավայրից: Միջավայր ասելով, մենք հասկանում ենք եւ անհատին շրջապատող անձերը, եւ այն հասարակութիւնը, որի մէջ նա ապրում է, եւ նրա զբաղմունքը եւ այլն: Բնական եւ ստացական այդ երկու տարրերի հանդիպումից, նրանց յարաբերութիւնից առաջանում է մի էակ, մի մարդկային անբաժանելի, մի անհատ: Եւ այդ հասարակութեան պտուղ ու այդ ժառանգական տարրերի արդիւնք անհատը դառնում է մի նոր աղբիւր անհատների, որոնք, իրենց կարգին, բերում են կեանք իրենց հետ որոշ ժառանգական յատկութիւններ կամ կանխատրամադրութիւններ, կեանքից կամ միջավայրից էլ ստանում են նոր տպաւորութիւններ, դառնում նոր անհատներ, նոր ու նոր աղբիւրներ նոր սերունդների եւ այդպէս անվերջ:

Այդ օրէնքը յատուկ չէ միմիայն մարդուն. բոլոր օրգանական կամ գործարանաւոր մարմինները— բոյսերը, կենդանիները— ենթակայ են նոյն համաշխարհային օրէնքին:

Որն է այդ երկու տարրերից աւելի հզօր՝ բնականը թէ ստացականը: Երկուսն էլ կան, երկուսն էլ ուժեղ են: Նրանք միշտ եւ իրար ջնջող չեն ամէն վայրկեան, այլ շատ յաճախ մէկը միւսին լրացնող ու ամբողջող: Սակայն որքան կամենանք մենք ժառանգականը վերլուծել ստացականի մէջ, չենք կարող, որովհետեւ չենք կարող երբեք հասնել այն կէտին, որից առաջ չկար ոչ մի ծնող էակ, որը ժառանգութիւն տար իր ծնած ժառանգին: Եթէ մենք չենք կամենում ընկնել մետաֆիզիկայի կամ բնազանցութեան մութ խորշերը, պէտք ասենք, որ այդ երկու տարրն էլ կան, երկուսն էլ ազդեցիկ են, երկուսն էլ զօրեղ. եւ այդ երկուսի իրար բաղխումից, նրանց նոյնացումից է կազմակերպւում անհատի նկարագիրը, նրա ոգին:

Երբ մի անգամ պարզւի մեզ համար անհատի նկարագրի, նրա ոգու կազմակերպման գործողութիւնը, այնուհետեւ մեզ

համար դիւրին կը լինի ըմբռնել ազգային եւ դասակարգային նկարագիրների հարցերը:

Մի ազգութեան մէջ գոյութիւն ունեցող բոլոր դասակարգերի բոլոր անդամներն անպայման պիտի ունենան թէ իրար նմանող եւ թէ իրարից տարբերւող տարրեր: Եթէ նրանց, այդ դասակարգերի բոլոր անդամների մէջ չլինի նմանողական տարրեր, մենք անսխալօրէն, առանց ճանաչելու դրանց, կասէինք, որ դրանք միեւնոյն ազգի անդամներ չեն: Չէ՞ որ ամէն մի անհատ բերում է իր հետ ժառանգական մի տարր: Իսկ ազգութիւնը մարդկանց մի մեծ թիւ է, որ դարեր շարունակ սերունդից սերունդ ապրելով միեւնոյն բնական եւ պատմական միջավայրում, դարձել է որոշ ազգային ոգի: Այդ ազգի բոլոր անդամների հետները բերած ժառանգական տարրը, որ շրջապատող միջավայրը կամ ամրապնդում, աւելի եւ զարգացնում է, կամ կրծում, քայքայում, ոչնչացնելու է ձգտում: Ամրապնդւում է, երբ անհատն ապրում է իր հայրենիքում, իր ազգային շրջանում, կրթւում է իր մայրենի լեզուով, իր ազգային դպրոցներում, իր ազգային գրականութեան միջոցով եւ այլն: Լուծւում, թուլանում է, երբ անհատը չէ ապրում իր հայրենիքում, չէ խօսում, չէ դաստիարակւում իր մայրենի լեզւով, իր ազգային դպրոցներում, իր գրականութեան միջոցով եւ այլն:

Ազգային նմանաբանական կամ նմանողական տարրերի մասին մենք մանրամասն խօսել ենք մի այլ տեղ(*), այդ պատճառով մենք երկար կանգ չենք առնի նոյն հարցի վրայ այստեղ: Համառօտակի կասենք միայն, որ ազգութիւնը կազմող բոլոր դասակարգերի մէջ էլ կայ մի ընդհանուր հաւաքական գիծ— դա ազգային ոգին է, որի արտայայտիչներն են լեզուն, գրականութիւնը, դպրոցը, սովորութիւնները եւայլն: Հայ լեզուն, հայ գրականութիւնը, հայ դպրոցը, հայ սովորութիւնները,— մի խօսքով— հայ ոգին չէ պատկանում ոչ պրոլետարին, ոչ աշխատաւոր գիւղացուն, ոչ բուրժուազիային, ոչ կղերին, ոչ էլ հողատէրերին կամ կիսաբուրժուական տարրերին. նա պատ-

---

(*) Տես— «Ինչ է ազգութիւնը»:

կանում է բոլոր դասակարգերին և այն բոլոր անհատներին, որոնք զգում են իրենց հայ լինելը: Ազգութեան հարցը ուսումնասիրելիս, երկար կանգ առնելով այդ խնդրի վրայ, մենք դուրս ենք բերել նոյնիսկ գործնական քաղաքականութեան կանոններ. բոլոր դասակարգերը պարտաւոր են պաշտպանել ու զարգացնել իրենց ազգային լեզուն, գրերը, գրականութիւնը, թատրոնը, ճարտարապետութիւնը, երգը և այլն, և այլն, որովհետև զգում են, որ դրանք կազմեն մարդկութեան մի խմբակի կուլտուրան [illegible]— այդ խմբակի տաղանդը կամ հանճարը:

Սակայն միայն նմանօրինակ տարրերը չեն, որ գոյութիւն ունեն: Այդպէս եթէ լինէր, այդ ևս չէին լինի դասակարգեր, այլ կը լինէին ազգեր և ազգերի ներսում միապաղաղ անհատներ, առանց դասակարգերի: Իսկ մենք գիտենք, որ դասակարգերը կան, և այն էլ ինչպէս: «Ես բողոքում եմ, ես կռւում եմ, ուրեմն ես կամ», կարող ենք մենք ասել դասակարգերի վերաբերմամբ, հետևելով ֆրանսիական մեծ փիլիսոփայի — Դեկարտի «cogito, ergo sum»-ին (մտածում եմ, ուրեմն գոյութիւն ունեմ): Նրանք կան, կռւում են բաղխւում և ստեղծում եթէ ոչ մարդկային ամբողջ պատմութիւնը, գոնէ նրա մեծագոյն մասը:

Նախընթաց գլուխներում մենք տեսանք, որ դասակարգը անհատական արմատից բղխած մի երևոյթ է: Որոշ թիւ մարդիկ — շատ թէ քիչ — նշանակութիւն չունի, որոնց շահերը բղխում են միևնոյն աղբիւրից, կամ որոնց բաժին է ընկնում հասարակական հարստութեան միևնոյն մասը, կազմում են մի դասակարգ: «Դասակարգերն այլ բան չեն, եթէ ոչ խմբակցութիւններ, որոնք իրենց ներսում ունեն նոյն շահերը»; — ասում է պատմագէտ Վիպպլէրը:(*)

Ուրեմն՝ նմանութեան տարրերի կողքին ամենից առաջ մենք տեսնում ենք արդէն մի տարբերական հզօր, շատ հզօր տարր — նիւթական շահը, եկամուտի աղբիւրը, այն՝ թէ հասարակական հարստութիւնների ո՞ր մասն է բաժին ընկնում սրա կամ այն դասակարգին, — արդեօք հողի ռենտան, դրամագլխի շահը և նախաձեռնողի վաստակը, թէ վերջապէս աշխատավարձը: Համաձայն եկամուտի աղբիւրի և զբաղմունքի անհատները լինում են այս կամ այն դասակարգի անդամ: Եւ որովհետև եկամուտների աղբիւրները տարբեր են իրարից, ուրովհետև հողատէրերն ու կալուածատէրերը, անշուշտ զանազան խաբէական անունների տակ, իւրացնում կամ իբր եկամուտ՝ ստանում են ուրիշների. աշխատաւորների յաւելեալ արժէքները, իսկ աշխատաւորներն ստանում են իրենց սեփական աշխատանքի մի մասը միայն, — այդ տեղից բնականօրէն բղխում է շահերի հակադրութիւնը: Հասարակական ամբողջ հարստութիւնն արտադրում եմ ես, աշխատաւորս, իսկ դու — հողատէրդ կամ բուրժուադ գալիս իւրացնում ես այդ արտադրեալի մեծագոյն մասը:

Եւ ահա առնչւում են կեանքի մէջ, մեր իսկ ազգութեան ներսում, մի շարք նոր պայմաններ: Ես բանւոր եմ. աշխատում եմ ածխահանքերում կամ պղնձահանքերում, գետնի տակ, կամ խոշոր գործարանում, շրջապատած ինձ պէս անուս, ինձ պէս կոյր, ինձ պէս աշխատանքից երբէք աչք բանալու ժամանակ չունեցող հին ու նոր բանւորներով: Մնում է կոպիտ իմ բնաւորութիւնը, անմշակ — իմ ուղեղը, գռեհիկ ու անզարգացած իմ գեղարուեստական ճաշակը: Ու այդպէս են ինձ հետ միասին բոլոր աշխատաւորները — բոլոր բանւորները, բոլոր մեր գիւղացիները ու գիւղական պրոլետարները, բոլոր գործարանային և այլ տեսակի բանւորները, մանր արհեստաւորները և այլն: Մենք այդպէս ենք մնում. դեռ այդ քիչ է. այդպէս են կրթւում մեր զաւակներն էլ: Մեր եկամուտը միայն մեր չնչին աշխատավարձն է, որով հազիւ հազ քարշ ենք տալիս մեր և մեր զաւակների ֆիզիքական գոյութիւնը. էլ ինչպէս մտածենք մեր զաւակների դաստիարակութեան մասին, ինչով կրթենք նրանց: Իսկ դպրոցները սուղ են, շա՛տ սուղ մեր նիհար գրպանների, մեր հիւծախտաւոր անտեսութեան համար: Չէ որ ներկայ հասարակութեան և պետութեան գործերը վարում են հողատէր աղաները, կալուածատէրերը և մեծամեծ պաշտօնեաները:

(*) Տես նրա «Պատմական իմացականութեան տեսութիւնը»: (Ռուսերէն) երես 206:

Նրանք մեզ և մեր զաւակների համար մատչելի են գիտելիք միայն տարրական դպրոցը, ուր շա՜տ չնչին է ուսումը, այնքան չնչին, որ աշակերտները յաճախ մոռանում են իրենց ստացածները էլ, իսկ չմոռացողների ուղեղն էլ շատ տարբերութիւն չունի շրջապատի անուսներից: Միջնակարգ և բարձր կրթութիւնը մեզ և մեր զաւակների համար անմատչելի է, որովհետև թանկ է, երկար է տևում. մինչ մեր զաւակները, հազիւ 14-16 տարեկան եղած, պէտք է մտնեն գործարան կամ հանք, պէտք է արօրին ու գութանին ձեռք զարնեն, որովհետև ապրել է պէտք, հաց վաստակել:

Իսկ մեր գլխին կանգնած բուրժուական դասակարգերը և՛ շատ միջոցներ, և՛ շատ էլ ազատ ժամանակ ունեն կրթուելու, դաստիարակուելու: Մենք աշխատում ենք, նրանք են իրենց գրպանները լցնում. էլ ինչու չպէտք է միջոց ունենան: Նրանք և նրանց զաւակները մտնում են դպրոց 8 տարեկան հասակից և մինչև 24-25 տարեկան դասերը սովորում են, անցնում թէ տարրական, թէ միջնակարգ և թէ բարձր ու բարձրագոյն դպրոցներ, դառնում մասնագէտներ: Նրանք յաճախում են ամէն տեսակ թատրոններ, օպէրաներ, համերգներ, պատկերահանդէսներ, դասախօսութիւններ և այլն, և այդ՝ զարգանում է նրանց ուղեղը, նրբանում նրանց ճաշակը, բարեկրթւում նրանց շարժ ու ձևը, խօսք ու կապը:

Եւ ահա դասակարգերի մէջ եղած տարբերութեան ամենամեծ աղբիւրը:

Զբաղմունքները ստեղծում են տարբեր միջավայրեր, իսկ միջավայրերը կերտում են տարբեր բնաւորութիւն, տարբեր աշխարհայեացքներ. Եւ այդ տարբերութիւնները այնքան մեծ են և անխուսափ, որ եւրոպական գրողներից մի քանին ուզեցին դիտել դասակարգերն իբրև ազգերից անկախ գոյութիւններ. չկան ազգեր, ազգն ու հայրենիքը իսկ բառեր են, դատարկ ու խաբէական ընդհանրացումներ. միակ ցեղը կամ իրականը դասակարգերն են. (*) Այդ տեսակէտի ծնունդ էր

(*) Տես Hamon —«Les militaires proffessionels», կամ Հէրվէի գործերը:

XIX դարի կէսերին ձևաւորուած կոսմօպոլիտիզմը կամ համաշխարհաքաղաքացիութիւնը, որ քարոզում էին լիբերալ բուրժուաները, ինչպէս Հայնէն, Բէօրնէն, Գիզօն և դրանց հետ էլ, մանաւանդ սկզբներում, ընկերվարականներից շատերը, ինչպէս Մարքս և իր հետևորդները մինչև 1890 թուականները:

Բայց պատմութեան գործնական դասերը եկան սթափեցնելու բոլոր միակողմանի ուղղութիւնների երկրպագուներին, և ազգութեան, միջազգայնութեան և դասակարգերի խնդիրները դրուեցին՝ գիտութեան առարկաների և կեանքի անմիջական փորձերի հիմքերի վրայ: Մի կողմ նետուեց ազգամերժ և անմարմին կոսմօպոլիտիզմը. պարզուեց, որ մարդը համաշխարհաքաղաքացի լինելուց առաջ՝ զաւակ է իր ազգի, ծնունդ իր հայրենիքի միջավայրի և ապա միայն իր դասակարգային միջավայրի: Սակայն պարզուեց նոյնպէս, որ ազգերի առանձնացումը, նրանց տարամերժ, [illegible] պայքարները ծնունդ են միջնադարեան հին հայրապետական և բնատնտեսութեան յետամնաց ձևերի, ազգային փակ կեանքի, մի խուլ՝ կուլտուրական յետամնացութեան: Աշխատեց, նախկին կոսմօպոլիտիզմի ազգամերժ տեսութեան փոխարէն, այժմեան առողջ միջազգայնութիւնը կամ ինտերնացիոնալիզմը, նախկին ազգամոլութեան փոխարէն, այժմեան առողջ ազգային սկզբունքը — «ապրել և թողնել ապրելու ուրիշներին էլ». ամէն ազգ ապրի ազատ, զարգացնէ ազատ իր ներքին բոլոր կարողութիւնները, իր ազգային ճաշակը, ինչպէս սիրում են արտայայտել ֆրանսական գրողները, իր բաժին նետէ համամարդկային կուլտուրայի գանձանակը, բայց չատէ, չմերժէ և ուրիշներին. լինի նրանց սատար և օժանդակ, ընթանայ նրանց հետ ձեռք ձեռքի տուած՝ իբր դաշնակից. չձուլուի, բայց և չձուլէ ուրիշներին: Ահա ժամանակակից առողջ ազգային և միջազգային զոյգ սկզբունքը:

Ազգերը կան: Նրանց նկատում ապրող, նրանց բոլոր անդամներն ունեն մի նման գծեր — ազգային ոգի, որի արտաքին նշաններն են լեզուն, գրականութիւնը, բնորոշ աւանդութիւնները, սովորութիւնները և այլն: Դա ազգի ներսում ապրող բոլոր անհատների անկապտելի սեփականութիւնն է. ազգային մեծ միջավայրը բոլորին տւել է այդ նման գծերը: Սակայն ազգի ներսում կան դասակարգեր, որոնք ստեղծում են իրենց սեփական միջավայրը և իրենց անդամներին տալիս են որոշ բնորոշ գծեր, որոշ դասակարգային ոգի:

Ուրեմն՝ ամէն մի մարդ էակի մէջ կան նախ ազգային յատկանիշներ, իսկ յետոյ դասակարգային բնորոշ գծեր: Ազգային յատկանիշները յատուկ են բոլոր տարրերին— թէ բանւորին թէ գիւղացուն, թէ արհեստաւորին, թէ կապիտալիստին, թէ հողատէրին և թէ հոգևորականին: Դա նմանութեան տարրն է ազգութեան բոլոր խաւերի մէջ: Այնուհետև գալիս են բաժանող գծերը կամ տարբերական տարրերը. այս մէկը հայ բանւորի ոգի ունի, այն միւսը հայ բուրժուայի, երրորդը հայ հոգևորականի և այլն:

Միջավայրերի այդ երկուութիւնն ստեղծում է ազգային և դասակարգային բնորոշ գծերը կամ նմանութեան և տարբերական տարրերն ազգի բոլոր անդամների մէջ:(*) Իսկ այդ

---

*) ԾԱՆՈԹ.— Մարքսիստները դասակարգը որոշում են ոչ թէ արտադրայթի կամ հարստութիւնների քանակի տեսակէտից, այլ արտադրութեան տեսակէտից: Դասակարգը մի արտադրական կազմակերպութիւն է. այսինքն, նա մարդկանց մի խումբ է, որի հիմնական նշանն այն է, թէ նա ինչ տեղ է բռնում արտադրութեան մէջ կամ ինչ դեր կատարում. իսկ աշխատաւորական տեսակէտը դասակարգը որոշում է նրանով, թէ հասարակական հարստութիւնից ով ինչ մաս է ստանում:

Երկու ուղղութիւններն էլ ընդունում են միջավայրի ազդեցութիւթիւնը, սակայն մարքսիստներից շատերը և, մանաւանդ, մի քանի ուրիշ գրողներ, որ յենւում են Մարքսի վարդապետութեան վրայ եւ այլ բացատրութիւն են տալիս նրան, միջավայրի այդ ազդեցութիւնը հասցնում են չափազանցութեան. նրանց կարծիքով բոլոր ազգերի պրոլետարները իրար աւելի նման են, քան նոյն ազգի պրոլետարն ու բուրժուան: Նրանք մտածում են, որ բանւորական միջավայրի պայմանները նման լինելով ամէն տեղ և բուրժուական միջավայրն էլ նոյնպէս ամէն տեղ իրար նման լինելով, ամբողջ մարդկութիւնը վեր է ածւել երկու որոշ շերտի, երկու ազգութեան:

Այդ ծայրայեղ վարդապետութիւնը թափանցեց նաև Հայ գրականութեան մէջ, մանաւանդ Կովկասում Երեւացին երիտասարդ ընկերվարական գրողներ, որոնք պնդեցին, թէ բանւոր դասակարգն ունի իւրա-

երկուութիւնից բղխում են երկու նոր երեւոյթներ — դաշինք կամ համերաշխութիւն և կռիւ: Պարզ է. այն բոլոր խնդիրներում, որոնք վերաբերում են ազգային բնոյթին, տիրում է և պէտք է տիրէ համերաշխութիւն. պէտք է միահամուռ ուժերով, առանց դասակարգի խտրութեան, պաշտպանել ազգի ֆիզիքական գոյութիւնը, եթէ վտանգ է սպառնում նրան. պէտք է պաշտպանել և զարգացնել ազգի լեզուն, գրականութիւնը, դպրոցը և այլն: Դրանից այն կողմ երբէք չպէտք է շարունակել համերաշխութիւնը: Իսկ երբ հարցը գալիս է դասակարգերի նիւթական շահերին, նրանց վայելած և վայելելիք իրաւունքներին, նրանց աւելի և աւելի լայն կրթութեանն ու դաստիարակութեանը և այլն, ահա այս տեղ այլեւս ոչ մի համերաշխութիւն չէ կարելի. մի կողմ է նետւում խաղաղութեան

յատուկ գրականութիւն, գեղարւեստ, դպրոց, լեզու և այլն, թէ բանւոր ու բուրժուան չունեն ոչ մի կէտ շփման, բացի մայրենի լեզուից...

Հերքելու համար այդ ծայրայեղութիւնը, պէտք է ասել, որ այդ մտածելակերպի տէրերը մոռանում են մի բան. այն՝ որ դասակարգը կայուն մեծութիւն չէ, որ նա ենթակայ է մշտական փոփոխութիւնների. շատ մանր ու խոշոր բուրժուաներ և հողատէրեր սնանկանում, ընկնում են պրոլետարիատի մէջ, բերելով իրենց հետ նոր բնոյթագծեր: Բացի այդ, ամէն մի ազգի պրոլետար ոչ միայն իր հետ բերում է իր որոշ ազգային յատկանիշները պրոլետարիատի մէջ, այլ և շարունակում է ապրել նոյն ազգային միջավայրում, ազգի գրկում: Այսպէս, օրինակ, հայկական բանւորները, մանաւանդ երկրի հարաւում, աչքի են ընկնում իրենց ծայրայեղ կրօնասիրութիւնով. նրանք մոլեռանդներ են, մասունքների երկրպագու, հրաշքների հաւատացող... Կասկած չկայ, դա արդիւնք է նրանց ազգութեան և ծայրայեղ աղքատութեան: Սակայն նոյն նիւթական պայմանների մէջ էին նաև անգլիական բանւորները մինչև Չարտիզմը — XIX դարի առաջին քառորդում. նոյն, եթէ ոչ աւելի վատ, պայմաններում էին գերման ջուլհակ բանւորները 1840-50 թւերին. բայց թէ անգլիականները, որ մեծ թափով նետւեցին Չարտիստական շարժման մէջ, և թէ գերմանական ջուլհակները, որոնց անմահացրել է հանճարեղ թատերագիր Հաուպտմանը, միանգամայն ազատ էին կրօնական մոլեռանդութիւնից և նախապաշարմունքներից: Պարզ է. հայկական բանւորը, բացի բանւոր լինելուց, նաև հայորդի է, որի ազգային միջավայրը յագեցած է, լեցուն է կաթոլիկ հոգևորականութեան ցանած սերմերով:

գամին և ձեռք տանում ամբը, մարմի փոքր հնչում: Մարդը կատաղի է և անօրէն:

Դասակարգային կռիւը: Եւ ինչպէս չկռուեմ, երբ, ինչպէս վերևում ասացինք, ես աշխատում եմ, դու գալիս, կանգնում գլխիս վերևը, իմ սեփական արտադրութիւնը, իմ դառն աշխատանքով գոյացած հարստութիւնների մի չնչին մասը տալիս ես ինձ, հազար անգամ էլ աշխատում ցոյց տալ, որ դու ինձ բարերարութիւն ես անում, ողորմութիւն տալիս, իսկ մեծագոյն մասը դու և քեզ նմանները լցնում էք ձեր գրպանները:

Եւ դու — հողատէրդ ու հոգեւորականդ, կապիտալիստդ ու ազնուականդ — միայն այսօր չէ որ այդ ձևով ես վարւում: Դար դարեր առաջ քո նախահայրերը մտրակով բանեցնում էին իմ նախահայրերին կամ ինձ նման խեղճերին, ստրուկներին: Միջին դարերում քո նախահայրերը կեղեքում էին կրկին իմ նախահայրերին կամ ինձ նման ստրուկ խեղճերի — իրենց հողի վրայ բնակող ճորտերին, բոլոր գիւղացիներին, արհեստաւորներին, բանւորներին: Պապերը, կաթողիկոսները, շէյխ-ուլ-իսլամները գալիս, կանգնում էին հզօրների կողքին և հաստատում, որ աստուածները, որ Եհովան, որ Քրիստոսն ու Ալլահը այդպէս են կամենում. որ աստուածային գիրք է հարուստն ու աղքատը, տէրն ու ծառան, կեղեքողն ու կեղեքւողը, վերջապէս գայլն ու ոչխարը. «Աստուած այդպէս է ստեղծել. այդպէս եղել է, այդպէս էլ պիտի երթայ»:

Երբ ներքին ու արտաքին հանգամանքները զարգացան, ստրուկները հասկացան, որ եղած կարգն անարդար է ու վնասակար. նրանք ստեղծեցին Սպարտակներ, որոնք ապստամբութիւն յառաջ բերին. նրանք այլեւս չէին աշխատում, կամ աշխատում էին շատ դանդաղ, շատ ապարդիւնօրէն: Ու ստրկութիւնն ընկաւ: Սակայն չազատագրւեց աշխատող մարդը: Ստրկութիւնը վերացաւ. ստրուկի վիճակը լաւացաւ, բայց մարդը կրկին մնաց կապւած, կրկին կեղեքւող. նա դարձաւ ճորտ:

Ամբողջ միջին դարերում զարգանում էր մարդու միտքը,

կուտակւում բոլորի մէջ, զարգանում էին և արտաքին հանգամանքները — մարդկանց թիւը, հաղորդակցութեան ուղիները, արտադրութեան գործիքները: Ներքին ու արտաքին այդ ազդակների զարգացումը հնարաւոր դարձրեց վերջապէս փշրել ճորտութիւնը: Շատ արիւն հոսեց, մինչև որ մարդն ազատւեց: Միայն այդ ազատութիւնը չբերեց նիւթական վիճակի թեթևացում: Բոլոր մարդիկ յայտարարւեցին իրար հաւասար օրէնքի առջև: Ընկան ազնուական և հոգևորական դասերի քաղաքական իրաւունքները, արտօնութիւնները ու առանձնաշնորհները: Այլևս մարդը մարդուն չէր կարող տիրել, չէր կարող ստրկացնել կամ ճորտ դարձնել: Սակայն այդ ազատութիւնը և այդ հաւասարութիւնը վերաբերում էր միմիայն մարդու անձին. իսկ հողը և հարստութիւնները մնացին նախկին վիճակում: Հարուստը կրկին մնաց հարուստ, աղքատը կրկին աղքատ: Ազատութիւն հռչակւեց թէ՛ անձերի և թէ՛ հարստութիւնների համար: Դու ազատ ես, գնա՛, որքան կուզես հարստացիր, ինչ միջոցով կուզես շարունակիր կեղեքել քեզ նմաններին:

Սկսւեց վարձու աշխատանքի շրջանը:

Ես հող չունեմ, որ մշակեմ ու ապրեմ: Հողը տիրացել ես դու: Գալիս եմ քեզանից մի կտոր հող խնդրում, որ մշակեմ, ինձ ու իմ ընտանիքը կերակրեմ. քո զինւած ծառաները, քեզ պաշտպանող պետութեան ատեանները, զօրքն ու ժանդարմները իմ դէմ են դուրս գալիս, — իմ, անզէն, խղճուկ էակի դէմ: Ես զգում եմ անզօրութիւնս և գնում խնդրի ու աղաչանքի: Սուրբ է մասնաւոր սեփականութիւնը, ասում են ինձ և բերում շատ ազդու ապացոյցներ — ժանդարմ, զօրք, բանտ: Ես ստիպւած համոզւում եմ, որ սուրբ է մասնաւոր սեփականութիւնը: Աղաչում եմ քեզ, և դու ինձ բարեհաճում ես մի կտոր հող տալ մշակելու, միայն մի պայմանով. հողի համար քեզ պէտք է վարձ տամ: Դու ազատ ու անհոգ թափառում ես, իսկ ես աշխատում, իմ քրտինքի կաթիլները ոսկի դարձնում, քեզ հողավարձ վճարում: Ձայն չեմ կարող. բանտ կայ, գնդակը կայ:

Ես ծոյլ էի, պատուելի: Բայց անօթի եմ, հաց չունեմ: Երկաթագործ եմ, լաւ վարպետ. միայն թէ դրամ չունեմ, որ արհեստանոց բաց անեմ, գործիքներ առնեմ, երկաթ ու ածուխ գնեմ եւ աշխատեմ, ինձ էլ կերակրեմ, ընտանիքս էլ: Փողն ու գործիքը քո ձեռքդ են: Գալիս եմ մի քիչ քեզանից խնդրեմ, որ ես էլ ապրել ու աշխատել կարողանամ: Ես քեզանից ուժեղ եմ. կը ծեծեմ քեզ, եթէ չտաս: Բայց կրկին ոստիկան. կրկին սուր ու հրացան, բանտ... Սուրբ է մասնաւոր սեփականութիւնը: Յուսահատ, խնդրում եմ, աղաչում քեզ, որ ինձ գործ տաս: Դու էլ հիմնում ես արհեստանոցներ, գործարաններ եւ հաւաքում ինձ նման թշուառներին. աշխատեցնում ես մեզ օրական, ասենք. 11 ժամ եւ մեր 4 կամ 5 ժամի արդիւնքը մեզ ես տալիս. իսկ մնացած 6-7 ժամուայ բոլոր արտադրեալը դրամ դարձնում, քո սնդուկդ դրամով լցնում:

Սակայն մենք շատ ենք. ձեզանից բաւական շատ. ձեր մէկի դիմաց մենք առնուազը տասն ենք: Եւ ահա այն ոստիկանը, այն ժանդարմն ու զինուորը, որ հրացանն ուսերին եւ սուրը կողքերին, եկել են այսօր մեզ հնազանդեցնելու եւ քո հարստութիւնդ պաշտպանելու, — այդ թշուառականները մեր սեփական զաւակներն են, մեզ պէս խղճուկ աշխատաւորներ: Ահա այն թնդանօթը եւ այն հրացանը, որից պէտք է դուրս գան գնդակները եւ մեր կուրծքերը ծակեն, եթէ համարձակուենք ձեր սրբազան մասնաւոր սեփականութիւնից *մենք էլ բաժին պահանջել, տեսնում ենք, այդ գործիքները շինուած են մեր ձեռքերով. նրանց մէջ քարացած են մեր քրտինքի կաթիլները:*

Կարճ ասենք. մեզ աշխատեցնում եւ մեր քրտինքի արտադրութիւնները դուք էք վայելում, մեզ սոված թողնում: Իսկ երբ այդ հրէշաւոր անարդարութիւնը մենք նկատում ենք, իսկոյն մեզ ճնշում էք մեր շինած զէնքերով, մեր սեփական զաւակների ձեռքով:

Այդ ամէնը մենք առաջ չէինք հասկանում, որովհետեւ յիմար էինք, տգէտ: Իսկ տգէտ էինք, որովհետեւ ցրուած էինք. ամէն մէկս աշխատում էր դաշտերում ցրիւ եկած,

այս ու այն մանր արհեստանոցներում: Եթէ ստրուկ կամ ճորտ ժամանակներս ապստամբէինք, տիրողները բազմաթիւ էին եւ լաւ զինուած, իսկ մենք, թէեւ նրանցից շատ էինք, բայց անզէն ոչխարներ էինք. ռազմական ուժը նրանց ձեռքն էր: Իսկ այժմ տարբեր է: Երբ վերացաւ ճորտութիւնը, երբ հիմնուեց ընդհանուր զինուորագրութիւնը, մենք դարձանք կռուող բանակը. զօրքի մեծ մասը մեզանից է առնւում, թէեւ սպաները դեռ եւս կեղեքող դասակարգերից են:

Սակայն այդ դեռ քիչ է. մենք կարող ենք շատ լինել, բոլորս էլ զինուած, բայց տգէտ, չիմանալ, թէ ինչպէս է լինում, որ մենք օրն ի բուն աշխատում ենք, բայց քաղցած ենք մնում, իսկ հոգեւոր հայրը, հողատէրը եւ կապիտալիստը կամ բնաւ չեն աշխատում, կամ շատ քիչ աշխատում, բայց միշտ փառաւոր ապրում: Մենք կարող ենք այդ բոլորի պատճառը չիմանալ կամ համարել աստուածային դիրք:

Ահա այստեղ մեզ օգնութեան է գալիս գիտութիւնը: Պատահում ենք անկեղծ, մաքուր եւ սրտացաւ գիտնականներ, որոնք բացատրում են, թէ որտեղից եւ ինչպէս են ստեղծւում հարստութիւնները: Բացւում են մեր աչքերը: Մենք որ այժմ հազարներով ենք հաւաքուած գործարաններում, հանքերում եւ խոշոր հողատէրերի կալուածներում, միշտ իրար հետ խօսում, դարդ դարդի ենք տալիս, մեր ցաւը լալիս, ազատուելու, աւելի լաւ ապրելու ճամբաներ խորհում: Մեզանից մի քանիսի զաւակները բաւական կրթութիւն են ստանում՝ այս ու այն պատահմունքի շնորհիւ: Մեր կրթուած զաւակներից շատերը ծախւում են իրենց խիղճն ու հոգին հարուստներին. դառնում նրանց գործակից, նրանց նման կեղեքող: Բայց լինում են եւ այնպիսիները, որոնք մնում են մեր մէջ, բացատրում մեզ աշխարհի չարն ու բարին, ցոյց են տալիս հարուստների ստացւածքի աղբիւրի, միլիոնների կուտակման ճանապարհները: Մեր աչքերը բացւում են. մենք կազմակերպւում ենք: Մենք զգում ենք, որ թէեւ մենք, աշխատաւորներս ու մեզ կեղեքողները միեւնոյն ազգի զաւակներն ենք, բայց նրանք կեղեքում են մեզ: Մենք համոզ-

ւում ենք, որ արտաքին թշնամու, մեր լեզուն, մեր գրականութիւնը, մեր ազգային աւանդութիւնները ճնշել կամեցողի դէմ մենք պէտք է կռուենք, ձեռք ձեռքի տուած հողատէրերի և կապիտալիստների հետ: Բայց դրանից այն կողմ՝ գալիս է մեր նիւթական և քաղաքական շահերի խնդիրը, և մենք համոզուած ենք, որ որքան լռենք, այնքան աւելի պէտք է կեղեքուենք: Եւ մենք վճռում ենք կռուել մեր իրաւունքների համար:

Մենք համոզուած ենք, որ հողատէրն ու կապիտալիստն ուզում են մեզ շատ աշխատեցնել, քիչ վարձ վճարել: Երբ մենք բողոքում ենք անհատաբար, ամէն մէկս առանձին, մեզ խեղդում ճզմում, յաղթում են: Բազմաթիւ անհատներ մեզանից այդպէս ճզմուեցին, որ հացի կարօտ մնացին, մինչեւ որ մենք խելքի եկանք և ըմբռնեցինք, որ մենակ, անհատաբար կռուել չենք կարող. որ պէտք է կռուել խմբով, բոլոր զրկուածներս, բոլոր կեղեքուածներս միասին:

Այդ խնդրում էլ մեզ օգնութեան հասան մտաւորական անհատները: Նրանք մեզ բացատրեցին, որ պէտք է կազմակերպել. որ ամէն մի արհեստի մէջ կեղեքուող բոլոր աշխատաւորները պիտի միանան, մի միութիւն կազմեն. յետոյ պէտք է բոլոր արհեստների մէջ կազմուած միութիւնները միանան կամ դաշնակցեն և կազմեն բոլոր կեղեքուածների մի ամբողջ միութիւն կամ աշխատաւորների կուսակցութիւն: Մեր ամէն մի արհեստակցական միութիւնը ներկայացնում է աշխատաւորական մարտնչող բանակի մի վաշտ. բոլոր վաշտերը միացած՝ միահամուռ կռիւ են մղում բոլոր կեղեքողների դէմ:

Մենք գիտմամբ այդ բոլորը պատմեցինք բանուորի բերանով, որպէսզի ցոյց տանք, թէ ինչպէս, ինչ ճանապարհով է կատարուել դասակարգային կազմակերպութիւնը, ինչպէս է յղացել դասակարգային կռուի պարզ, սկզբնական տեսութիւնը (թէօրին) բանուորների և նրանց իդէօլօգների կամ գաղափարախօսների գլխում:

Շարունակենք այժմ տարբեր ձեւով:

Բանուորական հաստ ու կուռ կազմակերպութիւնների մենք

պատահում ենք դեռ եւս XVIII դարում: Լիոնում, մետաքսագործարանների բազմաթիւ բանուորները մի քանի անգամ գործադուլներ են արել դեռ մինչեւ 1789-ի Մեծ Յեղափոխութիւնը: (*) Այդպիսի փաստեր կարող ենք բերել նաեւ անգլիական բանուորութեան կեանքից: Սակայն այդ բոլորը կրում են իրենց վրայ պատահականութեան կնիքը: Նախ այդ կազմակերպութիւնները եղել են խիստ կարճատեւ. Նրանց մեծ մասը ծնունդ է եղել օրուայ, վայրկեանի պահանջի: Կատարել են մի գործադուլ, կամ բողոքարկութիւն են տուել կամ ոչ — երկու դէպքում էլ լուծուել է ժամանակաւոր կազմակերպութիւնը և բանուորութիւնը կրկին մնացել է անհատօրէն, լուծուած վիճակում: Բացի այդ՝ բանուորութիւնը եթէ նոյն իսկ որոշ չափի կազմակերպութիւններ ունեցել է, մանաւանդ Անգլիայում, դրանք չեն ունեցել որոշ իդէալներ ապագայ հասարակակարգի վերաբերմամբ. նրանց նպատակը եղել է յոկ մի բան — մի քիչ բարելաւել իրենց վիճակը: Իսկ թէ այդ «վիճակի բարւոքումը» ինչ ուղղութեամբ կը լինի, — դա միեւնոյն է համարել: Կարող էր պատահել, որ բանուորներից մի քանիսի դրութիւնը կը լաւանար, նոյն իսկ նրանք կը դառնային կեղեքողներ. ընդունելի էր այդ էլ: Մի խօսքով, չկար մի ընդհանուր իդէալ ամբողջ աշխատաւորութեան վերաբերմամբ. ամէն խմբակ մտածում և գործում էր յոկ իր համար: Բանուորութիւնը դեռ չէր գիտակցում, որ պէտք է ստեղծել այնպիսի հասարակակարգ, որի մէջ հնարաւոր չլինի կեղեքման սկզբունքը, մարդը մարդուն շահագործելու երեւոյթը:

Դեռ շատ հին ժամանակներից մարդկութեան մէջ ապրող հանրային կամ ընկերական թշուառութիւնների առաջն առնելու համար առաջարկել են զանազան միջոցներ, որոնք ներկայումս կոչւում են «Ուտոպիներ»: Հին դարը տուել է իր

(*) Տես Մ. Կովալեւսկի — «Արդի դէմոկրատիայի ծագումը» I հատոր (ռուսերէն):

Պլատոնը, միջին դարն իր Աքուինացի Թօմասը և այլ կրօնական ուտօպիստները, նոր դարն իր Թօմաս Մօօրը, Թօմազօ Կամպանելլան, իր Սէն Սիմօնը, Ֆուրիէն, Ռօբէրտ Օուէնը, Աբբէ Մաբլին և այլն: Սրանք բոլորն էլ առաջարկել են ծրագիրներ՝ կազմակերպել հասարակութիւնն այնպիսի սկզբունքներով, որ այնտեղ թշուառութիւն երբեք չլինի:

Սակայն, երկա՛ր շարք մտածողների, հասարակական փրկարար կազմակերպութիւններ առաջարկողների ձայնը մնում էր առանց արձագանքի, գիւղացիների ու բանւորների բանակները մնում էին լռակեաց անտարբեր դէպի այդ՝ կրկնուող կոչերը: Անհնարին է ենթադրել, որ այդ աշխատաւոր դասակարգերն այն ժամանակ նեղուած, զրկուած չէին: Որ նրանք զրկուած և թշուառ էին, այդ մենք տեսնում ենք, օրինակ, Ֆրանսիայում ժաքերի շարժման ժամանակ, 1357-ին, գիւղացիական այն սոսկալի ապստամբութիւնը, որ ստացաւ յետոյ Ժաքրի ապստամբական անունը: Տեսնում ենք Անգլիայում 1381 թւին Ուատ Տայլօրի ղեկավարութեամբ զայրացած և արիւն սիրող գիւղացիներ, որոնց դէմ մանր ազնուականութիւնը XIV դարի կէսերին մէկը միւսի ետևից ընդունել տուեց պարլամէնտի մէջ աշխատանքի վերաբերեալ սաստիկ նեղիչ օրէնքներ: Տեսնում ենք 1525-ին, Լութերականութեան շարժման օրերին, Գերմանիայում, ուր կեղեքման ծայրը հասած գիւղացիութիւնը, Թօմաս Միւնցէրի ղեկավարութեամբ ապստամբում և իր որոշ պահանջներն է ներկայացնում:

Այդ բոլորը ցոյց են տալիս, որ թշուառութիւնը կար, դժգոհութիւնն էլ կար, բայց չկար դասակարգային գիտակցութիւնը, միանալու, մի ուժ կազմելու և ընդհանուր շահերը միասին պաշտպանելու գաղափարը: Կար բանւորութիւն, կար աշխատաւոր գիւղացիութիւն. դրանք կեղեքւում էին շատ աւելի դաժանօրէն, քան այսօր. կար աշխատաւոր դասակարգ, բայց նա կար լոկ իբր ֆիզիքական էութիւն. պակասում էր գիտակցութիւնը, պակասում էր կուլտուրական տարրը:

Իսկ այդ գիտակցութիւնը, որ նիւթական չէ, չափազանց մեծ նշանակութիւն ունի: Այսօր Գերմանիայում կայ բանւոր

դասակարգ, բայց Կովկասում և Թիւրքիայում, օրինակ, և՛ կայ, և չկայ միաժամանակ: Ֆիզիքական գոյութիւնը չէ, որ դարեր շարունակ պակաս է, այլ գիտակցութիւնը: Այդ կէտը խոստովանում են Մարքսն ու Էնգէլսը, երբ «Մանիֆէստի» մէջ (1847 թւ.) մի քանի անգամ պնդում են, որ «իրենց կուսակցութեան մօտակայ նպատակն է պրոլէտարը դարձնել դասակարգ» («Bildung des Proletariast zur Klasse.»): Այդ միտքը նրանք մի քանի անգամ են արտայայտում զանազան դարձուածներով: Դա նշանակում է, որ պրոլէտարիատ կար, բայց դա դասակարգ չէր, որովհետև պակասում էր սեփական գոյութեան գիտակցութիւնը:

«Տնտեսական յարաբերութիւնները, — ասում է Մարքսը «Փիլիսոփայութեան աղքատութիւնը» գրուածքում, որն ուղղուած է Պրուդօնի դէմ, — ազգաբնակութեան զանգուածները դարձրին բանւոր: Կապիտալի տիրապետութիւնն ստեղծեց այդ զանգուածների համար վիճակի նոյնութիւն, շահերի նոյնութիւն: Այսպիսով, այդ զանգուածները դարձան դասակարգ՝ կապիտալի վերաբերմամբ, բայց ոչ դասակարգ ինքն իր մէջ (für sich): Մեր ուրուագծած կռւում այդ զանգուածները միանում են, կազմւում իբր դասակարգ ինքն իր մէջ կամ ինքն իր համար: Նրա պաշտպանած շահերը դառնում են դասակարգային շահեր: Բայց մի դասակարգի կռիւը միւսի դէմ միշտ քաղաքական կռիւ է»: Սակայն միայն պրօլէտարիատի մասին չէ խօսքը. այդ ճշմարտութիւնը — այսինքն գիտակցութեան անհրաժեշտութիւնը — արդարացի է և բուրժուազիի համար: Բուրժուա դասակարգի զարգացման մէջ Մարքսը նոյնպէս նկատում է երկու փուլ (փազիս). «Նախ այն փուլը, որի ընթացքում բուրժուազին միայն կազմակերպւում էր՝ աւատականութեան և բացարձակ միապետութեան տիրապետութեան տակ, և երկրորդ՝ այն փուլը, երբ բուրժուազին, իբր արդէն կազմաւորուած դասակարգ, վայր գլորեց աւատականութիւնը և միապետութիւնը և հասարակութիւնը վերածեց բուրժուական հասարակութեան: Այս փուլերից առաջինն աւելի երկարատև էր և պահանջում էր մեծ ջանքեր»: (*)

---

1) K. Marx — «Das Elend der Philosophie», եր. 180

Ուրեմն՝ դասակարգը նախ ծնունդ է առնում, ֆիզիքապէս գոյութիւն է ստանում: Այդ փուլի մէջ նա կայ, կանգնած է միւս դասակարգերի կամ կողքին— եթէ շահերը համերաշխ են,— կամ դիմացը, եթէ շահերը հակադիր են: Սակայն նա դեռ դասակարգ է ուրիշների, հակադիր շահերի տէր և աւելի գիտակից դասակարգերի համար, բայց ինքն իր համար, ինքն իր նկատմամբ դեռ դասակարգ չէ, որովհետև դեռ գիտակցութիւն չկայ: Այսպէս, XIV դարի կէսերում անգլիական մանր արհեստաւորութիւնը գիտակցօրէն օրէնքներ էր քուէարկել տալիս և անցկացնում պարլամենտում, այնպիսի օրէնքներ, որոնք ուղղուած էին գիւղացիների շահերի դէմ: Արհեստաւորութիւնը գիտակից դասակարգ էր, այն, որ Մարքսը կոչում է «für sich», ինքն իր համար, իր սեփական գոյութիւնն զգացող: Գիւղացիութիւնը նոյնպէս գոյութիւն ունէր իբր դասակարգ, մանաւանդ նրա ստրկատիրոջ և հողատէրի համար: Նա կեղեքւում էր արհեստաւորութեան ձեռքով, բայց դեռ չէր զգում իր սեփական գոյութիւնը, մինչև որ մանր արհեստաւորութեան կեղեքող մտրակը ցնցեց նրանց, գիտակցութեան բերեց: Այն ժամանակ նրանք կազմեցին մի իսկական դասակարգ, «für sich» ասածը. ըմբռնեցին իրենց սեփական շահերը, հանեցին Ուատ Տայլօրին և բաւական ժամանակ զարհուրանքի մէջ պահեցին բարձր դասակարգերը: Վերջինները միայն, ջարդ ու փշուր արին դեռ լաւ չկազմակերպուած գիւղացի դասակարգի ապստամբութիւնը: Չէ՞ որ դասակարգերի կռիւն էլ, ինչպէս ամէն մի կռիւ, իրական ուժերի չափաբերութեան խնդիր է:

Միջնադարեան արտադրական ձևերը— մանր հողագործական կամ ճորտատիրական տնտեսութիւնը և մանր արհեստաւորական կամ համքարական կարգը նպաստաւոր չէին գիւղացի և բանւոր աշխատաւորների գիտակցութեան համար: Մանր-մանր երկրագործական տնտեսութիւնները և մանր արհեստանոցները ցրում, իրարից բաժանում էին բոլոր աշխատաւորներին. նրանք ամենևին հաւաքւելու, համախմբւելու, իրար հետ շփւելու հնար չունէին: Իսկ դա գիտակցութեան

ամենաանհրաժեշտ նախապայմաններից մէկն է: Այն տեղ, ուր մենք այդ նախապայմանը տեսնում ենք գէթ մասամբ իրականացած, իսկոյն տեսնում ենք և գիտակցութեան առաջին նշոյները: Այսպէս եղաւ միջնադարեան շրջանի իտալական մանր հանրապետութիւնների մէջ, ուր popolo grasso (բարձր դասը) և popolo minuto (ցածր դասը կամ մանր մարդիկ) կատաղի կռիւ էին մղում իրար դէմ՝ իրենց դասակարգերի շահերի համար: Շահն էլ չպէտք է հասկանալ միայն և միայն դրամի խնդիր, այլ և ազատութեան, իշխանութեան, զարգացման, բարոյական և այլ զուարճութիւնների շահի խնդիր:

XVI դարից այս կողմ զարգացող մանուֆակտուրական արտադրութիւնը, մանաւանդ XIX դարի ընթացքում արագ զարգացող մեքենական արտադրաձևը հաւաքեցին բանւորներին հսկայական գործարանների մէջ, միաւորեցին նրանց: Միւս կողմից հողային խոշոր կալւածներում մեծ դանդաղութիւնով ներս թափանցող մեքենական մշակումը, հունձը, կալ ծեծելը և այլ աշխատանքներ նոյնպէս հաւաքեցին, գէթ չնչին չափով, գիւղական պրոլէտարիատը: Այդ հաւաքումները մի կողմից տեղի տւին աշխատաւոր զանգւածներին իրար հետ շփւելու, զարգանալու, իրար պատմելու իրենց ցաւերը, իրար դարդ լալու, կարճ՝ գիտակցութեան զարթնելու: Իսկ միւս կողմից, օր օրի վրայ արագ զարգացող մեքենաներն աւելացրին մարդկային ստեղծագործող աշխատանքի թափը, նրա արտադրական կարողութիւնը: Գոյացող հսկայական հարստութիւնները պարզ ցոյց էին տալիս բանւորներին իրենց աղքատ ու թշւառ վիճակը: Այդ հարստութիւնների կուտակումը գործատէր սակաւաթիւ անհատների ձեռքում՝ աւելի եւս սաստկացնում էր բանւորի և գործատիրոջ հարստութիւնների մէջ եղած վիհը: Եւ կամաց-կամաց, աստիճանաբար ծնունդ էր առնում գիտակցութիւնը: Բանւոր դասակարգը, որ մինչ այդ վաղո՛ւց արդէն ֆիզիքապէս գոյութիւն ունէր, այժմ սկսում էր գիտակցել իր դասակարգային գոյութիւնը: XVIII դարավերջից մինչև XIX դարի կէսերը մեքենան ու գործարանները կատարեցին իրենց հաւաքիչ, կենտրոնացնող դերը:

Մտաւորականները, գիտութիւնը, քաղաքն էլ կատարեցին իրենց բացայայտիչ դերը: Այդ երկու տարրերը — արտաքինը կամ օբեկտիւը և ներքինը (մտաւոր) կամ սուբեկտիւը զարգացրին իրար, միախառնուեցին, գործակցեցին և դրանից առաջ եկաւ բանւոր դասակարգի սոցիական գոյութեան գիտակցութիւնը:

XIX դարի սկզբում նորակազմ բանւորական դասակարգի մէջ գիտակցութիւնն այնքան պակաս էր, որ ծնունդ տուաւ մի ծայրայեղ համոզում. «Եթէ մարդիկ գիտակցեն, իսկոյն կարող են շինել մի այնպիսի իդէալական հասարակութիւն, որ այլեւս գոյութիւն չեն ունենայ ներկայի տառապանքները»: Գաղափարներին վերագրում էր այդ ամենազօր ուժը, որովհետև մտածողները տեսնում էին, որ դարեր շարունակ գոյութիւն են ունեցել զրկուածներ ու տառապողներ, բայց նրանք երբեք չեն կարողացել կազմակերպուել և փրկել իրենց նեղ վիճակից: Այդ երևոյթն ահա դրդում է Սէն-Սիմոնին, Ֆուրիէին, Անֆանտէնին, Բազարին և շատ ուրիշ սրտացաւ անձերի կարծել, թէ փրկութեան միակ հնարը գիտակցութիւնն է. բաւական է, որ մարդիկ գիտակցեն իրենց դրութիւնը և իմանան նրանից դուրս գալու ճամբան — իսկոյն հասարակութիւնը կը փրկուի. կը թագաւորեն հաւասարաւոր կոմունիստական կարգերը. բոլորը կ'աշխատեն և բոլորն էլ կ'ապրեն իբր հաւասարաւոր անհատներ:

Գիտակցութեան այդ կարապետները մեծ հանճարով ասպարէզ իջան: Կրակէ բառերով նրանք խարազանում էին իրենց օրերի հասարակական անարդարութիւնները, թշուառութիւնն ու ծայրայեղ չքաւորութիւնը: Ոգեւորուած կոչեր էին անում աշխատաւոր տառապողներին կազմակերպուելու, դրախտ վերաշինելու այս աշխարհի վրայ: Նրանք և իրենց աշակերտներն ու հետեւորդները կազմակերպում էին նոյն իսկ փորձնական փոքրիկ համայնքներ, չափուած ու ձեւուած իրենց մեծ վարդապետների փրկարար սկզբունքների վրայ: Բայց ոչինչ չէր օգնում:

Դարուս կապիտալը հսկայական քայլերով առաջ էր վազում: Շոգեմեքենան ու երկաթուղիները նոր ու նոր շուկաներ էին բաց անում եւրոպական արտադրութիւնների համար: Ապրանքների պահանջը հսկայական չափերի էր հասնում և դրան համապատասխան՝ տիտանական քայլերով ընդարձակւում էր արտադրութիւնը: Կապիտալը գրեթէ մի սերունդի աչքի առջեւ՝ զարնում, ջարդ ու փշուր էր անում մանր արհեստաւորներին: Կարթրայթի հնարած մի մեքենական դազգահ բառացիօրէն սրբեց տնայնագործութիւնը կամ ջուլհակութիւնը քաղաքակիրթ աշխարհից: «Ազատ-կապիտալը» հզօր թափով սկսեց քաղաքները հաւաքել գիւղական աղքատութեան մի խոշոր մաս: Կարճ, շատ կարճ ժամանակում միջնադարեան հին ու կայուն վարձկան արհեստաւոր բանւորների տեղ առաջ եկաւ պրոլետարիատի հսկայ բանակը: Հողից, արհեստանոցից, արտադրական բոլոր միջոցներից զրկուած մարդկային ահագին խմբերը լցուեցին արտադրական խոշոր կենտրոնները: Նրանց վիճակը դարձաւ խաղալիք կապիտալիստների ձեռքին. նրանց կուշտ կամ սոված լինելը, նրանց բարօրութիւնը թշուառ եղեգնի պէս սկսեց տարուբերուել համաշխարհային պահանջի շուկայի առջեւ: Իսկ որ ամենից սոսկալին էր, նրանց ամէն մի հատուածի, նոյն իսկ ամէն մի անհատի երջանկութիւնը կախուած մնաց միւս մասերի և անհատների մրցումից:

Զարհուրելի եղաւ առաջին տպաւորութիւնը: Մարդիկ շշմած էին: Սէն-Սիմոնների ու Ֆուրիէների սրտացաւ և մարդասէր կոչերը մնում էին «ձայն բարբառոյ յանապատի»: Կեանքը յաղթական, կեանքը բարձրագլուխ՝ ոտնակոխ էր անում նրանց մեծասիրտ քարոզները և սրարշաւ առաջ սլանում: Մի հանգամանք աւելի եւս կսկծեցուցիչ էր դարձնում ժողովրդական զանգուածների պրոլետարացումը, նրանց թշուառացումը. այն՝ որ այդ պրոլետարացումն ու թշուառացումն ամենից առաջ և ամենից արագ կատարւում էր Անգլիայում, ազատութեան այդ օրրանում, յետոյ Ֆրանսիայում, ազատութեան երկրորդ հայրենիքում: Էլ ինչո՞ւ մասնակցեցին աշխատաւորները, յեղափոխութիւնների մէջ. ինչո՞ւ քանդեցին հին կարգերը, ինչո՞ւ այնքան արիւն, այնքան զոհեր, եթէ կրկին պէտք է լինէր թշուառ մնալն: Դէմոկրատիզմը — հանրաքուէն, կրօնքների հաւասարութիւնը, արտօնութիւնների և առանձնաշնորհումների վերացումը, բարքերի դէմոկրատացումը — այս բոլորը առաջ էին ընթանում, կեանքի մէջ արմատ բռնում. բայց այդ բոլոր քաղաքական երևոյթների դիմաց մնում էր մի շա՛տ էական ասպարէզ ալէկոծութեան ճիրաններում: Դա անհասկանալին էր: Կարծես թէ, որքան որ դէմոկրատիզմը կամ քաղաքական հաւասարութիւնն աճում էին, այնքան աւելի տնտեսական վիհը մեծանում էր ունևորների և չունևորների միջև:

Եւ տառապող մարդկութեան ուղեղն սկսում է երազել, նոր ու նոր արդարադատական ուղիներ որոնել. արդեօք չէ կարող պատահել, որ թշուառութեան օր օրի վրայ աւելանալուց ծնուեն առնէ երջանկութիւնը: Գերմանական մեծ փիլիսոփայ և արտախոս (դիալէկտիկ) Հէգելն ասել էր, որ բացասականից է ծնում դրականը. որ նախ դրականն է, ապա գալիս է նրա ժխտումը կամ բացասումը և վերջ ի վերջոյ այդ ժխտման ժխտումը — նրա բացասումը, «դարձի կամ վերադարձի ինքն իրեն գտնելը» կամ սինթէզը: Եւ մարդկային տառապող, ճզմուած միտքը մի գերագոյն ճիգ է թափում, մի յուսահատական փորձ է գնում, հնարելով մի տխուր և խենթ մխիթարութիւն իր տառապող ուղեղի և փշաքաղուած խղճի համար:

Այդ հոգսաշատ, այդ ցնցոտիապատ և տառապող մարդիկը, — մտածում է ներկայի հոգեբանական տառապանքի տակ ճզմուած մասնագիտական ուղեղը, — չեն կարող երկար դիմանալ. տառապանքի ո՞րքան ծով-բանակը պէտք է ստիպէ նրանց շուտով կազմակերպուել. թշուառութեան ո՞րքան կուտակուած բեռը պիտի զայրացնէ նրանց և մարտի դաշտը մղէ: Ու իրօք, մեքենական արտադրութիւնն արդէն իսկ միացրել է նրանց, կազմել բնական վաշտեր, գնդեր ու բանակներ, համախմբելով միևնոյն շէնքերի, միևնոյն կենտրոնների և շրջանների մէջ:

Այդ տեղից, այդ մտածելակերպից արդէն մի քայլ է մի-

նում մինչև այն զարհուրելի և խելայեղ տեսութիւնը (թէօրին), որ կոչւում է Verelendungstheorie, այսինքն՝ աղքատացման տեսութիւն: Ներկայ հասարակական թշուառութիւնների ելքը պէտք է որոնել նոյն իսկ թշուառութեան մէջ: Թշուառութեան ծայրայեղ աստիճանը պիտի բարիք ստեղծէ. պիտի ցնցէ տառապողներին, պիտի կազմակերպէ նրանց և փշրէ կապիտալիստական տնտեսութեան բոլոր մասնաւոր կողմերը և պիտի ստեղծէ ցանկալի, իդէալական հասարակակարգը: Ուրեմն՝ աւելի լաւ չէ, որ ցանկանք հողազրկման, պրօլետարացման արագացում, ցանկանք, որ ներկայումս կատարւող հին համայնակարգի քայքայումն արագանայ, մարդիկ աւելի շուտով ստիպուած լինեն քամելու կեանքի դառնութեան ամբողջ բաժակը, որպէսզի զարթնումն աւելի ևս արագանայ: Որքան որ ներկան վատ լինի, որքան որ խորը լինի մարդու ցանկացած ժխտումը, այնքան աւելի մարդը մօտ կը լինի յեղաշրջման, այսինքն՝ իրեն ճնշող ու տանջող կապիտալի համայնական տիրապետութեան: Այս տեղից պարզորոշ կերպով բղխում է — «որքան վատ, այնքան լաւ»:

Բացի այդ՝ օր օրի վրայ աճում, խոշորանում է կապիտալը. նրա արտադրական զօրութիւնն առնում է այնպիսի չափեր, որ հնարաւոր է դարձնում կապիտալի համայնական տիրապետութիւնը, համայնական աշխատանքը և կազմակերպուած բաշխումը: Այլ ևս երկիւղ չկայ, որ եղած արտադրամիջոցները չեն կարող ստեղծել բոլոր մարդկանց բաւարարութեան տալու չափ գործածական արժէքներ.

Աղքատացման կամ թշուառացման թէօրին (տեսութիւնը) լիապէս ցուցադրող, իր բարբարոսական հետևանքներով քարոզող ու պաշտպանող չէ եղել, բայց նա հզօրապէս ազդել է շատ գրողների ուղեղի և երևակայութեան վրայ: Այսպէս, հին մարքսիզմի այն կարծիքը, թէ գիւղացիները պէտք է հողազրկուեն, պրօլետարանան, թէ դա մի բնական երևոյթ է՝ քանի կայ կապիտալիզմը. թէ գիւղական համայնքը իր համայնական հողատիրութեամբ պէտք է քայքայուի, թէ պաշտպանել համայնական հողատիրութեան ներկայ ձևը՝ բուրժուական ձգտում է, թէ այդ քայքայումը, եթէ նոյն իսկ մենք չըցանկանք, հնար չունենք արգելելու, թէ գիւղացու և մանր արհեստաւորի սեփականազրկութիւնը թէեւ ցաւալի է, բայց օգնում է ընկերվարական երջանիկ կարգերին աւելի արագ հաստատելու համար, թէ այդ բոլորի առջեւ մտածող անհատը պէտք է կրկնէ Սպինոզայի խօսքերը — «Ոչ լալ, ոչ խնդալ, այլ հասկանալ,» — այդ բոլորը արգինք և հետեւանք են մեր ասած թէօրիի:

Սակայն հաճելի չեղաւ ամենադէտ կեանքին թաւալուել այդ սեւ ուղիով: Բանւորները փիլիսոփայօրէն չհաշտուեցին իրենց վիճակի վերջնական թշուառացման: Նրանք այն կարծիքի չեղան, թէ պէտք է պահանջել կամ բոլորը միանգամից կամ ոչինչ: Խարազանուած թշուառութեան առաջին ուժգին հարուածներից, նրանք նախ չըմբռնեցին բանի էութիւնը և, օրինակ, Անգլիայում, յարձակուեցին կատաղօրէն գործող գործարանների վրայ, ջարդ ու փշուր արին այն հսկայ նորելուկ մեքենաները, որոնք իրենց, ջուլհակ բանւորների ընտանիքները շպրտել էին փողոց, զրկել աշխատանքից ու հացից: Բայց երբ մի քանի այդպիսի խելագար փորձեր ապացուցին բանւորներին, որ անկարելի է յաղթահարել ամենազօր կապիտալը, նրանք ըմբռնեցին իրենց սխալը և սկսեցին մանրակրկիտ պըրպտումներ, նոր ուղիների որոնումներ: Անցեալ դարի առաջին կէսի ընթացքում նրանք սկսեցին կազմակերպուել նախ իբր արհեստակցական միութիւններ. սկսեցին ձեռք բերել զանազան տեղական և մասնակի բարելաւումներ: Յետոյ աստիճանաբար գիտակցութիւնն ընդլայնուեցաւ, արհեստակցական միութիւնները տեսան, որ ամէն մէկն առանձին անզօր է դիմադրել իր հասարակական հակառակորդին, որ այդ դիմադրութիւնը հնարաւոր է միմիայն կուսակցական կազմակերպութեամբ, որի մէջ պիտի միանան բոլոր արհեստների աշխատաւորները: Եւ 1840 թուերից այս կողմ սկսուեց աշխատաւորութեան կուսակցական քիչ ու շատ կանոնաւոր կեանքը: Բանւորութիւնն սկսեց մասնակցել պետական կեանքին, պատգամաւորներ ընտրել պարլամէնտների համար, մանել քաղա-

քական կռուի ասպարէզը, գործնական ծրագիր մշակել, դնել նուազագոյն պահանջներ, մէկ գործնական քաղաքականութիւն. նա նախ դրեց «աշխատանքի իրաւունքի» հարցը, յետոյ սկսեց հետամտել գործարանական կամ բանւորական օրէնսդրութեան, բանւորի ապահովագրման՝ դժբաղդ դէպքերի և ծերութեան պահուն:

Սակայն մինչ այդ գործնական փոփոխութիւնը, բանւոր դասակարգի մէջ մանելը, կատարուեց մի րէաքսիոն մտածողների ուղեղներում:

Սէն-Սիմօն, Ֆուրիէ, Ռօբէրտ Օուէն և ուրիշները, իբր րէաքսիոն եղած իրադարձութեան, յայտարարեցին, որ արտաքին կամ նիւթական պայմանները ոչինչ են, էականը գիտակցութիւնն է, եթէ մարդիկ գիտակցեն իրենց թշուառութեան պատճառները, կարող կը լինեն նաեւ բուժելու, նրանցից ազատուելու հնար կամ ելք գտնել: Դա ծայրայեղ գաղափարապաշտութիւնն էր: Այդպիսի մարդկանց էր, որ Նապոլէօն Բօնապարտն արհամարհոտ ձեւով կոչում էր իդէօլոգ կամ գաղափարախօս:

Յետագայ մտածողները — նախ ֆրանսիական պատմաբանները, մանաւանդ Օգիւստէն Տիէրին, և յետոյ արդէն գերմանացիներից Մարքսն ու Էնգէլսը — հարց տուին. «Ինչո՞ւ մինչեւ օրս չէր ծագում այդ գիտակցութիւնը. ինչո՞ւ նա ծագեց մեքենաների և խոշոր արտադրութեան հետ միասին»: Եւ նախկին ծայրայեղ իդէալիզմի դիմաց դուրս եկաւ մի նոր րէաքսիոն — ծայրայեղ մատերիալիզմը: Գիտակցութիւն, բարոյականութիւն, քաղաքականութիւն, կրօն, իրաւունք — ամէն ինչ յայտարարուեցին երկրորդական, միակ էականը, միակ հիմնականը տնտեսականն է, արտադրութեան ձեւը, որն իր կարգին՝ պայմանաւորուած է արտադրութեան գործիքներով: Եթէ քո արտադրական միջոցները մանր գործիքներ են, դու կ'ունենաս մանր արհեստաւորական և մանր գիւղացիական տնտեսութիւն և քո հասարակութիւնդ էլ կազմուած կը լինի համքարութիւններից (էսնաֆ), մանր հողատէր գիւղացիութիւնից և դրանց գլխին կանգնած հնութեան մնացորդ հոգեւորականներից և ազնւականներից: Իսկ երբ քո գործիքներդ կը զարգանան, կը ստեղծւին մեքենաներ, այն ժամանակ կը կանգնեն խոշոր գործարաններ, կապիտալիստական խոշոր արտադրութիւն և քո հասարակութիւնդ էլ բաղկացած կը լինի արտադրութեան միջոցներից բոլորովին զրկւած պրոլետարներից, հողազուրկ և անտուն գիւղացիներից, մանր արհեստաւորներից, միջակ և խոշոր գործարանատէրերից, առևտրականներից, Հնութեան մնացորդ և նոր ծնւած խոշոր կալւածատէրերից և հոգևորականներից: Մարքսը հաշւում է ութ դասակարգ, ուրիշները. օրինակ՝ պրոֆէսոր Զոմբարտը մի քիչ աւելի, երրորդները միմիայն 3, և այլն:

Իսկ երբ այդ մեքենաները, հողագործական և արտադրական միջոցները չափազանց կը մեծանան և մանր գիւղացին բոլորովին հողազուրկ կը լինի, իսկ մանր արհեստաւորն ու մանր առևտրականը բոլորովին կը զրկւեն իրենց արտադրամիջոցներից և չնչին ստացւածքներից, կարճ՝ երբ բոլորը կը դառնան պրոլետար, և արտադրամիջոցները, ինչպէս և հողը կը կուտակւեն չնչին թւով մարդկանց ձեռքերում, այն ժամանակ առա այլևս անհնարին կը լինի ներկայ կարգերի գոյութիւնը: Թշւառութեան ծայր հասած աշխատաւորութեան հեղափոխական բանակը մի հարւածով կը ջնջէ չնչին թւով կեղեքիչներին. բոլոր արտադրութեան միջոցները և հողը կը դարձնէ հանրութեան անբաժան սեփականութիւն. բոլոր մարդիկ կը դառնան աշխատողներ. բոլորը կաշխատեն և արտադրածը կը բաշխեն բոլորի մէջ՝ համաձայն ամէն մէկի թափած հանրօգուտ աշխատանքի:

Բայց, ինչպէս պարզ երևում է ցուցադրածից, գիտակցութիւնն այս գործում կատարում է երկրորդական դեր. գլխաւոր շարժիչը, միակ հրամանատարը տնտեսականն է — արտադրամիջոցները, նրանց վրայ ձևւած արտադրութեան ձևերը և նրանց համապատասխանող, կամ նրանց վրայ կերտւած դասակարգերը: Մի խօսքով, ամէն ինչ բղխում է արտաքին (օբեկտիվ) տնտեսակարգից, իսկ ներքինը կամ սուբեկտիվը այդ արտաքինի կամ օբեկտիվ տնտեսականի արտա-

ցոլացումն է: Սա է պատմութեան տնտեսական կամ մատերիալիստական ըմբռնումը:

Դրա հիմնադիրները ընդունում էին, որ աղքատացումը (Verelendung) կամ թշւառացումն այնպէս արագ է կատարւում, պրոլետարացումն այնքան գահավէժ թափով է ընթանում, որ շատ կարճ ժամանակում, — դեռ XIX դարը չլրացած, ասում էր Էնգէլսը, — պիտի պայթի բուրժուական հասարակակարգը և պիտի թագաւորէ ընկերվարութիւնը:

Այսպէս էին մտածում 40-ական թւականներում:

Սակայն գործնական կեանքում բացասական փաստն աւելի սուր կերպարանք չէր ընդունում: Ընդհակառակը, կամաց-կամաց դէպքերը գալիս էին ապացուցելու թէօրիի սխալները: Պարզւում էր, որ ընկերային և տնտեսական անխուսափելի համարւած ճգնաժամը հեռանում էր: Կապիտալը կատաղօրէն արշաւում էր, աւերածներ անում, բայց չէր կարողանում բոլորին հողազուրկ անել: Խոշոր արտադրութիւնը տեղ-տեղ սպանում էր արհեստաւորական տնտեսութիւնը, բայց ամենուրեք չէր կարողանում արմատախիլ անել արհեստաւորներին, գործարան լցնել բոլորին: Կապիտալի յաղթական թափն այնքան արագ ու հզօր չէր, որքան ներկայացնում էին Մարքսն ու Էնգէլսը: Գոյութիւն ունեցող պրոլետարիատն ու միւս աշխատաւորները չուզեցին աւելի և աւելի թաղւել թշւառութեան մէջ և սպասել աղքատացման գործողութեան բնական վախճանին, որպէսզի՝ համաձայն պատմութեան կամ դիալէկտիկայի, միանգամից ստանան բոլորը: Նրանք կազմակերպւեցին և սկսեցին գործնական կռիւ մղել իրենց կեղեքիչների դէմ, ինչպէս վերևում տեսանք: Եւ կեանքը ցոյց տւեց մանաւանդ Անգլիայում, տրէդ-ունիոնների կռւում, որ բանւորական կազմակերպութիւնները կարող են միանալ և իրենք բաց անել գործարաններ. ցոյց տւեց նաև այն, որ միացած բանւորութիւնը կռւի մէջ կարողանում է յաղթել: Կարճ, երևաց, որ թշւառութեան աճելուց չէ որ պիտի ծնի երջանիկ ապագան, այլ ներկայումս աստիճանաբար ձեռք բերւող բարօրութիւնների կուտակումից է կազմակերպւելու ապագայ հաւասարակէր հաստատակութիւնը. կեանքը ծնունդ է առնելու կեանքի սաղմից եւ ոչ մահից, ինչպէս գեղեցկօրէն հաստատում է պատմական պրոֆէսոր Ռ. Վիպպէրը:

Մեր նպատակը չէ մանրամասն քննութեան ենթարկել պատմութեան մատերիալիստական ըմբռնումը: Այդ մեծ ու դժուարին աշխատանքը թողնելով մի ուրիշ յարմար առիթի, մենք այժմ կը բաւականանանք մի փոքրիկ քաղուածքով Վիպպէրի աշխատութիւնից:

«Եւ յիրաւի, ինչ ասես որ չէ մտնում տնտեսական պայմանների բանաձեւի մէջ: Նրա մէջ են մարդկանց ֆիզիքական կեանքի բոլոր կարիքների բաւարարումը, մարդու գոյութեան պաշտպանումը, մարդու յարմարումը բնութեանը, ուրեմն եւ այդ յարմարման բոլոր մանրամասները, ինչպէս՝ — մարդուն պիտանի բոլոր գործարանաւոր եւ անգործարան իրերի ջոկելը, արտադրութեան տեխնիկան (մեքենական կողմը), ընկերային ուժի կազմակերպումը, մեքենաների գործածութիւնը, գիտութեան եւ գիւտերի ղեկավար դերը, մարդկանց բոլոր փոխյարաբերութիւնները, որ անհրաժեշտ են հարստութիւնների արտադրման համար ... բաշխման բոլոր յարաբերութիւնները, գիտական հետազօտութեան բոլոր աշխատանքները, որոնք պարունակում են իրենց մէջ մարդուն շրջապատող բնութեան միջոցների եւ ուժերի աւելի եւ աւելի խոր ուսումնասիրութիւնը, նոյնպէս եւ մարդկային բնութեան ուժերի ուսումնասիրութիւնը, գեղարուեստի ամբողջ աշխատանքը, որ ներկայացնում է մարդու ճարտարարուեստական հանճարի բարձրագոյն ծաղիկը: Չկայ մարդկային կեանքի որեւէ անկիւն, մէջը հաշուած եւ այն լսարանը, ուր մենք նստած ենք, եւ նրա մէջ կատարուող աշխատանքը, չկայ մարդկային գործունէութեան որեւէ ֆունկցիա (գործողութիւն), որը չմտնէր տնտեսական կամ նիւթական յարաբերութիւնների շրջանակի մէջ եւ որը հնարաւոր չլինէր քննել տնտեսական տեսակէտից:»

«Բայց նոյնը լիապէս կարելի է ասել եւ միւս երեւոյթի (կատեգորիա) մասին, որ մատերիալիզմը զետեղել է կեանքի նիւթականութեան հակադիր ծայրում, — տնտեսականին հակառակ ընկած կողմում: Ինչ խառնուրդով որ մենք առնում ենք, թէ տնտեսականը (էկոնոմիկան) թափանցում է ամբողջ կեանքի մէջ, նոյն խառնուրդով կարող ենք պնդել նաեւ, որ իդէօլօգիան, այսինքն կրօնը, իրաւունքը, գիտութիւնը, գեղարուեստը, կազմում է ամբողջ կեանքը: Եւ յիրաւի, բոլոր կենսական յարաբերութիւնները կարելի է դիտել իբր գաղափարական ապրումներ: Տնտեսութեան կամ քաղաքականութեան ամէն մի երեւոյթ ոչ միայն կարելի է յետոյ բանաձեւել գիտակցութեան մէջ, այլ եւ նա՝ ինքն ըստ ինքեան գոյութիւն ունի միմիայն այն չափով, ինչ չափով որ իրացւում կամ առնւում է մարդկանց գիտակցութեամբ: Եւ հարստութեան ծարաւը, եւ նրա համար մղւող կռիւը, եւ աղքատութեան ցաւը, եւ աշխատանքի եռանդը պարզօրէն կերպարանաւորւում են, երբ մարդկային գիտակցութիւնն ըմբռնում է նրանց: Կեանքը իրական յարաբերութիւնների ապրում է գաղափարների մէջ»: (*)

Եզրակացութիւնն ակներեւ է. կեանքը բաղկացած չէ ոչ բուն տնտեսականից, ոչ էլ բուն իդէօլօգիական տարրերից որեւէ մէկից: Նա բաղկացած է այդ բոլորի միաձոյլ ամբողջութիւնից: Նրա զարգացման մէջ ուժը ոչ բուն տնտեսականն է, ոչ էլ բուն միւս՝ իդէօլօգիական գործօնները, այլ այդ բոլոր գործօնների միաձոյլ ամբողջութիւնը, նրանց համադրութիւնը կամ սինթեզը: Սա էլ պատմութեան մօնիստական կամ միասնա բացատրութիւն է, բայց ոչ մատերիալիստական, ոչ էլ իդէալիստական մօնիզմ է, այլ համադրական կամ սինթեթիկան մօնիզմ:

Եւ այժմ այդքանով բաւականանանք այդ ծանր փիլիսոփայական խնդրի առթիւ եւ շարունակենք մեր վերլուծութեան թելը:

Անցեալ դարի 40-ական թուականներից Արեւմտեան Եւրոպայում բանւոր դասակարգը գալիս է գիտակցութեան. Նա

(*) Ռ. Վիպպէր. «Պատմական իմացականութեան տեսութիւնը», եր. 211-212:

ըմբռնում է, որ բոլոր արհեստներում աշխատողները միասին միանան, կազմեն մի բանւորական կամ աշխատաւորական բանակ, որ պէտք է կանգնի միւս հզօր բանակի — կեղեքողների բանակի դիմաց: Առեղծւում է Լօնդօնի «Բանւորական Ինտէրնասիօնալը» կամ «Կօմմունիստների կուսակցութիւնը»: Կազմակերպւում են այդ Ինտէրնասիօնալի կամ միջազգային ընկերութեան մասնաճիւղերը Ֆրանսիայում, Զւիցերիայում, Բելգիայում եւայլն: Փակւում է հին Ինտէրնասիօնալը և ապա վերակազմւում ուրիշ ուժով, 60-ական թւերին: Ընկերվարական շարժումը — թէ մարքսիստական և թէ մի քիչ տարբեր ուղով, հսկայական ծաւալ է ընդունում նախ Ֆրանսիայում, ապա Գերմանիայում և միւս երկրներում: Ընկերվարական կազմակերպութիւնները հիմք բռնելով և ընդարձակելով իրենց երկրներում, աստիճանաբար սկսում են արհամարհել պետութիւնների գծած սահմանները և ազգութեան տարբերութեան խնդիր, և իրար ձեռք մեկնել, կազմել միջազգային ընկերվարական դաշնակցութիւնը, որի առաջին համագումարը տեղի ունեցաւ 1889-ին, և որը մինչև օրս էլ, 3 տարին մի անգամ, կանոնաւոր պարբերական կօնգրէսներ է կազմում Եւրոպայի զանազան քաղաքներում: Այդ համագումարներին այժմ արդէն մասնակցում են ոչ միայն Եւրոպայի, Ամերիկայի և Աւստրալիայի բոլոր ժողովրդների պատգամաւորները, այլ և լիազօր ներկայացուցիչներ են գալիս Ճապօնիայից ու Թիւրքիայից: Այսօր այդ միջազգային ընկերվարական կազմակերպութիւնը դարձել է մի ահագնական բարոյական ուժ, որ ազդում է նոյն իսկ մեծ պետութիւնների համաշխարհային քաղաքականութեան վրայ: Իսկ առաջընթաց երկրներում — Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա, Բէլգիա — ընկերվարական կազմակերպութիւնների դերն ու ազդեցութիւնը հասել են բաւական ընդարձակ չափերի:

Դասակարգային կռիւ մղելու համար անհրաժեշտ է, ուրեմն, նախ գիտակցութիւն և ապա կազմակերպութիւն:

Կազմակերպւում են բանւորները իբր արհեստակցական միութիւններ կամ սինդիկատներ և ապա այդ բոլորը մտնում մի ընկերվարական կուսակցութեան մէջ:

Կազմակերպւում են և մանր արհեստաւորները ու գիւղացիները, համախմբւելով իբր արտադրական, սպառողական, գիւղացիական և այլ տեսակի միութիւնների մէջ և դառնալով անգամ նոյն ընկերվարական կուսակցութեան:

Կազմակերպութեան նպատակն է մղել տնտեսական և քաղաքական կռիւ իր ընկերային հակառակորդի— կեղեքող դասակարգի դէմ: Կռւի միջոցներն են գործադուլը, սաբօտաժը և բոյկոտը: Գործարանի և հողի տէրերը կամենում են շատ աշխատեցնել և քիչ վարձ վճարել աշխատաւորին, որպէսզի իրենց աւելի յաւելեալ արժէք մնայ: Իսկ աշխատողները, ընդհակառակը, կամենում են քիչ աշխատել— առ առաւելը 8 ժամ, և որքան կարելի է շատ օրավարձ ստանալ, այնքան՝ որ գործատիրոջը զուտ արդիւնք մնայ ոչ թէ 100—500 բանւորի օրավարձի չափ, այլ մասնաւորապէս 1-2 բանւորի ստացած վճարի չափով:

Գործադուլներով, բոյկոտներով և այլ մանր-մունր միջոցներով (սաբօտաժ եւայլն) աշխատաւորութիւնը պէտք է աստիճանաբար յառաջդիմէ, գրաւէ դիրքեր մէկը միւսի ետևից, աստիճանաբար: Այնքան պէտք է նա յարձակում գործէ իր հասարակական հակառակորդի դիրքերի վրայ, այնքան պէտք է զիջումներ դուրս կորզէ նրա ձեռքից իր կատաղի դասակարգային կռւով, որ մի գեղեցիկ օր կարողանայ տէր լինելն այլևս այնքան նախանձելի չլինի, որ այդ գեղեցիկ օրում գործատէրն ու հողատէրը, յոգնած և ուժասպառ, ստիպւած լինեն յայտարարել, թէ իրենք էլ են ուզում բանւոր դառնալ, աշխատել միւսների հետ հաւասարապէս և ապրել միւսների հետ հաւասարապէս:

Այս է դասակարգային կռւի նպատակը զուտ տնտեսական մասում:

Սակայն դրանով չէ բաւականանում աշխատաւորութիւնը: Նա ջերմօրէն զբաղւում է նաև ընտրական գործով: Բոլոր քիչ ու շատ քաղաքակիրթ երկրներում այսօր արդէն մուտ է գործել ընտրական իրաւունքը և սահմանադրութիւնը: Այնտեղ «կամօքն Աստուծոյ թագաւորները» չեն, որ իրենց քմահաճոյքով բարեհաճում են «հպատակին» օրէնքներ տալ «փրինց» ժողովրդներին, այլ ամէն երկիր արդէն ձեռք է բերել իր պարլամենտը: Ժողովրդներից մի քանիսն էլ — Զւիցերիա, Ֆրանսիա, Պորտուգալիա, — արդէն դուրս են նետել թագաւորները եւ այսօր փոխանակ գրելու «կամօքն Աստուծոյ թագաւոր» այսինչ, գրում են «կամօք ժողովրդի նախագահ» այսինչ: Բայց թէ այդ հանրապետութիւնները եւ թէ սահմանադրական միապետութիւններն այսօր կառավարւում են ժողովրդի ներկայացուցիչների մշակած օրէնքներով, նրանց կողմից կարգւած նախարարներով: Ուրեմն՝ այդ պետութիւնների ժողովում կամ պարլամենտներում կատարւում է օրէնսդրական իշխանութիւն. դրանք են, որ վարում են երկրի ներքին ու արտաքին քաղաքականութիւնը: Բնական է ուրեմն, պէտք է մասնակցել այդ պարլամենտների ընտրութիւններին, որովհետեւ այնտեղ են սահմանւում օրէնքները:

Ու աշխատաւորութիւնը մեծ թափով նետւեց ընտրական գործի մէջ: Նա ընտրեց իր ներկայացուցիչները եւ ուղարկեց պարլամենտ: Նրա մարդկանց թիւը նախ շատ քիչ էր պարլամենտում, որովհետեւ բանւորութեան եւ աշխատաւորութեան գիտակից մասի թիւն էլ շատ նւազ էր սկզբներում: Այսպէս, գերմանական Ռայխստագում ընկերվարական կուսակցութիւնը 1871-ին ունէր միայն մի պատգամաւոր, որովհետեւ ընկերվարականների ձայներն էլ չափազանց չնչին էին — միայն մի քանի հազար՝ ամբողջ երկրի մէջ: Այդպէս աճեց ընկերվարական կազմակերպութիւնը Գերմանիայում եւ դրա համեմատ էլ աճեց նրա պատգամաւորների թիւը Ռայխստագի մէջ. այսօր ստացւած ձայների թիւն է մօտ 4½ միլիոն, իսկ պատգամաւորների թիւը 110 հոգի, այսինքն՝ գրեթէ ամբողջութեան մի երրորդ մասը:

Նոյն շարժումը նոյն ձեւերով առաջ է գնել նաեւ եւրոպական միւս երկրներում, թէ եւ ոչ նոյն արագութեամբ եւ նոյն միաձայն ամբողջութեամբ եւ գիտակցական կազմակերպութեամբ, ինչպէս որ այդ տեղի ունեցաւ Գերմանիայում:

Ընկերվարական կազմակերպութեան բանակը մղում է տնտեսամարտ կեանքի դաշտում — գործարաններում եւ ագարակներում, իսկ նրա պատգամաւորները նոյն մարտի մի այլ ձեւը — կռւածը, կատաղօրէն մղում են օրէնսդիր մարմինների մէջ: Բացի այդ՝ նոյն աշխատաւորութեան գաղափարական պաշտպանները — մտաւորականութեան ընկերվարական տարրերը մղում են ոչ նւազ կատաղի մի կռիւ, — գաղափարի կռիւ: Նրանք դէմ են դուրս գալիս տիրող դասակարգերի տեսութիւններին, մերկացնում նրանց խախուտ հիմքերը, դիմակները պատռում նրանց խաբեբայական գաղափարների երեսից եւ տարածում աշխատաւորութեան հսկայական ստեղծագործող դերը, իսկ տիրող դասակարգերի պորտաբուծական կեանքը: Նրանք մտնում են աշխատաւոր ու մութ խուլերի մէջ, լոյսի ճառագայթներ տանում այնտեղ իրենց գրչով ու լեզւով, կազմակերպում գիտակիցներին, ցնցում, զարթեցնում խաւարի անգիտակից արգանդում միլիոններին:

Կատաղի է կռիւը: Դիւրութեամբ տեղի չեն ուզում տալ տիրողները: Նրանք մօտ 3000 տարի է սերունդից սերունդ փայփայել են հանգիստ ապրելու: Մարտը կատաղի է եւ յուսահատական: Դարերով հաստատւած եւ արմատացած կազմը դժւար է շուտով քանդել, եւ դեռ գուցէ երկա՜ր տեւէ կեանքի ու մահւան այս ահաւոր մարտը:

Դրւած նպատակի ծանրութիւնը եւ նրան հասնելու դժւարութիւնն այնքան մեծ են, որ նոր կռւի մտած եւ յաճախ յաղթահարւող չափազանց դանդաղ առաջ գնացող աշխատաւորական բանակի մէջ շատերը թերահաւատացան, շատերը յուսահատւեցան. շատերն էլ սխալ յայտարարեցին կռւի ընտրւած ճանապարհը:

Դրանից առաջ եկան մի քանի ուշադրութեան արժանի երեւոյթներ, որոնց վրայ արժէ կանգ առնել:

Ամենից առաջ հարց դրւեց, թէ արդեօք աստիճանական յառաջդիմութիւնը կամ բարեշրջումը բնական է. թէ աշխատաւոր դասակարգը միայն բարեշրջումով կարո՞ղ է արդեօք ստիպել կեղեքող դասակարգերին զինաթափ լինել, հողը եւ արտադրական միջոցները դնել բոլոր հասարակութեան արբռնապետութեան տակ, որովհետև կազմակերպւած հասարակական աշխատանքը — բոլոր աշխատողին և արդիւնքը բաժանւեն համաձայն ամէն մէկի աշխատաչափին: Բաւակա՞ն է միայն բարեշրջումը, թէ պէտք է, ասում., գնալ նաև յեղաշրջման: Էվոլիւցիո՞ն թէ րէվօլիւցիոն: Եղան գրողներ, մտածողներ և գործողներ, որ դաւանեցին միայն առաջինը, եղան և շատերը, որ ջատագովեցին երկրորդը՝ իբր փրկութեան միակ խնդրի և արագ միջոց:

Այդ խնդրի առիթով մենք արդէն մեր կարծիքը յայտնել ենք նախընթաց երեսներում, այլևս կանգ չենք առնի: Ասենք միայն այն, որ եղան և դեռ կան շատ այնպիսի անհատներ, որոնց համար ընդունելի է ընկերվարական ապագայ իդէալը, որին հասնելու միակ միջոցը համարում են ոչ միայն էվօլիւցիոն, այլ նաև փաստերով պրոպագանդը: Սրանք դաւանում են, որ ապագայում պէտք է ընկերվարական կարգեր լինեն, բայց իշխանութիւն, պետութիւն ասած բանը չպէտք է լինի, նոյն իսկ այնպիսի պետութիւն և իշխանութիւն, որի միակ նպատակը լինի կանոնաւորել արտադրութիւնը, որպէսզի հասարակութիւնը չմնայ առանց նիւթական, անհրաժեշտ գործածական արժէքների: Ոչ, — ասում են նրանք, — ամէն մի իշխանութիւն ենթադրում է ճնշում անձի բացարձակ ազատութեան: Թողէք մարդկանց ազատ, բացարձակ ազատ և նրանք ինքնաբերաբար կը միանան իրար հետ՝ առանց որ և է իշխանութեան կամ ճնշման, այնպէս՝ ինչպէս կենդանիների մէջ առաջ են գալիս գործակցութիւններ կամ ասօցիացիաններ:

Դրանք անիշխանականներն են: Այդ վարդապետութեան հետ միացած է նաև փաստերի պրոպագանդի գաղափարը. ռումբ նետել, ոչնչացնել բռնաւորներին, թագաւորներին, նախագահներին... փաստն ինքն ըստ ինքեան արդէն հզօր պրոպագանդ է ընկերվարական գաղափարի: Այս է նրանց միակողմանի և ախտաւոր մտածելակերպը:

Կասկած չկայ, որ երկար մտածելու բան չէ անարխիզմի կամ անիշխանութեան ապագայ իդէալը — բացարձակ ազատութիւնը:

Մենք նախամարդու և կենդանիների կեանքից արդէն գիտենք, որ բացարձակ ազատութիւնն ամէն բանում, նոյն իսկ անասնական կեանքում, տանում է դէպի ուժեղի տիրապետութիւնը, դէպի լիակատար անհաւասարութիւն: Ապագայի հասարակական կարգերը պէտք է ունենան կառավարութիւն, միայն իրերի, հարստութիւնների, արտադրութեան կառավարութիւն և ոչ մարդկանց բռնաւորութիւն, նրանց համոզումների ճնշում...

Աւելորդ է ասելն անգամ, որ անիշխանական վարդապետութեան հետևորդները ոչ մի կերպ չեն մասնակցում պարլամենտական ընտրութիւններին: Ընտրութիւններին մասնակցել, գնալ պարլամենտ, օրէնքներ մշակել՝ կը նշանակէ մասնակից լինել կառավարական գործին, այսինքն արմատից մերժել անիշխանական համոզմունքը: Ընդհակառակը, նրանք ամէն կերպ աշխատում են քանդել պարլամենտները, կործանել կապիտալիստական արտադրաձևերը, ոչնչացնել ամէն տեսակ հասարակակարգ և օր առաջ մատնել քաոսական վիճակի ներկայի փչացած և ախտաւոր հասարակութիւնը, որպէսզի «մեռնող հասարակութեան» մոխիրների վրայ ծլի ու ծաղկի «ազատական սոցիալիզմը» կամ անիշխանութիւնը: (*)

Պարլամենտական գործունէութիւնը միայն անիշխանականներին չհեռացրեց. նա գրգռեց իր դէմ նաև ընկերվարական բանակի մի խոշոր մասը, մանաւանդ Ֆրանսիայում: Բանւորների դատն շրթունքով առած, նրանց շահերն իրենց ոտքի տակ սանդուխք ծառայեցնելով՝ մինչև պարլամենտ հասած շատ մտաւորական ընկերվարական պատգամաւորներ այնպիսի դեր կատարեցին, որ աշխատաւորութեան մաքուր շարքերը զզւանք զգացին: Բացի այդ, ներկայումս տիրող ընտրական անարդար կարգերը — շրջանների բաժանումները,

---

(*) Այս ուղղութեան հիմնադիրներ են համարւում Ֆրանսիայում Պրուդոնը, Գերմանիայում Շտիրները. նրա խոշոր ներկայացուցիչներից էր ռուս հեղինակաւոր և հանճարեղ գործիչ Մ. Բակունինը. իսկ այժմ նրա փիլիսոփան են համարւում Պ. Կրոպոտկինը, Ժան Գրաւը և ուրիշները. Զարմանալի ասել, որ Էլի և Էլիզէ Ռեկլիւները ևս անիշխանական էին:

դրամի և ուրիշ կաշառքի ազդեցութիւնների կատարած դերն ընտրութիւններում, աշխատաւորութեան ազատութիւնն իր աշխատավարձի չափերի ընդունման գործում և ուրիշ բազմաթիւ պատճառներ կուտակելով, նրան մեծացնելու դէմոկրատիզմի և նրա գլխաւոր սկզբունքի — հանրաքուէի և ժողովրդապետութեան նշանակութիւնը: Աշխատաւորութիւնը տեսնում էր և դեռ այսօր էլ տեսնում է, որ պառլամէնտ ուղարկած իր ներկայացուցիչները — շատ են թէ քիչ — անկարող են որ և է բարելաւում մտցնել աշխատաւորների վիճակի մէջ օրէնսդրական կարգով: Փոխանակ սահմանադրօրէն քննելու այդ բարդ երևոյթի պատճառները և մաքառելու նրանց դէմ, փոխանակ հասկանալու ամբողջ դասակարգերի դրութիւնը և նրանց ձեռք բերած կարևոր առաւելութիւնների ու հզօր զէնքերի արդիւնաւորութիւնը և նրանց դէմ ամրացնելու իրենց ուժերը, հզօրացնելու իրենց համամարդկային մարտի ուժերը, — ընդհակառակը, աշխատաւորութիւնն ընկաւ մի այլ ուղի, մի ծուռ ճանապարհի վրայ:

Քաղաքական կեանքը — ընտրութիւնն ու օրէնքը մեզ ոչինչ չեն տալիս, մտածեցին խմբում աշխատաւոր դասակարգից շատերը. պառլամէնտները ծառայում են լոկ մի քանի փառամոլ անհատների շահերին: Մտաւորականները քանդում են աշխատաւորութեան տունը: Ուրեմն՝ կորչին մտաւորականները: Ահա այն ախտաւոր մտածելակերպը, որին հետեւեցին ոչ միայն բանւորները, այլ նաև մտաւորականները, ինչպէս Սօրէլ, Հիւբէր Լագարդէլ և շատ ուրիշներ: Ամենայն ինչ պէտք է կատարեն իրենք — աշխատաւորներն իրենց համար. իրենց դասակարգից չեղող ոչ մի անձ չէ կարող որ և է կերպ ըմբռնել իրենց վիճակը պահանջուած ճշտութեամբ: Պէտք է կազմակերպել արհեստակցական միութիւններ կամ սինդիկատներ ամէն մի արհեստի համար, կազմել նրանցից նախ մասնակի դաշնակցութիւններ և ապա բոլորից կազմել մի ընդհանուր ֆէդէրացիոն կամ դաշնակցութիւն, հիմնել աշխատանքի բորսաներ և այլն. և այլն: Եւ այդ ամէնի մէջ չընդունել ոչ ոքի, որ անմիջապէս աշխատաւոր չէ:

Այդ միութիւնները իրենք իրենց մէջ պիտի կազմուեն ու պատրաստեն ապագայ ընկերութեան տարրերը: Նրանք պիտի կռուեն մէկն ներկայ կարգերի և դասակարգերի դէմ՝ իրենց կազմակերպած բոյկոտներով ու գործադուլներով, մինչև որ մաշեն ու վերացնեն ամեն ներկայի նեխուած հաստատութիւնը և դասակարգերը: Նրանք սպառնում են նոյն իսկ մի օրում դադարեցնել կեանքն ամբողջ երկրում, քայքայել պետութիւնը, աղքատացնել ու սնանկացնել տիրողներին... Սա է ուղղակի գործողութիւն կամ action directe կոչուածը:

Դժուար չէ նկատել, որ սինդիկալիզմը չէ կարողանում ժամանակաւոր թերութիւնները, որ խիստ շատ և ուժեղ են պառլամէնտարիզմի մէջ, զանազանել սկզբունքային խնդրից. որ նա թերութիւններն ու հիմնական արատաւորութիւններն ընդունում է իբր սկզբունքից բղխած, նրա էութեան հետ կապուած պակասութիւն:

Սինդիկալիզմի այս մտածելակերպի մէջ եթէ մի ուղիղ բան կայ, դա այն է, որ սինդիկատներն իրենց մէջ մշակեն և կազմուեն ապագայ ընկերվարական կարգերի տարրերը: Մեր կարծիքով՝ օրէնսդրական և սինդիկալ ուղիների միահամուռ գործակցութիւնն է, որ պէտք է առաջ մղէ աշխատաւորութեան թէ ամբողջական դասակարգային կազմակերպութիւնը և թէ նրա շահերի հզօրագոյն պաշտպանութիւնը:

Այսպէս ուրեմն՝ անիշխանութիւնը և սինդիկալիզմը դասակարգային կազմակերպութեան և դասակարգային կռուի տեսութիւնից խոտորումներ են, հիւանդագին և միակողմանի շեղումներ, որոնք ուշ կամ կանուխ նորից պիտի գան և մտնեն դասակարգային կռուի առողջ հունի մէջ:

Դասակարգային համերաշխութեան խնդիրը.— Մի քանի երես առաջ մենք տեսանք, թէ ինչպէս Մարքսն ու Էնգէլսը և մի շարք ուրիշ մտածողներ յայտարարեցին, թէ մարդկային հասարակութիւնն առաջ մղող ուժը մարդկային հասարակութեան տնտեսականն է, արտադրամիջոցները: Արտադրութեան միջոցներն ստեղծում են որոշ ձևի արտադրութիւն, որի մէջ այս կամ այն յարաբերութեան մասն և այս կամ այն դերը խաղացող անհատները կազմում են դասակարգեր:

Նոյն այդ տնտեսութեան անհրաժեշտ լրացուցիչ մասը կազմում է դասակարգային կռւի վարդապետութիւնը:

Մարդկային պատմութիւնը ոչ այլ ինչ է, ասում է պատմութեան մատերիալիստական ըմբռնումը, եթէ ոչ դասակարգերի կռիւ: Մառայութեան արուեց մարդկային պատմութեան ամենախոշոր նուաճումներից մէկը — ազգերի, ցեղերի, տոհմերի ընդհարումները: Ամէն մի պատերազմ յայտարարուեց իբր տնտեսական շահերի ծնունդ, տնտեսական և դասակարգային միութիւններից բղխած: Այդ քայլը եղաւ մի տեսակ ռէակցիոն նախկին ծայրայեղ գաղափարապաշտ ուղղութեան: Մոռացուեց, որ յաճախ որ և է տիրող ընտանիքի կամ դինաստիի շահերի, յաճախ նոյն իսկ մի անհատի փառքի, քաջագործութեան համար են մղուել պատերազմները:

Քննելով մարքսիզմի այդ սկզբունքը, Պետերբուրգի համալսարանի պրոֆէսոր և երևելի համբաւած մարքսիստ Տուգան-Բարանովսկին առաջ է բերում Էնգելսից հետևեալ կտորը: «Ամէն մի քաղաքական կռիւ դասակարգերի կռիւ է, և ամէն մի դասակարգային կռիւ, որ մղւում է այդ դասակարգի ազատագրման համար, չնայելով նրա բացառապէս անհրաժեշտ քաղաքական ձևին, — չէ որ ամէն մի դասակարգային կռիւ քաղաքական կռիւ է, — գործը վերաբերում է դասակարգերի տնտեսական ազատագրմանը (Էնգելս «Անտիդիւրինգ», եր. 165): Այս կտորը մէջ բերելով, Տուգան-Բարանովսկին ասում է. «Չէ կարելի հակադրել քաղաքական «բռնութիւնը» (իշխանութիւն) «տնտեսական շահին» (հարստութեան) այն պատճառով, որ իշխանութիւնը կարող է լինել և շատ յաճախ լինում է ինքն իր նպատակը, իսկ հարստութիւնը միշտ ծառայում է իբր միջոց որ և է այլ բանի»: (*)

Եւ իսկապէս, եթէ աչքէ անցնենք մարդկային պատմութեան արիւնոտ էջի վրայ թուարկած բոլոր պատերազմները, մենք կը տեսնենք, որ տնտեսական օգուտներ ձեռք բերելու համար մղուող պատերազմներից նուազ չեն թւով նաև այն

Տուգան-Բարանովսկի «Մարքսիզմի տեսական հիմքերը», եր. 27 (ռուսերէն)

պատերազմները, որոնց նպատակն է փառասիրութիւնը, յաճախ միանգամայն ֆանատիկ և նիւթապէս քայքայող հաճոյքի և շատ այլ պատճառներ:

Եթէ խորօրէն քննադատենք դասակարգային կռւի տեսութիւնը, մենք կը տեսնենք, որ նրանով անհնարին է բացատրել գիտութեան և բարոյականութեան խնդիրները, և այլ բազմաթիւ երևոյթներ:

Զուտ դասակարգային տեսակէտից նայելով, մեզ համար անըմբռնելի պէտք է մնայ մարդասիրութեան դերը, որի մասին Կ. Կաուցկին այսպէս է խօսում. «Մարդասիրութիւնը հասարակական մի ոյժ է, որն ամենից աւելի դիւրութիւնով կարգաւորւում է բարձրացող դասակարգային և գաւառային սահմանափակութիւններից, համակելով իդէալիստական ձգտումներով և հանդիսանալ արտայայտիչ ոչ թէ ժամանակաւոր և առանձնացած շահերի, այլ ամբողջ հասարակութեան մշտական շահերի համագումարին»: (*)

Ինչպէս բացատրել զուտ դասակարգային տեսակէտով այն, որ բուրժուական տարրերն անգամ ներմուծեցին բանւորական օրէնսդրութիւնը, փոքրահասակների աշխատանքի կրճատումը և այլն: Այդ արդիւնաւէտ օրէնքների և բանւորական միութիւններ կազմելու ազատութիւնը ձեռք բերողները և ջանք թափողները չէին բանւորները, այլ, օրինակ, Անգլիայում Ռիչարդ Օուէնը և ուրիշները, որոնք՝ իրենք բուրժուաները:

Ազգերի պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, որ զանազան ժամանակաշրջաններում հասարակութիւնները համակւել են որոշ գաղափարներով, որոնք դառել են համատարած և ընդհանրական հասարակութեան գրեթէ բոլոր շերտերի համար: Շատ հեռուները չյիշենք. վերածնութեան շրջանում հիւմանիստներ կամ մարդասէր գաղափարները, բարին ու գեղեցիկն էին, որ տիրում էին մարդկանց մտքերին, որ տիրապետօրէն ղեկավարում էին հասարակական խաւերը. կրօնական ռէֆոր-

---

(*) Կաուցկի.— "Bernstein und das socialdemokratische «Programm» երես 133.

մտափոխի կամ բարեկարգման պահանջ` մէջին և հիւսիսային Եւրոպան գրեթէ ամբողջապէս կլանուած էր կրօնական հարցերով — բռնակալութիւնն ու Աստուածաշունչն իրար հետ հաշտեցնելու գրեթէ անհնարին խնդրով. Ֆրանսական Մեծ Յեղափոխութեան նախօրեակին և արիւնոտ օրերին ամբողջ Ֆրանսիական ազգը — առանց դասակարգերի խտրութեան, ոգեւորուած և տարուած էր ազատութեան և հաւասարութեան կամ դեմօկրատիզմի գաղափարով: Իսկ XIX դարի ընթացքում հարստութիւնների արտադրութիւնն այնքան զօրացաւ, հասարակական խաւերի նիւթական կարողութիւնների մէջ եղած վիհն այնքան մեծացաւ և դեմօկրատիզմն այնքան տարածուեց, որ, կամայ-ակամայ, մարդիկ ընկան մի նոր միակողմանիութեան մէջ: Բոլոր մարդիկ իրար հաւասար են օրէնքի առջև, — ահա դեմօկրատիզմի էութիւնը: Սակայն կեանքն անհերքելիօրէն ցոյց է տալիս, որ անհատապէս մարդիկ ամենևին իրար հաւասար չեն և որ այդ իսկ անտեսուած տիրող անհաւասարութիւնից են ծագում ներկայի բոլոր հասարակական թշուառութիւնները: Այստեղից մինչև պատմութեան մատերիալիստական ըմբռնումը մի քայլ է:

Ամենայն ինչ ծնւում և շարժւում է արտադրամիջոցների շնորհիւ և մարդկային պատմութիւնը միայն ու միայն հակադիր շահեր ունեցող դասակարգերի կռիւ է: Դժուար չէ, ուրեմն, եզրակացնել, որ դասակարգերի շահերն իրար հակառակ են. նրանք համերաշխ լինել չեն կարող. եթէ համերաշխեն էլ, այդ համերաշխութիւնը կը լինի շատ կարճատև: Փաստերը շատ են. անգլիական բանւորներն ու գործատէրերը երկար ժամանակ [illegible] համերաշխութիւն էին ցոյց տալիս գաղութային խնդիրներում, որովհետև երկուսի էլ շահը ժամանակաւորապէս համերաշխ էր: Նոյն Անգլիայում թնդանօթներ շինող գործարանների բանւորները պաշտպանում էին Բօէրների դէմ յայտարարուած անարդար նուաճողական պատերազմը և այդ հարցում ձեռք-ձեռքի տուած էին ընթանում Չէմբերլէնի պէս մի կատաղի քաղաքականութեան հետեւող անձի հետ եւայլն, եւայլն: Սակայն, կրկնում ենք, այդ հա-

մերաշխութիւնը ժամանակաւոր է. իսկ մշտական դրութիւնը շահերի հակադրութիւնն է:

Այդպէ՞ս է արդեօք: Քննենք:

Շահերը հակադիր են, ասում են մատերիալիստները: Սակայն ո՞ր շահերը, — ահա էական խնդիրը: Մատերիալիզմը շահեր ասելով` հասկանում է միայն նիւթական շահերը: Այո՛, այդ մտքով, միայն, դասակարգերի շահերն իրար հակառակ են, ինչպէս վերլուծեցինք և ապացուցեցինք II գլխում: Բայց մենք տարբերւում ենք մատերիալիստներից նրանով, որ շահեր ասելով` չենք ըմբռնում միմիայն նիւթական շահերը. մեզ համար կան և այլ տեսակի շահեր — քաղաքական, ազգային, բարոյական, կրթական — մի խօսքով իդէօլօգիական կամ գաղափարախօսական շահեր: Մարքսականներն էլ ընդունում են այս շահերի գոյութիւնը իբր փաստ, բայց պնդում են, որ դրանք արտադրեալներ կամ բղխեալներ են, վերնաշէնք, ինչպէս բնորոշել է Մարքսը, — մի վերնաշէնք, որ կառուցուած է տնտեսական հիմունքների վրայ: Այդ պատճառով նըրանք պնդում են, որ եթէ դասակարգերի հիմնական շահերն իրար հետ համերաշխ են, այդ վերնաշէնքի խնդիրներում էլ համերաշխ կը լինեն:

Այդ տեղ է ներկայ դիալեկտիքական մատերիալիզմի միակողմանիութիւնը, նրա խոցելի կողմը: Մենք վերևում արդէն տեսանք, որ այդ միակողմանի փիլիսոփայութիւնը չէ՛ դիմանում քննադատութեան: Եթէ մարդկային պատմութիւնը ներկայացնենք մի հաստ և անհունօրէն շարունակւող ձող, բաղկացած նիւթական, բարոյական, գաղափարական, իրաւական, քաղաքական և այլ հիւսուածքներից և քննադատական սուր դանակով կտրենք այդ ձողը թէ նախապատմական, թէ հին, թէ միջին և թէ նոր դարերի պատմութեան շրջաններում բոլոր կտրուածների մէջ էլ մենք կը տեսնենք նոյն հիւսուածքները. ոչ մի կտրուածքի չենք հանդիպի, որի մէջ պակասէր կամ նիւթականը, կամ գաղափարականը կամ որ և է մէկը միւս հիւսուածքներից: Մեզ ասում են, թէ արմատում միայն անհատականն է: Սակայն, որքան էլ մենք վարենք իջնում մարդկային պատմութեան ասպարէզով, ամէն տեղ գտնում ենք այդ բոլոր բաղադրիչ մասերը. նրանք բոլորն էլ գոյութիւն ունեն թէ քաղաքակիրթ անգլիացու, թէ բարբարոս նէգրի և թէ վայրենի Բուշմէնի, Ֆուէջիի, Դակոտայի, Բոտոկուդի, էսկիմոսի և ցէյլոնի Վէդդայի մէջ։ Այդ բաղադրիչ հիւսուածքներից մէկը կարող է հաստ լինել, միւսը բարակ, սակայն նրանք բոլորն էլ կան մարդկային պատմութեան երեւակայական ձողի մէջ և բոլորն էլ ընթանում են իրար հետ միասին, զուգահեռաբար։

Մեր այդ համեմատումից պարզօրէն բղխում է, որ դասակարգերն էլ ունեն բազմաթիւ շահեր և որ այդ շահերից ոչ մէկը չէ ձուլւում միւսի մէջ, ոչ մէկը չէ բղխում միւսից, այլ բոլորն էլ միասին կազմում են մի ամբողջութիւն— մարդ անհատի կարիքները։

Այսպէս ըմբռնելով դասակարգային շահերը, տեսնենք թէ որտեղ համաձայնութեան եզրեր կան զանազան դասակարգերի մէջ։

Այս գլխի սկզբում մենք ապացուցինք, որ մի ազգի գըրկում գոյութիւն ունեցող դասակարգերի մէջ կան նմանողական և տարբերական տարրեր։ Մենք եկանք այն եզրակացութեան, որ ազգի ֆիզիքական գոյութեան, լեզուի, դպրոցի, գրականութեան, գեղարուեստի եւայլ շատ այդպիսի խնդիրներում դասակարգերն, իբր միենոյն ազգի գրկում եղած ստորաբաժանումներ, ունեն իրար հետ նման տարրեր, ուրեմն և նման շահեր։

Ֆրանսիական ազգի ֆիզիքական գոյութիւնը հաւասարապէս անհրաժեշտ է թէ բանւորի, թէ բուրժուայի, թէ աշխարհականի և թէ հոգեւորականի համար։ Այդ շահերի ընդհանրութիւնն էր, որ դրդեց Բէբէլի նման մի ֆանատիկոս ընկերվարականի յայտարարել գերմանական Ռայխստագի մէջ, թէ ինքն առաջինը կը լինի, որ զէնք կառնէ և կը դառնայ թշնամու դէմ, եթէ նա կամենայ մտնել Գերմանիա և ոչնչացնել գերմանական ազգի անկախութիւնը։ Յար և նման յայտարարութիւն են արել նաև Ժօրէսը և ուրիշ ընկերվարականներ։

Այո՛, Հայրենիքի և Ազգի փրկութեան խնդրում բոլոր դասակարգերի շահերն էլ համերաշխ են։ Եթէ վատ մարսած միջազգայնութիւնը մթագնում է այս կամ այն անհատի ուղեղը, [illegible] է, նրան հակազգայնօրէն և ընդդէմ Հայրենիքի— բնական և ոչ բնութեամբ զրկուած Հայրենիքի մեծ գաղափարին, դա պէտք է համարել մի դժբաղդ թիւրիմացութիւն և ամէն կերպ ջանալ փարատել այդպիսի անձերի խակ ուղեղներում կուտակուած մշուշը։

Դպրոց, գրականութիւն, լեզու, գեղարուեստ, աւանդութիւնները նոյն՝ ընդհանուր են ազգի ներսում գոյութիւն ունեցող բոլոր դասակարգերի համար։ Ուրեմն նրանց բոլորի շահերն էլ պահանջում է, որ իրենց ազգային լեզուն, ազգային գրականութիւնն ու դպրոցը, ազգային գեղարուեստը— թատրոն, երգ, պար, եւայլն եւայլն, ոչ միայն յարատեւեն, այլ և զարգանան, յառաջդիմեն։

Այս ասպարէզում էլ, անկասկած, ամէն մի դասակարգ աշխատում է և պէտք է աշխատի ներմուծել, պատկերացնել և իրագործել իր դասակարգային իդէալը։ Օրինակ, թատրոնում աշխատաւորութիւնը կը ձգտի ցուցադրել իր սեփական կեանքը, իր տառապանքը, իր մասին մտածող հերոսներին (օրինակ, Հաուպտմանի «Ջուլհակները», Միրբոյի «Ժան Ռուլ» եւայլն), միւս դասակարգերն էլ կը ձգտեն բեմ հանել իրենց կեանքն ու հերոսներին... Եւ դասակարգերից որն աւելի ուժեղ է և՛ թւով, և՛ նիւթականով, և՛ մտաւորով ու բարոյականով, նա աւելի տեղ կը բռնէ ազգային գեղարուեստի մէջ։

Մինչև վերջին ժամանակները մշտապէս յաղթողը լինում էր կեղեքող դասը— բուրժուաները, հողատէրերը և հոգեւորականները, որովհետև միայն նրանք էին, որ շատ ազատ ժամեր և նիւթական միջոցներ ունէին նուիրելու համար գեղարուեստի և գիտութեան [illegible]։ Իսկ աշխատաւորութիւնը մինչև XIX դարի երկրորդ կէսերն այնպիսի ողորմելի նիւթական և մտաւոր պայմաններում էր, որ ոչ մի հնար չունէր նուիրուելու այդ ասպարէզին։ Սակայն երբ դէմօկրատիզմը մի քիչ թափանցեց ժողովրդների վարք ու բարքի մէջ, երբ բանուորութիւնն իր կռւով կարող եղաւ ձեռք բերել աշխատաժամերի որոշ կրճատում եւ օրավարձի մի չնչին բարձրացում. վերջապէս՝ երբ ուսումն ամէն տեղ պարտադիր դարձաւ, երբ ժողովների, մամուլի եւ խօսքի ազատութիւնն իրականացաւ կեանքի մէջ, — աշխատաւորութիւնն էլ սկսեց իր միջից արտադրել տաղանդաւոր բանաստեղծներ, հռչակաւոր ճառախօսներ, գիտնականներ, հրապարակագիրներ եւ այլն: Բուրժուական դասակարգերն, ընդհակառակը, սկսեցին խամրել աստիճանաբար: Այսօր այդ զոյգ գործողութիւնը կատարւում է մեր աչքի առջեւ. մի կողմից պարզորէն նկատւում է բուրժուական գրողների անկումը, նրանց օր օրի վրայ աւելի եւ աւելի տափակ ու ձանձրալի դառնալը, բուրժուա գիտնականների ծանծաղիլը, իսկ դրա հակառակ՝ ընկերվարական գրողների աստիճանական զօրանալը, նրանց բարգաւաճիլը, ընկերվարական գիտնականների հեղինակութիւն ձեռք բերելը:

Անցան ընդմիշտ այն օրերը, երբ Հայնէն համոզուած էր, թէ դէմոկրատներն ու ընկերվարականները, որոնցից ամէնավատ տեսակի ծխախոտի հոտ է փչում, մի օր պէտք է իր «Buch der Lieder»-ի (Երգերի գիրք) թղթերով հաւկիթ կամ կանաչի փաթաթեն... Այո՛, անցան այն օրերը, երբ բոլորն էլ համոզուած էին, որ դէմոկրատիզմն ու ընկերվարութիւնն անընդունակ են ըմբռնելու գեղարուեստը. որ նրանց համար «կօշիկներն աւելի բարձր են քան Շէքսպիրը», ինչպէս պնդում էր ռուս հռչակաւոր քննադատ Պիսարեւը 1860-70 թւերին: Վէրհարնի, Մաքսիմ Գորկիի, Ադա Նէգրիի եւ շատ ուրիշ ընկերվարական գրողների բարձր բանաստեղծական գործերը եկան ապացուցելու, որ ընկերվարութիւնը դէմ չէ գեղարուեստին, որ աշխատանքն ու գեղեցիկը իրար ջնջող չեն, այլ ամբողջապէս իրար լրացնող. որ բուրժուական հարուստ խաւերի փչացած, պղտորուած ջղերն այժմ անընդունակ են ըմբռնելու իսկական գեղեցիկն իր բոլոր պարզութեան եւ վեհութեան մէջ. որ այդ հիւանդ ջղերի եւ պղտորուած ճաշակի արդիւնք են դեկադանսը եւ այլ իբր թէ նոր ուղղութիւնները գեղարուեստի մէջ:

Ազգի մէջ գոյութիւն ունեցող դասակարգերի շահերը համերաշխ են ազգային հարցերում, իսկ ներքական խնդիրներում նրանք հակամարտ են:

Որ հարցերն են, որ կեանքի մէջ գերակշռող դեր են հանդիսանում: Մարքսիստներն, առանց երկար մտածելու, իսկոյն կը պատասխանեն այդ հարցին. — տնտեսական շահերը: Հանճարեղ ուսուցիչն այդպէս է ասել եւ ամէնքն էլ կրկնում են նոյնը: Սակայն երբ մենք ուշադրութեամբ հետեւում ենք մեր շուրջը թաւալող երեւոյթներին, գտնում ենք տարբեր եզրակացութեան: Հայահալած քաղաքականութիւնը Կովկասում — հայ դպրոցների, հայ ընկերութիւնների, հայ մամուլի հալածանքն ու փակումը, հայ ազգային-եկեղեցական կալուածների բռնի գրաւումը, հայ-թաթար ընդհարումները. — այդ բոլորը ցոյց են տալիս, որ տիրող կառավարութիւնը, ուրեմն եւ տիրող դասակարգերը չեն հարուածում միայն հայ աշխատաւորին: Երբ փակւում են հայ դպրոցը, երբ խափանւում են հայ հրատարակչական, բարեգործական եւ այլ ընկերութիւններ, երբ ամէն տեսակ խոչընդոտ են հանում հայ մտքի եւ արուեստի զարգացման առջեւ, դրանով վնասւողն ամենեւին չէ կարելի համարել միայն աշխատաւորը. հաւասարապէս եթէ շահերը, դէթ որոշ չափերով, վնասւում են բոլոր դասակարգերն առանց բացառութեան:

Երբ Թիւրքիայում հայահալած քաղաքականութիւնը պարզորէն գործադրւում է յատկապէս հայկական վեց վիլայէթներում, վնասը կամ հարուածը կրկին հասնում է այնտեղի բոլոր հայերին, առանց որեւէ դասակարգային բացառութեան: Նամօլէ Ռուշէն կամ Բէյօ Հիւսէյն փաշան երբ յարձակւում են այս կամ այն տեղի վրայ, իրարից չեն ջոկում աշխատաւոր-պրօլէտար գիւղացուն՝ գիւղական կիսաբուրժուայից կամ վաշխառուից. նրանք կողոպտում եւ սպանում են բոլորին հաւասարապէս:

Այս բոլորն աչքի առաջ ունենալով, մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ Ֆրանսիայում, Գերմանիայում, Անգլիայում, ուր ազգի դէմ հալածանք չկայ, կեանքի մէջ տնտեսական առաջին տեղը բռնում է դասակարգերի կռիւն իրար մէջ։ Այդ պարագաներում տնտեսական տարրն է գլուխ բարձրացնում. իրար դէմ կռւողի կողմ են մղում դասակարգերը, որոնցից առանձնաբար թուլացնեն իրենց հակառակորդներին։ Բայց այն բոլոր վայրերում, ուր գոյութիւն ունի ազգային հալածանք, ուր մի տիրող կամ մի հզօր դրացի կամենում է կլանել մի այլ հպատակ կամ դրացի թոյլ ժողովուրդ. — այդ բոլոր վայրերում ազգի ներսում միջդասակարգային կռիւը բթւում, թուլանում է. թողնում են նիւթական շահերը և բարձրագոյն ընդհանրանում, առաջ են գալիս ազգային շահերը։ Բոլոր հակամարտ շահերի տէր դասակարգերը միանում, մի բանակ են կազմում, որոնցից զինւորների [illegible]. թող չտան ոչնչանալ իրենց ազգի գոյութիւնը, իրենց լեզուն, գրականութիւնը, դպրոցը և այլն։

Մղւող ազգային ընդհանուր կռիւը ժամանակաւոր կերպով մոռացնել է տալիս զուտ դասակարգային շահերը։ Այնպէս է թւում, որ մի ազգի ներսում բոլոր դասակարգերն իրար հետ համերաշխ, իրար բարեկամ են։ Որքան յաճախ և երկարատև լինեն այդպիսի ազգային կռիւները, այնքան աւելի մթագնում և խամրում է դասակարգային գիտակցութիւնն աշխատաւորութեան մէջ, այնքան աւելի թուլանում է ընկերվարական ապագայ երջանիկ կարգի համար մղւող մարտը։

Դրա դէմն առնելու երկու հնարաւորութիւն է մեզ ներկայանում։ Կարելի է և պէտք է այնպէս անել, որ այլևս ազգային հարց չլինի, այն ատեն հակամարտ դասակարգերն ձեռք ձեռքի տուած առաջ գնան հանրային թշնամու դէմ։ Յատկապէս այդ նպատակին հասնելու համար է, որ երկու ուղի կամ երկու հնարաւորութիւն է ներկայանում մեզ։ Ազգային հարցը կամ ազգային բախումները կարելի է ոչնչացնել մի կարճ, մի կտրուկ միջոցով. մտածում են շատերը. լինել կոսմոպոլիտ կամ համաշխարհաքաղաքացի. արհամարհել և՛ ազգ, և՛ հայրենիք։ Փոքր ազգերը պէտք է ձուլւեն հզօրների, մեծ ազգերի մէջ։ Ազգերն էլ կենտրոնացող են, ինչպէս կենտրոնանում են կապիտալները, հողերը, առևտուրը և այլն։

Ով մտածում է ազգի և հայրենիքի մասին, նա նացիոնալիստ է, ազգամոլ է, շովէն է։ Թողնենք այդ «բուրժուական կատէգորիաները» և զբաղւենք միայն դասակարգային կռւով և կռւենք. — «Մեզ համար գոյութիւն ունի միմիայն երկու ազգ. բոլոր երկիրների պրօլետարները մէկ ազգ են, բոլոր երկիրների բուրժուաներն էլ մէկ ազգ»։

Ազգային հարցը քննելիս, մենք տեսանք, որ այդ ճանապարհը շատ հեռու չի տանի մեզ։ Տեսանք, որ այդ քարոզը տալիս էր Մարքսը և նրան հետևելով, կրկնում էին Լիբկնէխտն ու շատ ուրիշները։ Բայց տեսանք նոյնպէս, որ կեանքը եկաւ ու փշուր-փշուր արեց այդ անմիտ, այդ անմարմին կոսմոպոլիտիզմը։ Ընկերվարական գիտութիւնների համար միանգամայն պարզւեց, որ դասակարգային կռիւը պէտք է մղել և փաստօրէն մղւում է ազգի գրկում, ազգը կազմող դասակարգերի մէջ։ Ինչպէս որ բնութեան բոլոր երևոյթները տեղի են ունենում տարածութեան և ժամանակի մէջ, այնպէս էլ հանրային բոլոր երևոյթները— ուրեմն և դասակարգերի կռիւը, տեղի է ունենում ազգի ներսում։ Շատ էլ մենք կարհամարհենք ազգային հարցը, շատ էլ ձուլման կողմնակից կը լինենք, բայց դրանով նա չի դադարի։ Մենք կարհամարհենք, բայց նա ամէն անգամ մեր դէմ կը ցցւի խէնջարի պէս. մեզ կարգիլէ որևէ դասակարգային գործ կատարել, առանց հաշւի առնելու ազգայինը— լեզուն, գրականութիւնը, դպրոցը և այլն— մի խօսքով՝ ազգային ոգին։ Գերմանիայի [illegible] Աւստրիան, որովհետև ամենևին չուզեց հաշւի առնել այդ չարաբաստիկ ազգային հարցը։ Եւ խնդրի էական կամ տեսական լուծումն էլ մենք պարտական ենք Աւստրիային, ազգային հարցի այդ դասական հայրենիքին, մանաւանդ նրանում գործող ընկերվարական կուսակցութեանը, որի գլուխ են անցած Ադլերի, Օտտո Բաուէրի, Դաշինսկու, Պէրնէրստորֆէրի, Շպրինգէրի նման խոհուն, զարգացած և փորձւած գործիչներ ու տեսաբաններ։ Դրանք մշակեցին երկրորդ ուղին։

Ազգային հարցի լուծման երկրորդ ուղին կամ հնարաւորութիւնը հետևեալն է. որպէսզի հնարաւոր լինի առաջ գասակարգային կռիւ մղել առանց ընդհատումների, առանց ուկանաց համերաշխութեան սկզբի, նախ և առաջ պէտք է լուծել ազգային խնդիրը դրական ձևով. չպէտք է արհամարհել Ազգն ու Հայրենիքը և կարծել, թէ այդ թատերական ձևով կամ շարժուածքով ամէն ինչ վերջացաւ, այլ պէտք է ստեղծել հասարակական, պետական և միջազգային այնպիսի կարգեր, որոնց մէջ այլեւս հնարաւորութիւն չլինի ազգերի բռնի ձուլում, ազգային հալածանք, նոյնիսկ պատերազմ ազգերի մէջ: Թող միանան պետութիւնները, կազմեն աւելի և աւելի ընդարձակ պետութիւններ. թող փոքր-փոքր գան մեծ պետութիւնները, մանրանան.— միայն թէ այդ բոլոր պայմաններում ազգերի լեզուն, գրականութիւնը, դպրոցը— մի խօսքով նրանց ոգին կամ ազգային կուլտուրան ազատ թողեն, չխանգարեն նրանց ուղին, նրանց անկախ զարգացումը:

Բոլոր այդ ժողովուրդների կղերական, հողատէր և կապիտալիստ խաւերը կատաղօրէն մերժում են այդ առաջարկը: Նրանք պահանջում են ձուլում, գրաւում. հրով և սրով ստիպել բոլորին դառնալ մի ազգ — այն էլ իրենց, այդ տիրողների ազգից: Նրանք պէտք ունեն այդ բռնութիւններին, այդ պատերազմներին. չէ որ աշխատաւոր զանգուածները կզբաղուեն դրանցով և այլեւս ժամանակ չեն ունենայ մտածելու իրենց հասարակական կամ տնտեսական հակառակորդի դէմ կազմակերպուելու: Դրանց մի խոշորագոյն մասն էլ— յատկապէս բուրժուազին, ցանկանում է տիրել, նուաճել նոր երկիրներ, կլլանել նորանոր ազգեր, որպէսզի նոր շուկայ բացի իր ապրանքների համար: Չենք մոռանում և այն, որ պաշտօնէութիւնն էլ յաճախ նիւթականին համահաւասար, մի ուրիշ շահ էլ ունի այդ ազգամերժ քաղաքականութեան մէջ,— դա փառասիրութիւնն է:

Այլպէս չեն աշխատաւոր խաւերը: Նրանց համար սուրբ և անձեռնմխելի է Ազգութիւնն իր բոլոր առողջ և առաջաւոր արտայայտութիւններով, Հայրենիքն իր տարածման բնական սահմաններով և ոչ բռնադրուած, զէնքի ուժով կամայականօրէն գծուած պետական սահմաններով: Այդ պատճառով

ամէն մի ընկերվարական խորապէս հակառակ է ամէն տեսակ բռնակալութեան, ամէն տեսակ միապետութեան, նրա պահանջն է հանրապետութիւն: Նա դէմ է ամէն տեսակ նուաճողական պատերազմի: Բոլոր երկրների ընկերվարական կուսակցութիւնների միահամուռ բողոքներն Իտալիայի յայտարարած գրաւողական պատերազմի դէմ 1911 թւին, պարզ ապացոյց են այդ խաղաղասէր ձգտման: Եւ ով կարող է դրականապէս պնդել, թէ 1911 թւին, Մարօկկեան կնճռոտ խնդրի համար իրար չպէտք է զարնուէին Գերմանիան և Ֆրանսիան, եթէ այդ երկու մեծ ազգերի ընկերվարական մեծ կուսակցութիւնները չսպառնային ընդհանուր և քայքայիչ գործադուլ յայտարարել երկու երկիրներում էլ եւ կասեցնել թէ բանակի, թէ ռազմանիւթերի ու պաշարեղէնների փոխադրութիւնը եւ թէ ամբողջ ճարտարարուեստն ու հանքագործութիւնը: Խաղաղութիւնն ընկերվարականների համար այնքան անհրաժեշտ է, որքան ջուրը ձկան համար: Արդարանալի և միանգամայն սրբազան է մի պատերազմ— ազատարար պատերազմը. երբ թշնամին խուժում է քո հայրենիքը եւ գրաւել կամենում, երբ ազգդ լծի տակ է եւ բռնադատուած վիճակում եւ դու կամենում ես ու պարտաւոր ես ազատել հալածանքի լծից ազգդ ու հայրենիքդ— այդ ժամանակ ահա ամէն մի ընկերվարական պարտաւոր է զէնք առնել եւ պաշտպանել իր ազգն ու հայրենիքը. այդ դեռ քիչ է. բոլոր ազգերի ընկերվարականները պարտաւոր են բարոյապէս եւ նիւթապէս օգնել այդ ազատամարտին:

Աշխատաւորութիւնը պարտաւոր է դէմ լինել պատերազմի. խաղաղութիւն պահանջել, որովհետեւ պատերազմի բոլոր քայքայիչ բեռը ինքն է, որ կրում է իր ուսերի վրայ. բոլոր ծախքերը, բարդւելով պետական եկեւմուտքի վրայ, դառնում են գլխաւորապէս անուղղակի հարկեր և ծանր քարի պէս ճնշում աշխատաւոր խաւերի գլխին. բանակի գրեթէ 90%-ը լցնում են աշխատաւորների զաւակները: Իսկ այդ բոլոր զոհաբերութեան պտուղները քաղում են միայն կեղեքող դասակարգերը, եթէ պատերազմը նուաճողական է:

Դրութիւնը կրկնապէս ծանրանում է ընկերվարականների համար, երբ իրենց ապրած պետութիւնը բաղկացած է շատ ազգերից: Տիրող ժողովուրդն ուզում է կլանել միւսներին, ոչնչացնել նրանց լեզուն, դպրոցը, գրականութիւնը, սովորութիւնները, ազգային ոգին: Այդպէս է վարւում Պրուսիան Լեհերի հետ, այդպէս են անում Գերմանները Աւստրիայում ապրող չեխերին, սլովակներին, հրէաներին, լեհերին. այդ նոյն վարւեցակերպն ունի ռուս կառավարութիւնը դէպի հայերը, լեհերը, վրացիները, Թաթարները. նոյն կործանարար ոգին են բանել վերածնւելու ձգտող Նոր-Թիւրքիայի Երիտասարդ Թիւրք կոչւող ղեկավարները. մի՞թէ նոյնը չէր անում և այսօր Անգլիան Իրլանդիայի գաւառների վերաբերմամբ:

Այդ երկրներում ահա ինքնավարականների դրութիւնը շատ աւելի բարդանում է: Այդ տեղերում տիրող ազգն արհամարհանօրէն ոտնահարում է ազգային առանձնութիւնն ու օրէնք, որպէսզի առաւելեայ վիճակ ունենայ թէ՛ նիւթական, թէ՛ մտաւոր և այլ ասպարէզներում:

Եւ այդ երկրներում, ուր ներքին կեանքը դժւար էր գտնել՝ ազգերի բախման շնորհով, երկա՞ր տառապեցին ինքնավարականները: Անհնար էր մտցնել որ և է դասակարգային կռիւ ազգերի ներսում, որովհետև ազգերի մէջ տեղի ունեցող անընդհատ բախումները և լարւած վիճակը ամէն մի ազգ վեր էին ածել մի որոշ և մարտնչող բանակի. չեխ բանւորը, գիւղացին, բուրժուան, հողատէրն ու կղերը միասին դուրս էին գալիս իբր մի բանակ, պաշտպանելու չեխ լեզուի, գրականութեան, դպրոցի, թատրոնի և այլն իրաւունքները: Ամենօրեայ կռիւը վարժեցնում էր աշխատաւորներին նայելու իրենց ազգային բուրժուազիի և հողատէրերի վրայ իբր բնական զինակիցների: Այդ համոզումն ամրանում էր նրանց մէջ, իսկ դասակարգային գիտակցութիւնը մթագնում. չեխ աշխատաւորը չէր կարողանում ըմբռնել, թէ ինչպէս կռւի այսօր այն ազգի և հողատէրի դէմ, որի հետ երէկ միասին արիւն էր թափում կամ բողոքի ցոյց էր կազմակերպում Վիէննայի կամ Պրագայի փողոցներում. որի հետ երէկ Աւստրիական բանակում, երբ իրենց անունը կարդային, իրենք «զդէ» (այստեղ-չեխերէն) պոռացին և ոչ պահանջւած hier (գերմաներէն-այստեղ) և դրա համար միասին նստեցին զինւորական հաւպտվախտ կամ բանտ, երկուսն էլ մի խցիկի մէջ... Ինչպէս մոռանալ այս երկարամեայ սրտառուչ զինակցութիւնը, անձնազոհութիւնը:

Բուրժուական յառաջադէմ տարրերը հնարեցին մի միջոց. բաժանել Աւստրիան իր պատմական երկրամասերին — Կարինթիա, Շտիրիա, Բոհեմիա, Լեհաստան, Տիրոլ և այլն, և ամէն մի երկիր կամ Land-ը յանձնել այդ երկրի պատմական ազգին, տալով նրա երկրին աւտօնօմիա (օտօնօմի) կամ քաղաքական ինքնօրինութիւն: Ամէն մի երկիր Աւստրիայում ունի իր սեփական պարլամենտը — լանդտագը, որ սահմանում է օրէնքներ իր շրջանի համար, դուրս չգալով համաաւստրիական Ռայխսրատի տւած շրջանակներից: Սակայն դէպքերը եկան ապացուցելու, որ 60-ական թւերին ազատական բուրժուաների տւած այդ պետական ձեւը չափազանց ախտաւոր է. մի առժամանակ խաղաղութիւնը վերահաստատւեց, բայց շուտով երևաց, որ ազգերի բախումը վերակւեց և այն էլ աւելի կատաղօրէն:

Փաստը նրանումն էր, որ պատմական նահանգները վաղո՜ւց դադարել էին միակազմ նահանգներ լինելուց. չեխերը բազմացել, լցրել էին գերմանական այնպիսի գաւառի մի մասը, գերմանները նոյնպէս լցրել էին Բոհեմիայի այնպիսի գաւառներ և այլն: Բայց այդ՝ հրէաները ապրում էին բոլոր երկրներում, թէ և քիչ թւով: Պէտք էր նոր, աւելի դրական գիտութեան վրայ հիմնւած լուծում գտնել հարցին: Եւ այդ լուծումը գտան աւստրիական ինքնավարականները. դա ազգերի դաշնակցութեան և ազգ-երկրային ինքնավարութեան խնդիրն է:

Պէտք է լուծել ազգային հարցը, մտածեցին ինքնավարականները, որպէսզի երկիրը վերջապէս խաղաղւի և հնարաւոր լինի գործարաններ հիմնել, հանքեր մշակել, դպրոց, լեզու, գրականութիւն, գեղարւեստ մշակել — մի խօսքով կուլտուրան առաջ տանել: Պէտք է մի անգամ ընդ միշտ վերջ տալ այս ներքին բաղխումներին՝ երկիրը կազմող ազգերի միջեւ, որովհետեւ առանց դրան մեզ, ընկերվարականներիս համար անհնարին է գործել, դասակարգային գիտակցութիւն զարթեցնել, դասակարգային կազմակերպութիւն առաջ բերել եւ դասակարգային կռիւ մղել. ազգերի այդ անվերջ բաղխումները մթագնում են ամէն տեսակի դասակարգային ըմբռնում:

Լուծում: Ընկերվարականներն սկսեցին իրենց ամբողջ ուժով կռիւ յայտարարել ռազմայնի կամ միլիտարիզմի դէմ, կատաղի կռիւ ներկայ պետութիւնների զինւած խաղաղութեան եւ առհասարակ ամէն տեսակ պատերազմի դէմ: Իսկ մինչ այդ վերջնական եւ արմատական նպատակին հասնելը, նրանք նախ եւ առաջ ուզեցին բազմացեղ պետութիւնների ներքին կեանքում խաղաղութիւն հաստատել, վերացնելով ազգային բաղխումները:

Ազատական բուրժուազին արդէն ընդգծել էր հարցի լուծման ուղին. նա յաջողել էր իրագործել «ամէն մի ժողովուրդի իր հայրենիքի մէջ քաղաքական ինքնավարութիւն տալու» սկզբունքը. Մնում էր մշակել այդ սկզբունքը, մանրակրկիտ քննադատութեան բովով անցկացնել:

Քննադատութեան առաջին փորձերն իսկ ցոյց տուին, որ ներկայումս ժողովուրդները չափազանց խառն են ապրում, որ պատմական հայրենիքներն այլեւս այսօր չեն համապատասխանում ժողովրդների կամ ազգերի տարածման իրական սահմաններին. որ նոյն իսկ ամէն տեղ ազգերն ապրում են խառը, մի տեղ խիտ, մի այլ տեղ թեթեւ կերպով իրար մէջ մտած, իրար հետ հիւսուած լինելով:

Երբ այդ թերութիւնը արդէն ապացուցուեց, այլեւս դժուար չէր առաջարկել նոր միջոցներ, որոնք զերծ լինէին այդ պակասութիւններից: Իսկոյն ծնունդ առան երկու նոր առաջարկներ. ա) հողային կամ երկրային (տէրրիտորիական), բայց ոչ պատմական հայրենիքի ինքնավարութեան սկզբունքի եւ բ) Անձնային կամ արտահողական (էքստէրրիտորիական) սկզբունքի վրայ հիմնուած:

Պարզաբանենք այդ երկու առաջարկները, քննենք նրանց ուժեղ եւ թոյլ կողմերը եւ յետոյ առաջարկենք մեր միջոցը — Ազգ-երկրային (տէրրիտորիական-ազգային) ինքնավարութեան սկզբունքը:

Պետութեան գրկում ազգային հարցը լուծելու, ազգերի բաղխումներից ազատ մնալու համար առաջարկուած միջոցներից մէկը հողային կամ երկրային (տէրրիտորիալ) աւտօնօմիի կամ ինքնօրինութեան սկզբունքն է: Համաձայն այդ սկզբունքի, պէտք է բազմացեղ պետութեան երկիրը բաժանել ինքնավար գաւառների եւ երկրամասերի, որ իւրաքանչիւր բաժանման վրայ ապրին մի-մի ազգութիւն, ի հարկէ որքան կարելի է անխառն: Եթէ ազգերը այնպէս են զետեղուած պետութեան մէջ, որ ամէն մէկն ունին իրենց տարածման որոշ սահմանները, եթէ նրանք ցրիւ եկած, իրար մէջ հիւսուած ու խառնակուած չեն, այն ժամանակ կատարելապէս խնդիրը շատ կը դիւրանայ: Օրինակ՝ Աւստրիան, Ռուսիան, Թիւրքիան եւայլն, կը բաժանենք այնպիսի նահանգների, որ ամէն մի նահանգ համապատասխանէ տուած ազգի էական տարածման սահմաններին:

Այդ բաժանումը կատարելիս, երբէք չպէտք է տարուել պատմական հայրենիքի գաղափարով, այլ պէտք է աչքի առաջ ունենալ ազգութեան տարածման, նրա լեզուի այժմեան սահմանները միայն:

Երբ այդպիսի ազգային նահանգներ կազմուեցին, այնուհետեւ կտանք նրանց վարչական եւ օրէնսդրական լայն ապակենտրոնացում, (*) այսինքն ամէն մի նահանգ կունենայ իր տեղական ընտրովի պատգամաւորական օրէնսդիր ժողովը, իր ընտրած կառավարութիւնը, ոստիկանութիւնը, ընտրովի դատաւորները եւայլն. միայն թէ երկրի ընդհանուր կամ կենտրոնական պարլամէնտի հաստատած օրէնքները միշտ պէտք է առաջնութիւն ունենան նահանգական ժողովների որոշում-

---

Վարչական եւ օրէնսդրական ապակենտրոնացման կամ տեղական ինքնավարութեան եւ աւտօնօմիի մասին նայել մեր «Դէպի Ֆէդէրացիա» գրութիւնը:

րից։ Երկրի գլխաւոր կամ կենտրոնական պարլամէնտը կը գծէ որոշ սահմաններ գաւառների, նահանգների կամ երկրամասերի օժտօժմի համար, կրտոյ այն շրջանակը կամ այն հարցերը, որոնցից դուրս գալու իրաւունք չպէտք է ունենայ գաւառական օրէնսդիր ժողովը. Բայց այդ, եթէ միեւնոյն հարցի մասին գաւառական ժողովը հրատարակել է արդէն մի օրէնք, իսկ յետոյ կենտրոնական օրէնսդիր մարմինը հրատարակում է նոյն խնդրի մասին մի տարբեր օրէնք — յաղթողը կամ գործադրուողը պէտք է լինի կենտրոնական մարմնի օրէնքը։

Պարզ է. բոլոր տեղական խնդիրները, բոլոր տեղական ազգային ըմբռնումները եւ առանձնայատկութիւնները լիովին բաւարարութիւն կը գտնեն կառավարական կամ քաղաքական այդ ձեւի մէջ։ Ամէն մի ազգային նահանգի օրէնսդիր եւ գործադիր վարչութիւններին է թողնւում իր նահանգի բոլոր տեղական գործերը. սահմանել օրէնքներ եւ կարգադրել իր ներքին գործերը ինչպէս կը կամենայ՝ լեզու, դպրոց, գրականութիւն, թատրոն, թանգարաններ, ընկերութիւններ, ջրանցքներ, նաւեր, անտառներ, առողջապահութեան հարց, դատարաններ եւ այլն, եւ այլն, — մի խօսքով, այն բոլոր խնդիրները, որոնք կազմում են մի ազգի զարգացման խարիսխները։ Դուրս են մնում համապետական խոշոր հարցերը — պոստ եւ հեռագիր, բանակ եւ նաւատորմ, չափեր ու կշիռներ, դիպլօմատի կամ քաղաքականութիւն եւ այլն, որոնք էլ պէտք է մնան համապետական օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւնների։

Այսպէս այդպիսի վարչական եւ օրէնսդրական ձեւի մէջ անհնարին է ազգերի ներքին բաղխում, անկարելի է ազգային հարցի ծագում։ Այսպէս ազգութեան բոլոր դասակարգերը բռնադատուած չեն միանում, միահամուռ ուժով դէմ դնելու իրենց ազգային հակառակորդին, իրենց ազգութիւնը կլանել կամեցող թշնամուն։ Այդպիսի թշնամի չկայ, եւ ամէն մի ազգութեան ներսում դասակարգերը լիովին ազատ են. նրանք կարող են կազմակերպուել դասակարգօրէն եւ կռիւ մղել իրենց դասակարգային շահերի տեսակէտից, որքան դա հնա-

րաւոր կը լինի թէ համաձայն ժողովրդի զարգացման, թէ երկրի տնտեսական յառաջդիմութեան աստիճանին։ Եթէ տրուած ազգային նահանգի տնտեսութիւնը շատ առաջ գնացած եւ ժողովուրդն էլ լուսաւորուած կամ գիտակցութեան գէթ մի քիչ հասած կը լինի, դասակարգային կռիւը կարելի կը լինի մղել մեծ չափերով, պահանջները դնել աւելի խստօրէն եւ այլն. եթէ ոչ դասակարգային կռիւը թոյլ կը լինի, տրուած պահանջները պարկեշտ կամ խոնարհ չափեր կունենան։

Տեսականապէս շատ գեղեցիկ եւ միանգամայն ամբողջական է ազգային հարցը լուծելու այս առաջարկը։ Ասենք ի միջի այլոց, որ քննելով Աւստրիայի ներկայ պառլամենտական կարգը, Կ. Կաուցկին առաջարկում է հարցի լուծման այդ ձեւը եւ կարծում է, որ եթէ այդ ձեւով բաժանում կատարուի, ազգութիւնների խնդիրը լուծուած կը լինի Աւստրիայում։ Սակայն տեսականօրէն գեղեցիկ այդ կառուցուածքը գործնականի մէջ օդն է ցնդում արագ։

Ներկայումս չափազանց շատ են այն նահանգները, որոնց մէջ մի ազգ չէ ապրում։ Այսպէս Բոհէմիան, չեխերի պատմական հայրենիքը պարունակում է մեծ թւով գերմանացիներ, որոնք բոհէմական մի քանի գաւառներում նոյն իսկ բացարձակ մեծամասնութիւն են կազմում, թէ եւ նրանք բնակւում են միեւնոյն վայրերում եւ չեխեր. մի քանի ուրիշ գաւառներում չեխերն են մեծամասնութիւն, բայց կան եւ փոքրամասնութիւն կազմող գերմաններ։ Աւստրիական Լեհաստանում (Գալիցիա) այսօր կան գաւառներ, ուր մեծամասնութիւն են կազմում ռուսինները, որոնց գրեթէ ճորտացրել է լեհ ազնուականութիւնը կամ շլախտան։ Իսկ այդ երկու երկրներում էլ ցրիւ են եկած բազմաթիւ հրէաներ, որոնք ոչ մի տեղ, ոչ մի գաւառում չեն կազմում ազգաբնակութեան մեծամասնութիւն։ Նոյնը կարելի է ասել Կովկասի, Թիւրքահայաստանի եւ Մակեդոնիայի շատ մասերի վերաբերմամբ։

Այդպիսի խառն ազգաբնակութիւն ունեցող երկրների համար երկրային կամ հողային սկզբունքի վրայ հիմնուած ինքնավարութիւնը չէ կարող ազգային հարցի լուծման միջոց հաձարւել ։ Եթէ օթօնօմին տրւեց այդ երկիրներին՝ վերեւում ասւած ձեւով, այն ժամանակ իրար են զարնւելու դրւած գաւառում բնակւող երկու երեք ազգերը ։ Բնականաբար յաղթաղը լինելու է մեծամասնութիւն կազմող ազգը, իսկ փոքրամասնութիւնները կլինեն միշտ էլ ճնշւած, հալածւած ու զրկւած. ուրեմն կրկին պէտք է սպառնայ դառն չարաբաստիկ ազգային կռիւը ։ Կը նշանակէ, այդ միջոցով հարցն արմատապէս չլուծւեց, այլ համապետական խոշոր ընդհարումներից դարձաւ նահանգական, մանր, բայց աւելի բազմաթիւ, աւելի յաճախակի. փոխանակ իրար զարնւելու, օրինակ, Վիէննայի համապետական Ռայխսրաթում, պէտք է իրար զարնւէին նահանգական ժողովներում կամ Լանդտագներում. փոխանակ միաժամանակ մի քանի ազգերի — Լեհերի, Չեխերի, Գերմանների, Ռուսինների, Իտալացիների, Հրէաների, Սլովէնների եւայլն, ընդհարման, մենք կունենանք, օրինակ, Լեհերի, Ռուսինների եւ Հրէաների ընդհարում Գալիցիայի մէջ, Չեխերի եւ Գերմանների ընդհարում Բոհէմիայում, Գերմանների եւ Իտալացիների ընդհարում Տիրոլում եւայլն, եւայլն ։

Հողային կամ երկրային սկզբունքի այդ խոշոր թերութիւնները աչքի առաջ ունենալով, առաջարկեց ու մշակեց երկրորդ սկզբունքը — արտահողային կամ էքստերիտորիալ օթօնօմին ։

Ազգերի խնդիրը չպէտք է կապել երկրի կամ հողի հետ. այլ ամէն մի ազգութիւն պէտք է դիտել իբր մի առանձին եւ հողից անկախ քաղաքական անձնաւորութիւն ։ Ամէն մի պետութեան մէջ, ուր էլ որ բնակւած լինեն, որ մասերում եւ ծայրերում էլ ցրւած լինեն մի ազգութեան անդամները, նրանք կազմելու են մի ամբողջութիւն ։ Նրանք պէտք է ընտրեն իրենց ազգութեան օրէնսդիր եւ գործադիր մարմինները եւ կառավարեն իրենց ազգին վերաբերող բոլոր գործերը — թէ նիւթական, թէ քաղաքական ու մտաւոր ։ Ազգութեան բոլոր անդամները, լինելով տրւած պետութեան անդամներ, մասնակցում են պետական կեանքին վերաբերող բոլոր խնդիրներում, բայց դրանցից դուրս՝ նրանք անդամ են իրենց

ազգային միութեան ։ Այսպիսով ամբողջ պետութիւնը կազմւած կը լինի ազգերի միութիւններից, որոնք իրենց բոլոր ազգային գործերում կը լինեն միանգամայն անկախ, բայց բոլորը միասին կը կազմեն ազգերի մի եղբայրական դաշնակցութիւն, մի ամբողջացած պետութիւն ։ Որքան ազգերը զարգանան, այնքան նրանց պետական միութիւնը կը զօրանայ, թէեւ նոյնքան էլ ազգերն առանձին աւելի եւ աւելի իրաւունքներ կը ստանան, իբր բաղադրիչ մասեր նոյն պետութեան ։

Արտահողային կամ էքստէրրիտօրեալ սկզբունքի յայտնողը ու մանրամասնօրէն մշակողը մի աւստրիացի գրող է, — Ռուդոլֆ Շպրինգէրը կամ Սինօպտիկուսը, որին արձագանք տւին յետոյ շատ ուրիշ գրողներ էլ ։ (*)

Ռուդոլֆ Շպրինգէրն իր առաջարկած սիսթէմի թոյլ կողմը լաւ էր զգում, երբ գրում էր, թէ վերջ ի վերջոյ ամէն մի ազգի համար անհրաժեշտ է, գոնէ մանր համայնքներում, կազմակերպւել հողային սկզբունքով, որովհետեւ չէ կարելի երեւակայել որ եւ է մարմնաւոր բացարձակօրէն անհող ։ Աւստրիական, միաժամանակ ռուսական յայտնի հրէա գրող Բաուերը, հետեւելով Շպրինգէրին, արտահողային սկզբունքով կազմակերպութեան նման մի բան գտնում է Թիւրքիայում եւ Միացեալ Նահանգներում ։ Կրօնական համայնքներն, ասում է նա, Թիւրքիայում եւ Միացեալ Նահանգներում ունեն մասնաւորապէս այն ձեւի կազմակերպութիւն, ինչ որ առաջարկում է Ռ. Շպրինգէրն ազգերի համար ։

Սակայն որքան էլ ջանանք ազգերը կազմակերպել արտահողային սկզբունքով, այնուամենայնիւ գալու են շատ գործնական հարցեր, որոնք գերազանցօրէն ազգային լինելով հանդերձ, պէտք է պահանջեն հողային սկզբունք, որոշ երկիր, որի վրայ կազմակերպւեն, որի վրայ ապրեն ։ Հողային սկզբունքի վերջնական անհրաժեշտութիւնը եւ նրա անխուսափելի կարեւորութիւնը մեզ ստիպում են որոնել մի երրորդ

(*) Թէ այդ եւ թէ առաջին միջոցը մենք մանրամասնօրէն առաջ ենք բերել «Դրօշակի» ֆելիետոնային գրուածքում ։

վում մի խառը լուծում: Դա ազգ-երկրային սկզբունքն է:

Բազմացեղ պետութիւնը պէտք է բաժանել մանր գաւառների այնպէս, որ որքան հնարաւոր է՝ միատեսակ ազգութիւններ զետեղուին ամէն մի գաւառում, գաւառակում և նոյն իսկ գիւղական համայնքներում: Երբ մենք կստանանք այնպիսի հողային մանր միութիւններ, որոնց վրայ կապրին ազգայնօրէն միապաղաղ զանգուածներ, այնուհետև գործը շատ կը դիւրանայ: Միևնոյն ազգին պատկանող բոլոր մանր հողային միութիւնները, որքան էլ իրարից հեռու, բաժան-բաժան ընկած լինեն, կը կազմեն մի ազգային ամբողջութիւն, որը կունենայ իր ազգային ղեկավար մարմինները— թէ օրէնսդրական, թէ վարչական, միանգամայն մնալով անբաժան մաս իրենց պետութեան:

Այնուհետև կրկին գալիս է, նոյն իսկ ամենափոքր հողային միութեան մէջ,— ուրիշ ազգային հատ ու կտոր տարրերի, չնչին փոքրամասնութիւնների խնդիրը: Այստեղ ևս հողային սկզբունքին օժանդակութեան կը հասնի արտահողայինը: Այն փոքրամասնութիւնները, որոնք ոչ մի հնար չունեն կազմակերպուելու իբր ուրոյն հողային միութիւններ կամ համայնքներ, այլ խառնուած են միւս ազգութեան մէջ, ինչպէս օր. միւս մարմինների ծալքերում, դրանք կը կազմակերպուեն արտահողային սկզբունքով, իբր ազգային մի համայնք: Դրանք իրենց պետական և անտեսական խնդիրների մեծագոյն մասը կը վարեն իրենց ընկած երկրի հողակից, բայց ոչ ազգակից եղբայրների հետ, իսկ բոլոր ազգային հարցերում նրանք սերտօրէն կապուած կը լինեն իրենցից հողով բաժան ազգակիցների մեծ խմբի հետ. Նրանց հետ միասին կը լուծեն իրենց կուլտուրային վերաբերող բոլոր խնդիրները միանգամայն ինքնուրոյնաբար:

Ահա առաջարկուած երեք ձևերի համառօտ նկարագրութիւնը: Առաջին երկուսն ունին եւրոպական գրականութեան մէջ հեղինակաւոր անուններ, որոնք առաջարկել ու մշակել են այդ սկզբունքները, իսկ երրորդ առաջարկը, որ մի տեսակ համադրութիւն է նախկին երկու սկզբունքների, մեր առա-

ջարկն է, իբր գործնական ելք ազգային կնճռոտ խնդրից այն երկիրներում, ուր ազգաբնակութիւնը շատ վայրերում խառնախուռն է ապրում: Գրականութեան մէջ ամփոփ և ամբողջական, մշակուած ձևով ոչ ոք չէ առաջարկել այդ սիստէմը, որքան մեզ յայտնի է: Ռուսական գրականութեան մէջ, պրոֆէսոր Գրուշևսկին է, որ մի ակնարկ է նետել փոքրամասնութեան իրաւունք կոչուած սկզբունքի վրայ, բայց չէ մշակել ազգ-երկրային աւթօնօմին: Այդ պատճառով մենք չենք կարող ազգ-երկրային աւթօնօմիի յանձնարարել որոշ աղբիւրներ եւրոպական գրականութիւնից, ինչպէս արել ենք մի քանի այլ հարցերի վերաբերմամբ: Մեր «Դէպի Ֆեդերացիա» աշխատութեան մէջ մենք մանրամասն մշակել ենք ազգ-երկրային աւթօնօմիի սկզբունքները, նոյն իսկ բերել ենք փորձնական օրինակներ Կովկասի Հայերի, Վրացիների և Թիւրքերի բնակավայրերի կամ բնագաւառների կեանքից. երկարօրէն պարզաբանել ենք փոքրամասնութեան իրաւունքի հարցը երկրի, նահանգի և ազգային բնագաւառի ելևմուտքի վերաբերմամբ: Այդ պատճառով մենք այժմ կանգ չենք առնում այդ խնդիրների վրայ, այլ հետաքրքրուողներին յանձնարարում ենք թերթել այդ աղբիւրը:

Գործնական խնդիրներ.— Տեսական մասի վերլուծութիւնը վերջացնելով, անցնենք գործնական հարցերի:

Համոզուած եմ, որ մեր այս աշխատութիւնը կարդացող հայ պահպանողականը, ուսերը թոթուելով, պէտք է ասէ. «Այդ բոլոր տեսութիւնները գաղափարների և նրանց կռուի մասին — անկախ այն հարցից, թէ որքան ուղիղ կամ սխալ են, — յատկապէս մեզ Հայերիս համար անօգուտ են, որովհետև ոչ գործարաններ կան մեր երկրում, ոչ պրոլետարներ»:

Մենք կը պատասխանենք. այո՛, այսօր կամ բոլորովին չկան գործարաններ և պրոլետարներ կամ չափազանց նուազ են, բայց աչքդ լաւ բաց արա, բարեկամ, մեր երկրի վաղուան օրն է, որ մենք նկարագրել ենք մեր այս գործում: Եթէ ամէն տեղ մենք օրինակներ ենք բերել Ֆրանսիայի, Անգլիայի, Աւստրիայի կամ Գերմանիայի կեանքից, դրանով մենք գծել ենք Հայերիս և շրջապատող բոլոր միւս ժողովուրդների անցնելեք ուզին։ Երբ 1870 թւերին Կ. Մարքսը լոյս աշխարհ հանեց իր «Կապիտալի» առաջին հատորը, գրեց, որ նոյն փոփոխութեան առարկութիւնը պէտք է անեն իր գերման հայրենակիցները. այդ բոլորը, պէտք է ասէին նրանք, — լաւ է Անգլիայի համար, իսկ մեր երկրի համար նշանակութիւն չունի։ Դրան Մարքսը պատասխանեց մի լատինական առածով. «Անունը փոխած՝ առակը քո մասին է պատմւում»։

Իսկ այսօրւան օրը մենք հայերս ո՞ւր ենք. արդեօք չունենք դասակարգային կռիւ։ Այո՛, այս օր էլ մենք մղում ենք մի դասակարգային կատաղի մարտ, բայց դեռ եւս դա աշխատանքի եւ կապիտալի կռիւը չէ։

Մեր գլխին կանգնած են հնութեան մնացորդ երկու խոշոր դասակարգեր— աւատականութեան դարի մնացորդները— քիւրտ աշիրէթապետները, բէկերը, աղաները. միւթէսարիֆները, թուրք հողատէրերը և, մանաւանդ, 600 տարուց իվեր գրեթէ բացառապէս զէնքը և կառավարելու պաշտօնը իւրացրած տիրապետող թուրք ազգը։

Մեր բնագաւառում, ներքին Հայաստանում, լիովին աւատական կամ ֆէօդալական յարաբերութիւններ են տիրում։ Կ. Պոլսի կենտրոնական պետական իշխանութիւնը 1830-1860 թւականներում ոչնչացրեց ուժեղ տիրող դէրէ-բէյութիւնը. 1835 թւին Ռաշիդ փաշան յաղթեց Խան-Մահմադ հզօր դէրէբէյին, իսկ 1847 թւին Օսման փաշան ջարդեց Բէդր-խան բէկի ուժը։ Երկուսն էլ գերի տարւեցան եւ մէկին Սիլիստրիայի բերդը, Դանուբի ափին, միւսին Կրետէ կղզին ուղարկեցին։ Սակայն Պոլսի կենտրոնական կառավարութիւնը շարունակեց իշխանութեան կենտրոնացման կամ հաւաքման այդ փառաւոր գործը. խոշոր դէրէբէյերն ընկան. բայց մանրները մնացին Դերսիմում, Շատախում, Բաղէշի, Վանի, Դիարբէքիրի եւ Խարբերդի վիլայէթներում ամբողջապէս, Էրզրումի վիլայէթի մի մասում— Բայազէդի և Ալաշկերտի շրջաններում։ Այդ աւատական հողատէր ու կողոպտիչ տարրերի հետ միացած է նաեւ թուրք պաշտօնեայ եւ հողատէր տարրը։ Մինչեւ 1880 թւականները Թիւրքիայի կենտրոնական իշխանութիւնն ամէն կերպ աշխատում էր փչել քիւրտ աւա-

տական տարրերի ուժը, իսկ 1890-ից յետոյ Համիդի վարչութիւնն, ընդհակառակը, ամէն կերպ աշխատում էր վերականգնել քիւրտ աւատական տարրերը, մանաւանդ փոքր ազնւականութիւնը, կազմակերպելով նրանցից իր Համիդիէի գնդերը։

Այսօր Հայկական նահանգներում մղւում է դասակարգային կատաղի կռիւ, միայն թէ ամբողջ հայ աշխատաւորութիւնը, բաւական լաւ կազմակերպւած, կազմում է առաջապահ գունդը, իսկ նրա հետ, իբր ժամանակաւոր լոկ կազմողներ. միասին են ընթանում և նորածիլ հայ բուրժուաները (առեւտրական-վաշխառուական ձեւի կապիտալի ներկայացուցիչները), և՛ հայ հոգեւորականութիւնը։ Դրանց հետ սկսել են գիտակցութեան գալ նաեւ քիւրտ ճորտ տարրերը և աստիճանաբար միանալ հայ աշխատաւորութեան հետ, կռիւ մղելու համար քիւրտ աւատական տարրերի դէմ։

Բէօռ Հիւսէյնները, Նամօէ Ռաշօները, Զարանջակի բէկերը, Մուսաները, Ղասմները և այլն— հասարակ աւազակներ չեն, այլ քիւրտ ազնուականներ, որոնք վարժւել են, դարեր շարունակ, սերնդից սերունդ կողոպտել ռայիա հայ ժողովուրդը։

Օսմանեան թուրք տարրն էլ, լինելով ընդամէն 7-8 միլիոն, այսօր տիրապետում է կայսրութեան գրեթէ 25-26 միլիոն ժողովրդին։ Օսմանեան կայսրութեան հիմնարկութեան օրից այդ փոքրիկ ցեղը, ձուլելով իր մէջ փոքրաթիւ սելջուկներին, դարձաւ տիրող ցեղ. զրկեց զէնքից բոլոր քրիստոնեաներին և ինքը դարձաւ կամ զինւոր, կամ պաշտօնեայ։ 600 տարի, սերնդից սերունդ, ժառանգաբար վարժւեց տիրող ցեղը միայն պատերազմ մղելու և կառավարելու, և այսօր մենք տեսնում ենք, որ թուրք ցեղը կորցրել է իր աշխատունակութիւնը, պահել միայն զինւորի և պաշտօնեայի յատկութիւնները։

Եղան նոյն իսկ ընկերվարական գրողներ, որոնք անկարող լինելով պարզել Թիւրքիայի յետամնացութիւնը, նրա ղեկավար և տիրող տարրի անընդունակութիւնը՝ շուտով ըմբռնելու և իւրացնելու Եւրոպական գաղափարներն ու կարգերը, մնացին շւարած այդ երեւոյթի առջեւ և ստիպւած եղան, բացատրութիւն տալու համար, գիտել ցեղերի կամ ռասաների խառնման տեսութեանը: Նրանք չմոռնեցին, որ 600 տարուայ զինուորական և բիւրօկրատական ազնուականութիւնը չէ կարող արագ ձեւափոխել, այն էլ 3-4 սահմանադրական տարիներում: Զբաղմունքի և ժառանգականութեան խնդիրը կապ չունի կոմս դը-Գոբինօի առաջարկած ռասական մերժուած տեսութեան հետ: (*)

Դասակարգային այս քաղաքականութեան հետ միասին և միաժամանակ պէտք է մղել նաև ազգային քաղաքականութիւն:

Աշխատաւորութիւնը պարտաւոր է պահպանել և զարգացնել իր մայրենի լեզուն, գրականութիւնը, դպրոցները եւայլն· Նա պարտաւոր է մտնել հայ ներքին կեանքի ազգային գործերի մէջ. Նա պէտք է ջանայ իր ձեռքն առնել Թաղական խորհուրդները, ազգային ժողովներն ու վարչութիւնները, մանաւանդ ուսման դաստիարակութիւնը. ազգային կալուածների գլուխը եւայլն: Երբ նա դուրս կը վանէ այդ ասպարէզներից հին աղայական տարրերը, այն ժամանակ նա կը ձգտի վերանորոգել, թարմութիւն ներմուծել լճացած և նեխուած ազգային գործերի մէջ:

Առաջին և ամենից առաջադրական խնդիրն է դպրոցական կրթական գործը: Ընկած են մեր դպրոցները. աղէտ են մեր ուսուցիչները: Պէտք է զարգացնել այդ գործը, պէտք է տարրական և միջնակարգ դպրոցների մի խիտ ցանցով ծածկել Վանի, Բաղէշի, Կարնի, Դիարբէքիրի Սվազի և Խարբերդի հայկական վիլայէթները: Պէտք է բանալ ուսուցչանոցներ. եթէ ոչ կոյրը կոյրին եթէ առաջնորդէ, երկուսն էլ կընկնին խորխորատ: Սակայն դրա համար անհրաժեշտ են նիւթական միջոցներ: Ո՞րտեղից ճարել:

Նախ պէտք է պետութեան բիւջէից պահանջել հայ կրթական հիմնարկութիւնների բաժինը — համեմատ հայերի թւի: Երկրորդ, պէտք է մենք մեզ վրայ ազգային հարկ սահմանելու և պետական միջոցներով գանձելու իրաւունք ձեռք բերենք, ուրեմն՝ պէտք է մի այդպիսի յօդուած մտցնենք հայկական Սահմանադրութեան մէջ:

Այնուհետև պէտք է վերջապէս ոչնչացնենք Կ. Պոլսի արտօնեալ և խեղդիչ ազդեցութիւնն ազգային բոլոր գործերի վրայ: Դրա համար մի ճար կայ. Ազգային ժողովի երեսփոխանների ընտրութիւնը դարձնել ընդհանուր, գաղտնի և հաւասար ամբողջ Թիւրքահայ ժողովուրդի համար, հաշւելով 30—40 հազար հոգուն մէկ պատգամաւոր, և ընտրելու իրաւունք տալ ոչ թէ 25 այլ 20 տարեկանից սկսած բոլոր հայ անձերին — այր թէ կին: Պէտք է ձգտել, որքան որ պետական պայմանները կը թոյլատրեն, աշխարհականացնել (laïfier) մեր Ազգային Սահմանադրութիւնը...

Եւ այս ազգային շարժման մէջ հայ աշխատաւորութիւնն է միայն, որ ընդունակ է կեանք և թարմութիւն ներարկել, եթէ ոչ կղերական և աղայական տարրերն ամէն ինչ ծառայեցնում են իրենց նեղ եսական ու դասակարգային շահերին:

Փառաւոր ապագայ է սպասում հայ աշխատաւորութեանը, եթէ նա եռանդով և խնամօրէն կարողանայ մղել իրեն բաժին ընկած զոյգ կռիւը — դասակարգային և ազգային ահեղ տնտեսական, մտաւոր և քաղաքական մարտը:

Նա կը յաղթէ: Լաւատես գուշակութիւն չէ այս, այլ առաջընթաց ազգերի ընկերական շարժումների բարեխիղճ ուսումնասիրութիւնից բղխած մի ժայռ համոզում:

ՎԵՐՋ

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА,
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

(*) Տես Le Comte de Gobineau — «Essai sur l'inégalité des races humaines» 1884, Paris.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ Երես 3

ԳԼՈՒԽ I

Մարդկային պատմութեան բաժանումն ըստ դասակարգերի. — Առաջին շերտաւորումները. — Կին եւ այր. — Մարդակերութիւն. — Մարդը մարդու համար գայլ. — Սկզբնական համայնքի քայքայումը. — Ստրկութիւն. — Դասերը Հռոմում եւ Աթէնքում. — Դաս, կաստա եւ դասակարգ. — Ճորտատիրութիւն. — Հին եւ միջնադարեան աշխարհի քաղաքները. — Քաղաքներ եւ համքարութիւններ կամ եսնաֆութիւններ. — Սրանց քայքայումը. — Մանուֆակտուրա կամ ձեռագործ արտադրութիւն. — Մեքենան եւ կապիտալիզմը. — Վարձու բանուորութիւնը: Երես 5-37

ԳԼՈՒԽ II

Կեղեքուած դասակարգը. — Յաւելեալ արժէք. — Ներկայի գլխաւոր երկու դասակարգերը. Հողատէր, դրամատէր եւ աշխատաւոր. — Ադամ Սմիթ եւ Մարքս. — Կաուցկին իբր շարունակող Մարքսի տեսակէտի. — Էնգելս. — Արտադրութիւնը թէ բաշխումն ընդունելի հիմք դասակարգերի բաժանման. — Ժամանակակից պրոլետարիա՞տ թէ աշխատաւորութիւն. — Աշխատաւորական տեսակէտը. — Գիւղացին եւ բանուորը. — Թէեր եւ տեսակէտներ. — Ո՞ր դասակարգերն են ընդունակ ընկերվարօրէն մտածելու. — Ընկերվարականները եւ գիւղացին: Երես 37-119

ԳԼՈՒԽ III

Բաժանման գիծը. — Բուրժուական դասակարգ. — Աշխատաւորութիւնը. — Դրանց ստորաբաժանումները. — Մտաւորականութիւնը եւ նրա դերը. — Խոշոր արտադրութիւնը. — Նրա լաւ եւ վատ կողմերը. — Նրա վատ կողմերը վերացնելու միակ միջոցը: Երես 120-180

ԳԼՈՒԽ IV

Դասակարգերի տարբերական եւ նմանողական տարրերը. — Դասակարգային կռիւ. — Երբ է նպաստաւոր դասակարգերի համերաշխութիւնը. — Ազգ եւ դասակարգ. — Ազգային հարցի լուծումը. — Գործնական պահանջները: Երես 181-244

ՀՀ Ազգային գրադարան
NL0189509